Նիկոլայ Հովհաննիսյան
Աշոտ Ղուկասյան
Արմեն Ղուկասյան
Արմինե Նարիմանյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

8

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2013

ՀՏԴ 373.167.1:93/99(075.3)
ԳՄԴ 63.3 g72
Հ 202

Հեղինակներ **Նիկոլայ Հովհաննիսյան** *(բաժին II §§ 23–27)*
Աշոտ Ղուկասյան *(բաժին I §§ 1–7, 9–11,*
Ազգային և բազմազգ պետություն
Ընտրական իրավունքի ընդլայնումը (հարցեր))
Արմեն Ղուկասյան *(բաժին I §§ 8, 12–14)*
Արմինե Նարիմանյան *(բաժին II §§ 15–22)*

Մեթոդական մասի *(հարցեր և առաջադրանքներ, լրացուցիչ նյութեր, նկարներ, բառարան, ժամանակագրություն)*
հեղինակներ **Աշոտ Ղուկասյան**
Արսեն Ղուկասյան
Արմեն Ղուկասյան

Հ 202 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ/ Ն. Հովհաննիսյան, Աշ. Ղուկասյան, Ա. Ղուկասյան, Ա. Նարիմանյան.– Եր.: ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, 2013.– 192 էջ:

ՀՏԴ 373.167.1:93/99(075.3)
ԳՄԴ 63.3 g72

ISBN 978-9939-52-715-4

© Էդիթ Պրինտ, 2013
© Ն. Հովհաննիսյան, Աշ. Ղուկասյան, Ա. Ղուկասյան, Ա. Նարիմանյան, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

8-րդ դասարանում դուք կուսումնասիրեք համաշխարհային պատմության նոր փուլը՝ Նոր դարերի պատմությունը: Ժամանակագրական առումով՝ նոր պատմությունն սկսվում է XVII դ. անգլիական բուրժուական հեղափոխությամբ, և ավարտվում Առաջին համաշխարհային պատերազմով: Նոր դարերի պատմությունը, որի բովանդակությունն արդյունաբերական հասարակության (կապիտալիզմի) առաջացումը և զարգացումն է, բաժանվում է երկու մեծ շրջափուլերի: Առաջին շրջափուլն ընդգրկում է XVII դ. կեսերից մինչև XIX դ. կեսերն ընկած ժամանակահատվածը, իսկ երկրորդ շրջափուլը՝ XIX դ. կեսերից մինչև 1918 թ. վերջերը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

Առաջին շրջափուլն իր հերթին բաժանվում է երկու ժամանակաշրջանի՝ մանուֆակտուրային արդյունաբերության և մեքենայական արդյունաբերության՝ իրենց բնորոշ հասարակական-քաղաքական գործընթացներով:

Մանուֆակտուրային արտադրության փուլում, որին բնորոշ են ձեռքի աշխատանքը և աշխատանքի բաժանումը, տեղի է ունենում կապիտալի նախասկզբնական կուտակում: Առևտուրը, գաղութային զավթումները, ստրկավաճառությունը և պատերազմները հնարավորություն են տալիս բուրժուական խավի ներկայացուցիչներին իրենց ձեռքում կենտրոնացնելու հսկայական դրամագլուխ՝ կապիտալ: Նրանք (կապիտալիստը, բուրժուան, ձեռներեցը) իրենց կապիտալները ներդնում են մանուֆակտուրային արդյունաբերության մեջ և ստանում նոր, ավելի մեծ շահույթներ:

XVIII դ. երկրորդ կեսին հիմնականում սպառվում են մանուֆակտուրային արտադրության զարգացման հնարավորությունները: Ձեռքի աշխատանքը դարձել էր քիչ արտադրողական, իսկ թողարկվող արտադրանքը չէր բավարարում բնակչության պահանջարկը: Անհրաժեշտ էր մանուֆակտուրային արտադրանքը փոխարինել մեքենայական արդյունաբերությամբ: Կատարվում են մի շարք գյուտեր և հայտնագործություններ (շոգեմեքենա,

շոգեքարշ, շոգենավ, խառատային հաստոց և այլն), որոնք ներդրվում են մանուֆակտուրաներում: Սկսվում է արդյունաբերական հեղաշրջումը՝ ձեռքի աշխատանքի փոխարինումը մեքենայական աշխատանքով: Մանուֆակտուրաներին փոխարինում են ֆաբրիկաները և գործարանները: Արդյունաբերական հեղաշրջման հետևանքով եվրոպական երկրները և ԱՄՆ-ը XIX դ. սկզբին մտնում են արդյունաբերական հասարակության ձևավորման և զարգացման փուլ: Ինդուստրացման հիման վրա կատարված այս փոփոխությունները հայտնի են արդիականացում (մոդեռնացում) անվանումով:

Նշված փոփոխությունների հետևանքով Եվրոպայում ձևավորվում է արդյունաբերական հասարակությունը (ազատ շուկայական ֆաբրիկա-գործարանային կապիտալիզմը), որը շարունակվում է մինչև XIX դ. 60-ական թթ. վերջերը: Ազատ շուկայական կապիտալիզմի պայմաններում ձեռնարկատերերի միջև տեղի է ունենում ոչնչով չսահմանափակված մրցակցություն արդյունաբերության առավել ձեռնտու պայմանների և ապրանքների գների համար՝ առավելագույն շահույթ ապահովելու նպատակով: Մրցակցությունը դառնում է տնտեսության զարգացման կարևոր խթան:

Ձգտելով ստանալ գերշահույթ՝ ձեռնարկատերերն անընդհատ ավելացնում են ապրանքների արտադրությունը, որն առաջացնում է տնտեսական ճգնաժամ: Առաջին տնտեսական ճգնաժամը տեղի է ունեցել Անգլիայում 1825 թ., իսկ առաջին համաշխարհային տնտեսական ճգնաժամը՝ 1857-1859 թթ.:

Եվրոպայում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացները փոխում են պետությունների քաղաքական կառուցվածքը: Պատմության գիրկն են անցնում բացարձակ միապետությունները. նրանց փոխարինում են սահմանադրական միապետությունները: Ակտիվանում է խորհրդարանական (պառլամենտական) գործունեությունը:

Կապիտալիստական հասարակարգում փոխվում է նաև հասարակության սոցիալական կառուցվածքը: Նվազում է ազնվականության տնտեսական և քաղաքական իշխանությունը: Դրան զուգընթաց ձևավորվում են հասարակության երկու հիմնական դասակարգերը՝ բուրժուազիան և բանվոր դասակարգը (պրոլետարիատը):

Արդյունաբերական հեղաշրջման պայմաններում զարգանում են հասարակական-քաղաքական մտքի երեք հիմնական հոսանքները՝ պահպանողական, լիբերալ-ազատական և սոցիալիստական: Գաղափարախոսության մեջ շարունակում էր գերիշխել պահպանողական հոսանքը: XIX դ. 30-40-ական թթ. Եվրոպայում սուր բախումների հետևանքով ծնվում է մարքսիստական ուսմունքը: Առաջանում են քաղաքական նոր կուսակցություններ, արհեստակցական միություններ (արհմիություններ) և այլ կազմակերպություններ:

Միջնադարին և վաղ նոր ժամանակներին բնորոշ կրոնական պատերազմներին արդյունաբերական հասարակության այս շրջափուլում փոխարինում

են ազգային պետությունների ստեղծման և ազգային պետական սահման-ների ընդարձակման համար մղվող նոր պատերազմները (անկախության պատերազմները Լատինական Ամերիկայում, Գերմանիայի և Իտալիայի վերամիավորման համար պատերազմները):

Արդյունաբերական հասարակության ձևավորման առաջին շրջափուլում լուրջ տեղաշարժեր են կատարվում նաև Ասիայի և Աֆրիկայի երկրներում, որտեղ ավանդական հասարակություններն ավելի ու ավելի անզոր են դառ-նում դիմագրավելու Արևմուտքի զարգացած երկրների ճնշումներին: Ան-կախությունը կորցնելու վտանգն ստիպում է նրանց քայլեր ձեռնարկել ար-դիականացման և բարեփոխումների համար: Առաջինը Ճապոնիան առանց արտաքին ճնշման, 1868 թ. հեղափոխությունից հետո բռնեց բարեփոխում-ների ուղին և արմատապես վերափոխեց երկիրը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ

Ազատ մրցակցության կապիտալիստական հասարակությունը Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում՝ հասնելով բարձր զարգացման, մտնում է մոնո-պոլիստական կապիտալիզմի (իմպերիալիզմ) փուլը: Այժմ արդեն տնտե-սական զարգացումը որոշվում է ոչ թե առանձին ձեռնարկատերերի մրցակցությամբ, այլ արդյունաբերական և ֆինանսական միավորումների տնտեսական գործունեությամբ:

Խոշոր արդյունաբերողներն սկսում են միմյանց հետ պայմանավորվել թո-ղարկվող ապրանքների գների, քանակի, վաճառահանման շուկաների և այլ հարցերի շուրջ: Այսպես առաջանում են ձեռնարկությունների միավորման տարբեր ձևեր՝ սինդիկատներ, կարտելներ, տրեստներ, կոնցեռներ և այլն: Երբ արդյունաբերական ընկերությունը գերիշխող դիրք է գրավում տնտեսության որևէ ճյուղում, վերածվում է մոնոպոլիայի (օրինակ՝ Ռոկֆելլերի նավթային տրեստն ԱՄՆ-ում արտադրում էր նավթի արտադրության շուրջ 90 տոկոսը):

Փաստորեն մարդկանց ոչ մեծ խմբի ձեռքում կենտրոնանում է այնպիսի իշխանություն, որի մասին կերազեին անգամ թագադրված միապետները: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի մոնոպոլիստներին անվանում են «Ամերիկայի չթագադրված թագավորներ», իսկ Գերմանիայում ասում էին. «Ինչը լավ է Կրուպպի համար, շատ լավ է նաև Գերմանիայի համար»:

Ազատ շուկային սպառնացող վտանգը, զարգացած արտադրողական ուժե-րը և սոցիալական բարդ կառուցվածքն առաջացնում են մոնոպոլիաների գոր-ծունեությանը պետության միջամտության անհրաժեշտություն: Պետությունն ստանձնում է կարգավորիչ դեր և ընդունում հակամոնոպոլիստական օրենք-ներ (արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլի ամբողջական բնութագրին դուք կծանոթանաք դասագրքի երկրորդ բաժնում):

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են նոր դարերի պատմության շրջափուլերը: Նշեք դրանց ժամանակագրական շրջանակները:
2. Ո՞րն էր նոր դարերի պատմության հիմնական բովանդակությունը:
3. Ձեր կարծիքով՝ ո՞րն է նոր պատմության առաջին շրջափուլի հիմնական առանձնահատկությունը:
4. Ծանոթանալով նոր պատմության բովանդակությանը՝ ի՞նչ հարցեր ձեր մեջ հետաքրքրություն առաջացրին:
5. Լրացրե՛ք «Նոր դարերի պատմության շրջափուլերը» աղյուսակը:

Շրջափուլերը	*Ժամանակագրական շրջանակները*	*Բնորոշ գծերը*

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ (XVII ԴԱՐ–XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

I ԲԱԺԻՆ

§1. ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

XVIII դ. 60–80-ական թթ. Եվրոպայի առաջավոր երկրներում և ԱՄՆ-ում տեխնիկան ավելի զարգացավ, ձեռքի աշխատանքին սկսեց փոխարինել մեքենայականը, մանուֆակտուրային՝ ֆաբրիկան ու գործարանը: Սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը: Մանող մեքենաներին փոխարինելու եկավ շոգեմեքենան՝ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության շարժիչը:

Մեքենայական հագեցվածությամբ երկար ժամանակ առաջատարը տեքստիլ արդյունաբերությունն էր: Մանող մեքենան (մյուլ-մեքենա) կատարելագործվեց: Գործվածքի վրա ձեռքով նկարների դաջումը փոխարինվեց մեքենայականով: XIX դ. կեսին ստեղծվեցին կարող մեքենաներ, որոնք օգտագործում էին թե՛ տանը, թե՛ ֆաբրիկաներում:

Հսկայական փոփոխություններ կատարվեցին մետաղների արտադրության ու մշակման ոլորտում: Երկաթաքարն սկզբում դոմնային վառարաններում հալում էին փայտածուխով: Դա հասցրեց անտառների ոչնչացման: XVIII դ. Անգլիայում հայտնագործեցին քարածխով չուգունը հալելու եղանակը: Սկսեցին մեծ ծավալով քարածուխ արդյունահանել: Այն տեղափոխելու համար կառուցում

Դոմնային վառարան

Շոգենավ

էին ջրանցքներ, կամուրջներ, իսկ ավելի ուշ՝ երկաթուղիներ:

Օդը վառարաններ մղելու համար դարեր շարունակ օգտագործում էին փուքսեր, որոնք գործի էին դնում ջրանիվով: XVIII դ. վերջին երևան եկան օդամղիչ մեքենաները, իսկ XIX դ. կեսին սկսեցին կիրառել տաք օդամղումը:

Անգլիացի Հենրի Բեսսեմերը և ֆրանսիացի ճարտարագետ Պիեռ Մարտենն ավելի կատարելագործեցին դոմնային վառարանները:

Անհրաժեշտ էր մետաղը կոփել, կտրել, շաղափել: Մետաղների մշակման համար ստեղծեցին խառատային, պտուտակահան, ռանդիչ, ֆրեզերային, ներտաշիչ նոր հաստոցներ: Սկսեցին մեքենաներ պատրաստել մեքենաների օգնությամբ:

Մեքենաների խոշոր մասեր կռելու համար XIXդ. 40-ական թթ.սկսեցին կիրառել 50 տոննանոց շոգեմուրճը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄԸ

Տեխնիկական առաջընթաց սկսվեց նաև գյուղատնտեսության ոլորտում: Եվրոպական երկրներում միջին դարերում լայնորեն տարածված եռադաշտային համակարգին փոխարինեց բազմադաշտային համակարգը: Մշակաբույսերն ըստ հերթականության ածեցնում էին այնպես, որ նրանք ոչ թե հողն ուժասպառ էին անում, այլ վերականգնում էին հողից նախորդ մշակաբույսերի վերցրած նյութերը:

Շոգեմեքենան շարժման մեջ դնող ջրանիվ

XIX դ. առաջին կեսին Անգլիայում և ԱՄՆ-ի հյուսիսային նահանգներում սկսեցին օգտագործել գյուղատնտեսական մեքենաներ: Հողը մշակող միախոփ գութանին փոխարինեցին բազմախոփ գութանները: Շրջանառության մեջ դրվեցին ցանքի համար ձիաքարշ

ցանող մեքենաներ, ձիաքարշ հնձիչներ, կալսելու համար՝ շոգեկալսիչներ:

1840 թ. գերմանացի ֆիզիկոս Յուստուս Լիբիխն առաջադրեց հողը հանքային նյութերով պարարտացնելու գաղափարը: Սկսեց զարգանալ հանքային պարարտանյութեր արտադրող արդյունաբերությունը:



«Ջեննի» ճախարակ

Սակայն մեքենաները գյուղատնտեսության մեջ զգալիորեն ավելի դանդաղ էին ներդրվում, քան արդյունաբերության մեջ: Միայն խոշոր կապիտալիստական տնտեսություններն էին կարողանում օգտագործել նոր տեխնիկան: Երկրների մեծ մասում հողագործության մեջ գերակշռողը մանր գյուղացիական տնտեսությունն էր՝ հիմնված ձեռքի աշխատանքի վրա:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

XVIII դ. Եվրոպայի առաջավոր երկրներում և ԱՄՆ-ում մանուֆակտուրաների զարգացումը նախապատրաստեց հեղաշրջում արդյունաբերության մեջ: Արդյունաբերական հեղաշրջում՝ նշանակում է անցում ձեռքի աշխատանքից մեքենայական աշխատանքի և մանուֆակտուրայից՝ ֆաբրիկայի:

Մանուֆակտուրաներում արտադրական առանձին գործընթացների չափազանց պարզեցումը հանգեցրեց այն մտքին, որ մարդու ձեռքին, որպես աշխատանքի հիմնական գործիքի, կարող է փոխարինել մեքենան: Այդ մասին առաջինը մտածեցին մանուֆակտուրայում աշխատող վարձու բանվորները և հմուտ վարպետները: 1765 թ. ջուլհակ Ջեյմս Հարգրիվսը հնարեց մանող մեքենա՝ ճախարակ, որը, ի պատիվ իր դստեր, անվանեց «Ջեննի»: «Ջեննի» ճախարակն աշխատեցնում էր մարդը: Շուտով հայտնագործվեց մեխանիկական ջուլհակային հաստոցը, որը 40 անգամ բարձրացրեց ջուլհակի աշխատանքի արտադրողա-



Առաջին շոգեքարշը

* *Ռիչարդ Արկրայթ (1732–1792 թթ.)*

Ջեյմս Ուատտ (1736–1819 թթ.)

Ջորջ Ստեֆենսոն (1781–1848 թթ.)

կանությունը: Այսպես ստեղծվեցին բանող մեքենաները, որոնք ամբողջությամբ փոխարինեցին մարդու ձեռքի աշխատանքին: Սա արդյունաբերական հեղաշրջման սկիզբն էր:

Ճարպիկ գործարար Ռիչարդ Արկրայթը, իրեն վերագրելով նոր՝ մանող մեքենայի հայտնագործումը, 1771 թ. կառուցեց աշխարհում առաջին ֆաբրիկան, որտեղ մեքենաներն աշխատեցնում էր ոչ թե բանվորը, այլ ջրանիվը: Սակայն մանուֆակտուրայից գործարանին վերջնականապես անցումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հայտնագործվեց շոգեմեքենան:

Շոգեմեքենայի ստեղծման առաջին փորձն արել է անգլիացի գյուտարար Թոմաս Նյուկոմենը XVIII դ. սկզբին: Կատարելագործելով Նյուկոմենի գյուտը՝ անգլիացի մեխանիկ Ջեյմս Ուատտը 1784 թ. ստեղծեց մի նոր շոգեմեքենա, որը փոխանցիչ համակարգի միջոցով աշխատեցնում էր ամենատարբեր մեքենաներ: Այդ ժամանակվանից էլ սկսվեց շոգեմեքենաների հաղթական երթը: Անգլիացի հնոցապանի որդի, ինքնուս գյուտարար Ջորջ Ստեֆենսոնը 1814 թ. կառուցեց առաջին շոգեքարշը:

Շոգեմեքենան օգտագործվեց նաև ջրափոխադրումների համար: Իռլանդացի ինքնուս մեխանիկ Ռոբերտ Ֆուլտոնը, որը շատ գյուտերի հեղինակ էր, 1807 թ. ԱՄՆ-ում կառուցեց «Քլերմոն» անվավոր շոգենավը, որը նավարկեց Հուդզոն գետում: Շուտով շոգենավերը դուրս եկան ծովային նավարկության: «Սավաննան» առաջին շոգենավն էր, որը նավարկելով անցավ Ատլանտյան օվկիանոսը:

Ամերիկացի ճարտարագետ Էվանսը XIX դ. սկզբին (1803–1804 թթ.) Ֆիլադելֆիայի փողոցներ դուրս բերեց առաջին ավտոմոբիլը՝ շոգեշարժիչով:

---

* *Դասագրքում զետեղված բոլոր գործիչների նկարների տակ նշված են նրանց կյանքի տարիները:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս կարելի է բնութագրել տեխնիկայի զարգացումը XVIII դ. և XIX դ. առաջին կեսին:
2. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին տեքստիլ արդյունաբերության մեջ;
3. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին մետաղամշակության մեջ:
4. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին տրանսպորտի և կապի բնագավառում:
5. Ձեր կարծիքով՝ ո՞րն էր գյուղատնտեսության մեջ տեխնիկայի դանդաղ ներդրվելու հիմնական պատճառը:
6. Ի՞նչ է արդյունաբերական հեղաշրջումը: Ո՞ր գյուտերով և հայտնագործություններով սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը:
7. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ տեխնիկական առաջընթացը ոչ թե վերացրեց, այլ սրեց հակասությունները կապիտալիստների և վարձու բանվորների միջև:
8. Լրացրե՛ք «Նշանավոր գյուտերն ու հայտնագործությունները XVIII դ. կեսեր – XIX դ. կեսերին» աղյուսակը:

Հեղինակ	*Տարեթիվ*	*Գյուտ և (հայտնագործություն)*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Դրվագ Ջեյմս Ուատտի՝ ֆաբրիկա այցելությունից

Պատմվածքում Ջեյմս Ուատտը գնում է Ակրայթի ֆաբրիկան, որը որոշել էր ջրանիվը փոխարինել շոգեմեքենայով: Այնտեղ Ուատտը մտնում է մի նեղ երկար դահլիճ և տեսնում մանող մեքենաների շարքեր, որոնց կողքին նույնանման շարժումներ կատարելով աշխատում էին փոքր երեխաներ:

Մի քանիսն այնքան փոքր էին, որ նրանց ոտքերին փայտյա ոտնակոճղեր էին կապել, որպեսզի երեխաները հասնեին մեխանիզմներին:

– Ի՞նչ կարող են անել այս պստլիկները,– ակամա բացականչեց Ուատտը:

– Աշխատել, տեր իմ,– բղավեց ուղեկցողը (ավագ վարպետը): Մեզ մոտ յուրաքանչյուր վերակացու շահագրգռված է այդ անբանների աշխատանքով: Նա նրանց չի թողնում, որ հորանջեն:

Ուատտը հենց այդտեղ տեսավ նրա խոսքերի ապացույցը: Կաշվե մտրակը շարունակ իջնում էր երեխաների մեջքերին: Սակայն մի աղ–

ջիկ այնքան էր ուժասպառ եղել, որ նրա գլուխն անկախ իր կամքից ընկնում էր կրծքին: Մերրակի հարվածը նրան նոր ուժ չտվեց... Նրա շարժումները չէին հասնում մեքենայի ընթացքին: Այն պահից, երբ Ուատտը հավասարվեց աղջկան, հնչեց մի թույլ ճիչ, և, մինչև նա կհասցներ ուշքի գալ, նրա ձեռքը ճզմեց թմբկագլանը...: Իր փոքրիկ հարևաններից ոչ մեկը չհամարձակվեց կտրվել աշխատանքից...

– Ուշադրություն մի դարձրեք, տեր իմ: Այդ անբանին հիմա քարշ կտան, կտանեն: Մանկատներն ամեն մի անպետք ապրանք մեզ են ուղարկում: Ուատտը կամքի լարումով հազիվ է զսպում իր կատաղությունն ու սարսափը:

Լուդդականներ

Անգլիայի ֆաբրիկաներում և գործարաններում մեքենաների օգտագործումը, որը կարող էր բարելավել բանվորների աշխատանքը, հանգեցնում է սովի ու գործազրկության: Կարծելով, որ իրենց ծանր վիճակի պատճառը մեքենաներն են, նրանք սկսեցին զանգվածաբար ոչնչացնել դրանք: Առաջացավ մեքենաներ ջարդողների շարժումը, որը առանձնապես լայն թափ ստացավ 1811–1813 թթ.: Այդ շարժման մասնակիցներն իրենց անվանում էին լուդդականներ՝ լեգենդար բանվոր Նեդ Լուդդի անունով, որն իբր առաջինն էր դազգահ ջարդել:

Լուդդականների մի մասն ատելություն չէին տածում մեքենաների նկատմամբ: Ջարդելով մեքենաները՝ նրանք պարզապես հարված էին հասցնում կապիտալիստների սեփականությանը՝ հույս ունենալով, թե կստիպեն նրանց զիջումների գնալ: Ահաբեկված ձեռնարկատերերը կառավարությունից պահանջում էին պաշտպանել իրենց: Պառլամենտն ընդունեց մեքենաները փչացնելու համար մահապատժի ենթարկելու օրենք: Լուդդականների շարժումը անողոքաբար ճնշվեց:

1. Ի՞նչ ապրումներ ունեցաք լրացուցիչ նյութն ընթերցելիս: Փորձեք բնութագրել Ջեյմս Ուատտին ուղեկցող վարպետին: Ի՞նչ եք կարծում՝ այսօր կա՞ն նման մարդիկ: Ձեր կարծիքով՝ որո՞նք են ֆաբրիկայում աշխատող երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի պատճառները: Հնարավո՞ր է այդպիսի վերաբերմունք մեր օրերում: Հիմնավորեք ձեր տեսակետը: Փորձեք հիշել նման օրինակներ հայ գրականությունից: Ինչո՞վ եք բացատրում միանման երևույթների առկայությունը տարբեր ժողովուրդների կյանքում:

2. Փորձեք գնահատել լուդդականների շարժումը: Ի՞նչ եք կարծում՝ ճի՞շտ էր նրանց ընտրած պայքարի ուղին: Ձեր կարծիքով ինչո՞ւ էր մեքենաների ներդրումը արտադրության մեջ դարձել չարիք բանվորների համար: Ի՞նչ եք կարծում այսօր կա՞ն այդպիսի երևույթներ: Հիմնավորեք ձեր տեսակետը:

§2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Եվրոպական երկրների և ԱՄՆ-ի արդյունաբերական զարգացման արդյունքում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան այդ երկրների հասարակական կյանքում: Փոխվեց եվրոպական հասարակության սոցիալական կառուցվածքը: Ավելացավ բուրժուազիայի և գործարանային վարձու բանվորների թիվը: Նրանք հետագայում (XX դ. սկիզբ) կազմեցին նոր հասարակարգի երկու հիմնական դասակարգերը՝ արդյունաբերական բուրժուազիան և բանվոր դասակարգը:

Բուրժուազիայի ներկայացուցիչները շատ էին աշխատում՝ չխնայելով ոչ ուժ և ոչ էլ ժամանակ: Շնայած նրանց կենցաղը համեստ էր, բայց շատերը ձգտում էին դառնալ արիստոկրատիայի մաս: Օրինակ՝ անգլիացի քաղաքական գործիչ Բենջամին Դիզրայելիին Մեծ Բրիտանիայի Վիկտորիա թագուհին շնորհեց Բիկենֆիլդի լորդի տիտղոս, իսկ Ֆրիդրիխ Կրուպը և Էռնստ Սիմենսն ստացան ազնվականի տիտղոսներ Գերմանիայում:

Բանվոր դասակարգը նույնպես միատարր չէր: Տարբերակում էին բարձր որակավորում ունեցող բանվորներին, որոնց որոշ պատմաբաններ անվանել են բանվորական արիստոկրատիա: Արդյունաբերական հասարակության կյանքում նոր երևույթ էր միջին դասակարգի առաջացումը, որը միավորում էր տարբեր խավերի՝ մանր բուրժուազիա, մասնավոր ընկերությունների և պետական հաստատությունների ծառայողներ:

Միջին դասակարգին էին պատկանում նաև ազատ մասնագիտությունների ներկայացուցիչները՝ ճարտարագետներ, գյուտարարներ, իրավաբաններ, բժիշկներ, ուսուցիչներ, սպաներ և այլն: Միջին դասակարգին պատկանելու հատկանիշներից էր նրանց նյութական կայուն վիճակը: Ինչ վերաբերում է եվրոպական հողատեր արիստոկրատներին, ապա նրանք սկզբնա-

Անգլիական պառլամենտի նիստ

կան շրջանում դեռևս պահպանում էին իրենց կալվածքները և ավելի շատ կապված էին գյուղի, քան քաղաքի հետ:

Մինչև XIX դ. կեսերը, օրինակ, Անգլիայի պառլամենտի համայնքների պալատում մեծամասնությունը հողատեր-արիստոկրատներն էին: Սակայն արդյունաբերական հասարակության զարգացմանը զուգընթաց հողատեր արիստոկրատներն աստիճանաբար կորցնում են իրենց արտոնությունները և ազդեցությունը: Արիստոկրատների մի մասը, կառչած մնալով հին կարգերին, զրկվում է իր հարստությունից, իսկ մյուս մասը, հարմարվելով նոր պայմաններին, կարողանում է ղեկավար պաշտոններ ձեռք բերել արդյունաբերական ընկերություններում, բանկերում և գաղութային վարչակազմերում:

Եվրոպական հասարակության կյանքում կատարված կարևոր փոփոխություններից է դասերի և դասային արտոնությունների վերացումը: Մի շարք երկրներում դասերը վերանում են իրավաբանորեն, համապատասխան օրենքների ընդունմամբ: Այնտեղ, որտեղ դասային սահմանափակումները շարունակեցին պահպանվել, վերացան հետագայում՝ հասարակության արդիականացման ընթացքում:

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Արդյունաբերական հասարակությունն իր հետ բերեց քաղաքների աճ, որն արագացավ XIX դ. սկզբին և շարունակվեց հետագայում: Քաղաքների բուռն վերելքը հետևանքն էր ամենից առաջ գյուղերի գերբնակչության: Գյուղերում բարելավվել էր հողօգտագործումը. այնտեղ ներդրվել էին տնտեսության վարման նոր, առաջավոր մեթոդներ, որոնց հետևանքով ազատվել էին բազմաթիվ բանվորներ: Բացի այդ, փոքր քաղաքների անկման հետևանքով քայքայվել էին արհեստավորական արտադրությունը և մանր առևտուրը, ավելացել էր աշխատանք փնտրող վարձու մարդկանց թիվը: Քաղաքների աճի հաջորդ պատճառը տեխնիկական առաջընթացն էր և փոփոխությունները տրանսպորտում:

Նյու Յորք, XIX դ.

Շոգեմեքենայի հայտնագործման և երկաթուղային տրանսպորտի զարգացման շնորհիվ արդյունաբերական

կենտրոնները հնարավորություն ունեցան գետերի ափերից տեղափոխվելու այլ շրջաններ: Տարբեր վայրերում կուտակված մարդկանց զանգվածները տեղափոխվեցին արդյունաբերական խոշոր կենտրոններ՝ համալրելով քաղաքային բնակչության շարքերը: Այսպես՝ եթե Անգլիայում՝ «քաղաքների երկրում», XIX դ. սկզբին քաղաքային բնակչությունը 20 տոկոս էր, ապա 1870 թ. այն հասավ 66 տոկոսի: ԱՄՆ-ում քաղաքային բնակչությունը 1790 թ. երեք տոկոսից աճեց և 1870 թ. հասավ 21 տոկոսի: Արդեն 1871 թ. Լոնդոնն ուներ 3,2 միլիոն, Փարիզը՝ 1,8 միլիոն, իսկ Նյու Յորքը՝ 1,4 միլիոն բնակչություն:

Այսպես քաղաքները դառնում են արդյունաբերական խոշոր կենտրոններ: Առաջին անգամ քաղաքն սկսեց գերակշռություն ձեռք բերել տնտեսական կյանքում: Մեծ քաղաքներում հարուստ թաղամասերի շքեղ շենքերի կողքին՝ հետնախորշերի կեղտի ու աղքատության մեջ ապրում էին բանվորները:

ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Արդյունաբերական հեղաշրջման դարաշրջանում կատարված գյուտերն ու հայտնագործությունները, տեխնիկական առաջընթացը փոխեցին մարդկանց կենսապայմանները, կյանքն ու կենցաղը: Այդ փոփոխությունները առաջին հերթին զգաց արդյունաբերական կենտրոններ դարձած խոշոր քաղաքների բնակչությունը: Խոշոր քաղաքներում մարդկանց տեղաշարժերը, աշխատանքի գնալ-գալը բավական դժվարացել էր: Շուտով նրանց օգնության հասան առաջին փոխադրամիջոցները:

Հասարակական տրանսպորտի առաջին միջոցը՝ օմնիբուսը (անգլերեն omnibus-մեքենա բոլորի համար)՝ ձիաքարշ մեծ ծածկակառք, Փարիզի փողոցներում երթևեկել է XIX դ. սկզբին: Բազմաթիվ քաղաքներում փողոցները սալարկվեցին: XVIII դ. վերջերից քաղաքների փողոցները լուսավորում են յուղի, իսկ ավելի ուշ՝ գազի լամպերով: Նորություն էին նաև նավթի լամպերը և բնաձարպի մոմերը: Կառուցվեցին ջրմուղ ունեցող տներ: Երևացին առաջին վերելակները: Կյանքը դարձավ ավելի հարմարավետ:

Օմնիբուս

Փոխվեց քաղաքների բնակարանների ներքին հարդարանքը: Առանձին սենյակներ՝ ննջասենյակ, հյուրասենյակ, աշխատասենյակ և այլն, ձեռք բերեցին հատուկ նշանակությունը: Մինչև XIX դ. կեսերը բնակարանները տաքացվում էին վառարաններով, իսկ XIX դ. 70-ական թթ.՝ կենտրոնացված ջեռուցմամբ: Ուշագրավ փոփոխություններ կրեց նաև հագուստը: Վերացան ազգային տարազների առանձնահատկությունները: Եվրոպայի զարգացած բոլոր երկրների քաղաքներում սկսեցին հագնվել միանման կոստյումներ:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց լուսանկարչության գյուտը: Մարդիկ սկսեցին կարևորել իրենց տոհմի և ընտանիքի պատմությունը՝ լուսանկարներում: Մեծ պահանջարկ վայելող հայտնագործություն էր գրամեքենան, որով առաջինը մեքենագրվել է Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները» ստեղծագործությունը: Գրագիտության տարածմանը զուգահեռ սկսեցին լույս տեսնել բազմաթիվ օրաթերթեր, ստեղծվեցին հանրային գրադարաններ:

Գրամեքենա, XIX դար

Եվրոպացիների գաղթը տարբեր երկրներ և մայր ցամաքներ առաջ բերեց կապի նոր միջոցների անհրաժեշտություն: Լայնորեն տարածվեց ամերիկացի Սեմյուել Մորզեի հեռագրական ապարատը և նրա կետ-գծիկով այբուբենը: Հեշտացավ հաղորդակցությունը, ընդլայնվեց մարդկանց հետաքրքրությունների աշխարհը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են արդյունաբերական զարգացման հետևանքով հասարակական կյանքում կատարված փոփոխությունները:
2. Ձեր կարծիքով՝ ի՞նչը նպաստեց քաղաքների աճին ու զարգացմանը:
3. Որո՞նք են քաղաքային կյանքում տեղի ունեցած փոփոխությունները:
4. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան մարդկանց կենսապայմաններում: Ձեր կարծիքով՝ որո՞նք են քաղաքային կյանքի և կենցաղի արագ զարգացման պատճառները:
5. Լրացրե՛ք «Քաղաքը միջնադարում և նոր ժամանակներում» աղյուսակը:

Համեմատություն	Միջին դարեր	Նոր դարեր
Նմանություն		
Տարբերություն		

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ֆելիքս Գրայի (1844–1901 թթ.) «Մարսելցիները» պատմվածքից

«Այժմ ամեն մի գյուղացի ունի իր հողակտորը, և նա կարող է թեկուզ ինչ-որ չափով իր ընտանիքն ապահովել հացով: Իսկ ես մինչև 12 տարեկան հասակս ոչ մի անգամ մեր խրճիթում չեմ տեսել ո՛չ խմորատաշտ, ո՛չ հացի զամբյուղ, ո՛չ էլ գինու տակառիկ: Մեզ մոտ տարեկան միայն մի անգամ էին խմոր հունցում: Դրա համար հայրս ու մայրս գնում էին հարևան գյուղ և այնտեղ հաց թխում մի քանի բուռ տարեկանի ալյուրից և մեծ քանակությամբ թեփից, բակլայից և կաղնափոշուց: Մեկ ամսից հետո հացի սև քառակող կտորները քարի պես կոշտանում էին: Ամեն առավոտ հայրս դրանք կացնով կտրատում էր, և տարեվերջին կացնի բերանը բոլորովին բթանում էր. այնքան քարթու էր այդ հացը»:

1. Ինչ փոփոխություն է տեղի ունեցել ֆրանսիական գյուղում մեծ հեղափոխությունից հետո: Ինչպե՞ս է այն անդրադարձել գյուղական ընտանիքի սոցիալական դրության վրա: Ինչ եք կարծում՝ գյուղացին բավարարված էր ձեռք բերածով և չունե՞ր այլ մտահոգություններ: Հիմնավորեք ձեր տեսակետը: Փորձեք զուգահեռներ անցկացնել անցյալ դարի և մեր օրերի գյուղական կյանքի պայմանների միջև: Ինչ եզրակացություն կարելի է անել:

§3. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

XVII–XVIII դդ. Արևմտյան Եվրոպայի (Հոլանդիա, Անգլիա, Ֆրանսիա) և Հյուսիսային Ամերիկայի (ԱՄՆ) երկրներում առաջացավ ու տարածվեց մի շարժում, որն անվանեցին լուսավորական շարժում: Լուսավորականներն առաջադեմ գիտնականներ, գրողներ և արվեստագետներ էին, որոնք անխնա քննադատում էին ավատատիրական կարգերը, անսահմանափակ միապետությունը, կաթոլիկ եկեղեցին և այն ամենը, ինչը ճնշում էր մարդուն, սահմանափակում նրա ընդունակությունների դրսևորումը:

Լուսավորականության գաղափարները Վերածննդի գաղափարախոսության շարունակությունն էին: Վերածննդի գաղափարախոսությունն առաջացավ կապիտալիստական հասարակարգի սաղմնավորման փուլում, իսկ Լուսավորականությունն արդեն ձևավորված բուրժուազիայի հեղափոխական պայքարի գաղափարախոսությունն էր:

Լուսավորության գաղափարախոսները արծարծում էին հասարակության վերափոխման խնդիրը: Նրանք առաջ էին քաշում քաղաքական ազատության և մարդկանց իրավահավասարության գաղափարները, որոնք պետք է դառնային նոր հասարակարգի առաջընթացի հիմքը: Նրանք մեծ տեղ էին հատկացնում բանականությանը: Լուսավորականները կարծում էին, որ մարդկային բանականությունն ի վիճակի է բացատրելու և մեկնաբանելու այն ամենը, ինչ գոյություն ունի աշխարհում:

Լուսավորականության ներկայացուցիչների հանդիպում

Նրանք հիմնավորեցին մարդկանց՝ ի ծնե հավասար լինելու և ազատություններ ունենալու սկզբունքը: Լուսավորականները պահանջում էին առևտրի ազատություն և մասնավոր սեփականության իրավունքի երաշխավորվածություն: Ըստ

լուսավորականների՝ պետությունը ոչ թե աստվածային շնորհի էր, այլ մարդկանց պայմանավորվածությամբ ստեղծված կառույց: Լուսավորականները դեռ որոշ հույսեր էին կապում «լուսավորյալ միապետների» հետ՝ հուսալով, որ վերջիններս կիրականացնեն իրենց ակնկալած անհրաժեշտ բարեփոխումները:

Լուսավորականները հասարակության զարգացման կարևոր պայման էին համարում գիտելիքները, կատարյալ օրենքները և կրթության տարածումը: Նրանք ավատատիրական կարգը համարում էին «անբնական ու անբանական» և խիստ բացասական վերաբերմունք ունեին միջնադարի նկատմամբ: Ի հակադրություն միջնադարի՝ իրենց ապրած XVIII դ. նրանք անվանեցին «Լուսավորության դարաշրջան»:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՈՒՄ

Անգլիան եղել է լուսավորության հայրենիքը, որտեղ լուսավորական գաղափարների խոշոր ներկայացուցիչներ էին Ջոն Լոկը և Դավիթ Հյումը:

Ջ. Լոկը պառլամենտական միապետության վերականգնման կողմնակից էր: Ըստ նրա՝ «մարդիկ ի ծնե ազատ են, հավասար և անկախ»: Ջ. Լոկը գիտելիքների միակ աղբյուր համարում էր փորձը և այն ամենը, ինչն ընկալվում է զգայարաններով:

Ջոն Լոկ
(1632–1704 թթ.)

Անգլիական լուսավորության մյուս խոշոր ներկայացուցիչը Դ. Հյումն է: Ունենալով իրավաբանական կրթություն՝ նա որոշել էր գիտականորեն հիմնավորել մարդու իրավունքների մասին ուսմունքը:

Դ. Հյումը գրել է բազմաթիվ հոդվածներ՝ պաշտպանելով բուրժուազիայի և խոշոր հողատերերի դաշինքի գաղափարը: Տնտեսագիտության բնագավառում նա կողմնակից էր ազատ մրցակցությանը:

Լուսավորության գաղափարները ամենաբարձր զարգացման հասան ֆրանսիացի լուսավորականներ Շարլ Մոնտեսքյոյի, Մարի Ֆրանսուա Վոլտերի և Ժան-Ժակ Ռուսոյի աշխատություններում:

Դավիթ Հյում
(1711–1776 թթ.)

Շարլ Մոնտեսքյո
(1689–1755 թթ.)

Մարի Ֆրանսուա Վոլտեր
(1694–1778 թթ.)

Ժան-Ժակ Ռուսո
(1712–1778 թթ.)

Շ. Մոնտեսքյոն սերում էր հարուստ ազնվական ընտանիքից: Տասը տարի եղել է Բորդոյի պառլամենտի նախագահ: Նա պաշտպանում էր սահմանադրական միապետության գաղափարը, կարևորում՝ օրենքի առաջ քաղաքացիների իրավահավասարությունը, ընտրական իրավունքի, խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, եկեղեցու անջատումը պետությունից:

Մ. Վոլտերին ժամանակակիցներն անվանում էին առաջավոր մարդկանց «մտքերի տիրակալ»: Վոլտերը անգլիական հեղափոխության համակիրներից էր, պահանջում էր սահմանափակել թագավորի իշխանությունը, վերացնել կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը, սակայն վախենում էր հեղափոխությունից:

Ավելի արմատական հայացքներ ուներ Ժան-Ժակ Ռուսոն: Ըստ նրա՝ «Մարդը ծնվում է ազատ, մինչդեռ նա ամենուրեք շղթաների մեջ է հայտնվում»: Ռուսոն կարծում էր, որ երկրում իշխանությունը պետք է պատկանի ժողովրդին, որն իրավունք ունի սահմանելու պետության կառավարման ձևը:

Ժամանակի հայտնի լուսավորականներից էր Դենի Դիդրոն: Նրա նախաձեռնությամբ հրատարակվել է Ֆրանսիական հանրագիտարանը:

Դ.Դիդրոն պաշտպանել է առաջադեմ բուրժուազիայի շահերը, քննադատել ավատատիրական բարքերը, կաթոլիկ եկեղեցին, լուսավորության հետ է կապել կրոնի վերացումը:

Անգլիական և ֆրանսիական լուսավորության գաղափարների ազդեցությամբ ձևավորվեց Լուսավորական շարժումը Հյուսիսային Ամերիկայում, որի առաջատար ներկայացուցիչներից էին Բենջամին Ֆրանկլինը և Թոմաս Ջեֆերսոնը:

Մեծ լուսավորական, պետական գործիչ և գիտնական Բ. Ֆրանկլինը մասնակցել է ԱՄՆ-ի «Անկախության հռչակագրի» նախապատրաստմանը, ԱՄՆ-ի 1787 թ. Սահմանադրության մշակմանը, եղել է ԱՄՆ-ի դեսպանը Փարիզում:

Ըստ նրա՝ մարդն ունի բնական և անօտարելի իրավունքներ՝ կյանքի, ազատության և սեփականության՝ պետության հիմքը համարելով հասարակական դաշինքը:

Խոշոր պետական և հասարակական գործիչ էր Թ. Ջեֆերսոնը: Նա «Անկախության հռչակագրի» նախագծի հեղինակն էր, ԱՄՆ 3-րդ նախագահը:

Ջեֆերսոնի կարծիքով բոլոր մարդիկ ծնվում են իրավահավասար, իսկ պետություններն ստեղծվում են մարդկանց «կյանքի, ազատության և երջանկության ձգտելու» իրավունքը ապահովելու համար: Սեփականությունը համարում էր ոչ թե բնական, այլ քաղաքացիական իրավունք:

Առաջավոր մի շարք երկրներում, գրեթե նույն ժամանակաշրջանում տարածված Լուսավորական շարժումը ժամանակի առաջադիմական հեղափոխական գաղափարների արտահայտությունն էր:

Դենի Դիդրո
(1713-1784 թթ.)



Բենջամին Ֆրանկլին
(1706-1790 թթ.)

Յոզեֆ II
(1741-1790 թթ.)

ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ԱՐՔԱՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Լուսավորականության գաղափարները թափանցեցին նաև եվրոպական թագավորական միջավայր և իրենց ազդեցության ոլորտի մեջ առան բազմաթիվ միապետների, որոնց թվում էին՝ Յոզեֆ II-ը՝ Ավստրիայում, Ֆրիդրիխ II Մեծը՝ Պրուսիայում, Եկատերինա II-ը՝ Ռուսաստանում, Գուստավ I-ը՝ Շվեդիայում, Ստանիսլավ Ավգուստը՝ Լեհաստանում, և ուրիշներ: XVIII դ. երկրորդ կեսին ծավալված համաեվրոպական այս երևույթը ավանդաբար անվանվում է «Լուսավորյալ միապետների» (միահեծանության) դարաշրջան:

Լուսավորության գաղափարներով էին տոգորված Ավստրիայի միապետ Յոզեֆ II-ի (1765-1790 թթ.) բարեփոխումները, որոնք ուղղված էին առևտրի ու արդյունաբերության զարգացմանը, նոր մանուֆակտուրաների ստեղծմանը: Նրա օրոք կատարվեցին վարչական, մաքսային բա-

Ֆրիդրիխ II
(1712–1786 թթ.)

Եկատերինա II
(1729–1796 թթ.)

բենորոգումներ, ստեղծվեց պետական խորհուրդ: Նա հրատարակեց քրեական և քաղաքացիական նոր օրենսգրքեր, վերացրեց ծեծը և խոշտանգումները:

Յոզեֆ II-ն առաջին անգամ անցկացրեց մարդահամար, գյուղացիներին ազատեց ճորտային կախվածությունից և հողեր շնորհեց: Փակվեցին հազարից ավելի վանքեր, իսկ խլված կալվածքները վաճառվեցին ձեռներեց մարդկանց: Ստացված միջոցները Յոզեֆ II-ը տրամադրում էր կրթական հաստատություններ բացելու և բարեգործական այլևայլ նպատակների համար: Մինչև 12 տարեկան երեխաների ուսուցումը նա դարձրեց պարտադիր, ընդունեց դեկրետ կրոնական հանդուրժողականության մասին: Նրա շնորհիվ Վիեննան դարձավ եվրոպական երաժշտական և թատերական արվեստների կենտրոններից: Նա մտերիմ էր Վոլտերի և Դիդրոյի հետ:

Յոզեֆ II-ի մահից հետո Ավստրիայի հաջորդ տիրակալ Լեոպոլդ II-ը վերջ դրեց սկսված լուսավորական բարենորոգումներին:

Լուսավորական գաղափարներն իրենց զգացնել տվեցին նաև գերմանական երկրորդ խոշոր պետության մեջ՝ Պրուսիայում, որտեղ գահակալում էր Ֆրիդրիխ II-ը (1740–1786 թթ.): Նա Պրուսիայում իրականացրեց մի շարք բարեփոխումներ. կազմեց նոր քրեական օրենսգիրք, պարզեցրեց դատավարությունը, վերացրեց մարմնական պատիժները, կարգավորեց հարկային համակարգը, ընդլայնեց տարրական կրթությունը: Մեծ ուշադրություն էր դարձնում մանուֆակտուրաների աճին և զարգացմանը:

Որպես լուսավորյալ միապետ՝ Ֆրիդրիխ II-ը նամակագրական կապեր էր հաստատել հայտնի լուսավորականների ու գիտնականների հետ: Նրա հրավերով Պոտսդամի արքունի պալատում կարճ ժամանակով հյուրընկալվեց հայտնի լուսավորական Վոլտերը:

Եվրոպայում ճանաչված լուսավորյալ միապետի համբավ ուներ նաև Ռուսաստանի Եկատերինա II (1762–1796 թթ.) կայսրուհին: Նա նամակագրական կապեր էր հաստատել Վոլտերի հետ և նրան

համարում էր իր ուսուցիչը: Եկատերինա II-ը հարգանքով էր վերաբերվում Շարլ Մոնտեսքյոյին, որովհետև վերջինս Ռուսաստանի համար լավագույն պետական կարգը համարում էր միապետությունը: Եկատերինա II-ը, պաշտպանելով այս գաղափարը, կարծում էր, որ ինքնակալությունը Ռուսաստանում, որպես պետության ձև, լուսավորյալ կառավարման պայմաններում կկարողանա ապահովել կայսրության բոլոր քաղաքացիների ազատությունը, հավասարությունը և բարեկեցությունը: Լուսավորական գաղափարների ոգով կազմած Եկատերինա II-ի հրահանգ «նակազը», որով պետք է առաջնորդվեին օրենսդիրները, չհաջողվեց իրականացնել: Նա դրականորեն է արձագանքել հայ գործիչների Հայաստանի ազատագրության խնդրանքին:

Ֆրիդրիխ II-ի նվերը Եկատերինա II-ին

Լուսավորյալ միապետության դարաշրջանը շարունակվեց մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որի իրագործողները նույնպես լուսավորական գաղափարների հետևորդներ էին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր դարն է անվանվում Լուսավորության դարաշրջան:
2. Ի՞նչ է լուսավորականությունը: Ովքե՞ր էին լուսավորականները:
3. Ովքե՞ր են անգլիական լուսավորության ներկայացուցիչները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
4. Ովքե՞ր են ֆրանսիական լուսավորության ներկայացուցիչները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
5. Ովքե՞ր են ամերիկյան լուսավորության ներկայացուցիչները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
6. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի միապետներին անվանում լուսավորյալ միապետներ:
7. Ի՞նչ եք կարծում՝ համընկնո՞ւմ էին արդյոք լուսավորյալ միապետների հայացքներն իրենց գործունեության հետ: Հիմնավորեք ձեր պատասխանը:

8. Լրացրեք «Ֆրանսիական լուսավորականներ» աղյուսակը:

Լուսավորիչներ	Հայացքներ	
	Նմանություն	Տարբերություն
Մոնտեսքյո		
Վոլտեր		
Ռուսո		

9. Լրացրեք «Լուսավորյալ միապետներ» աղյուսակը:

Միապետներ	Երկրներ	Գահակալման տարիներ	Կատարած գործեր	Նշանակություն
Յոզեֆ II				
Ֆրիդրիխ II				
Եկատերինա II				

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Եկատերինա II կայսրուհին

Եկատերինա II-ի հետ կապեր են հաստատել և բանակցություններ վարել շատ նշանավոր հայ գործիչներ: Դեռևս 1760–1770-ական թթ. Հակոբ Ե Շամախեցի, Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսները դիմել են Եկատերինա II-ին («Հոռսիսի Շամիրամին»)՝ ակնկալելով նրա օգնությունը՝ ազատագրելու Հայաստանը թուրք-պարսկական լծից: 1768 թ. հրովարտակով Եկատերինա II-ը պատրաստակամություն է հայտնել «հանուն քրիստոնեության» օգնել ու հովանավորել «ազնիվ հայ ժողովրդին»: Կյանքի վերջին շրջանում նա նույնիսկ նպատակ էր դրել ստեղծել ռուսահպատակ հայոց թագավորություն: Ռուսական կառավարող շրջաններում հարցը այնքան էր հասունացել, որ արքունիքում շրջանառվում էր Հայաստանի ապագա թագավորի անունը: Հայոց արքայական գահին պետք է բազմեր զորավար Պոտյոմկինը: Կայսրուհին ոգևորված այդ գաղափարով՝ պատրաստել էր տվել Հայաստանի զինանշանը, որի վրա պատկերված էր Մասիս սարը՝ վրան Նոյան տապանը:

Փորձեք բնութագրել Եկատերինա II-ին: Ի՞նչ է խորհրդանշում ռուսական արքունիքում ստեղծված Հայաստանի զինանշանը: Համեմատեք այն ՀՀ զինանշանի հետ: Ի՞նչ եք կարծում՝ որքանով էին նրանում արտահայտված հայ ժողովրդի իղձերն ու երազանքները:

§4. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒՂԻՆ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

«ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական փորձը ցույց է տալիս, որ հասարակության զարգացման մեջ լինում են ինչպես աստիճանական (էվոլյուցիա), այնպես էլ արմատական (ռևոլյուցիա) փոփոխություններ: Արմատական փոփոխությունները բնորոշ են հեղափոխությանը, որի ընթացքում, տապալվում է հին, իր դարն ապրած հասարակական կարգը և անցում է կատարվում նոր, ավելի առաջադիմական հասարակարգի: Հեղափոխությունը հասունանում է հասարակության ընդերքում, երբ սրվում են հակասությունները հին և նոր կարգերի կողմնակիցների միջև, այսինքն՝ երբ հասարակությունը ճգնաժամ է ապրում: Այդ ճգնաժամը հիմնականում հանգեցնում է հեղափոխության, որն ուղեկցվում է զինված բախումներով ու բռնություններով: Այդ ընթացքում զոհվում են հազարավոր մարդիկ, քայքայվում է տնտեսությունը, ոչնչանում նյութական և հոգևոր շատ արժեքներ: Ահա թե ինչու նախընտրելի է հասարակության առանց բռնության, խաղաղ ճանապարհով իրականացվող վերափոխումը, որն անվանում են «անարյուն հեղափոխություն»: Հեղափոխությունը հիմնականում ընթանում է վերելքներով ու վայրէջքներով, ունենում ժամանակավոր անհաջողություններ ու պարտություններ: Նման դեպքերում հեղափոխության արդյունքները ևս տարբեր են լինում: Եթե հեղափոխությունը պսակվում է հաղթանակով (հիմնականում այդպես է լինում)՝ իշխանությունն անցնում է հեղափոխական ուժերի ձեռքը, և նրանք ձեռնամուխ են լինում նոր կարգերի հաստատմանը: Եթե հեղափոխությունը պարտություն է կրում, ապա իշխանության ղեկը կրկին անցնում է հին դասակարգին և ժամանակավորապես վերականգնվում են հին կարգերը: Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ հեղափոխական և հետադիմական ուժերը համաձայնության են եկել և իրականացրել սահմանափակ բարեփոխումներ:

Ավատատիրությունից կապիտալիզմին անցման դարաշրջանում տեղի ունեցած հեղափոխություններն իրենց բնույթով վաղ բուրժուական հեղափոխություններ էին: Այդ հեղափոխությունների նպատակն ավատատիրական կարգերը տապալելն էր և կապիտա-

լիստական կարգեր հաստատելը:

XVII–XX դդ. ընթացքում Եվրոպայում տեղի ունեցան ինչպես անարյուն, այնպես էլ բռնությամբ իրականացված բուրժուական հեղափոխություններ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Չարլզ I
(1600–1649 թթ.)

XVII դ. կեսերին Անգլիայում շարունակում էին զարգանալ կապիտալիստական արտադրությունը և ապրանքային տնտեսությունը: Ավելանում էր մանուֆակտուրաների և վարձու բանվորների թիվը, ընդլայնվում էր առևտուրը, վերելք ապրում քաղաքները: Համալրվում էին բուրժուազիայի և իրենց տնտեսությունը վարձու աշխատանքի օգտագործմամբ վարող նոր ազնվականության շարքերը, աճում էր նրանց կարողությունը: Այդ ամենը խարխլում էր թագավորական իշխանության և ավատատիրական կարգերի հիմքերը: Անգլիայի թագավորներն իրենց միահեծան իշխանությունը և հին կարգերը պահպանելու համար արգելակում էին ձեռներեցությունը, կապիտալիստական արտադրության խորացումը, սահմանում էին նոր մենաշնորհներ, հարկեր ու տուրքեր, դիմում կամայականությունների և չարաշահումների: Երկրում աճում էր դժգոհությունը, որն ավելի սրվեց Չարլզ I (1625–1649 թթ.) թագավորի օրոք: Նա պետական բոլոր միջոցները վատնեց պատերազմների և պալատական հանդիսությունների վրա, գանձարանը դատարկվեց, վարչական համակարգը քայքայվեց: Անհրաժեշտ էր փրկել դրությունը, գտնել նոր միջոցներ և ուղիներ գանձարանը լցնելու համար: Չարլզ I-ը, վախենալով շիկացած մթնոլորտից, այլևս անկարող էր սահմանելու նոր հարկեր՝ առանց պառլամենտի (դեռ վաղ ժամանակներից միայն պառլամենտն իրավունք

Երկարատև պառլամենտի նիստը

ուներ սահմանել հարկեր), որը նա ցրել էր դեռ տասնմեկ տարի առաջ: Այդ էր պատճառը, որը 1640 թ. Չարլզ I-ը ստիպված եղավ կրկին հրավիրել պառլամենտ: Սակայն նոր պառլամենտը հրաժարվեց ենթարկվել թագավորին և կատարել նրա կամքը: Խիստ սրվեցին հակասությունները թագավորի և պառլամենտի միջև: Թագավորին սատարում էին հին ազնվականությունը և անգլիկան եկեղեցին, իսկ պառլամենտին՝ ձեռներեցները, նոր ազնվականությունը և ժողովրդի մեծ մասը, որոնց միավորում էին պուրիտանական (լատ. պուրուսմաքուր բառից) գաղափարները: Պուրիտանները պահանջում էին վերացնել շքեղ ծիսակատարությունները և ստեղծել պարզ ու էժան եկեղեցի: Այս պառլամենտը, որը գործեց գրեթե 13 տարի և պատմության մեջ հայտնի է «Երկարատև պառլամենտ» անունով, խոչընդոտեց կամայական հարկերի հավաքմանը, վերացրեց գրաքննությունը, պատասխանատվության կանչեց թագավորի բարձրաստիճան պաշտոնյաներին, խրախուսեց գործարարությունը: Չհաշտվելով իր անսահմանափակ իշխանության կորստի հետ՝ թագավորը հեռացավ Լոնդոնից: Այսպես՝ 1640 թ. Անգլիայում սկսվեց հեղափոխություն, որը շարունակվեց մինչև 1660 թ.: Երկրի հյուսիս հեռացած թագավորը, զորք հավաքեց և 1642 թ. պատերազմ հայտարարեց պառլամենտին: Երկիրը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ: Թագավորի կողմնակիցներին անվանում էին «կավալերներ» (ասպետ, ազնվական), իսկ պառլամենտի կողմնակիցներին՝ «կլորագլուխներ», քանի որ բուրժուազիայի ներկայացուցիչների միջավայրում տարածված էր մազերի կլոր կտրվածքը:

Չարլզ I թագավորի մահապատիժը

Օլիվեր Կրոմվել (1599–1658 թթ.)

Սկզբում պառլամենտի բանակը պարտություններ էր կրում, սակայն երբ բանակի ղեկավարությունը ստանձնեց գյուղական ազնվական, հա-

մայնքների պալատի անդամ Օլիվեր Կրոմվելը, իրավիճակը փոխվեց: Կրոմվելի բանակը մի շարք հաղթանակներ տարավ թագավորական զորքերի դեմ: 1645 թ. Նեյզբիի ճակատամարտում պարտություն կրած Չարլզ I-ը, հագնելով ծառայի զգեստը, փախավ Շոտլանդիա: Սակայն շոտլանդացիները մեծ գումարով նրան հանձնեցին պառլամենտին: Ձերբակալված Չարլզ I-ը, որպես պետության դավաճան և Անգլիայի ժողովրդի թշնամի, 1649 թ. հունվարի 30-ին մահապատժի ենթարկվեց: Քաղաքացիական պատերազմն ավարտվեց: Անգլիան հռչակվեց հանրապետություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Չարլզ II
(1630-1685 թթ.)

Մեծ հեղինակություն ձեռք բերած Կրոմվելը, ստանալով բանակի օժանդակությունը, 1653 թ. ցրեց Երկարատև պառլամենտը և հաստատեց իր միանձնյա իշխանությունը: Նա ստացավ լորդ-պրոտեկտորի տիտղոս: Դա նշանակում էր վերջ հեղափոխությանը, վերջ հանրապետությանը և միապետության վերականգնման նախապատրաստում: Կրոմվելը երկիրը կառավարում էր՝ ելնելով նոր ազնվականների և բուրժուազիայի շահերից: 1658 թ. Կրոմվելի մահից հետո կարճ ժամանակով կրկին վերականգնվեց հանրապետությունը:

Հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի տարիներին Անգլիայի տնտեսությունը անկում էր ապրել, վատացել էր բնակչության սոցիալական դրությունը: Սկսվել էին սոցիալական ելույթներ, բնակչության հուզումներ: Առաջացել էին քաղաքական տարբեր հոսանքներ, որոնք պահանջում էին սոցիալական բարեփոխումներ կատարել, սահմանել խոսքի ազատություն, ընտրելու իրավունք տալ 21 տարին լրացած բոլոր տղամարդկանց: Սակայն նման պահանջները և ապստամբության փորձերը դաժանորեն ճնշվեցին:

Վախենալով ժողովրդական շարժումներից՝ բուրժուազիան և նոր ազնվականությունը որոշեցին վերականգնել միապետությունը: 1660 թ. Անգլիա վերադարձավ մահապատժի ենթարկված թագավորի որդին՝ Չարլզ II-ը: Սա նշանակում էր, որ հեղափոխությունը Անգլիայում ավարտվեց: Թագավորը խոստացավ հեղափոխության տարիներին զավթած հողերը թողնել նոր տերերին, ազնվականներից չպահանջել վճարումներ, պահպանել պառլամենտի իրավունքները և

կատարված բարեփոխումները: 1660 թ. Անգլիայում վերականգնվեց միապետությունը:

Ստյուարտների արքայատոհմի թագավորները դեռ հույս ունեին վերականգնելու իրենց նախկին անսահմանափակ իշխանությունը: Չարլզ II-ին փոխարինած նրա եղբայր Հակոբ II-ը նույնիսկ որոշեց վերականգնել ժողովրդի մերժած կաթոլիկ եկեղեցին:

Վիլհելմ III Օրանացի (1650–1702 թթ.)

Դժգոհ Հակոբ II-ից՝ պառլամենտը որոշեց նրան զրկել գահից և այն հանձնել նրա դուստր Մարիայի ամուսնուն՝ Հոլանդիայի կառավարիչ Վիլհելմ III Օրանացուն: Վերջինս 1688 թ. աշնանն իր զորքով ժամանեց Անգլիա և բազմեց գահին: Հակոբ II-ը փախավ Ֆրանսիա: Այս իրադարձությունն անվանեցին «Փառահեղ հեղափոխություն», քանի որ, ի տարբերություն 1640–1660 թթ. հեղափոխության, այն անցավ առանց արյունահեղության:

XVII դ. վերջից սկսած՝ պետական կարևորագույն հարցերը լուծում էր ոչ թե թագավորը, այլ պառլամենտը: Թագավորի իշխանությունն ավելի ու ավելի էր սահմանափակվում: Անգլիայում հաստատվեց սահմանադրական միապետություն: Աստիճանաբար հաստատվեց մի այնպիսի իրավիճակ, երբ արքաները «թագավորում են, բայց չեն կառավարում»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է հեղափոխությունը: Ինչ հեղափոխություններ գիտեք: Դուք կողմ եք հեղափոխություններին: Հիմնավորեք ձեր տեսակետը:
2. Տեքստից դուրս գրել և բացատրել հետևյալ տերմինները՝ անգլիկան եկեղեցի, պուրիտաններ, «կավալերներ», «կլորագլուխներ», Երկարատև պառլամենտ:
3. Ո՞րն է անգլիական հեղափոխության հիմնական պատճառը: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր էր խուսափել հեղափոխությունից:
4. Նկարագրեք Օ. Կրոմվելի գործունեության I և II փուլերը:
5. Ե՞րբ է տեղի ունեցել քաղաքացիական պատերազմն Անգլիայում:
6. Ձեր կարծիքով՝ ո՞րն էր անգլիական հեղափոխության գլխավոր նշանակությունը:

7. Լրացրեք «Անգլիան հեղափոխությունից առաջ և հետո» աղյուսակը:

Անգլիան հեղափոխությունից առաջ	Անգլիան հեղափոխությունից հետո

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Վեճեր բանակային կոնֆերանսում 1647 թ.

Կոնֆերանսում լուրջ քննարկումներ և վեճեր տեղի ունեցան, մի կողմից՝ Կրոմվելի ու ավագ սպաների, մյուս կողմից՝ սպաների ու զինվորների միջև:

Կապիտան Ռենբորո *– Ինչ վերաբերում է ինձ, ապա կարելի է ասել, որ ես թագավորին դեմ եմ: Ես դեմ եմ նրան և ամեն մի իշխանության, որ վնաս կհասցնի ժողովրդին...*

Կրոմվել *– Անգլիացիներն ընտրելացել են պետական կառուցվածքի որոշակի կարգին: Ես համաձայն չեմ այն մարդկանց, որոնք կարծում են, թե գերագույն իշխանությունը պատկանում է բացառապես ժողովրդին...*

Պետտի *– Մենք կարծում ենք, որ Անգլիայում բոլոր քաղաքացիները պետք է օգտվեն ձայնի հավասար իրավունքից:*

Գեներալ Այրտոն *(Կրոմվելի փեսան) – Ես համոզված եմ, որ օրենքներ հրատարակելու համար ներկայացուցիչներ ընտրելու իրավունք պետք է ունենան միայն նրանք, ովքեր ունեն հող, ինչպես նաև նրանք, ովքեր իրենց նվիրում են արդյունաբերական ու առևտրական գործունեության:*

1. Ինչ եք կարծում՝ բանակային կոնֆերանսում ինչու միայն ընտրական իրավունքին և Անգլիայի պետական կառուցվածքին վերաբերող հարցեր քննարկեցին: Ինչ են վկայում այդ քննարկումները: Ընդհանրացրեք ձեր հետևությունները:

2. Քաղաքական ինչ խմբեր կարելի է առանձնացնել կոնֆերանսում հնչած կարծիքների (գաղափարների) հիման վրա: Հիմնավորեք ձեր տեսակետը:

§ 5. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՄԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒՂԻՆ: ՀՅՈՒՍԻՍԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

«Բոստոնյան թեյախմություն»

XVII–XVIII դդ. Անգլիայից Հյուսիսային Ամերիկա եկած վերաբնակիչները, դուրս մղելով բնիկներին՝ հնդկացիներին, այնտեղ ստեղծում են 2,5 միլիոն բնակչությամբ անգլիական 13 գաղութ: Այդ գաղութները ղեկավարում էին Անգլիայի միապետի նշանակած նահանգապետները և մասնավոր անձինք: Գաղութների իրավունքները խիստ սահմանափակ էին: Տնտեսությունը զարգանում էր կապիտալիզմի ուղիով, որին խանգարում էր անգլիական տիրապետությունը:

XVIII դ. կեսերին Անգլիայի պառլամենտն ընդունեց մի շարք օրենքներ, որոնց հետևանքով էլ ավելի սահմանափակեցին գաղութաբնակների իրավունքները: Գաղութների և Անգլիայի միջև հակասությունները հետզհետե խորանում էին: 1773 թ. Բոստոնի բնակիչները հարձակվեցին թեյով բեռնված անգլիական նավերի վրա, որոնք եկել էին Հնդկաստանից, և ծովը թափեցին ողջ բեռը: Այս իրադարձությունը պատմության մեջ հայտնի է «Բոստոնյան թեյախմություն» անունով: Անգլիայի կառավարությունը փակեց Բոստոնի նավահանգիստը և գաղութներ զորք ուղարկեց: Իրավիճակը ծայրաստիճան սրվեց: Անհրաժեշտ էր արագ կողմնորոշվել և գտնել ճիշտ լուծումներ: Այդ նպատակով 1774 թ. գարնանը գաղութներն իրենց ներկայացուցիչներն ուղարկեցին Ֆիլադելֆիա՝ մասնակցելու այնտեղ հրավիրված առաջին կոնգրեսին (համաժողով): Կոնգրեսը դիմեց Անգլիային՝ խնդրելով վերացնել տնտեսական զար-

Ջորջ Վաշինգտոն (1732–1799 թթ.)



Թոմաս Ջեֆերսոն (1743–1826 թթ.)

գացմանը խոչընդոտող օրենքները: Անգլիայի թագավորը դա հայտարարեց խռովություն և զորքերին հրամայեց ճնշել այն: Պատերազմն Անգլիայի և նրա ամերիկյան գաղութների միջև սկսվեց 1775 թ. ապրիլին, երբ անգլիացիները գրավեցին գաղութաբնակների՝ Բոստոնից ոչ հեռու տեղակայված ռազմական պահեստը: Դրանից հետո ռազմական գործողությունները սաստկացան:

1775 թ. մայիսին բացված երկրորդ կոնգրեսը ապստամբած գաղութների նոր կազմավորվող բանակի գլխավոր հրամանատար նշանակեց գնդապետ Ջորջ Վաշինգտոնին: Հաջորդ տարի՝ 1776 թ. հուլիսի 4-ին, կոնգրեսն ընդունեց «Անկախության հռչակագիրը», որի հեղինակն էր Թոմաս Ջեֆերսոնը: Հռչակագրով, ապստամբած գաղութներն իրենց հայտարարեցին ազատ և անկախ պետություններ՝ միավորվելով Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ ԱՄՆ-ի մեջ: Այդ օրը դարձավ ամերիկացիների ազգային տոնը, որը նշվում է առ այսօր:

Անգլիան ամերիկյան գաղութներ ուղարկեց ռազմական խոշոր ուժեր: Ամերիկացիներն զգում էին դրամի, զենքի, զինամթերքի, հագուստի, պարենամթերքի պակաս: Վաշինգտոնի բանակը հարկադրված Ֆիլադելֆիայից հեռացավ երկրի խորքը: Չնայած դժվարություններին՝ նա մի քանի տարի հաջողությամբ պատերազմում էր անգլիական զորքերի դեմ:

ԱՄՆ-ի «Անկախության հռչակագրի» ընդունումը, 1776 թ. հուլիսի 4

1777 թ. հոկտեմբերին Վաշինգտոնի բանակը և աշխարհազորայինները Սարատոգա բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին անգլիացիներին: Պատերազմում բեկում սկսվեց հօգուտ ամերիկացիների: Անգլիային պատերազմ հայտարարեց Ֆրանսիան՝ Ամերիկա ուղարկելով նավատորմ և զորք: Ֆրանսիայի օրինակին հետևեցին Իսպա-

նիան և Հոլանդիան: Ռուսաստանի նախաձեռնությամբ մի շարք եվրոպական երկրներ ստեղծեցին «Չեզոք երկրների միություն»: Անգլիան հայտնվեց մեկուսացման մեջ:

1781 թ. անգլիացիների գլխավոր ուժերը Յորքթաուն քաղաքի մոտ շրջապատվեցին և ի վերջո ստիպված էին անձնատուր լինել: 1783 թ. Վերսալում կնքվեց հաշտության պայմանագիր, որով Անգլիան ճանաչեց Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախությունը:

Անկախության պատերազմը և Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորումը (1775 – 1783 թթ.)

1787 թ. ընդունվեց Սահմանադրություն, որը գործում է առ այսօր: ԱՄՆ-ի Սահմանադրությունը, որով ԱՄՆ-ը դարձավ դաշնային պետություն, կազմված էր 7 հոդվածից: Ըստ Սահմանադրության՝

բարձրագույն օրենսդիր մարմինը Կոնգրեսն է (պառլամենտ), որը կազմված է երկու պալատից՝ Սենատից և Ներկայացուցիչների պալատից: Կոնգրեսի ընդունած օրենքները հաստատում է երկրի նախագահը:

Գործադիր իշխանությունը ղեկավարում է նախագահը՝ պրեզիդենտը, որն ընտրվում է 4 տարի ժամկետով: Նա բանակի ու նավատորմի գերագույն հրամանատարն է, նշանակում է պետական բարձրաստիճան պաշտոնյաներին: 1787 թ. Սահմանադրության հիման վրա ԱՄՆ-ի առաջին նախագահ ընտրվեց Ջորջ Վաշինգտոնը:

Բարձրագույն դատական իշխանությունը տրվեց Գերագույն դատարանին, որի անդամներին նշանակում է նախագահը՝ «Սենատի խորհրդով և համաձայնությամբ»:



ԱՄՆ-ի իշխանության բարձրագույն մարմինները՝ ըստ 1787 թ. Սահմանադրության

1791 թ. ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ կատարվեցին առաջին տասը ուղղումները, որոնք հայտնի են «Իրավունքների մասին բիլլ (օրենք)» անունով: Այդ օրենքով ճանաչվում էին քաղաքացիների ժողովրդավարական հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ խոսքի, մամուլի, ժողովների, դավանանքի, զենք կրելու և այլն: Արգելվում էին առանց դատարանի որոշման կամայական ձերբակալությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են ստեղծվել անգլիացիների առաջին գաղութները Հյուսիսային Ամերիկայում:

2. Որո՞նք էին անկախության պատերազմի պատճառները:
3. Որո՞նք էին «Անկախության հռչակագրի» հիմնական դրույթները:
4. Ե՞րբ է տեղի ունեցել Սարատոգայի ճակատամարտը: Ե՞րբ է ընդունվել ԱՄՆ-ի Սահմանադրությունը: Ո՞վ է ԱՄՆ-ի առաջին նախագահը:
5. Ըստ ԱՄՆ-ի Սահմանադրության, որո՞նք են իշխանության բարձրագույն երեք մարմինները:
6. Փորձեք հիմնավորել այն եզրակացությունը, որ անկախության համար ԱՄՆ-ի պատերազմը բուրժուական հեղափոխություն էր:
7. Լրացրեք «Անկախության պատերազմը և ԱՄՆ-ի ձևավորումը» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվ	Իրադարձություն	Արդյունք (հետևանք)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԱՄՆ-ի «Անկախության հռչակագրից»

Երբ իրադարձությունների ընթացքը որևէ ժողովրդի հարկադրում է խզել այլ ժողովրդի հետ ունեցած քաղաքական կապերը և մյուս պետություններին հավասար անկախություն նվաճել..., ապա մարդկության կարծիքի նկատմամբ պատշաճ հարգանքը պարտավորեցնում է նրան շարադրել դեպի անջատումը դրդող պատճառներ:

Մենք ակներև ենք համարում հետևյալ ճշմարտությունները. բոլոր մարդիկ ստեղծվել են հավասար և նրանք բոլորն Արարչի կողմից օժտվել են որոշ անկապտելի իրավունքներով, որոնց թվին են պատկանում կյանքը, ազատությունը և երջանկության ձգտումը: Այդ իրավունքները պաշտպանելու համար մարդիկ հաստատել են կառավարություններ, որոնց տրված է արդարացի իշխանություն կառավարողների համաձայնությամբ: Իսկ եթե կառավարման տվյալ ձևը նրանց նպատակի համար դառնում է կործանարար, ապա ժողովուրդն իրավունք ունի փոխելու կամ վերացնելու այն և հաստատելու նոր կառավարություն... Այդ գաղութները... երկար ժամանակ ու համբերությամբ տարան զանազան ոտնձգություններ, և միայն անհրաժեշտությունն է ստիպում նրանց փոխելու իրենց կառավարման նախկին ձևը: Մեծ Բրիտանիայի այժմյան թագավորի պատմությունը լի է անսահման անարդարություններով, որոնց անմիջական նպատակը եղել է այդ նահանգներում բռնապետություն հաստատելը:

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է «Անկախության հռչակագրում» փորձ արվում հիմնավորելու գաղութների անջատման անհրաժեշտությունը: Հիմնավորեք ձեր տեսակետը:

2. XVIII դ. տարածված հասարակական-քաղաքական ի՞նչ հայացքներ են արտացոլվել «Անկախության հռչակագրում»: Դրանցից որո՞նք են այսօր խիստ այժմեական և ինչո՞ւ:

§6. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ

Բաստիլի գրավումը, 1789 թ. հուլիսի 14

XVIII դ. երկրորդ կեսից բացարձակ միապետությունը Ֆրանսիայում խանգարում էր երկրի հետագա զարգացմանը:

Գյուղացիների համատարած սնանկացման պատճառով կրճատվել էր հարկերի մուտքը պետական գանձարան: Հաճախացել էին սովյալ գյուղացիների ելույթները: Միևնույն ժամանակ անկում էր ապրում Ֆրանսիայի արդյունաբերությունը, փակվում էին մանուֆակտուրաները: Բուրժուազիան հրաժարվում էր թագավորին նոր փոխառություններ տալ և վճռականորեն հանդես էր գալիս արքունիքի կողմից պետական միջոցների անտեղի վատնումների դեմ:

Լյուդովիկոս XVI-ը (1774–1793 թթ.) բուրժուազիայից փոխառությունների և նոր հարկերի համար համաձայնություն ստանալու նպատակով 1789 թ. գարնանը հրավիրեց Գլխավոր շտատները, որը չէր հրավիրվել ավելի քան 150 տարի: Գլխավոր շտատները կազմված էր բոլոր՝ երեք դասերի ներկայացուցիչներից: Երրորդ դասի պատգամավորներն արտահայտում էին հիմնականում բուրժուազիայի շահերը: Նրանք մերժեցին թագավորին փոխառություն տալ՝ պահանջելով նախ երկրում բարենորոգումներ կատարել:

Թագավորը ցրեց Գլխավոր շտատները: Սակայն երրորդ դասի պատգամավորները, զգալով ժողովրդի աջակցությունը, չցրվեցին, այլ իրենց հայտարարեցին երկրի բարձրագույն իշխանություն՝ Ազգային ժողով: Շուտով Ազգային ժողովն իրեն հռչակեց Սահմանադիր ժողով՝ նպատակ ունենալով Սահմանադրություն ընդունել և սահմանափակել թագավորի իշխանությունը:

Փարիզում բռնկվեց ապստամբություն: 1789 թ. հուլիսի 14-ին զինված ժողովուրդը հարձակվեց և գրավեց Բաստիլ ամրոցը, որը թագավորական բացարձակ իշխանության խորհրդանիշն էր: Բաստիլի

գրավումը համարվում է Ֆրանսիական մեծ հեղափոխության սկիզբը: Բաստիլի գրավման օրը հետագայում հռչակվեց Ֆրանսիայի ազգային տոն, որը նշվում է մինչ օրս:

Լյուդովիկոս XVI (1754–1793 թթ.)

Սահմանադիր ժողովը 1789 թ. օգոստոսի 26-ին ընդունեց «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը», որով ճանաչվեցին մարդու բնական և ի ծնե ազատ ու հավասար լինելու իրավունքները: Գերագույն իշխանության միակ աղբյուրը և կրողը հռչակվեց ոչ թե աստվածընտիր թագավորը, այլ ամբողջ ժողովուրդը: Ճանաչվեց բոլոր քաղաքացիների իրավունքն անձամբ կամ իր ներկայացուցիչների միջոցով մասնակցելու պետության կառավարմանը: Հռչակվեցին խոսքի, դավանանքի ազատությունները և սեփականության անձեռնմխելիության իրավունքը: «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» գաղափարներն արտահայտվեցին հեղափոխության «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսում:

Սահմանադիր ժողովը վերացրեց հողի նատմամբ ազնվականության ժառանգական իրավունքը, բնակչության դասային բաժանումը, մաքսերը: Պետականացվեցին կաթոլիկ եկեղեցուն պատկանող հողային ընդարձակ տիրույթները:

1791 թ. սեպտեմբերին ընդունվեց երկրի առաջին Սահմանադրությունը: Թագավորի իշխանությունը պահպանվեց, բայց իրավասությունները սահմանափակվեցին: Ֆրանսիան դարձավ Սահմանադրական միապետություն: Օրենսդիր իշխանությունն այդուհետ իրականացնելու էր Օրենսդիր ժողովը, որը միապալատ էր և ընտրվում էր երկու տարով: Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադիր ժողովը ցրվեց: Փոխարենն ընտրվեց օրենսդիր ժողով: Սակայն հեղափոխությունը դրանով չավարտվեց: Սահմանադրությունից դժգոհ ժողովրդական զանգվածները նոր թափով շարունակեցին իրենց հեղափոխական պայքարը:

ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ֆրանսիայում ծավալվող հեղափոխական իրադարձություններն անհանգստացրին Եվրոպայի միապետներին, որոնք դաշինք կնքեցին Ֆրանսիայի դեմ: Ավստրիայի և Ֆրանսիայի միջև պատերազմ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ, 1789թ.

սկսվեց, որի ընթացքն անհաջող էր Ֆրանսիայի համար: Թագուհի Մարիա-Անտուանետը ավստրիացիներին էր հանձնել Ֆրանսիայի ռազմական գործողությունների գաղտնի պլանը: Թագավորն իր հերթին ձգձգում էր բանակն ուժեղացնելու գործը: Ֆրանսիական զորքերը պարտություններ էին կրում:

Այդ օրհասական պահին Օրենադիր ժողովը հայտարարեց. «Հայրենիքը վտանգի մեջ է»: Ամենուր ստեղծվում էին կամավորական ջոկատներ: Այդ օրերին երիտասարդ սպա Ռուժե դը Լիլը մի գիշերվա ընթացքում գրեց «Մարսելյոզ» երգը, որը բարձրացրեց ժողովրդի մարտական ոգին և մղեց նրան նորանոր սխրանքների. հետագայում այդ երգը դարձավ Ֆրանսիայի պետական օրհներգը:

Հայրենիքի պաշտպանության համար սկսված համաժողովրդական շարժման գլուխ կանգնեց մանր բուրժուազիայի արմատական թևը, որի ղեկավարներից էին Ժան Պոլ Մարատը, Ժորժ Դանտոնը, Մաքսիմիլիան Ռոբեսպիերը և ուրիշներ: Ֆրանսիայում ստեղծվեցին հեղափոխական ակումբներ, որոնք քաղաքական կուսակցությունների դեր էին կատարում: Դրանցից էին ժիրոնդիստների, Յակոբինների և այլ ակումբներ: Նրանք չէին վստահում ոչ միայն թագավորին, այլև Սահմանադիր ժողովին, կոչ էին անում ընտրել նոր Ազգային ժողով՝ Կոնվենտ:

Ժան Պոլ Մարատ (1743–1793 թթ.)

Ժորժ Դանտոն (1759–1794 թթ.)

Մաքսիմիլիան Ռոբեսպիեր (1758–1794 թթ.)

Լյուդովիկոս XVI-ը թեև երդվել էր հավատարիմ մնալ Սահմանադրությանը, սակայն իրականում չէր հաշտվել իր իշխանության սահմանափակման հետ: Թագավորական ընտանիքը փորձեց փախչել արտասահման և հարևան միապետների օգնությամբ ճնշել հեղափոխությունը, սակայն ճանապարհին ձերբակալվեց:

1792 թ. օգոստոսի 10-ին Փարիզում ապստամբ ժողովուրդը տա-

Լյուդովիկոս XVI թագավորի մահապատիժը

պալեց միապետությունը: Ավարտվեց Ֆրանսիական մեծ հեղափոխության առաջին փուլը (1789 հուլիսի 14–1792 օգոստոսի 10), որը նշանավորվեց Սահմանադրության հաստատմամբ, «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունմամբ: Հեղափոխության այս շրջափուլը գրեթե անարյուն անցավ:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ (1792–1799 ԹԹ.)

Փարիզյան ապստամբությանը հաջորդեց Ֆրանսիայի հեղափոխական բանակի հաղթանակը Վալմիի ճակատամարտում: 1792 թ. սեպտեմբերի 20-ին՝ հաղթանակի հաջորդ օրը, բացվեց պատմության մեջ առաջին անգամ ընտրական իրավունքի (տղամարդկանց համար) հիման վրա ընտրված Կոնվենտը (Ազգային ժողով), որն իր ընդունած առաջին իսկ օրենքով՝ սեպտեմբերի 22-ին Ֆրանսիան հռչակեց հանրապետություն: Օրենսդիր ժողովի փոխարեն ընտրված Կոնվենտում ազդեցիկ ուժ էին ժիրոնդիստները և Յակոբինները: Ստանալով ժողովրդի պաշտպանությունը, հակառակ ժիրոնդիստների կարծիքի, 1793 թ. հունվարի 21-ին Յակոբինները մահապատժի ենթարկեցին Լյուդովիկոս XVI-ին, իսկ փոքր-ինչ ուշ՝ թագուհի Մարիա-Անտուանետին և ողջ թագավորական ընտանիքը:

1793 թ. հունիսին ժողովրդական ապստամբության հետևանքով Կոնվենտում մեծամասնություն ստացավ Յակոբինների կուսակցությունը, որն էլ գլխավորեց կառավարությունը: Յակոբինների առաջին քայլերից էր Սահմանադրության ընդունումը, որը տոգորված էր ժան-ժակ Ռուսոյի գաղափարներով:

Յակոբինները Կոնվենտի նիստում

Յակոբինների իշխանության ընթացքում ստեղծվեց Հասարակության փրկության կոմիտե, որն ստացավ արտակարգ լիազորություններ և իր ձեռքում

կենտրոնացրեց պետության կառավարումը: Յակոբինների իշխանությունը վերաճեց դիկտատուրայի՝ բռնապետության (1793–1794 թթ.): Երկրում իրականացվեցին հեղափոխական վերափոխումներ, որոնց հետևանքով վերացվեցին ավատատիրական կարգերի մնացուկները: Ֆրանսիական բանակներն սկսեցին հաղթանակներ տանել արտաքին թշնամիների դեմ: Միևնույն ժամանակ երկրում սկսվեց հեղափոխական ահաբեկչություն (տեռոր), որի ընթացքում հեղափոխության թշնամի որակվեցին և գնդակահարվեցին տասնյակ հազարավոր անմեղ մարդիկ:

Ռոբեսպիերի ձերբակալությունը

1794 թ. հուլիսին Կոնվենտում Ռոբեսպիերի և նրա կողմնակիցների դեմ կազմակերպվեց դավադրություն: Ռոբեսպիերը և նրա 20 համախոհները ձերբակալվեցին: Ռոբեսպիերն ինքնասպանության փորձ արեց, բայց միայն վիրավորվեց ու շուտով գլխատվեց: Ֆրանսիայում հաստատվեց բուրժուազիայի իշխանությունը: Բուրժուազիան, որը հեղափոխության ընթացքում տիրացել էր ավատատերերից ու եկեղեցուց խլված հարստությանը, դարձել էր տնտեսական հզոր ուժ և չէր ցանկանում հեղափոխության հետագա խորացումը: Խոշոր բուրժուազիան ձգտում էր սառեցնել ժողովրդի հեղափոխական տրամադրությունները և սահմանափակել դեմոկրատական (ժողովրդավարական) իրավունքները:

1795 թ. Կոնվենտն ընդունեց նոր Սահմանադրություն, որը գործեց մինչև 1799 թ.: Գործադիր մարմինը՝ կառավարությունը, ղեկավարում էին Կոնվենտի ընտրած 5 դիրեկտորները: Օրենսդիր բարձրագույն օրգանը Օրենսդիր կորպուսն էր, որը կազմված էր երկու պալատից: Ընդհանուր ընտրական իրավունքը վերացվեց: Սահմանադրությամբ ընտրելու իրավունք ստացան միայն որոշակի ունեցվածք ունեցող քաղաքացիները:

Ֆրանսիական հեղափոխությունն ավարտվեց: Այն մեծ արձագանք ունեցավ ողջ աշխարհում՝ խթանելով հակաավատատիրական և հեղափոխական պայքարի ծավալումը: Հեղափոխությունը վերացրեց ավատատիրական կարգը, տապալեց միապետությունը, հռչակեց հանրապետություն, հաստատեց բուրժուազիայի իշխանությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր դրությունը Ֆրանսիայում XVIII դ. երկրորդ կեսին:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է հենց Բաստիլի գրավումը համարվում Ֆրանսիական մեծ հեղափոխության սկիզբը: Ձեր տեսակետը հիմնավորեք փաստերով:
3. Ի՞նչ եք կարծում՝ հնարավոր էր «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» իրանացումը Ֆրանսիայում XVIII դ. վերջում: Հիմնավորեք ձեր տեսակետը:
4. Բացատրեք հետևյալ տերմինները՝ Գլխավոր շտաբներ, Սահմանադիր ժողով, ժիրոնդիստներ, Ցակոբիններ, Կոնվենտ, «Մարսելյոզ»:
5. Ո՞րն է Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության նշանակությունը:
6. Կազմեք «Ֆրանսիան մինչև հեղափոխության հանրապետական շրջափուլը» ենթահարցի ծավալուն պլանը:
7. Լրացրեք «Ֆրանսիական մեծ հեղափոխության փուլերը» աղյուսակը:

Հեղափոխության փուլեր	Ժամանակագրական շրջանակներ	Գործիչներ	Բնութագիր	Արդյունքներ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրից»

Ազգային ժողովը գերագույն էակի առջև ու հովանավորության ներքո ճանաչում և հրապարակում է մարդու և քաղաքացու հետևյալ իրավունքները.

1. Մարդիկ ծնվում են ազատ և իրավահավասար: Նրանց հասարակական տարբերությունները հիմնվում են միայն ընդհանուր շահի վրա:

2. Ամեն տեսակի քաղաքական միության նպատակը մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտպանությունն է: Այդ իրավունքներն են՝ ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը և բռնաճնշմանը դիմադրելը:

3. Ողջ գերագույն իշխանության աղբյուրը մշտապես ազգի մեջ է: Ո՛չ մի հաստատություն, ո՛չ մի անձ իրավասու չեն իրագործել այն իշխանությունը, որն անմիջականորեն չի բխում ազգից:

4. Ազատությունն այն ամենն անելու իրավունքն է, որը չի վնասում ուրիշներին...

6. Օրենքն ընդհանուրի կամքի արտահայտությունն է... օրենքը պետք է հավասար լինի բոլորի համար...

10. Ոչ ոքի չպետք է անհանգստացնել իր սեփական, նույնիսկ կրոնական համոզմունքների համար, եթե դրանց դրսևորումները չեն խախտում օրենքով սահմանված հասարակական կարգը...

17. Քանի որ սեփականությունն անձեռնմխելի և սրբազան իրավունք է, ապա ոչ ոք չպետք է զրկված լինի դրանից, բացի այն դեպքերից, երբ այդ է բացահայտորեն պահանջում հասարակական անհրաժեշտություն...

Լյուդովիկոս XVI թագավորի ձերբակալումը

... 1791 թ. հունիսի 21-ին Փարիզից դեպի պետական սահման տանող ճանապարհով գնում էր հնաոճ ու մեծ տարողությամբ մի կառք: Այնտեղ բազմած տարեց կինը ցույց տվեց իր անձնագիրը, որտեղ նշված էր, որ նա՝ ռուս բարոնուհի Կորֆը, երեխաների հետ, սպասավորի և աղախնի ուղեկցությամբ գնում է Գերմանիա: Կառքը կանգ առավ Վարեն քաղաքից ոչ հեռու փոստային կայարանում: Կառքի պատուհանից գլուխը հանեց մի մարդ, որ շտապեցնի նոր ձիեր լծող սպասավորին: Փոստապետի որդի Դրուեն ապշեց այդ մարդու և թագավորի նմանությունից՝ նույն հաստ դեմքն ու մտոտ, կոր քիթը: Նա ցատկեց ձիու վրա և գաղտնի ճանապարհով հասավ Վարեն: Նա առաջ անցավ կառքից և հասցրեց կանչել զինված հայրենասերների: Երբ կառքը երևաց, ճանապարհն արդեն փակ էր: Ուղևորներին բռնեցին: Պարզվեց, որ «սպասավորը» իսկապես որ Լյուդովիկոս XVI թագավորն է, իսկ «աղախինը» Մարիա-Անտուանետտա թագուհին: Բարոնուհու դերը կատարում էր պալատական մի կին: Ժողովրդի՝ ատելությամբ լցված ամբոխով շրջապատված՝ թագավորը հետ ուղարկվեց Փարիզ: Հայրենասերների աչալրջությունը ձախողեց արտասահման փախչելու թագավորի փորձը, որը մտադրվել էր գլխավորել հակահեղափոխական վտարանդիներին:

1. Ծանոթանալով հռչակագրի դրույթներին, ի՞նչ եք կարծում, կարելի՞ է ասել, որ այն առաջ էր ընկել իր ժամանակից: Բերեք փաստեր, որոնք հիմնավորում են ձեր տեսակետը:

2. Ձեր կարծիքով՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» դրույթներից որո՞նք են կորցրել իրենց հրատապությունը մեր օրերում և ինչու: Եթե ձեզ հանձնարարվեր խմբագրել հռչակագիրը, ի՞նչ ուղղումներ և լրացումներ կանեիք:

3. Ի՞նչ նոր տեղեկություններ ձեռք բերեցիք Լյուդովիկոս XVI-ի մասին: Ի՞նչ նոր գծերով կամբողջացնեք նրա բնութագիրը: Ինչպե՞ս եք գնահատում նրա փախուստը երկրից:

§7. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ՆԱՊՈԼԵՈՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Նապոլեոն Բոնապարտ (1769–1821 թթ.)

Դիրեկտորիայի կառավարման տարիներին Ֆրանսիան շարունակում էր պատերազմը Եվրոպայում, որն արդեն նվաճողական բնույթ էր կրում: Չնայած Իտալիայի նվաճմանը և եգիպտական արշավանքին՝ Ֆրանսիան պարտություններ կրեց Միջերկրական ծովում և Եվրոպայում: Կացությունը ծանր էր նաև երկրի ներսում: Դիրեկտորիան հեղինակազրկվել էր և կորցրել իր բոլոր հենարանները: Գլուխ էին բարձրացրել միապետականները: Երկրում «ծաղկում» էին կաշառակերությունը և գանձագողությունը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը շատերը տեսնում էին ուժեղ իշխանության մեջ: Օգտվելով այդ վիճակից՝ Նապոլեոն Բոնապարտը, որը Եգիպտոսում էր, 1799 թ. ծպտյալ վերադարձավ Ֆրանսիա և կատարեց պետական հեղաշրջում: Դիրեկտորիան տապալվեց, գործադիր իշխանությունն անցավ երեք կոնսուլների ձեռքը, որոնցից ամենաազդեցիկն առաջին կոնսուլ երեսնամյա գեներալ Նապոլեոնն էր:

Հեղաշրջումից հետո Նապոլեոնը երկրում հաստատեց դաժան վարչակարգ: Նա փակեց առաջադիմական թերթերը, աքսորեց ողջ մնացած յակոբիններին, ստեղծեց ոստիկանության նախարարություն, ընդլայնեց լրտեսական ցանցը, վերացրեց տեղական ինքնակառավարման մարմինները: Համաձայնության գալով Հռոմի Պողոս VII պապի հետ՝ Նապոլեոնը վերականգնեց կաթոլիկությունը՝ «Ֆրանսիացիների մեծամասնության» կրոնը: Ամենուր վերաբացվեցին եկեղեցիները, իսկ աղոթքներում հիշատակում էին «Տեր, հաջողություն ընծայիր կոնսուլներին» արտահայտությունը: Ամրապնդելով իր դիրքերը՝ Նապոլեոնը 1804 թ. Սենատից պահանջեց իրեն հռչակել ֆրանսիացիների կայսր: Ֆրանսիայում վերականգնվեց միապետությունը: Նապոլեոնը թագադրվեց որպես կայսր: Նրա օրոք Ֆրանսիան բուռն զարգացում ապրեց: Նապոլեոնը խրախուսում էր արդյունաբերությունը և կրթությունը: Նոր վարչակարգի (կոնսուլություն և կայսրություն) տարիներին կազմակերպվեց արդյունաբերական ապրանքների ցուցահանդես, բացվեցին վարժարաններ և բարձրագույն դպրոցներ, կառուցվեցին բազմաթիվ ճանապարհներ, ստեղծվեց դրամական

նոր՝ ազգային միավոր՝ ֆրանկը, ստեղծվեց ֆրանսիական բանկը: Կայսրը հաստատեց մի շարք օրենսգրքեր, որոնցից կարևոր էր 1804 թ. «Քաղաքացիական օրենսգիրքը», որը տարածվեց նաև Եվրոպայում: Նապոլեոն I-ը 1810 թ. կայսերական հատուկ հրմանագրով Վենետիկի Մխիթարյան Մայրավանքը ճանաչեց որպես ակադեմիական հաստատություն, որը մեծ պատիվ էր Մխիթարյան միաբանության համար:

Նապոլեոն I-ին (1769-1821 թթ.)

ՆԱՊՈԼԵՈՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Հեղափոխական Ֆրանսիայի դեմ սկսված պատերազմները շարունակվեցին նաև Նապոլեոնի իշխանության գալուց հետո: Ֆրանսիայի գլխավոր հակառակորդներն էին Անգլիան, Ավստրիան և Ռուսաստանը: 1805 թ. Նապոլեոնի բանակը պատրաստվում էր ներխուժել Անգլիա: Սակայն անգլիացի ծովակալ Նելսոնը Տրաֆալգարի ծովամարտում ոչնչացրեց ֆրանսիական նավատորմը՝ փրկելով Անգլիան Նապոլեոնի ներխուժումից:

Կորցնելով Անգլիային ռազմական պարտության մատնելու հնարավորությունը՝ Նապոլեոնը որոշեց սկսել ցամաքային շրջափակում՝ արգելելով Անգլիային վաճառել իր ապրանքը այլ երկրների:

1805 թ. Աուստերլիցի մոտ Նապոլեոնը պարտության մատնեց ավստրիական և ռուսական զորքերին: Հաջորդ տարի, ջախջախելով Պրուսիային, ֆրանսիական բանակը մտավ Բեռլին, ապա Լեհաստան՝ դուրս մղելով ռուսական զորքը: 1807 թ. Ֆրանսիան և Ռուսաստանը կնքեցին Տիլզիտի հաշտության պայմանագիրը: Ռուսաստանն ստիպված էր ճանաչել Ֆրանսիայի բոլոր նվաճումները և միանալ Անգլիայի դեմ ուղղված ցամաքային շրջափակմանը: Տիլզիտի հաշտությունից հետո՝ 1808 թ., ֆրանսիական բանակը ներխուժեց Իսպա-

Աուստերլիցի ճակատամարտը

ԵՎՐՈՊԱՆ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

նիա, որտեղ հանդիպեց իսպանացիների հերոսական դիմադրությանը: Սարագոսա քաղաքի պաշտպաններն ավելի քան երկու ամիս դիմացան 50-հազարանոց ֆրանսիական բանակի պաշարմանը: Իսպանական դեպքերից շատ չանցած՝ Նապոլեոնի զորքերը կրկին պարտության մատնեցին ավստրիացիներին, գրավեցին Վիեննան: 1810-1811 թթ. Ֆրանսիական կայսրությունը հասավ իր հզորության գագաթնակետին:

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ֆրանսիական կայսրության մեջ մտնում էին Նիդեռլանդները, Շվեյցարիան, Իտալիան և Գերմանիայի մեծ մասը: Իր տերության տարածքը Նապոլեոնը ինքնակամ վերաձևում էր, մասերի բաժանում, կազմավորում կամ վերացնում թագավորություններ ու իշխանություններ: Իր եղբայրներին և մերձավորներին շնորհում էր տիտղոսներ, անգամ՝ արքայական գահեր:

Ավստրիան, Պրուսիան, Իսպանիան և եվրոպական մյուս պետությունները կախման մեջ էին Ֆրանսիայից: Նրանք ստիպված էին միանալ Անգլիայի ցամաքային շրջափակմանը:

Վարելով նվաճողական պատերազմներ՝ գրաված երկրներում Ֆրանսիան վերացնում էր ներքին սահմաններն ու մաքսատները: Որոշ երկրների պարտադրվում էին սահմանադրություններ, զարգանում էին արդյունաբերությունն ու առևտուրը:

Եվրոպայում իրապես անկախությունը դեռևս պահպանում էին Ռուսաստանը և Անգլիան, որոնց այդպես էլ Նապոլեոնը չկարողացավ ծնկի բերել:

Ռուսաստանի Ալեքսանդր I ցարի և Նապոլեոնի հանդիպումը Տիլզիտում

Բորոդինոյի ճակատամարտը

Փառքի գագաթնակետին հասած Նապոլեոնը ձգտում էր համաշխարհային տիրապետության և վստահ էր, որ հասել է Ռուսաստանին ջախջախելու պահը:

1812 թ. ամռանը Նապոլեոնի կեսմիլիոնանոց բանակը ներխուժեց Ռուսաստան: Չնայած թվական մեծ գերակշռությանը՝ Նապոլեոնին չհաջողվեց ջախջախել ռուսներին: Տաղանդավոր զորավար Միխայիլ Կուտուզովի հրամանատարությամբ ռուսական բանակը կատաղի դիմադրեց, բայց ստիպված էր նահանջել թշնամու գերակշիռ ուժերի առաջ: Բորոդինոյի ճակատամարտից հետո Նապոլեոնի բանակն անարգել մտավ Մոսկվա՝ կողոպտեց և հրկիզեց քաղաքը:

Ռուսաստանում ֆրանսիացի զավթիչների դեմ ծավալվեց համաժողովրդական պատերազմ՝ պարտիզանական կռիվների ձևով: Հակահարձակման անցնելով՝ Կուտուզովը Նապոլեոնին ստիպեց նահանջել: Նահանջը շուտով վերածվեց խուճապահար փախուստի: Մեծ բանակից միայն 30 հազարին հաջողվեց դուրս գալ Ռուսաստանից: Ֆրանսիական բանակի պարտությունը Ռուսաստանում վճռական դեր խաղաց Նապոլեոնի կայսրության կործանման համար: Սա Ֆրանսիայի տիրապետության դեմ եվրոպական նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ուժեղացման ազդանշան էր:

Լայպցիգի ճակատամարտը

Թշնամուն հետապնդելով՝ ռուսական զորքերը մտան Բեռլին: Նապոլեոնի դեմ պայքարում Ռուսաստանին միացան Պրուսիան, Շվեդիան և Ավստրիան: Ֆրանսիայի դեմ

պատերազմը շարունակում էր նաև Անգլիան: 1813 թ. հոկտեմբերին Լայպցիգի մոտ Նապոլեոնի բանակին պարտության մատնելով՝ դաշնակիցների զորքերը 1814 թ. մարտին մտան Փարիզ: Նապոլեոնն ստիպված էր հրաժարվել գահից և աքսորվեց Էլբա կղզին:

Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների արքայատոհմը: Թագավոր հռչակվեց մահապատժի ենթարկված Լյուդովիկոս XVI-ի եղբայր Լյուդովիկոս XVIII-ը: 1815 թ. մարտին Նապոլեոնին հաջողվեց կարճ ժամանակով կրկին նվաճել իշխանությունը: Այս անգամ նա պարտվեց Վաթեռլոոյի ճակատամարտում և ուղարկվեց Սուրբ Հեղինե կղզի, որտեղ և մահացավ 1821 թ.:

Հարցեր ու առաջադրանքներ

1. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Նապոլեոնի պետական հեղաշրջումը: Փորձեք ընդհանրություններ գտնել Նապոլեոնի և Կրոմվելի գործունեության միջև:
2. Թվարկեք 1800–1810 թթ. Եվրոպայում տեղի ունեցած պատերազմները: Դրանցից որո՞նք եք դուք ամենից շատ կարևորում: Հիմնավորեք ձեր տեսակետը:
3. Բացատրել «ցամաքային շրջափակում» հասկացությունը:
4. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էր Անգլիան համարվում Ֆրանսիայի գլխավոր մրցակիցը և թշնամին: Նրանցից ո՞րը շահեց այդ պայքարում:
5. Ձեր կարծիքով՝ ի՞նչը խարխլեց նապոլեոնյան հզոր կայսրության հիմքերը և այն հասցրեց կործանման:
6. Նապոլեոնի բնավորության ո՞ր գծերի մասին են խոսում նրա՝ «Դա ավելի վատ է, քան հանցագործությունը», «Ինձ համար գոյություն չունի «անհնար է բառը», «Ուժը սխալներ չգիտե» արտահայտությունները:
7. Էնգելսը Նապոլեոնի մասին գրել է «...որքան երկար էր նա թագավորում, այնքան ավելի էր արժանանում իր վերջնական ճակատագրին»: Ինչպե՞ս եք հասկանում Էնգելսի այս արտահայտությունը:
6. Լրացրեք «Նապոլեոնի դարաշրջանը» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվ	*Իրադարձություն*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ֆրանսիացի գեներալ Անրի Անտուան Ժոմինին (1779–1869 թթ.) Սարագոսայի պաշտպանների հերոսության մասին

«...Քաղաքի բնակիչները, գյուղացիները համակվեցին նույնպիսի անընկճելի խանդավառությամբ, ինչպես զինվորները... Հպարտությունը, հայրենիքի նկատմամբ սերը... ժողովրդական և զինվորական պատիվը... իսպանացիներին մղում էին ամենահանդուգն պայքարի:

Սարագոսան, որտեղ ապրում էր 60 հազար բնակիչ, կառուցված էր մասամբ աղյուսից, մասամբ էլ գրանիտից, շրջապատված էր բավական բարձր պարիսպներով: Տների մեծ մասը պաշտպանվում էր ինչպես ամրոց: Ամենաավերակ, պայթյուններից կիսավեր տների վրա իսպանացիները կռվում էին մինչև արյան վերջին կաթիլը... Ամեն մի հարկ, ամեն մի սենյակ, մառան, պատշգամբ պաշտպանվում էր համառորեն... Գրոհի ենթարկված յուրաքանչյուր կետի աջակցում էին զինված գյուղացիներն ու քաղաքի բնակիչները...:

Երկու ամիս անց քաղաքի պարսպի մի մասը մեր տնօրինության տակ էր. շենքերի մեկ քառորդը հետ վերցրեցինք... Նկուղների ու մառանների նեղվածքում տեղավորված բնակիչների շրջանում սարսափելի համաճարակ էր մոլեգնում: Երբ հանձնվեց ամրոցը, զենքի, կրակի, համաճարակի և քաղցի զոհ էին դարձել 15 հազար զինվոր և 30 հազար բնակիչ»:

Ինչ նոր տեղեկություններ ձեռք բերեցիք Սարագոսայի մասին: Ձեր կարծիքով՝ կարելի՞ է վստահել գեներալ Ժոմինի խոսքերին, չէ՞ որ նա պատմում է իրենց թշնամու մասին: Ինչ եք կարծում՝ Սարագոսայի պաշտպանությունը կարելի՞ է համեմատել Երևանի 1724 թ. պաշտպանության հետ: Փորձեք հիմավորել ձեր տեսակետը:

§8. ՀԵՏԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (1815–1850)

ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

Ֆրանսիայի պարտությունից և Նապոլեոնի տապալումից հետո, Եվրոպայի միապետները 1814 թ. հավաքվեցին Վիեննայում՝ մշակելու խաղաղության պայմանները և վերաձևելու Եվրոպայի քարտեզը՝ հօգուտ հաղթողների: Վեհաժողովն իր աշխատանքներն ավարտեց 1815 թ. հունիսին՝ եզրափակիչ ակտի ստորագրմամբ:

Լյուդովիկոս XVIII (1755–1824 թթ.)

Վեհաժողովին հրավիրվեցին եվրոպական բոլոր պետությունների ներկայացուցիչները: Վիեննա ժամանած միապետների և դեսպանների համար ամեն օր կազմակերպվում էին պարահանդեսներ, ներկայացումներ, զբոսանքներ, որսորդություն: Բայց վեհաժողովը, որն «աշխատեց» գրեթե մեկ տարի, ոչ մի գործնական նիստ չհրավիրեց: Ասում էին, որ «վեհաժողովը ոչ թե նիստեր է գումարում, այլ պարում է»: Բոլոր խնդիրները վճռում էին հաղթող երկրների՝ Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի ներկայացուցիչները:

Վիեննայի վեհաժողովի որոշմամբ վերականգնվեցին Ֆրանսիայի այն սահմանները, որ գոյություն ունեին մինչև հեղափոխական և նվաճողական պատերազմների սկիզբը: Ֆրանսիային պարտադրվեց դաշնակիցներին հանձնել իր ողջ ռազմական նավատորմը: Ֆրանսիայի թագավոր ճանաչվեց Լյուդովիկոս XVIII–ը (1814–1824 թթ.):

Մեփական շահերից ելնելով՝ միապետները, հաշվի չնստելով ժողովուրդների կամքի հետ, կատարում էին սահմանների փոփոխություններ: Հաղթող երկրներն ընդլայնեցին իրենց տարածքները այլ երկրների հաշվին: Ռուսաստանն ստացավ Լեհաստանի մեծ մասը՝ Վարշավա մայրաքաղաքով, նաև Ֆինլանդիան: Անգլիան Միջերկրական ծովում ստացավ ռազմավարական կարևոր հենակետ՝ Մալթա կղզին, և հոլանդական մի քանի նախկին գաղութներ՝ Ցեյլոն կղզին՝

Վիեննայի վեհաժողովը. 1814-1815 թթ.

Հնդկաստանի մոտ, ու Կապի երկիրը՝ Հարավային Աֆրիկայում: Անգլիայի ամենամեծ նվաճումն իր վաղեմի թշնամու՝ Ֆրանսիայի թուլացումն էր:

Զգալիորեն ընդլայնվեցին Պրուսիայի և Ավստրիայի տարածքները: Պրուսիային անցան Լեհաստանի արևմտյան մասի տարածքները: Ավստրիան ստացավ Հյուսիսային Իտալիայի հարուստ մարզերը՝ Լոմբարդիան և Վենետիկը:

Իտալիան, վեհաժողովի որոշմամբ, կրկին մնաց մասնատված ութ թագավորությունների և հերցոգությունների: Պահպանվեց նաև Գերմանիայի մասնատվածությունը, թեև նախկին 300-ի փոխարեն նրա կազմում մնաց 39 պետություն: Նախկին Սրբազան Հռոմեական կայսրության փոխարեն, որը վերացրել էր Նապոլեոնը, կազմավորվեց Գերմանական միությունը: Նրա կազմում ամենախոշորներն Ավստրիան և Պրուսիան էին:

Վիեննայի վեհաժողովին հաջորդած տարիներն անվանեցին Ռեստավրացիայի (վերականգնման) ժամանակաշրջան:

Եվ, իսկապես, վեհաժողովն ամեն ինչ արեց, որպեսզի եվրոպական երկրներում վերականգնվեն նախահեղափոխական կարգերը, արքայատոհմերը և կառավարությունները:

Ալեքսանդր I (1777-1825 թթ.)

Ռուսաստանի ցար Ալեքսանդր I-ի առաջարկով հեղափոխությունների դեմ պայքարելու նպատակով Վիեննայի վեհաժողովին մասնակցող միապետները 1815 թ. կնքեցին այսպես կոչված՝ «Սրբազան դաշինքը»: Նրանք պարտավորվեցին օգնել միմյանց և ընդհանուր ուժերով ճնշել ամեն մի հեղափոխական ելույթ, որտեղ էլ այն սկսվեր:

«Սրբազան դաշինք» կնքելու համաձայնագիրը ստորագրեցին Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միապետները: Հետագայում դաշինքին միացան Եվրոպայի գրեթե բոլոր միապետները: Անգլիան ակտիվորեն աջակցում էր հեղափոխությունների ճնշմանը, սակայն պաշտո-

ԵՎՐՈՊԱՆ 1815թ.

Վիեննայի վեհաժողովի որոշմամբ միացված տարածքները

- Ռուսական կայսրությանը
- Ավստրիական կայսրությանը
- Պրուսական թագավորությանը
- Շվեյցարիային
- Նիդեռլանդներին

1815 թ. ստեղծված Գերմանական միության սահմանները

Պետությունների սահմանները 1815 թ.

Թվերով քարտեզի վրա նշված են՝

1. Շվեյցարիա
2. Սաքսոնիա
3. Պարմա
4. Մոդենա
5. Լոմբարդո–Վենետիկյան մարզ
6. Կրակովյան հանրապետություն

նապես դաշինքի անդամ չդարձավ:

Դաշինքն անմիջապես անցավ գործնական քայլերի: «Սրբազան դաշինքի» հրահանգով՝ ֆրանսիական բանակը ճնշեց հեղափոխությունը Իսպանիայում, իսկ ավստրիական զորքերը՝ Իտալիայում:

ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Դեռևս XVIII դ. 60-70-ական թթ. Անգլիայում երևան եկան առաջին մեքենաներն ու ֆաբրիկաները, որոնք XIX դ. կեսերին արդեն գերակշռում էին արտադրության բոլոր հիմնական ճյուղերում: Մեքենայական արտադրության անցմանը զուգահեռ՝ Անգլիայում ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը:

Գյուղական բնակավայրերից դեպի քաղաք բնակչության մեծ արտահոսքի հետևանքով Անգլիայի հյուսիսում և արևմուտքում առաջացան արդյունաբերական նոր շրջաններ: Արագորեն աճեց Լոնդոնի, Բիրմինհեմի, Մանչեստրի և այլ քաղաքների բնակչությունը: XIX դ. կեսերին Անգլիայի բնակչության կեսն արդեն ապրում էր քաղաքներում: Նման ցուցանիշ չուներ աշխարհի և ոչ մի երկիր: Արդյունաբերության զարգացման մակարդակով Անգլիան առաջ էր անցել աշխարհի բոլոր երկրներից: XIX դ. կեսերին Անգլիան տալիս էր բամբակյա գործվածքեղենի, քարածխի, չուգունի համաշխարհային արտադրության գրեթե կեսը: Անգլիան արտահանում էր այնքան ապրանք, որքան Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և ԱՄՆ-ը՝ միասին վերցրած: Համաշխարհային շուկայում անգլիական բուրժուազիան լուրջ մրցակիցներ չուներ: Անգլիական արդյունաբերական ապրանքներն ամենաորակյալն էին ու ամենաէժանը: Անգլիան միակ երկիրն էր, որը մեքենաներ էր արտահանում այլ երկրներ:

«Մեծ ցուցահանդես», Լոնդոն, 1851 թ.

Արդյունաբերության բնագավառում Անգլիայի առավելություններն ակնհայտ դարձան Լոնդոնում 1851 թ. կազմակերպված «Մեծ ցուցահանդեսում»:

Անգլիան իրավամբ համարվում էր «աշխարհի արհեստանոցը» և «ծովերի թագուհին»: Նրան էր պատկանում աշխարհի առևտրա-

կան նավատորմի կեսը:

Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց ձևավորվեցին արդյունաբերական բուրժուազիայի (ֆաբրիկաների և գործարանների տերեր) և վարձու բանվորների (պրոլետարիատ) դասակարգերը: Գիտակցելով իրենց տեղն ու դերը հասարակության մեջ՝ այդ դասակարգերն սկսում են իրենց համար քաղաքական իրավունքներ նվաճելու պայքարը: Բուրժուազիան, կուտակելով հսկայական հարստություն, ձգտում էր հասնել քաղաքական իշխանության և մասնակցել պետության կառավարմանը: Բանվորները, միավորվելով արհեստակցական միություններում (տրեյդ-յունիոններ), նույնպես պայքար են սկսում իրենց տնտեսական և քաղաքական իրավունքների համար: Անգլիական պառլամենտը, որը կազմված էր խոշոր հողատերերից, բանկիրներից և հարուստ վաճառականներից, 1832 թ. նրանց ճնշմամբ ընդունեց օրենք՝ ընտրական համակարգի բարեփոխման մասին: Այդ օրենքով կրկնապատկվեց ընտրողների թիվը, բուրժուազիան ստացավ ձայնի իրավունք, ուժեղացավ նրա ազդեցությունը պետական գործերում:

Պառլամենտական բարեփոխումը, սակայն, չարդարացրեց բանվորների հույսերը: Նրանք մնացին ընտրական իրավունքից զուրկ և շարունակեցին պայքարը: Արդեն 1830-ական թթ. կեսերին ծավալվեց ժողովրդական զանգվածային շարժում ընդհանուր ընտրական իրավունքի համար: 1836 թ. Ուիլյամ Լովետտի նախաձեռնությամբ ստեղծված բանվորների լոնդոնյան ընկերակցությունը մշակեց ընդհանուր ընտրական իրավունքի վերաբերյալ փաստաթուղթ՝ «Ժողովրդական խարտիա», և կազմակերպեց հասարակական ստորագրահավաք: Խարտիան (հրովարտակ) անգլերեն «չարտեր» բառն է, որից էլ շարժումն ստացավ «չարտիստական» անվանումը: Շարժման մասնակիցները՝ չարտիստները, «Ժողովրդական խարտիան» 1839 թ. ներկայացնում են պառլամենտի հաստատմանը: Սակայն խարտիան, որով պահանջվում էր ընդհանուր ընտրական իրավունք, ընտրությունների համար սահմանված գույքային սահմանափակման (ցենզ) վերացում, գաղտնի քվեարկություն և այլն, պառլամենտը մերժվեց: Դրանից հետո չարտիստները ևս երկու անգամ պետիցիա (խնդրագիր, հան-

Չարտիստական շարժում, Լոնդոն

ռագիր) են ներկայացրել պառլամենտ, բայց հաջողության չեն հասել: XIX դ. 40-ական թթ. վերջին շարժումն անկում ապրեց:

Չնայած անհաջողությանը՝ չարտիստական շարժումն անհետևանք չանցավ: Մի քանի տասնամյակ անց Անգլիայում ընտրական իրավունքն զգալիորեն ընդլայնվեց, որով կատարվեց ևս մեկ քայլ դեպի ժողովրդավարություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Վիեննայի վեհաժողովի կարևորագույն որոշումները: Ձեր կարծիքով՝ ո՞ւմ շահերից էին դրանք բխում: Վիեննայի որոշումներում նկատվո՞ւմ էին արդյոք Եվրոպայում նոր պատերազմների սանձազերծման նախադրյալներ: Հիմնավորեք ձեր տեսակետը:
2. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում «Սրբազան դաշինքը»: Կա՞ր արդյոք այդ դաշինքի անհրաժեշտությունը: Այլ կերպ ինչպե՞ս կանվանեք «Սրբազան դաշինքը»: Հիմնավորեք ձեր կարծիքը:
3. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Անգլիայի հասարակական կյանքում XIX դ. առաջին կեսին:
4. Ռուսաստանում պարտություն կրելով՝ Նապալեոնը գրեց. «Ես կարող էի բնակչության մեծ մասին ոտքի հանել, եթե հայտարարեի ստրուկների (ճորտ գյուղացիների) ազատագրման մասին, սակայն ես հրաժարվեցի այդ միջոցից»: Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ Նապոլեոնը հրաժարվեց ազատել Ռուսաստանի գյուղացիներին:
5. Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էր արդյոք մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն կարծիքը, թե «Բուրբոնների վերականգնումը հակասում էր Ֆրանսիայի զարգացման ընթացքին ու պահանջներին»: Փորձեք հիմնավորել ձեր տեսակետը:
4. Լրացրե՛ք «Եվրոպայի քարտեզը՝ ըստ Վիեննայի վեհաժողովի» աղյուսակը:

Երկրներ	*Տարածքային փոփոխություններ*
Անգլիա	
Ֆրանսիա	
Ռուսաստան	
Պրուսիա	
Ավստրիա	

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հատված անգլիացի գրող Ջեֆֆրի Թրիզի «Հանուն խարտիայի» պատմվածքից

«Բլրի գագաթին արդեն հավաքվել էր հսկայական ամբոխը: Ամեն րոպե մարդիկ էին գալիս: Շատերի ձեռքին ջահ կար, և այդ պատճառով էլ գագաթը բոցկլտում էր ու ծխում հրաբխի խառնարանի պես: Գրեթե բոլոր հավաքվածները հանքափորներ էին: Շատերը նոր էին վերադարձել գիշերային հերթափոխից և չէին հասցրել մաքրվել ածխափոշուց...

Ինչ-որ մեկը բարձրացավ մի մեծ, հարթ քարի վրա... և սկսեց խոսել լարված, զրնգուն ձայնով:

– Ի՞նչ եք դուք պահանջում,– որոտաց հռետորը:– Դուք պահանջում եք ձայնի հավասար իրավունք բոլորի համար՝ և՛ հանքատիրոջ, և՛ հանքափորի...:

Ամբոխը հավանության ձայներ արձակեց:

– Եվ ոռ՛ձիկ պառլամենտի անդամների համար, որպեսզի աղքատ մարդն էլ այնտեղ կարողանա հարուստների հետ նիստի մասնակցել:

– Ճի՛շտ է,– բացականչեց ինչ-որ մեկը:– Թող բանվորներն էլ ասեն իրենց խոսքը:

– Եվ որպեսզի ամեն տարի նոր պառլամենտ լինի...

Հռետորը մեկը մյուսի հետևից թվում էր խարտիայի նշանավոր կետերը՝ բացատրելով, թե նրանք որքան կարևոր են յուրաքանչյուր մարդու համար...

Հռետորն իջավ քարե ամբիոնից, իսկ նրա տեղը զբաղեցրեց նորը... Պարզ, հանգիստ... նա մարդկանց ասում էր իրենց դժբախտություններին մասին, դժբախտություններ, որոնց դեմ նրանք անուժ էին, քանի դեռ ձայնի իրավունք չունեին: Այնուհետև նա սկսեց բացատրել, թե ո՞րն է խարտիայի խնդիրը: Նրանք կկարողանան պառլամենտ ուղարկել իրենց մարդկանց՝ բանվորներին...: Այն ժամանակ պառլամենտը կընդունի նոր օրենքներ, կբարձրացնի ոռ՛ձիկները, կկրճատի աշխատանքի ժամերը, կիջեցնի բնակարանի վարձը...»:

1. Ծանոթանալով լրացուցիչ նյութի բովանդակությանը՝ փորձեք պարզել բանվորների քաղաքական ակտիվության պատճառը: Բանվորների ի՞նչ նոր պահանջների մասին իմացաք դուք, որոնք բացակայում էին դասագրքի տեքստում: Ի՞նչ եք կարծում՝ ճի՛շտ էր արդյոք բանվորների ընտրած քաղաքական պայքարի ձևը: Հիմնավորեք ձեր տեսակետը:

§9. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1848–1849 ԹԹ.

1848–1849 ԹԹ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Կարլ X
(1757–1836 թթ.)

Նապոլեոնյան կայսրության կործանումից հետո Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների արքայատոհմը:

1830 թ. հուլիսին ապստամբած ժողովուրդը տապալեց Բուրբոնների իշխանությունը, Կարլ X-ը (1824–1830 թթ.) փախավ երկրից: Բուրժուազիայի օժանդակությամբ Ֆրանսիայի թագավոր հռչակվեց Լուի Ֆիլիպ Օռլեանցին (1830–1848 թթ.): Իշխանության եկավ խոշոր ֆինանսական բուրժուազիան՝ վաշխառուների և բանկիրների խավը: Լուի Ֆիլիպ թագավորին ժողովուրդն անվանում էր «բուրժուա թագավոր»:

Նրա օրոք արդյունաբերական բուրժուազիան դժգոհ էր հաստատված վարչակարգից: Քաղաքական իրադրությունը Ֆրանսիայում սրվեց 1845–1847 թթ. անբերրիության և կարտոֆիլային հիվանդության պատճառով: Տնտեսական ճգնաժամն էլ ավելի վատթարացրեց կացությունը: Երկրում սկսվեցին ժողովրդական ելույթներ, որոնք վերաճեցին հեղափոխության:

Լուի Ֆիլիպ
(1773–1850 թթ.)

1848 թ. փետրվարին Լուի Ֆիլիպը փախավ Անգլիա: Ապստամբած ժողովուրդը գրավեց թագավորի պալատը և Բաստիլի հրապարակում այրեց արքայի գահը: Ֆրանսիայում միապետությունը տապալվեց: Կազմվեց ժամանակավոր կառավարություն, որը ժողովրդական զանգվածների ճնշմամբ Ֆրանսիան հայտարարեց հանրապետություն: Երկրում մտցվեց ընդհանուր ընտրական իրավունք, սահմանվեցին խոսքի, ժողովների և այլ ազատություններ: Չնայած նշված միջոցառումներին՝ միապետության տապալումով արմատական սոցիալական բարեփոխումներ երկրում չիրականացվեցին: Աշխատավոր մարդկանց դրությունը իրապես չբարելավվեց, և դժգոհությունը 1848 թ.

հունիսին հանգեցրեց ապստամբության: Փարիզի փողոցներում նորից երևացին բարիկադներ: Կառավարության զորքերը ճնշեցին ապստամբությունը: 1848 թ. աշնանը Սահմանադիր ժողովը հաստատեց Երկրորդ հանրապետության Սահմանադրությունը: Ֆրանսիայում ստեղծվեց Երկրորդ հանրապետությունը՝ 1848–1852 թթ.:

Դրվագ 1848–1849 թթ. Ֆրանսիական հեղափոխությունից

Նոր Սահմանադրության համաձայն՝ օրենսդիր իշխանությունը իրականացնելու էր Օրենսդիր ժողովը, իսկ գործադիր իշխանությունը՝ 4 տարով ընտրված նախագահը:

1848 թ. վերջին Ֆրանսիայի նախագահ ընտրվեց Նապոլեոն I-ի եղբորորդի Լուի Նապոլեոն Բոնապարտը: Ամրապնդելով իր իշխանությունը՝ Լուի Նապոլեոնը 1851 թ. դեկտեմբերին կատարեց պետական հեղաշրջում, ցրեց Օրենսդիր ժողովը և իր ձեռքում կենտրոնացրեց ողջ իշխանությունը: Մեկ տարի անց՝ 1852 թ. դեկտեմբերի 2-ին՝ Նապոլեոն I-ի թագադրման տարեդարձի օրը, հռչակվեց կայսր՝ Նապոլեոն III անունով: Ֆրանսիայում ստեղծվեց Երկրորդ կայսրությունը՝ 1852–1870 թթ.:

1848–1849 ԹԹ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վիեննայի վեհաժողովի որոշմամբ՝ 35 ինքնիշխան պետություններից և 4 ազատ քաղաքներից ստեղծվել էր Գերմանական միությունը:

XIX դ. առաջին կեսին Գերմանական միության երկրներում կապիտալիզմը զգալիորեն զարգացել էր: Այն համեմատաբար ավելի արագ էր զարգանում Պրուսիայում: Բուրժուազիային հաջողվել էր Գերմանական միության պետություններում (բացի Ավստրիայից) վերացնել մաքսային սահմանները, որը նպաստեց միասնական ներքին շուկայի ձևավորմանը: Բուրժուական հարաբերությունների հաստատմանը Գերմանիայում

Նապոլեոն III (1808–1873 թթ.)

Ֆրիդրիխ Վիլհելմ IV (1795–1861 թթ.)

խանգարում էին ավատատիրական կարգի մնացուկները, երկրի քաղաքական մասնատվածությունը, միապետների անսահմանափակ իշխանությունը:

Ֆրանսիայում սկսված հեղափոխությունը լայնորեն արձագանքեցին Պրուսիայում, Ավստրիայում, Բավարիայում, Սաքսոնիայում և Գերմանական միության այլ երկրներում: 1848 թ. մարտին Բեռլինում տասն օր շարունակ զանգվածային ցույցեր էին տեղի ունենում. մասնակիցները պահանջում էին երկրում սահմանադրական բարեփոխումներ կատարել: 1848 թ. մարտի 18-ին, երբ ցուցարարներն սկսեցին շարժվել դեպի թագավորի պալատ, զինվորները նրանց գնդակոծեցին: Զայրացած ժողովուրդը դիմեց զենքի: Բեռլինի փողոցները ծածկվեցին բարիկադներով: Ապստամբները հաղթեցին: Շուտով հեղափոխության ալիքը ընդգրկեց գերմանական բոլոր պետությունները:

Ֆրիդրիխ Վիլհելմ IV թագավորը (1840–1861 թթ.) խոստացավ ընդունել սահմանադրություն և անցկացնել Ազգային ժողովի ընտրություններ:

Պրուսիայի նորընտիր Ազգային ժողովում, որը բացվեց 1848թ. մայիսին, մեծամասնություն կազմեցին յունկերները (խոշոր կալվածատերեր) և խոշոր բուրժուազիան: Ազգային ժողովն ընդունեց Պրուսիայի Սահմանադրությունը, սակայն ընդհանուր ընտրական իրավունք չսահմանեց և չվերացրեց ավատատիրական պարհակները:

1848 թ. մայիսին Գերմանական միության Մայնի Ֆրանկֆուրտ կենտրոնում բացվեց առաջին համագերմանական պառլամենտի՝ Ազգային ժողովի նստաշրջանը, որն ընդունեց Գերմանիայի Սահմանադրությունը: Այն նախատեսում էր երկրի միավորում և Գերմանական կայսրության ստեղծում:

1848–1849 թթ. հեղափոխությունը Գերմանիայում

Գերմանական պետությունների մեծ մասը մերժեց այդ սահմանադրությունը, իսկ

Պրուսիայի թագավորը հրաժարվեց իրեն առաջարկված կայսերական թագից: Սահմանադրությունը պաշտպանելու նպատակով տեղի ունեցած ժողովրդական ելույթները ճնշվեցին, 1849 թ. հունիսին պառլամենտը ցրվեց: Ավարտվեցին հեղափոխական վերափոխումները: Գերմանիան մնաց մասնատված երկիր: Չնայած հեղափոխության պարտությանը՝ Պրուսիայում և գերմանական մյուս պետություններում ընդունվեցին սահմանադրություններ: Արագացավ կապիտալիզմի զարգացումը, որը տնտեսական հիմքեր էր ստեղծում Գերմանիայի միավորման համար:



Առաջին համագերմանական պառլամենտի նիստի բացումը

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

1848–1849 թթ. իտալական հեղափոխության նպատակը հետամնաց ավատատիրական կարգերը և ազնվականության տիրապետությունը վերացնելն էր, երկիրը ավստրիական ճնշումից ազատագրելը և ութ պետության մասնատված Իտալիան միավորելը:

Վիեննայի վեհաժողովի որոշմամբ՝ Հյուսիսային Իտալիայի մի մասը հանձնված էր Ավստրիայի տիրապետությանը, սակայն նա իշխում էր գրեթե ողջ երկրում: Ավստրիայի վարչապետ Մետեռնիխի համար «Իտալիան միայն աշխարհագրական հասկացություն էր»: Իտալիայում տեղակայված էին ավստրիական զորքեր:



Ջուզեպպե Գարիբալդի (1807–1882 թթ.)

Իտալական հեղափոխությունն սկսվեց 1848 թ. հունվարին, Սիցիլիայում և մի քանի ամիս անց ընդգրկեց ողջ երկիրը՝ հասնելով մինչև Հյուսիսային Իտալիայում ավստրիական տիրապետության սահմանները՝ Միլան և Վենետիկ: Այս քաղաքներում 1848 թ. մարտին տեղի ունեցան ապստամբություններ, որոնք պսակվեցին հաղթանակով: Վենետիկը հռչակվեց հանրապետություն և շուրջ մեկ տարի դիմագրավեց քաղաքը պաշարած

Ջուզեպպե Մաձինի (1805–1872 թթ.)

Ֆերդինանդ I կայսր (1835–1848 թթ.)

թշնամուն: Իտալիայի Սարդինիա (Պիեմոնտ) պետության թագավոր Կարլոս Ալբերտը ժողովրդի ճնշման տակ փորձեց գլխավորել ծավալվող ազատագրական պայքարը: Նա պատերազմ հայտարարեց Ավստրիային: Նրա բանակին միացան զորաջոկատներ և կամավորներ իտալական մյուս պետություններից: Ավստրիայի դեմ պատերազմը կարճատև էր: Իտալացիները պարտություն կրեցին: 1848 թ. աշնանը Իտալիայում հեղափոխական նոր վերելք սկսվեց և ընդգրկեց նաև Հռոմը, որտեղ 1849 թ. սկզբին տեղի ունեցավ ժողովրդական ապստամբություն: Պապի աշխարհիկ իշխանությունը տապալվեց (պատճառը Պիոս IX պապի հրաժարվելն էր ավստրիացիների դեմ պայքարից): Պապը գյուղացու շորեր հագած փախուստի դիմեց: Հռոմը հռչակվեց հանրապետություն: Հռոմում իրենց հերոսական գործունեությամբ աչքի ընկան ազատագրական պայքարի մեծ գործիչներ Ջուզեպպե Մաձինին և Ջուզեպպե Գարիբալդին:

1849 թ. ամռանը Ավստրիայի և նրան միացած Ֆրանսիայի, Իսպանիայի ու Նեապոլի թագավորության զորքերը տապալեցին Հռոմի և Վենետիկի հանրապետությունները: Պարտություն կրեց նաև Ավստրիայի դեմ պատերազմը վերսկսած Սարդինիան, ճնշվեց ազատագրական պայքարը ողջ Իտալիայում:

Ազգային հեղափոխությունն Իտալիայում պարտություն կրեց արտաքին ճնշման և ներքին ուժերի անմիաբանության պատճառով:

1840-ական թթ. հեղափոխական ճգնաժամը հասունացել էր նաև Ավստրիայում: Այստեղ դեռևս պահպանվում էին ավատատիրական կարգերը և կայսեր անսահմանափակ իշխանությունը, որոնք կաշկանդում էին երկրի առաջընթացը: Ավստրիական կայսրությունը բազմազգ պետություն էր: Նրա կազմի մեջ մտնում էին Ավստրիան, Հունգարիան, Սլովակիան, Չեխիան, Խորվաթիան և այլ երկրների տարածքներ: Հպատակ երկրներում ավստրիացիները վարում էին բռնի գերմանացման քաղաքականություն: Պետական միակ պաշտոնական լեզուն գերմաներենն էր: Ավստրիական կայսրությունը հաճախ անվանում էին «ժողովուրդների բանտ»: Այստեղ ճնշվում էր յուրաքանչյուր

ազատ միտք, յուրաքանչյուր բարեփոխում:

Ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ 1848 թ. մարտի 13-ին Վիեննայում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր: Ժողովուրդը պահանջում էր «սահմանադրություն» և «ազատություն»: Իրադարձությունների ընթացքը դարձավ վտանգավոր, երբ ժողովուրդը շարժվեց դեպի կայսեր պալատ: Վարչապետ Մետեռնիխը՝ վախենալով իր կյանքին սպառնացող վտանգից, կանանցի շորեր հագած փախավ երկրից:

Դրվագ 1848-1849 թթ. հունգարական հեղափոխությունից

Ֆերդինանդ I կայսրն (1835-1848 թթ.) ստիպված էր զիջումներ կատարել: Ավստրիայում անցկացվեցին ընտրություններ, 1848 թ. հուլիսին սկսեց գործել նորաստեղծ օրենսդիր մարմինը՝ Ռայխստագը:

1848 թ. մարտի 15-ին Հունգարիայում սկսվեց ազգային հեղափոխություն, որը շուտով տվեց իր հաղթական պտուղները: 1849 թ. ապրիլին Հունգարիան հռչակվեց անկախ պետություն, ստեղծվեց հեղափոխական կառավարություն: Նրա ամենանշանավոր գործիչը դարձավ Լայոշ Կոշուտը, որին հաջողվեց ստեղծել ուժեղ բանակ, պարտության մատնել ավստրիացիներին և դուրս քշել երկրից: Ավստրիայի կայսրը դիմեց Ռուսաստանի Նիկոլայ I ցարի օգնությանը: Ռուս-ավստրիական զորքերը դաժանորեն ճնշեցին ազգային հեղափոխությունը Հունգարիայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Ֆրանսիական հեղափոխության պատճառները:
2. Ե՞րբ է Ֆրանսիան երկրորդ անգամ հռչակվել հանրապետություն: Համեմատեք առաջին և երկրորդ հանրապետությունները: Նշեք նմանությունները և տարբերությունները:
3. Ի՞նչ ընթացք ունեցավ հեղափոխությունը Գերմանիայում: Ձեր կարծիքով ո՞րն էր նրա նշանակությունը:
4. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին ազգային հեղափոխության պարտության պատճառները Իտալիայում:
5. Ի՞նչ եք կարծում՝ ճի՞շտ էր Ավստրիական կայսրությունը «ժողովուրդների բանտ» անվանելը: Արդյո՞ք հեղափոխությունը լուծեց

կայսրությունում ապրող ժողովուրդների հիմնախնդիրները: Հիմնավորեք ձեր տեսակետը:

6. Երբ Պրուսիայի թագավորը 1848թ. նոյեմբերին ցրեց Ազգային ժողովը, պատգամավորները դիմեցին ժողովրդին հետևյալ կոչով՝ «Ամենուր պահպանեցեք նվաճված ազատությունները... բայց ոչ մի բոպե մի հեռացեք օրինականության հիմքից, և դա «Աստծո օգնությամբ կապահովի ժողովրդի հաղթանակը»: Ինչ եք կարծում, ինչ հակասություն կա այդ կոչերի միջև: Հիմնավորեք ձեր տեսակետը:

7. Լրացրեք «Հեղափոխությունները Եվրոպայում 1848-1849 թթ.» աղյուսակը:

Երկրներ	Հիմնական դեպքերի թվարկումներ	Առանձնահատկություններ	Հետևանքներ
Ֆրանսիա			
Իտալիա			
Պրուսիա			
Ավստրիա			
Հունգարիա			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Դատարանում Փարիզի 1848 թ. հունիսյան ապստամբության մասնակից բանվոր-մեխանիկ Բարտելեմի ցուցմունքից

«Ինձ մյուս գերիների հետ տեղավորեցին նկուղում: Նկուղը լեփ-լեցուն էր: Մենք մնացել էինք առանց հացի, առանց ջրի՝ հեղձուցիչ փոթի մեջ, քանի որ շատ էինք: Տարբեր կողմերից լսվում էին բողոքի ձայներ: Մի սպա հետ ու առաջ էր անում մեր նկուղի օդանցքի մոտ: Սպան, լսելով մեր բողոքները, եկավ դեպի օդանցքը և հարցրեց.

– Ո՞վ է բողոքում:

– Մենք քաղցած ենք:

– Սպասեք...

Նա ժամապահի ձեռքից վերցրեց հրացանը և օդանցքից կրակեց մեզ վրա:

Գերիներից մեկը ընկավ:

Էլ ով է քաղցած,– հարցրեց սպան:– Ես նրան էլ կհյուրասիրեմ....»:

Նիկոլայ I-ն ավատատիրական հեղափոխությունը ճնշելու մասին

«Ես չէի միջամտի, եթե սեփական շապիկն իմ մարմնին ավելի մոտ չլիներ, այսինքն՝ եթե չտեսնեի ոչ միայն Ավստրիայի թշնամիներին, այլև համաշխարհային կարգի և անդորրի թշնամիներին, որոնց ոչնչացնել է պետք հենց սեփական ապահովության համար»:

Գարիբալդու հմայքը

Գարիբալդին իր մեջ մարմնավորում էր ժողովրդի լավագույն հատկանիշները: Նա համարյա իր ողջ կյանքն անցկացրել էր ձակատամարտերում, հաճախ էր ասում. «Ես չեմ սիրում պատերազմը, ճնշվածների արցունքներն են ստիպել ինձ զենք վերցնել»: Գարիբալդիի անձնական հմայքը, մարդկանց վրա նրա անհաղթահարելի ազդեցությունը բացատրվում էր նրանով, որ նրա մեջ ներդաշնակորեն զուգորդվում էին ժողովրդական անվեհեր առաջնորդի և մեծ սրտի տեր, հումանիստ, զգայուն, մեծահոգի մարդու գծերը: Փոքր ժամանակ նա մի անգամ նկատեց խեղդվող կնոջ և, առանց վարանելու, նետվեց հորձանուտն ու փրկեց նրան: Պատանի հասակում կարճ ժամանակով լինելով Մարսելում և լսելով այնտեղ բռնկված ժանտախտի համաճարակի մասին, հիվանդներին խնամելու համար իսկույն մեկնեց հոսպիտալ: Իսկ մի անգամ էլ, վտանգելով կյանքը, Գարիբալդին նետվեց ձակատամարտի ամենաթեժ տեղը՝ փրկելու.... հակառակորդի՝ իր քաջությամբ զարմացրած զինվորի կյանքը: «Հատիկի արժեքը,- գրել է նա ծերության հասակում,- որոշվում է նրա բերքատվությամբ, մարդու արժեքը՝ այն օգուտով, որ նա կարող է տալ իր նմաններին»:

1. Ձեր կարծիքով՝ ինչ է փաստում Բարտելեմի ցուցմունքը: Ո՞րն էր ապստամբության մասնակիցների նկատմամբ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի պատճառը: Ի՞նչ հետևություններ կարելի է անել Բարտելեմի ցուցմունքից հեղափոխության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

2. Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ է ավստրիական կայսրը դիմում Նիկոլա I-ի օգնությանը: Ինչի՞ց էր վախենում Ռուսաստանի ցարը: Ավստրիայի կայսրին ցուցաբերած օգնությունը բխո՞ւմ էր արդյոք ռուս ժողովրդի շահերից: Հիմնավորեք ձեր տեսակետը:

3. Մարդկային ի՞նչ հատկանիշներով էր օժտված Գարիբալդին: Դրանցից ո՞րը կառանձնացնեիք դուք և ինչո՞ւ: Փորձեք բնութագրել Գարիբալդուն: Կուզենայիք նմանվել նրան: Հայ ազատագրական շարժման գործիչներից ո՞ւմ հետ կարող եք համեմատել Գարիբալդուն և ինչո՞ւ: Հիմնավորեք ձեր տեսակետը:

§10–11. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII դարից մինչև XIX դարի առաջին կեսը)

«ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Նոր ժամանակներում Ասիայի երկրներն իրենց զարգացմամբ սկսեցին հետ մնալ եվրոպական երկրներից: Դա պայմանավորված էր արևելյան հասարակություններին բնորոշ մի շարք առանձնահատկություններով:

Արևելքում հողի միակ և գերագույն սեփականատերը պետությունն էր: Դա ավանդաբար գալիս էր հնուց և պայմանավորված էր արհեստական ոռոգման համակարգի առկայությամբ: Ոռոգման նման համակարգ հնարավոր էր ստեղծել և պահպանել միայն հասարակության համընդհանուր ուժերով: Ամբողջ երկրի մասշտաբով հասարակական աշխատանքները ի վիճակի էր կազմակերպել և ղեկավարել միայն պետությունը: Լինելով հողի գերագույն սեփականատերը՝ պետությունը խոչընդոտում էր հողի մասնավորեցմանը:

Ավանդական հասարակության մյուս բնորոշ գիծը գյուղական համայնքի ամրությունն էր: Պետական հարկերը գանձվում էին ոչ թե առանձին հողագործներից, այլ համայնքից: Համայնքի ժողովը որոշում էր, թե համայնքի անդամ, որ ընտանիքը ինչ չափի հարկ էր վճարելու, և քանի մարդ էր մասնակցելու հասարակական աշխատանքներին: Համայնքային այսպիսի տնտեսությունն իր հերթին խոչընդոտում էր մասնավոր սեփականության զարգացմանը: Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի՝ Արևելքի երկրներում (Թուրքիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան և այլն) երկար պահպանվեց նաև քաղաքների կախվածությունը խոշոր ավատատերերից: Դա խոչընդոտում էր արհեստների և առևտրի ազատ զարգացմանը: Արևելքի երկրներում դեռևս ամուր էր նաև հասարակության դասային կառուցվածքը: Հասարակության յուրաքանչյուր խումբ ուներ իր տեղը, որն ընդունված չէր խախտել:

Այս առանձնահատկություններով պայմանավորված՝ Արևելքի ավանդական հասարակություններում մարդիկ դարեր շարունակ ապրում էին՝ չխախտելով իրենց նախնիների օրենքները, հին սովորությունները և արժեքները: Չնայած այդ հանգամանքներին՝

Արևելքի երկրները, այնուամենայնիվ, դանդաղորեն ենթարկվում են փոփոխությունների և բռնում արդիականացման ուղին:

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

Սիփահի զինվոր

XVII դ. կեսին Օսմանյան կայսրությունը տարածված էր երեք աշխարհամասում՝ Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում: Կայսրության ժողովուրդները՝ հույներ, հայեր, հրեաներ, արաբներ, սլավոններ, զարգացման մակարդակով թուրքերից բարձր էին: Թուրքական տիրապետությունը պահպանվում էր միայն զենքի ուժով: Օսմանյան պետության գլուխ կանգնած էր սուլթանը, որն օժտված էր ամենասահմանափակ իշխանությամբ: Նա միաժամանակ բոլոր մահմեդականների հոգևոր առաջնորդն էր՝ խալիֆը:

Օսմանյան պետության հզորությունը պայմանավորված էր բանակով, որը բաղկացած էր թուրք ավատատերերի՝ սիփահիների հեծելազորից և ենիչերիների հետևակ զորքից:

Օսմանյան կայսրությունում հողը պատկանում էր պետությանը: Սուլթանը, ըստ իր հայեցողության, հողեր էր տալիս իր բազմաթիվ ժառանգներին, սիփահիներին (ռազմական ծառայության դիմաց) և հոգևորականությանը:

Կայսրության տնտեսությունը թույլ էր զարգացած: Թուրքիայի վերնախավն ապրում էր առավելապես նվաճողական արշավանքների ընթացքում թալանված հարստությունների հաշվին: Բնակչության մեծ մասը՝ գյուղացիությունը, և քաղաքների մեծաթիվ արհեստավորներն ու առևտրականները հիմնական հարկատու խավերն էին: Սիփահիները և հոգևորականությունը հարկերից ազատված էին:

Ենիչերիներ

Սելիմ III
(1761-1808 թթ.)

Աբդուլ Մեջիդ
(1823-1861 թթ.)

XVII-XVIII դդ. Օսմանյան լայնածավալ կայսրությունն սկսեց թուլանալ և անկում ապրել:

Կայսրությունը փլուզումից փրկելու համար Սելիմ III (1789-1807 թթ.) սուլթանն անցկացրեց ռազմական, տնտեսական, վարչական, հողային և այլ բարեփոխումներ (Նրա բարեփոխումների համոզված կողմնակից է եղել հայազգի դիվանագետ Մանուկ բեյը), որոնք հանդիպեցին հատկապես ենիչերիների, ավատական և հոգևոր վերնախավի կատաղի դիմադրությանը: Նրանք գահընկեց արեցին Սելիմ III-ին, որը շուտով խեղդամահ արվեց: Նրա գործը շարունակեց Մահմուդ II սուլթանը (1808-1839 թթ.): Նա կատարեց նոր ռազմական բարեփոխում: Մահմուդ II-ը 1826 թ. ոչնչացրեց ենիչերիների զորաբանակը, վերացրեց սիփահիական հեծելազորը և ստեղծեց եվրոպական ձևով զինված և կազմակերպված նոր կանոնավոր զորքեր, ամրապնդեց նավատորմը, հիմնադրեց զինվորական դպրոցներ և այլն: Ճնշելով անհնազանդ ավատատերերին՝ Մահմուդ II-ը կենտրոնացրեց երկրի կառավարումը, կատարեց վարչական նոր բաժանում, ստեղծեց նախարարություններ, հիմնեց դեսպանություններ Եվրոպայում:

Բարենորոգումները շարունակվեցին նաև Աբդուլ Մեջիդ սուլթանի օրոք: 1839 և 1856 թթ. նա հրապարակեց հրովարտակներ՝ բարենորոգումների մասին: Այդ բարենորոգումները, որոնք հայտնի են Թանզիմաթ անունով, հռչակում էին Օսմանյան կայսրության բոլոր հպատակ ժողովուրդների կյանքի և գույքի ապահովությունը, դավանանքի ազատություն, օրենքի առաջ հավասարությունը և այլն: Սակայն բարենորոգումները մնացին թղթի վրա և ընդհանուր առմամբ արդյունք չտվեցին: Օգտվելով բարենորոգումների հռչակումից՝ հայ գործիչները մշակեցին արևմտահայության ներքին կյանքը կարգավորող «Ազգային սահմանադրություն», որ սուլթանը հաստատեց 1863 թ.: Այդ ամենով հանդերձ՝ Թուրքիայում շարունակվում էին ինչպես հայ, այնպես էլ ոչ թուրք մյուս ժողովուրդների նկատմամբ ազգային ու կրոնական հալածանքները:

ԻՐԱՆԸ XVII–XIX ԴԱՐԵՐՈՒՄ

Նոր ժամանակների սկզբում Իրանն Ասիայի խոշոր երկրներից էր: Այն ընդգրկում էր Միջին Ասիայի մի մասը, Աֆղանստանի արևմտյան մասը, Դաղստանը, Անդրկովկասը, այդ թվում նաև Արևելյան Հայաստանը և այլն: Մշտական պատերազմների հետևանքով երկրի սահմանները հաճախակի փոփոխվում էին: Կայուն չէր նաև բնակչության էթնիկական կազմը և թվաքանակը: Իրանում ապրում էին տասնյակ ցեղեր և ժողովուրդներ, հատկապես մեծաթիվ էին թուրքական ցեղերը: Նրանց բոլորին միավորում էր մահմեդական կրոնը: Պարսկական պետության մեջ քրիստոնյաները հիմնականում հայերն էին, որոնք մեծ դեր ունեին երկրի տնտեսական կյանքի զարգացման գործում:

Աբաս I
(1571–1629 թթ.)

Աղա Մահմեդ
(1742–1797 թթ.)

Ֆաթհ Ալի
(1766–1834 թթ.)

XVII–XIX դդ. Իրանը գյուղատնտեսական երկիր էր: Բնակչությունն զբաղվում էր անասնապահությամբ և հողագործությամբ: Երկրում զարգացած էին նաև արհեստները և առևտուրը: Մեծ համբավ ունեին հայ արհեստավորները և վաճառականները: Մեծ հռչակ էին վայելում իրանական գորգերը, սառը զենքերը, ոսկերչական իրերը:

XVI–XVIII դդ. Իրանում իշխում էր Սեֆյանների արքայատոհմը, որի նշանավոր ներկայացուցիչը Աբաս I շահն էր (1587–1629 թթ.):

Նրա օրոք շարունակվեցին դեռ XVI դ. սկսված թուրք-իրանական պատերազմները: Այդ պատերազմները, որոնց հիմնական թատերաբեմը Հայաստանն էր, ավարտվեցին 1639 թ. Կասրե Շիրինի պայմանագրով: Երկու երկրների միջև հաստատվեցին կայուն սահման ու խաղաղություն:

Կասրե Շիրինի հաշտությունից հետո վերելք ապրող իրանական պետությունը Հուսեյն շահի (1694–1722 թթ.) օրոք ընկավ ճգնաժամի մեջ և խիստ թուլացավ: Աֆղանները զենքի դիմեցին և գրավեցին Սպահան մայրաքաղաքը: Արցախում և Սյունիքում ստեղծվեցին հայկական իշխանություններ: Սակայն զորա-

Ճակատամարտ պարսկական և ռուսական զորքերի միջև

վար Նադիրին, որը հետագայում հռչակվեց շահ, հաջողվեց ջախջախել աֆղաններին, պարտության մատնել թուրքերին և վերականգնել երկրի հզորությունը: Նադիր շահի դավադիր սպանությունից հետո մինչև XVIII դ. վերջերը Իրանը թուլացած էր ու մասնատված:

1796-ին շահ հռչակվեց Աղա Մահմեդ խանը (1796–1797 թթ.), որը հիմք դրեց Ղաջարների արքայատոհմին: Նրա հաջորդ Ֆաթհ Ալի շահը (1797–1834 թթ.) կարողացավ ստեղծել կենտրոնացված պետություն:

XVIII դ. վերջերից Իրանում մեծ ազդեցություն ձեռք բերեցին Անգլիան և Ֆրանսիան: Հզորացող Ռուսաստանը ձգտում էր տիրանալ Վրաստանին և Արևելյան Հայաստանին: Այդ առաջխաղացումը կանխելու համար, մեծ տերությունների դրդմամբ, Իրանը XIX դ. սկզբին երկու անգամ (1804–1813 և 1826–1828 թթ.) պատերազմեց Ռուսաստանի դեմ և երկու դեպքում էլ պարտություն կրեց: Ռուսաստանին անցան Վրաստանը, Կասպից ծովից արևմուտք ընկած խանությունները, Արևելյան Հայաստանը:

Երկարատև պատերազմների հետևանքով Իրանի տնտեսությունն սկսեց անկում ապրել, բնակչությունը ծայրահեղ աղքատության մատնվեց, աճեց դժգոհությունը: Արդեն XIX դ. 40-ական թթ. Իրանում տեղի ունեցող խմորումները, Բաբիական շարժումը և ապստամբությունները ցույց տվեցին, որ երկիրը նորացման կարիք ունի: Այդ գործին փորձեց ձեռնամուխ լինել շահի առաջին վեզիր Ամիր Նիզամը, որը հանդիպելով հետադիմական ուժերի համառ դիմադրությանը՝ հեռացվեց իշխանությունից և մահապատժի ենթարկվեց: Բարեփոխումների գործընթացը կասեցվեց:

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ

Դեռևս XVI դ. Հնդկաստանում ստեղծված Մեծ մողոլների երբեմնի հզոր կայսրությունը (մողոլ՝ «մոնղոլ» բառի աղճատված ձևն է) XVIII

դ. արդեն մասնատվել էր բազմաթիվ ինքնուրույն իշխանությունների և դարձել հարուստ ավար եվրոպացի գաղութարարների համար:

Մեծ մոդոլ խանը և իր հպատակները

XVIII դ. կեսերին արդեն Հնդկաստանին տիրելու համար պայքարում էին Ֆրանսիան և Անգլիան: Այդ պայքարը գլխավորում էին անգլիական և ֆրանսիական Արևելահնդկական առևտրական ընկերությունները: Նրանք հնդիկ իշխանների հետ կնքում էին դաշինքներ, տեղական բնակչությունից կազմակերպում սիպահիների զորաջոկատներ և նրանց ուժերով պատերազմում միմյանց դեմ: Այդ պատերազմներում ի վերջո հաղթեց անգլիական Արևելահնդկական ընկերությունը: Նրա տրամադրության տակ գտնվող զորքերը 1757 թ. Կալկաթայից ոչ հեռու Պլեսսի բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին ֆրանսիացիների դաշնակից Բենգալիայի ռաջայի 70 հազարանոց բանակը: Բենգալացիները, չհաշտվելով պարտության մտքի հետ, հայազգի զինվորական Գորգին խանի (Գրիգոր Հարությունյան) գլխավորությամբ շարունակեցին պայքարը նվաճողների դեմ, բայց հաջողության չհասան, անգլիացիները տիրացան Բենգալիային: Սկսվեց Հնդկաստանի տարածքների նվաճումն ու կողոպուտը, որը շարունակվեց շուրջ հարյուր տարի՝ մինչև XIX դ. կեսերը: Հնդկաստանի տասնյակ ժողովուրդներ, որոնք քանակով բազմիցս գերազանցում էին անգլիացիներին, մասնատվածության և թույլ զարգացածության պատճառով չկարողացան դիմադրել Անգլիայի տիրապետության հաստատմանը:

Թաջ Մահալ

Հնդկաստանի գաղութացումն իրագործած անգլիական Արևելահնդկական ընկերությունն այնտեղ ստեղծեց

Արևելահնդկական ընկերության ներկայացուցչի և հնդիկ ռաջայի հանդիպումը

կառավարման իր մարմինները, որոնք ունեին վարչական, հարկային և դատական մեծ իրավունքներ: Օգտագործելով իր ողջ իշխանությունը՝ ընկերությունը կարողացավ հնդկական շուկաներից դուրս մղել մինչ այդ մեծ կշիռ ունեցող հայ վաճառականությանը: Արևելահնդկական ընկերության առևտրական գործունեությունը Հնդկաստանում շարունակվեց մինչև 1833 թ.: 1858 թ. Անգլիայի պառլամենտն ընդունեց օրենք Հնդկաստանի կառավարման մասին, որի համաձայն Արևելահնդկական ընկերությունը լուծարվեց: Ստեղծվեց Հնդկաստանի գործերով հատուկ նախարարի պաշտոն: Հնդկաստանում երկրի անմիջական ղեկավարը թագուհու նշանակած փոխարքան էր:

Հնդկաստանի գաղութացումը քայքայեց երկրի տնտեսությունը, հնդկական շուկան ողողվեց անգլիական ապրանքներով, որի հետևանքով, մրցակցությանը չդիմանալով, բազմաթիվ արհեստավորներ զրկվեցին ապրուստի միջոցներից: Գյուղացիները հող վարձակալելով՝ անգլիական իշխանություններին որպես հարկ վճարում էին ստացված բերքի մոտ կեսը: Դրանից բացի՝ նրանք հարկատու էին նաև տեղական իշխաններին՝ ռաջաներին: Գյուղական համայնքն սկսեց քայքայվել՝ երկրում առաջ բերելով աղքատություն և սով: Միայն 1770 թ. Բենգալիայում սովից մահացավ 10 մլն մարդ:

Այս ամենը Հնդկաստանում անգլիական գաղութարարների հաստատումից հարյուր տարի անց հանգեցրեց հնդիկ ժողովրդի 1857–1859 թթ. մեծ ապստամբությանը, որը դաժանորեն ճնշվեց:

ՉԻՆԱՍՏԱՆԸ

XVII դ. կեսերին Չինաստանը գրավեցին հարևան մանջուրական ցեղերը: Չինաստանում հաստատվեց մանջուրական 8ին արքայատոհմը (1644–1911 թթ.), որն իր ձեռքում կենտրոնացրեց ողջ իշխանությունը: Չինական վերնախավը զրկվեց իր իրավունքներից: Բոլոր պետական և զինվորական պաշտոնները տրվեցին մանջուրներին: Չինարենից բացի պետական լեզուն դարձավ նաև մանջուրերենը: Արգելվեցին խառն ամուսնությունները: Մանջուրները խլեցին չինա-

ցիների լավագույն հողերը և սկսեցին հարկեր հավաքել բնակչությունից: Արհեստով կամ առևտրով զբաղվելը մանջուրների համար համարվում էր ոչ պատվաբեր:

Ցին արքայատոհմի կայսր

Ցին արքայատոհմի օրոք հիմնականում պահպանվեցին չինական նախկին պետական կարգը և կառավարումը: Ցին կայսրը՝ բողդիխանը, ուներ անսահմանափակ իշխանություն: Նա կրում էր «Երկնքի որդի» տիտղոսը: Կայսրը հագնում էր դեղին գույնի հագուստ՝ ի նշան այն բանի, որ նմանվում էր արևին: Կայսեր անունը համարվում էր սուրբ, և ոչ ոք իրավասու չէր այն գրել կամ արտասանել: Կայսրը երկիրը ղեկավարում էր նախարարությունների միջոցով: Կայսերը կից գործում էին պետական գրասենյակը, պետական և ռազմական խորհուրդները: Գործադիր իշխանությունն իրագործում էին վեց նախարարություններ: Ցին կայսրերի հենարանը մանջուրներից կազմված ութադրոշ զորքն էր, որի գլուխ անցած նրանք XVII–XVIII դարերում գրավեցին Ջունգարիան (Չինաստանից արևմուտք) Մոնղոլիան, Տիբեթը, ներխուժեցին Բրիմա և Վիետնամ: Մանջուրական կայսրերի նվաճումների շրջանում հատկապես XVIII դ. ուժեղացավ եվրոպացիների ներթափանցումը Չինաստան: Նրանք աշխույժ առևտուր էին անում չինական նավահանգիստներում: Վախենալով, որ օտարերկրացիների մուտքը կխախտի չինացիների լճացած կենցաղը և կխարխլի կայսրերի իշխանությունը, ցիներն սկսեցին վարել Չինաստանն աշխարհից մեկուսացնելու քաղաքականություն: 1757 թ. բողդիխանը հրապարակեց հրամանագիր, որով հայտարարվում էր արտաքին առևտրի համար բոլոր նավահանգիստների փակման մասին՝ բացառությամբ երկրի հարավի Գուանչժոույի (Կանտոն): Սակայն Չինաստանը, որ շահութաբեր վաճառահանման շուկա էր և հումքի աղբյուր, դրդում է եվրոպացիներին և առաջին հերթին անգլիացիներին, ամեն գնով մուտք գործել չինական շուկա: Անգլիացիները, շրջանցելով օրենքը, մաքսանենգ ճանապարհով սկսեցին Հնդկաստանից Չինաստան բերել և մեծ շահույթով վաճառել ափիոն տեսակի թմրանյութ: Ափիոնի վաճառքի վրա չինական իշխանությունների դրած արգելքը հանգեցրեց 1840–1842 և 1856–1860 թթ. «ափիոնի պատերազմներին»:

Չինական դրամներ

Այդ պատերազմներում Չինաստանը ջախջախիչ պարտություն կրեց անգլիական լավ զինված ուժերից և ստիպված էր ստորացուցիչ հաշտություն կնքել: Անգլիայի հետ կնքված անիրավահավասար պայմանագրերին հաջորդեց նույնանման անիրավահավասար պայմանագրերի կնքումը Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ: Չինաստանը, որը «փակ» երկիր էր, այսուհետև «բացվեց» նրանց առջև:

Դրվագ 1840–1842 թթ. «ափիոնի պատերազմից»

Ներթափանցելով Չինաստան՝ այդ տերություններն աստիճանաբար սկսեցին երկիրը բաժանել ազդեցության գոտիների, որի հետևանքով XIX դ. կեսերին Չինաստանը վերածվեց կախյալ կիսագաղութային երկրի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է ավանդական հասարակությունը: Որոնք են նրա բնորոշ գծերը և առանձնահատկությունները:
2. Երբ է Օսմանյան կայսրությունը անկում ապրել:
3. Ինչ փոփոխություններ կատարվեցին Թուրքիայում Մահմուդ II-ի օրոք:
4. Ինչ ընթացք ունեցավ պայքարը Հնդկաստանի համար:
5. Որքա՞ն է տևել Ցին արքայատոհմի կառավարումը Չինաստանում:
6. Ինչպիսի՞ն էր կայսեր իշխանությունը Չինաստանում:
7. «Ոռոգման ջրանցքները լքված են ու լցված տիղմով, շատ շրջաններից հեռացել է բնակչությունը, որին փոխարինելու են եկել ջունգլիները և գազանները»: Ձեր կարծիքով՝ ինչի՞ մասին է վկայում անգլիացի պաշտոնյայի այս խոսքը:
8. Լրացրեք «Արևելքի ավանդական հասարակություններ» աղյուսակը:

Երկրներ	Տարեթիվ	Իրադարձություն	Արդյունք (հետևանք)
Թուրքիա			

Իրան			
Հնդկաստան			
Չինաստան			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ռոբերտ Քլայվի արդարացումը

Քլայվը սերել է սնանկացած ազնվական ընտանիքից: Հուսահատված ծնողները որևէ օգուտ չսպասելով թերուս զավակից՝ նրան ուղարկում են Հնդկաստան: Այստեղ ճարպիկ և ձեռներեց Քլայվը ծառայում է Արևելահնդկական ընկերությունում և արագորեն զինվորական փառք ձեռք բերում: Պլեսսիի ճակատամարտում Քլայվի գլխավորած զորքերը հաղթում են ֆրանսիացիների կողմնակից Բենգալիայի տիրակալին և տիրում հարուստ Բենգալիային: Սկսվում է Բենգալիայի հրեշավոր կողոպուտը: Արևելահնդկական ընկերության պարագլուխները զավթում են 21 մլն. ֆունտ ստեռլինգի հարստություն, որի հաշվին Քյալվը դառնում է հսկայական կարողության տեր: Հետագայում պառլամենտը նրա կատարած գործողությունների և չարաշահումների համար հաշվետվություն է պահանջում: Պատմությանը հայտնի է պառլամենտում Քլայվի տված ցինիկ պատասխանը. «Ես վերցրել եմ ընդամենը 200 հազար: Զենտլմեններ, մինչև այժմ չեմ դադարում զարմանալ իմ սեփական համեստության վրա»: Պառլամենտը նրան արդարացնում է, հայտարարելով, որ «լորդ Քլայվը մեծ ու արժանի ծառայություններ է մատուցել Անգլիային»:

Մեծ վեզիր Ալի փաշայի մտավախությունը

1863 թ. մարտի 17-ին սուլթանական կառավարությունը հաստատեց հայոց «Ազգային սահմանադրությունը»: Պոլսահայությունն այդ հաղթանակը նշեց մեծ շուքով:Նրանք դրոշակներով զարդարված 20 շոգենավերով և նվագախմբի ուղեկցությամբ Բեբեքի պալատի առաջ ջերմ շնորհակալություն հայտնեցին մեծ վեզիր Ալի փաշային Սահմանադրության հաստատման համար: Մեծ վեզիրը, որը տպավորված էր հայերի նման վերաբերմունքից, շրջվելով դեպի իր բարեկամներից մեկը, ասում է. «Ես վախենում եմ ոչ թե պոռոտախոս հույներից, այլ հայերից, որոնք լռիկ-մնջիկ գործում են և թարք ժողովրդի հետ սերտ շփման մեջ են, վախենում եմ, որ սրանք մի օր տաճկաց միանալով հեղափոխություն անեն երկրի մեջ»:

Հայերը Չինաստանում

Հայկական գաղթավայրերի ստեղծումը Չինաստանում պայմանավորված էր մոնղոլական առաջին արշավանքներով: Հայտնի է, որ մոնղոլական հրոսակները հազարավոր գերիներ քշել են Հայաստանից դեպի Քաբուլ, Սամարղանդ և ներկայիս Չինաստանի հյուսիսային շրջանները: Երկրի հյուսիսում հաստատված հայերը զբաղվել են առևտրով և արհեստագործությամբ: Նրանք այստեղից թափանցել են Չինաստանի խորքերը, ապա հասել մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը: XVI–XVII դդ. սկսվում է հայ-չինական հարաբերությունների նոր շրջանը: Չինաստանի հետ աշխույժ առևտուր են սկսում իրանահայ և հնդկահայ վաճառականները: Եվրոպացի ճանապարհորդները վկայում են, որ XVI–XVII դդ. հայերը աչքի են ընկել Չինաստանի առևտրի և մշակույթի մեջ: Տեղեկություններ կան, որ մինչև 1307 թ. Կանտոնից ոչ հեռու կառուցվել է հայկական գեղեցիկ եկեղեցի: Չինաստանում հայտնի հայ մտավորական Հովհաննես Ղազարյանը Կանտոնում եղել է չինարենի ուսուցիչ ու թարգման: Նա անգլերենից չինարեն է թարգմանել Աստվածաշունչը, որի մի մասը հրատարակվել է Սերամբորում: Ըստ չինագետ մասնագետների՝ դա Աստվածաշնչի չինարեն առաջին և հաջող թարգմանությունն է:

1. Փորձեք բնութագրել Քլայվին: Նրա բնավորության ո՞ր գծերն են ամենից վանող ու անընդունելի: Ըստ ձեզ՝ ինչի՞ մասին է վկայում անգլիական պառլամենտի վերաբերմունքը Քլայվի նկատմամբ: Ի՞նչ եք կարծում՝ կան արդյոք նման օրինակներ մեր օրերում:

2. Ինչո՞վ եք բացատրում «Ազգային սահմանադրության» հանդիսավոր նշումը պոլսահայերի կողմից: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է ընկալել թուրքական մեծ վեզիրի՝ իր բարեկամին ասված խոսքերը: Ինչի՞ մասին էր նա ակնարկում:

3. Ի՞նչ նոր տեղեկություններ ձեռք բերեցիք Չինաստանի հայկական գաղթավայրի մասին: Գաղութահայերին բնորոշ ի՞նչ հատկանիշներ կառանձնացնեք, որոնք դրսևորել են նաև Չինաստանի հայերը:

§12. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԿԵՍԵՐ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների մի մասը նոր ժամանակների շեմին ուներ իր պետականությունը և ինքնուրույնությունը: Եվրոպայի և Ասիայի առավել հզոր և մեծ պետություններից էին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ավստրիան, Իսպանիան, Օսմանյան կայսրությունը, Իրանը և այլն:

Միևնույն ժամանակ կային ժողովուրդներ, որոնք առհասարակ պետականություն չունեին: Դա մի կողմից՝ հասարակական զարգացման ցածր մակարդակի և մյուս կողմից՝ զենքի ուժով ստիպողաբար օտար տիրապետության գտնվելու հետևանք էր: Օրինակ՝ Օսմանյան տիրապետության տակ էին բուլղարները, սերբերը, արաբները, հույները, հայերը և այլ ժողովուրդներ:

Անգլիական ազնվականության և բուրժուազիայի ներկայացուցիչների հանդիպումը

Միջնադարյան ավատատիրական կարգերի ընդերքում ծագում են նոր կապիտալիստական հարաբերությունները: Հին կարգերի կողմնակիցները՝ արտոնություններ ունեցող թագավորները, ազնվականությունը, հոգևորականությունը, խոչընդոտում էին կապիտալիստական կարգերի հաստատմանը: Այդ հակասություններն ուղեկցվում էին բռնություններով, որոնք ավարտվում էին հեղափոխություններով՝ XVII դ. անգլիական, XVIII դ. ֆրանսիական հեղափոխություններ և այլն:

Ի վերջո հաղթանակում է կապիտալիստական հասարակարգը: Ֆաբրիկաներում, գործարաններում, տնտեսության տարբեր բնագավառներում հիմնականում վարձու աշխատուժ է դառնում բանվորությունը, որը, թվապես ավելանալով, կազմում է տվյալ երկրի

բնակչության մեծ մասը: Հասարակության մեջ վճռորոշ են դառնում կապիտալիստի (բուրժուա) և բանվորի փոխհարաբերությունները:

Նոր՝ կապիտալիստական հասարակական հարաբերությունների հաստատման շնորհիվ եվրոպական ազգերը զարգացան և հզորացան այնքան, որ առաջ անցան այլ աշխարհամասերի ժողովուրդների համեմատությամբ: Զարգացման մակարդակների այդ տարբերությունը պահպանվեց նոր պատմության ողջ ընթացքում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր դարաշրջանում տարբեր երկրների և ազգերի միջև քաղաքական փոխհարաբերությունների ընդլայնմամբ ակտիվացան նրանց տնտեսական և այլ կարգի հարաբերությունները: Այլևս ոչ մի երկիր, առանց մյուսների հետ բազմակողմանի կապերի, ինքնուրույն չէր կարողանա գոյատևել:

Բորսա Փարիզում, XIX դ.

Ավատատիրականի համեմատությամբ՝ կապիտալիստական հասարակարգում արտադրությունը դարձավ ապրանքային, այսինքն՝ ամեն ինչ արտադրվում էր վաճառքի համար: Դրա հետևանքով ընդլայնվեց առևտուրը, ձևավորվեց միասնական ներքին, իսկ ավելի ուշ՝ միջազգային շուկան: Առևտուրը դարձավ համաշխարհային, առևտրական պատերազմները՝ սովորական երևույթ:

Ի տարբերություն նախորդ ժամանակների, երբ առևտրական ուղիներն անցնում էին այս կամ այն երկրով, այժմ դրանք հատում էին օվկիանոսները: Ստեղծվեցին հոլանդական, ֆրանսիական, անգլիական Արևելահնդկական և Արևմտահնդկական առևտրական ընկերությունները, բանկեր և բորսաներ: Այս ընկերությունները, որևէ ապրանքի առևտուրը մենաշնորհ դարձնելուց բացի, շահագործում էին ավելի հետամնաց ազգերին, զավթում նրանց տարածքները, խլում երկրի հարստությունները: Դրա վառ օրինակը անգլիական Արևելահնդկական ընկերության գործունեությունն էր Հնդկաստանում:

Արտադրության և առևտրի զարգացման հետևանքով աճեցին

մարդկանց նյութական պահանջմունքները, ընդլայնվեց ապրանքների տեսականին, ամեն ինչ դարձավ առք ու վաճառքի առարկա: Արևելքի երկրներից Եվրոպա էին ներմուծում համեմունքներ, չրեր, բամբակ, թեյ, սուրճ, թանկագին քարեր և այլն:

Արևելահնդկական ընկերության զինանշանը

Եվրոպական պետությունները Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի երկրների հետ առևտրի միջոցով խիստ հարստացան, իսկ դրան հակառակ՝ մյուս ժողովուրդների զարգացումը կասեցվեց: Անհավասար պայքարի հետևանքով ոչնչացան ամբողջ ցեղեր և ժողովուրդներ: Այսպիսով՝ Եվրոպական մի շարք ազգեր՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ, հոլանդացիներ և ուրիշներ, ի տարբերություն ավանդական կարգերով ապրող Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների, հզորացան և գերիշխող դիրք գրավեցին աշխարհում:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները հանգեցրին թույլ ազգերի նվաճմանն ու գաղութացմանը: Ոսկու տենդից կուրացած՝ եվրոպական երկրներն սկսեցին յուրացնել Ամերիկան, թափանցել Ասիայի և Աֆրիկայի հեռավոր մասերը: Արագ հարստացումը և հզորացումը եվրոպացիներին հնարավորություն տվեցին յուրացնելու հսկայական տարածքներ, կործանելու քաղաքակրթություններ, իրենց ենթարկելու տասնյակ ազգերի, թուլացնելու դարավոր կայսրությունները:

Եվրոպական ազգերը ոչնչացրին Աֆրիկայի և Ամերիկայի բազմաթիվ ժողովուրդների, կողոպտեցին Հնդկաստանը, Չինաստանը, թուլացրին և սկսեցին վերահսկել Օսմանյան կայսրությանը, Իրանին և այլ երկրների: Աստիճանաբար ձևավորվում էր գաղութատիրությունը, և թույլ ու հետամնաց ազգերը, նրանց

Իսպանացի գաղութարարներ

Դրվագ գաղութների բնակիչների կյանքից

տարածքներն ու հարստությունները նպաստեցին Եվրոպացիների զարգացմանը: Միաժամանակ գաղութային պայքարում խիստ սրվեց մրցակցությունը Եվրոպացի ազգերի միջև: Եվրոպական երկրների բնակչությունը գաղթում էր հետամնաց երկրներ և, արտաքսելով կամ ոչնչացնելով բնիկներին, ստեղծում նորաբնակների գաղութներ: Դրա հետևանքով XVII դ. առաջացան իսպանախոս Լատինական Ամերիկան, անգլիախոս և ֆրանսախոս Հյուսիսային Ամերիկան, իսկ XIX դ. անգլիախոս Ավստրալիան և Նոր Զելանդիան:

XVII–XVIII դդ. աշխարհի տարբեր մասերում հզոր ազգերի գաղութային նվաճումներին եռանդուն մասնակցել է նաև կաթոլիկ եկեղեցին: Նոր նվաճված ժողովուրդների մեջ կաթոլիկ հավատը տարածելու համար ստեղծվեցին զանազան միաբանություններ, որոնք, հետևելով նվաճողներին, այդ երկրներում ստեղծում են միսիաներ՝ առաքելություններ: Հզոր պետությունների միջև հաճախակի տեղի էին ունենում պատերազմներ, որոնց նպատակը թույլ ազգերի հպատակեցնումն էր ու նոր տարածքների զավթումը: Սկզբում հզոր գաղութային երկրներ էին Պորտուգալիան, Իսպանիան, Հոլանդիան, իսկ XVIII–XIX դդ.՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Այս երկրների գաղութներն իրենց տարածքներով մի քանի անգամ գերազանցում էին մայր երկրի՝ մետրոպոլիայի տարածքները: Մասնավորապես, բրիտանական գաղութային կայսրության մասին ասում էին՝ «Արևն այնտեղ երբեք մայր չի մտնում»:

Սպրկավաճառություն

Գաղութների համար պայքարը շարունակվեց նաև հետագայում: Չնայած գաղութային դաժան ճնշմանը, հետամնաց ազգերի մի մասը տնտեսապես զարգացավ և

ազատագրական պայքար սկսեց սեփական անկախ պետականության համար: Այդպես առաջացան ԱՄՆ-ը, Լատինական Ամերիկայի ազգային պետությունները:

Գաղութային համակարգի ստեղծումը նպաստեց Եվրոպայում կապիտալիզմի հետագա զարգացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ հետևանքներ ունեցավ տարբեր երկրների անհավասարաչափ զարգացումը:
2. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան տնտեսական հարաբերություններում:
3. Ինչպե՞ս ստեղծվեց գաղութային համակարգը, և ի՞նչ հետևանքներ ունեցավ:
4. Ի՞նչ եք կարծում՝ XVII–XVIII դդ. հնարավո՞ր էր կանխել եվրոպական երկրների գաղութային զավթումները: Հիմնավորեք ձեր տեսակետը:
5. Լրացրեք «Միջազգային հարաբերությունները XVII–XIX դդ. կեսերին» աղյուսակը:

Հարաբերություններ	*Բովանդակություն (բնորոշ գծեր)*
Քաղաքական	
Տնտեսական	
Գաղութային	

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Գաղութարարների որոշումը

Հյուսիսային Ամերիկայի անգլիական գաղութների բնակչության ներկայացուցիչները 1640 թ. որոշեցին հնդկացիներից խլել նրանց բոլոր հողերը: Ահա որոշումը.

Հողը և այն բոլորը, ինչ վերաբերում է հողին՝ աստվածային է (Ընդունված է):

Աստված կարող է հողը կամ նրա ցանկացած մասը տալ իր ընտրյալ ժողովրդին (Ընդունված է):

Մենք նրա ընտրյալ ժողովուրդն ենք (Ընդունված է):

1. Ի՞նչ է վկայում անգլիական գաղութարարների որոշումը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էին գաղութարարներն իրենց հողային զավթումներն արդարացնում՝ վերակոչելով Աստծուն: Հիմնավորեք ձեր տեսակետը:

ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

§13. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

XVII–XIX դդ. աննախադեպ առաջընթաց ապրեց մշակույթը: Եվրոպական մշակույթի զարգացման վրա ազդեցին լուսավորական գաղափարները, բուրժուական հեղափոխությունները և կապիտալիստական արդյունաբերության զարգացումը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

Անգլիայում, Ֆրանսիայում և Հյուսիսային Ամերիկայում տեղի ունեցած բուրժուական հեղափոխությունները նպաստեցին կրթության նոր համակարգի անցնելուն: Իհարկե, յուրաքանչյուր երկրում այդ անցումը տեղի էր ունենում որոշակի առանձնահատկություններով: Գերմանական պետությունների մեծ մասում դեռևս XVIII դ. գործում էր պարտադիր տարրական ուսուցումը:

Սորբոնի համալսարանը

Ֆրանսիայում, դեռևս Լյուդովիկոս XIV-ի օրոք ստեղծված ճյուղային ակադեմիաները դարձան գիտության կարևոր կենտրոններ: Ակադեմիայի անդամներին անվանում էին «անմահներ»: Միաժամանակ շարունակում էին գործել միջնադարում ստեղծված համալսարանները, որոնցից առավել հայտնին Սորբոնի համալսարանն էր:

Անգլիայում կրթությունը և գիտությունը, որոնք նախկինում եկեղեցու հսկողության տակ էին, այժմ ստացան պետական հովանավորություն: Բացվեցին պետական դպրոցներ և պետական գիտական ընկերություններ: Շարունակում էին գործել Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանները:

ԱՄՆ-ում տարրական և միջնակարգ դպրոցների համակարգը ստեղծվեց անկախության նվաճումից անմիջապես հետո: Եկեղեցու

անջատվելը պետությունից դրականորեն ազդեց կրթության բովանդակության վրա: XIX դ. առաջին կեսին շատ նահանգներում տարրական կրթությունը դարձավ անվճար: Գործարարները, պետական գործիչները, գիտնականները հովանավորում էին քոլեջների ստեղծումը, որի շնորհիվ դրանք լայնորեն տարածվեցին: Քոլեջների հիման վրա ԱՄՆ-ում հիմնադրվեցին Հարվարդի, Փրինսթոնի, Փենսիլվանիայի և այլ համալսարաններ: 1825 թ. Վիրջինիայի համալսարանի բացմանը մեծապես նպաստեց Թոմաս Ջեֆերսոնը:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիան

XVIII դ. առաջին կեսին Ռուսաստանում ստեղծվեցին բարձրագույն մասնագիտական դպրոցներ, իսկ 1725 թ. հիմնադրվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիան: Շուտով բացվեցին նաև համալսարաններ, որոնք դարձան գիտության կարևոր օջախներ: Դրանցից էին Մոսկվայի (1755 թ.), Կազանի (1804 թ.) և Պետերբուրգի (1819 թ.) համալսարանները:

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կապիտալիստական հարաբերությունների տարածումն ու ամրապնդումն ուղեկցվում էր գիտության աննախադեպ զարգացմամբ: Եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում զարգացան հատկապես տեսական գիտությունները: Կարևորվեց գիտական եզրակացություններն անպայմանորեն փորձնական եղանակով հիմնավորելը: Բարձրացավ փորձերի ճշգրտության աստիճանը ֆիզիկայի և քիմիայի բնագավառներում: Գիտության մեջ սկսեցին լայնորեն օգտագործվել մաթեմատիկական հաշվարկները: Այսպիսով՝ գիտական ուսումնասիրություն կատարելը վերածվեց ամբողջական համակարգի. տեսություն, գիտափորձ, եզրահանգում:

Իսահակ Նյուտոն (1643-1727 թթ.)

Լուսանկարչական սարքը

Բազմաթիվ գիտական հայտնագործություններ ու գյուտեր արագորեն ներդրվում էին արտադրության մեջ: Սկսեցին լայնորեն կիրառվել զսպանակավոր ժամացույցները, թափվող ջրով աշխատող ջրանիվը, վերելակը և այլն:

Անգլիացի մեծ գիտնական Իսահակ Նյուտոնը հայտնագործեց մեխանիկական շարժման և տիեզերական ձգողականության օրենքները: Անգլիացի մեկ այլ գիտնական՝ Մայքլ Ֆարադեյը, հայտնագործեց էլեկտրականության և մագնիսականության միջև եղած կապը:

Չարլզ Մակինթոշը հայտնագործեց անջրանցիկ կտորը և սկիզբ դրեց հատուկ արտահագուստի արտադրության, որը հայտնի դարձավ «մակինթոշ» անունով:

Ֆրանսիայում նույնպես գիտությունը մեծ առաջընթաց է արձանագրում: Ականավոր գիտնականներից էին Ռենե Դեկարտը, Պիեռ Ֆերման, Բլեզ Պասկալը և ուրիշներ: Մեծ էր նրանց դերը բնական գիտությունների, հատկապես՝ մաթեմատիկայի և ֆիզիկայի զարգացման գործում:

1783 թ. Մոնգոլֆիե եղբայրները փորձարկեցին առաջին օդապարիկը, իսկ 1839 թ. Լուի Դագերը ստեղծեց լուսանկարչության գործնականորեն մշակված եղանակը:

Նշանակալի հաջողությունների հասավ գիտությունը Ռուսաստանում: Միխայիլ Լոմոնոսովի անվան հետ է կապված քիմիայի, ֆիզիկայի, աստղագիտության, աշխարհագրության, պատմության զարգացումը: Նա է հիմնադրել քիմիական առաջին լաբորատորիան Ռուսաստանում:

Միխայիլ Լոմոնոսով (1711-1765 թթ.)

XIX դ. սկզբին նշանավոր մաթեմատիկոս Նիկոլայ Լոբաչևսկին մշակեց երկրաչափության վերաբերյալ նոր պատկերացում: Բազմաթիվ տեխնիկական նորարարությունների հեղինակ էր ինքնուս մեխանիկ Իվան Կուլիբինը:

Բնական գիտությունների ոլորտում մեծ նվաճումների հասան գերմանացի գիտնականները: Նրանց ուսումնասիրությունների շնորհիվ XVII-XVIII դդ. ալքիմիային փոխարինեց գիտական քիմիան, հայտնագործվեցին տիտանը, ֆոսֆորը

և այլ քիմիական տարրեր:

ԱՄՆ-ում գիտության զարգացման բնագավառում մեծ էին Բենջամին Ֆրանկլինի ծառայությունները: Նա ապացուցեց կայծակի էլեկտրական բնույթը և ստեղծեց շանթարգելը: Սեմյուել Մորզեն 1837 թ. կարողացավ լարերի միջով տարածության վրա ազդանշաններ հաղորդել և ստեղծեց տեղեկատվություն հաղորդելու պայմանական նշանների հատուկ համակարգ՝ Մորզեի այբուբենը:

Ազդանշաններ հաղորդող սարք

Արդեն XIX դ. կեսերին նկատելի էր գիտական հետազոտությունների աճող ազդեցությունը արտադրության զարգացման վրա: Մեքենաների ստեղծումն ու կիրառումը հնարավոր չէր լինի առանց գիտության նվաճումների օգտագործման:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

XVII դ. երկրորդ կեսին անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը մշակեց մարդու բնական իրավունքների մասին ուսմունքը: Ըստ նրա՝ մարդու հիմնական բնական իրավունքներն էին ազատությունը և սեփականությունը: Լոկի ուսմունքը հզոր զենք դարձավ ավատատիրության դեմ պայքարում:

Էմանուիլ Կանտ (1724–1804 թթ.)

Նոր ժամանակների փիլիսոփայության հայրենիքը Գերմանիան էր: Հանրահայտ են XVIII–XIX դդ. գերմանացի խոշորագույն փիլիսոփաների՝ Գեորգ Հեգելի և Էմանուիլ Կանտի անունները: Նրանց գիտական ժառանգությունը կարելի է բնորոշել «Մերը գիտության նկատմամբ սեր է ճշմարտության նկատմամբ» արտահայտությամբ:

Գերմանիայում ձևավորվեց կոմունիզմի գաղափարախոսությունը, որի հիմնադիրներն էին Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը: Ըստ նրանց՝ կոմունիզմը մարդկության ապագա հասարակարգն էր՝ առանց շահագործման, անհավասարության և աղքատության: Մարքսի և Էնգելսի համոզմամբ՝ ապագա կոմունիստական հասարակարգը պետք է հաստատվեր բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի

Օգյուստ Կոնտ (1798–1857 թթ.)

արդյունքում:

Ֆրանսիայում և նրա սահմաններից դուրս հայտնի էր փիլիսոփա Օգյուստ Կոնտի անունը, որը սահմանեց գիտական ուսումնասիրության հիմնարար սկզբունքը՝ «ճանաչիր, որպեսզի կանխատեսես»:

XVII–XIX դդ. իրավամբ կարելի է համարել կրթության և գիտական աննախընթաց նվաճումների ժամանակաշրջան: Այս ընթացքում ստեղծված մշակութային ձեռքբերումներն իրենց ազդեցությունն ունեցան հետագա շրջանի մշակութային արժեքների ձևավորման վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ գործոններով էր պայմանավորված կրթության և գիտության զարգացումը:
2. Թվարկեք նշանավոր գիտնականների և մտածողների անուններ:
3. Որո՞նք էին Եվրոպայի և ԱՄՆ-ի հայտնի համալսարանները:
4. Ըստ «ճանաչիր, որպեսզի կանխատեսես» արտահայտության՝ ինչպե՞ս կարող եք բնութագրել Օ. Կոնտին:
5. Ձեր կարծիքով՝ գիտության ո՞ր բնագավառներն էին ավելի կարևորվում XIX դ. առաջին կեսին: Հիմնավորեք ձեր տեսակետը:
6. Լրացրեք «Գիտության նվաճումներ» աղյուսակը:

Գիտնականը	Հայտնագործությունը	Երկիրը

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Դրվագ Միխայիլ Լոմոնոսովի կյանքից

Դժվար է անցել Լոմոնոսովի մանկությունը: Լոմոնոսովն այնքան գրագետ էր, որ, դեռևս պատանի, համագյուղացիների անունից կազմում և ստորագրում էր տարբեր փաստաթղթեր: Հեռավոր հյուսիսային գյուղից ձմռանը նա գումակի հետ եկավ Մոսկվա, որպեսզի սովորի: Այն ժամանակ նա 19 տարեկան էր: Թաքցնելով իր գյուղացիական ծագումը՝ Լոմոնոսովը ընդունվեց Սլավոնա-հունա-լատինական ակադեմիան:

Հետո նա վերհիշել է, թե որքան դժվարությամբ է ուսում ստացել: «Ամենաելի աղքատություն. օրական ունենալով մեկ ալտին (երեք կոպեկ), կես կոպեկ տալիս էի հացի, կես կոպեկ՝ կվասի, իսկ մնացածը ծախսում թղթի, կոշիկի և ուրիշ կարիքների համար»: Այնուամենայնիվ, մեկ տարում նա հաղթահարեց երեք դասարանի ծրագիր: Լավագույն աշակերտների թվում նրան ուղարկեցին Գերմանիա՝ կրթությունը շարունակելու: Վերադառնալով՝ սկսեց աշխատել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայում:

Լոմոնոսովի խոսքերով՝ ինքն ուներ «հայրենիքում գիտությունների տարածման բոլոր արգելքները հաղթահարելու համբերություն, ազնիվ համառություն և համարձակություն»:

Պուշկինը նրա մասին գրել է. «Պատմաբան, հռետոր, մեխանիկ, քիմիկոս, հանքաբան, նկարիչ և բանաստեղծ. նա բոլորը փորձել է և բոլորի մեջ թափանցել»:

Թաքնված տաղանդը

Հոլանդացի մաթեմատիկոս Բեկմանը իր հայրենի Բրեդի քաղաքի փողոցներից մեկում կանգնած ինչ-որ հայտարարություն էր կարդում, երբ նրան մոտեցավ մի երիտասարդ սպա և խնդրեց լատիներեն թարգմանել հայտարարության տեքստը: Հայտարարությունը մաթեմատիկական դժվարին խնդիրների մասին էր:

Տեքստը թարգմանելուց հետո Բեկմանը, որպես վարձատրություն իր թարգմանության դիմաց, սպայից պահանջեց լուծել հայտարարության մեջ նշված խնդիրը: Ի զարմանս Բեկմանի, հաջորդ օրը ներկայացավ երիտասարդ սպան և բերեց խնդրի լուծումը: Երիտասարդ սպան ուղղանկյան կոորդինատների հոչակավոր հեղինակ Դեկարտն էր, որի գինվորական գունդն այդ ժամանակ գտնվում էր Բրեդիում:

Բեկմանի հետ ծանոթությունը 22-ամյա Դեկարտին հանեց պարապությունից: «Ես նիրհում էի, դուք արթնացրիք ինձ», – խոստովանում էր հետագայում Դեկարտը իր ավագ գործընկերոջը:

1. Ինչ դժվարություններ է հաղթահարել Լոմոնոսովն իր ուսման ճանապարհին: Ձեր կարծիքով՝ ինչն է նրան ուժ տվել գիտության բարձունքներին հասնելու համար:

2. Փորձեք բնութագրել Լոմոնոսովին: Նրան բնորոշ ինչ հատկանիշներ ձեզ դուր եկան: Կոզմենայինք նմանվել նրան: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր է Լոմոնոսովին տրված Պուշկինի գնահատականով բնութագրել մեր օրերի գիտնականներին: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

3. Ինչ գիտեք Դեկարտի մասին: Ձեր կարծիքով ինչը դեր է խաղացել Բեկմանի հանձնարարությունը: Ըստ լրացուցիչ նյութի՝ փորձեք բնութագրել Դեկարտին:

§14. ԱՐՎԵՍՏՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XVII–XIX դդ. կրթության և գիտության բուռն զարգացմանը զուգընթաց ծաղկում էին նաև գրականությունն ու արվեստը, ստեղծվում են համաշխարհային մշակույթի մեծարժեք գործեր:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ջորջ Բայրոն (1788-1824 թթ.)

Անգլիայում նոր ժամանակների նշանավոր գրողներից էր Դանիել Դեֆոն, որին հռչակ բերեց հատկապես «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանալի արկածները» վեպը:

XIX դ. առաջին կեսի խոշորագույն բանաստեղծներից է Ջորջ Բայրոնը: Նրա ստեղծագործություններից ամենանշանավորը «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմն է, որտեղ զայրույթով դատապարտվում է «Սրբազան դաշինքի» կողմից հեղափոխությունների ճնշումը: Բայրոնը եղել է հայերի ջերմ բարեկամը, Մխիթարյան միաբանության հայրերից սովորել է հայերեն և կատարել թարգմանություններ:

XIX դ. անգլիացի նշանավոր գրողներ էին նաև Չարլզ Դիկենսը, Վալտեր Սկոտը և այլք:

XVII դ. ֆրանսիական գրականության ակնառու ներկայացուցիչներից է ժան Բատիստ Մոլիերը՝ կատակերգության ժանրի հիմնադիրը: Նա իր «Տարտյուֆ», «Ժլատը» և այլ ստեղծագործություններում ծաղրում է մարդկային բնավորության բացասական գծերը՝ ագահությունը, ժլատությունը, խաբեությունը:

Վիկտոր Հյուգո (1802-1885 թթ.)

XVIII դ. երկրորդ կեսին ժան Պիեռ Բոմարշեն կատակերգության ժանրը նոր աստիճանի բարձրացրեց: Նրա «Ֆիգարոյի ամուսնությունը», «Սևիլյան սափրիչը» և այլ գործեր մինչև օրս էլ չեն իջնում աշխարհի բեմերից:

XIX դ. առաջին կեսի ֆրանսիական և համաշխարհային գրականության փայլուն ներկայացուցիչներն էին Օնորե դը Բալզակը և Վիկտոր Հյուգոն: Բալզակի գլուխգործոցը «Մարդկային կատակերգություն» վիպաշարն է:

Վ. Հյուգոյի գրական ժառանգության մեջ նշանավոր են «Թշվառները», «Փարիզի Աստ-

վածամոր տաճարը», «Մարդը, որ ծիծաղում է» և այլ վեպեր:

Գերմանական գրականության ու մշակույթի զարգացման գործում մեծ դեր խաղաց «Գրոհ և փոթորիկ» գրական շարժումը, որի նպատակը հանուն բանականության, հանուն ճշմարտության պայքարն էր: Այս շարժման ականավոր ներկայացուցիչներից էին Վոլֆգանգ Գյոթեն և Ֆրիդրիխ Շիլլերը: Իր ամենահայտնի «Ֆաուստ» ողբերգության մեջ Գյոթեն փորձել է հասկանալ ու սահմանել գեղեցիկը, կատարյալն ու ճշմարիտը:



Օնորե դը Բալզակ (11799-1850 թթ.)

Բանաստեղծ և դրամատուրգ Շիլլերն իր «Ավազակները», «Վիլհելմ Թել», «Օռլեանի կույսը» և այլ ստեղծագործություններում, ներկայացնում է այնպիսի հերոսների, որոնք, չխնայելով իրենց կյանքը, պայքարում են մարդու արժանապատվության և ժողովուրդների ազատագրության համար:

Ֆրիդրիխ Շիլլեր (1759-1805 թթ.)

Իտալացի գրող Ալեսանդրո Մանձոնիի ստեղծագործության գլուխգործոցը «Նշանվածները» պատմավեպն է, որտեղ պատկերված է XVII դ. օտարի լծի տակ հեծող Իտալիան:

Ամերիկյան նորավեպի հիմնադիր Վաշինգտոն Իրվինգը ծաղրում է ագահությունն ու ժլատությունը և երևակայական աշխարհը հակադրում դաժան իրականությանը:

ԱՄՆ-ի XVIII դ. առաջին կեսի նշանավոր գրողներից էր Ֆենիմոր Կուպերը, որի 32 վեպերում պատկերված են ամերիկյան գաղութաբնակների և բնիկների կյանքն ու կենցաղը, անկախության համար մղված պայքարի շրջանը:

Ալեքսանդր Պուշկին (1799-1837 թթ.)

XIX դ. առաջին կեսի ռուսական գրականության նպատակը դարձավ ազգայինի և ճշմարիտի գեղարվեստական պատկերումը: Այդ գործում մեծ դեր խաղացին Ալեքսանդր Պուշկինը, Միխայիլ Լերմոնտովը, Նիկոլայ Գոգոլը և ուրիշներ:

Ա. Պուշկինի ստեղծագործություններում արտացոլված են ռուսական բանահյուսական գոհարներ, հայրենասիրական, ազատասիրական գաղափարներ և ռուս ժողովրդի

ազգային ոգին: Այդ ոգով են տոգորված նրա «Ռուսլան և Լյուդմիլա», «Բորիս Գոդունով», «Պղնձե հեծյալը», «Պոլտավա», «Եվգենի Օնեգին» և այլ ստեղծագործություններ:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վերսալի արքայական ապարանքը

Անգլիական գեղանկարչության մեջ հայտնի դեմքերից էր Թոմաս Գեյնսբորոն: Նրա ռեալիստական կտավներում պատկերված են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ իրենց բնորոշ հոգեբանությամբ և առօրյայով: Նրա «Սառա Սիդոնսի դիմանկարը» մեկ անգամ ևս հաստատում է լուսավորականների այն միտքը, որ գեղեցկության աղբյուրը մարդն է:

Անգլիացի նշանավոր ճարտարապետ Փաքստոնի կառուցած «Բյուրեղապակյա ապարանքը» մետաղյա կառույց էր, որին ամբողջական տեսք էին տալիս ապակյա տանիքը և պատերը: Գեղեցիկ արվեստների հայրենիք համարվող Ֆրանսիայում «Արև արքայի»՝ Լյուդովիկոս XIV-ի օրոք կառուցվեց Վերսալի հրաշագեղ արքայական ապարանքը: Արքունիքում ձևավորված արվեստն անվանվեց «Մեծ ոճ» կամ «Լյուդովիկոս XIV-ի ոճ»:

Դելակրուա, «Ազատությունը բարիկադների վրա»

XVII դ. կեսերին Ֆրանսիայում բացվեցին Ազգային օպերան և Մոլիերի թատրոնը: Ֆրանսիան դարձավ արվեստի մի նոր ճյուղի՝ բալետի հայրենիքը:

Ֆրանսիացի գեղանկարիչ Ժակ Լուի Դավիդի «Հորացիոսների երդումը», «Մարատի մահը», Նապոլեոնին նվիրված կտավներն աչքի են

ընկնում և՛ հերոսական պաթոսով, և՛ իրական կյանքի գոհեիկ գծերով, միաժամանակ նաև՝ վեհությամբ:

Մեծ համբավ էր վայելում նկարիչ Էժեն Դելակրուան, որի ամենահայտնի գործը «Ազատությունը բարիկադների վրա» կտավն է:

Բրյուլով, «Պոմպեյի վերջին օրը»

XVII դ. Իտալիայում ձևավորվեց արվեստի բարոկկո ոճը, որի ներկայացուցիչները ճարտարապետության և քանդակագործության մեջ պատկերում էին այն ժամանակի շարժուն և հարափոփոխ աշխարհը: Իր արվեստով ու կատարողական բարձր վարպետությամբ ժամանակակիցներին հիացնում էր մեծ կոմպոզիտոր Նիկոլո Պագանինին: Նրա բուռն և անսպասելի անցումներով հագեցած երաժշտությունը կարծես պայքարի և որոնումների կոչ էր՝ ուղղված ժամանակակիցներին:

Համաշխարհային հռչակ էին վայելում իտալացի կոմպոզիտորներ Ջոակինո Ռոսինին («Վիլհելմ Թելլ», «Սևիլյան սափրիչ» օպերաներ) և Ջուզեպպե Վերդին: Վերջինս ստեղծեց Իտալիայի ազգային օրհներգը՝ «Հնչում են շեփորները» և Եգիպտոսի տիրակալի պատվերով գրեց իր հանրահայտ «Ամիդա» օպերան՝ Սուեզի ջրանցքի բացման առիթով:

XVIII դ. Գերմանիայում մեծ նվաճումներ ձեռք բերվեցին երաժշտության բնագավառում: Հաղթահարելով օտարամոլությունը՝ Յոհան Սեբաստիան Բախն ստեղծեց բարդ, խորիմաստ և հուզական երաժշտություն, որն սկզբում անհասկանալի և անընդունելի էր շատերի համար: Նրա ստեղծագործություններն սկսեցին ընկալվել և լայնորեն ճանաչվել XIX դ.:

Լյուդվիգ Վան Բեթհովեն (1770-1827 թթ.)

Լյուդվիգ Վան Բեթհովենի երաժշտությունը տոգորված էր անսովոր հզորությամբ, հնչունային ուժեղ ու անսպասելի հակադրություններով: Նրա սիմֆոնիաների հիմնական մոտիվը պայքարն է հանուն ազատության, որի վառ ապացույցն է 3-րդ սիմֆոնիան՝ «Հերոսականը»:

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի երաժշտությունն աչքի է ընկնում ձևերի պարզությամբ և

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ (1756-1791 թթ.)

նրբագեղությամբ, ինչպես նաև երջանկության հավատով: Նրա «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն Ժուան», «Կախարդական սրինգը» մինչև այժմ հնչում են աշխարհի տարբեր բեմերից:

Ռուսական արվեստի ականառու ներկայացուցիչները՝ գեղանկարիչ Կառլ Բրյուլովը («Պոմպեյի վերջին օրը»), ճարտարապետ Բարտոլոմեո Ռաստրելին (Ձմեռային պալատ, Պետերգոֆ) իրենց անջնջելի հետքը թողեցին մշակույթի պատմության մեջ: Համաշխարհային երաժշտությունը հարստացրին ռուս կոմպոզիտորներ Միխայիլ Գլինկան, Պյոտր Չայկովսկին և շատ ուրիշներ:

XVII–XIX դդ. ոչ բոլոր եվրոպական երկրներում արտահայտվեց մշակույթի ընդհանուր վերելք: Սակայն այդ երկրներում նույնպես արվեստի առանձին բնագավառներում հանդես եկան այնպիսի խոշոր արվեստագետներ, ինչպիսիք էին լեհ կոմպոզիտոր Ֆրեդերիկ Շոպենը, հոլանդացի մեծ նկարիչ Ռեմբրանդտ Վան Ռեյնը, իսպանացի հանրահայտ նկարիչ Ֆրանսիսկո Գոյան և ուրիշներ:

Մեծ գրողները, նկարիչները, երաժիշտները իրենց արվեստի ուժով ստեղծում էին գեղեցիկն ու մնայունը՝ ձգտելով ազատության, արդարության և բարու հաղթանակին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է XVII–XIX դդ. կեսերի ձեր սիրած գրողը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
2. Ի՞նչ գրական շարժում է ստեղծվել Գերմանիայում: Ովքե՞ր են եղել այդ շարժման նշանավոր ներկայացուցիչները:
3. XVII–XIX դդ. կեսերի նկարիչների գործերից ո՞ր կտավն է ձեզ դուր գալիս և ինչո՞ւ:
4. XVII–XIX դդ. կեսերի երգահանների ստեղծագործություններից ո՞րն եք սիրում լսել ազատ ժամանակ և ինչո՞ւ:
5. Դուք համաձա՞յն եք Ջորջ Բայրոնի «Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող» խոսքերի հետ: Հիմնավորեք Ձեր տեսակետը:
6. Լրացրեք XVII–XIX դդ. կեսերի «Մշակույթի գործիչներ» աղյուսակը:

Գործիչներ	Ստեղծագործություններ	Բնագավառներ	Երկրներ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Երգի ուժը

Ապրելով Բոլոնիայում՝ Ռոսինին մի հեղափոխական երգ է գրում, որն իտալացիներին ոգևորում է ավստրիական լծից ազատագրվելու պայքարում:

Երիտասարդ կոմպոզիտորն զգում է, որ ավստրիական զորքերով լցված այդ քաղաքում իր մնալը ապահով չէ: Միաժամանակ, Բոլոնիայից էլ չէր կարողանա մեկնել՝ առանց գեներալի թույլտվության: Այնուամենայնիվ, նա որոշում է գնալ գեներալի մոտ և անցագիր ստանալ:

– Ո՞վ եք դուք,– հարցնում է ավստրիացի գեներալը:

Կոմպոզիտորը տալիս է բերանն եկած առաջին պատահական ազգանունը և ավելացնում.

– Ես երաժիշտ եմ, կոմպոզիտոր, բայց միայն ոչ այնպիսին, ինչպիսին ավազակ Ռոսինին, որը հեղափոխական երգեր է գրում: Ես սիրում եմ Ավստրիան և ձեզ համար գրել եմ ռազմական մի աշխույժ «Քայլերգ», որը դուք կարող եք տալ սովորելու ձեր նվագախմբին:

Ռոսինին գեներալին է հանձնում «Քայլերգի» նոտաները և փոխարենն անցագիր ստանում: Հաջորդ օրը «Քայլերգն, արդեն պատրաստ էր, և զինվորական նվագախումբն այն կատարում էր Բոլոնիայի հրապարակում: Ի դեպ, դա նույն հեղափոխական երգն էր: Բոլոնիայի բնակիչները, լսելով ծանոթ երգի երաժշտությունը, հիանում են և սկսում տեղում երգել՝ վախ ներշնչելով ավստրիացիներին: Պետք է պատկերացնել, թե ինչպես էր կատաղել ավստրիացի գեներալը և ինչպես էր ափսոսում, որ կոմպոզիտորն արդեն հեռու էր Բոլոնիայի սահմաններից:

Հանճարեղ կոմպոզիտորը

Ավստրիացի կոմպոզիտոր Մոցարտի տաղանդը շատ վաղ բացահայտվեց: Դրան նպաստեցին բնատուր ձիրքը և ընտանեկան միջավայրը. հայրը հայտնի երաժիշտ էր: Դեռևս 4 տարեկանում Մոցարտը կլավեսինի վրա կատարում էր պիեսներ, իսկ 6 տարեկանում մեծ հաջողությամբ հանդես էր գալիս համերգներով: Հինգ տարեկանում նա սկսեց պիեսներ հորինել, 11 տարեկանում գրեց իր առաջին օպերան ու 14 տարեկանում ընտրվեց Բոլոնիեի երաժշտական ակադեմիայի (Իտալիա) անդամ: Մոցարտն աղքատ էր, և կարիքը հաճախ էր ստիպում նրան երաժշտություն հորինել իշխանների և այլ մեծատոհմիկների համար, բայց իր ստեղծագործություններում նա մարմնավորեց բազմաթիվ ժողովրդական երգային մեղեդիներ և պարային ռիթմեր:

1. Ինչ կարող եք ասել Ռոսինի համարձակ քայլի մասին: Արդյո՞ք նա այդ քայլը կատարեց միայն իր ապահովության համար: Եթե դուք լինեիք, ինչպե՞ս կվարվեիք նրա փոխարեն: Փորձեք բնութագրել Ռոսինին: Ինչ եք կարծում՝ զենքն է թշնամուն հաղթելու միակ միջոցը: Հիմնավորեք ձեր տեսակետը:

2. Ըստ լրացուցիչ նյութի՝ բնութագրեք Մոցարտին:

I. ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. XVII–XVIII դդ. աշխարհի ժողովուրդների կյանքում տեղի ունեցան նշանակալի տեղաշարժեր: Եվրոպական ազգերը կարողացան մեծ նվաճումների հասնել տնտեսության և մշակույթի բնագավառում, ստեղծել ուժեղ պետականություն, հզորանալ և առաջ անցնել Ասիայի ժողովուրդներից: XVII դ. Անգլիայում տեղի ունեցավ բուրժուական հեղափոխություն, որը բարենպաստ պայմաններ ստեղծեց կապիտալիստական կարգերի զարգացման համար: XVIII դ. Անգլիան դարձավ առաջին երկիրը, որտեղ սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը, որի հետևանքով բուրժուազիան և վարձու բանվորները դարձան նոր հասարակության հիմնական դասակարգերը:

Արդեն XIX դ. առաջին կեսին Մեծ Բրիտանիայում ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: Երկիրը հաջորդ տասնամյակներին դարձավ «աշխարհի արհեստանոցը»: Չարտիստական շարժումը նպաստեց պառլամենտական կարգերի զարգացմանը: 1832 թ. այստեղ կատարվեց պառլամենտական բարեփոխում, որը կարևոր քայլ էր պետական համակարգը ժողովրդավարական դարձնելու ճանապարհին:

2. XVII–XVIII դդ. աշխարհում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից ամենանշանավորը Անգլիայի հյուսիս-ամերիկյան գաղութների անկախության պատերազմն էր: Անգլիայից Հյուսիսային Ամերիկա եկած վերաբնակիչները, դուրս մղելով բնիկներին՝ հնդկացիներին, այնտեղ հիմնեցին 13 անգլիական գաղութներ: Գաղութների նկատմամբ Անգլիայի վարած քաղաքականությունից դժգոհ գաղութաբնակները դիմեցին զենքի: Սկսվեց անկախության համար պատերազմը, որն ի վերջո ավարտվեց գաղութաբնակների հաղթանակով: Դրա շնորհիվ ստեղծվեց նոր պետություն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, որն ընդունեց իր Սահմանադրությունը և բռնեց վերելքի ուղին:

3. XVIII դ. երկրորդ կեսից բացարձակ միապետությունը և ավա-

տատիրական կարգերը սկսում են խանգարել Ֆրանսիայի զարգացմանը: Ֆրանսիայում հասունանում էր հեղափոխություն: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը քանդեց հին հասարակական հարաբերությունները և նպաստավոր պայմաններ ստեղծեց արդյունաբերական հասարակության զարգացման համար: Դրա հետևանքով Ֆրանսիայի ժողովուրդը ստեղծեց հզոր պետականություն և նապոլեոնյան հաղթական պատերազմների ընթացքում կարճ ժամանակով նույնիսկ կարողացավ գերիշխել Եվրոպայում: Սակայն հզորանում էին նաև մյուս ազգերը: Եվրոպական ազգերի դաշնադրությունները կարողացան առժամանակ թուլացնել Ֆրանսիայի հզորությունը: Այդ գործում մեծ դեր խաղացին Մեծ Բրիտանիան և հզոր պետականություն ունեցող Ռուսաստանը:

XIX դ. Ֆրանսիան, շարունակելով մնալ հեղափոխությունների երկիր, նույնպես տնտեսապես հզորացավ: Այստեղ արդյունաբերական հեղաշրջումն ավարտվեց մի փոքր ավելի ուշ՝ XIX դարի 50-60-ական թթ.: 1848-1849 թթ. հեղափոխության շնորհիվ այնտեղ կրկին հաստատվեց հանրապետական կարգ: Բայց դա կարճ տևեց: 1852-1870 թթ. Ֆրանսիան երկրորդ անգամ դարձավ կայսրություն: Ֆրանսիայի ժողովուրդը շարունակում էր պայքարել Մեծ հեղափոխության գաղափարների իրագործման համար:

4. XVIII դ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որը հսկայական ազդեցություն ունեցավ բազմաթիվ երկրների վրա, նպաստեց համաշխարհային զարգացմանը: Իտալիայում, գերմանական պետություններում, օսմանյան լծի տակ գտնվող բալկանյան երկրներում, Լեհաստանում հեղափոխության գաղափարները խթանեցին ազգային-ազատագրական շարժումները: Իտալիայում սկսվեց ազգային վերածնության (ռիսորջիմենտո) ժամանակաշրջանը, որն ավարտվեց երկրի միավորմամբ և ազգային միասնական պետականության ստեղծմամբ: Նույնպիսի գործընթաց տեղի ունեցավ նաև Գերմանիայում: Բալկանյան երկրներում առաջացան նոր ազգային պետություններ՝ Հունաստանը, Սերբիան, Ռումինիան:

5. Եվրոպական ազգերից իրենց զարգացմամբ հետ մնացին Ասիայի և հատկապես Աֆրիկայի ժողովուրդները: Հզոր եվրոպացիներն այդ ժողովուրդների տնտեսությունը, երկրի հարստությունները, մարդկային ուժն ի սպաս դրեցին իրենց զարգացմանը: Մեծ

Բրիտանիան կարողացավ ի վերջո հպատակեցնել Հնդկաստանի ժողովուրդներին: Արևելքի մեծ ազգերից չինացիները, որոնք երկար ժամանակ չէին ցանկանում գործ ունենալ եվրոպացիների հետ, ի վերջո տեղի տվեցին: Նրանց հետ կնքվեցին անիրավահավասար պայմանագրեր:

Շարունակեցին անկում ապրել նաև Օսմանյան կայսրությունը և Իրանը: Այդ երկրներում բարեփոխումների փորձերը ձախողվեցին: Օսմանյան պետությունը գոյատևում էր սոսկ մեծ տերությունների միջև խորացող հակասությունների շնորհիվ: Մինչ այն խաղալիք էր դարձել նրանց ձեռքին, ծավալվում էր օսմանահպատակ բալկանյան և մյուս ժողովուրդների (արաբներ, հայեր և այլն) ազգային-ազատագրական պայքարը:

6. XVII–XVIII դդ. սկզբնավորվեց գաղութային նվաճումների մեծ գործընթացը: Եվրոպական հզոր տերությունները (Անգլիան, Ֆրանսիան, Հոլանդիան և ուրիշներ) նվաճումներ կատարեցին Ասիայում և Աֆրիկայում՝ այնտեղ հիմնելով իրենց գաղութները: Գաղութարարներն ստրկացրին տեղի ժողովուրդներին, կողոպտեցին նրանց հարստությունները: XIX դ. անգլիացիները, ֆրանսիացիները, ամերիկացիները, հոլանդացիները, ռուսները և ուրիշներ շարունակում էին զավթել թույլ զարգացած երկրները, որոնք վերածվեցին էժան բանվորական ուժի և հումքի աղբյուրների:

7. Եվրոպական ազգերի հզորացումը մեծապես նպաստեց տարբեր բնագավառներում մշակույթի աննախադեպ զարգացմանը: Գիտության ու տեխնիկայի ձեռքբերումները ներդրվեցին տնտեսության մեջ՝ ապահովելով նրա հետագա առաջընթացը:

Այսպիսով, XVII դ. երկրորդ կեսից մինչև XIX դ. 70-ական թթ. մարդկությունը տնտեսական, քաղաքական և մշակութային բնագավառներում ձեռք բերեց այնպիսի նվաճումներ, որոնք հիմք դարձան նրա հետագա ավելի արագ զարգացման համար:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Թվարկե՛ք նոր պատմության առաջին շրջափուլի հիմնական արդյունքները: Ձեր կարծիքով՝ հասարակության տնտեսական կյանքում առաջացած ի՞նչ նոր երևույթներ են թույլ տալիս խոսելու կապիտալիզմի զարգացման մասին:

2. Հաստատելով իր պրոտեկտորատն Անգլիայում՝ Կրոմվելն ասել է. «Ես ստիպված եմ իմ վրա վերցնել ոստիկանի պարտականություններ»: Ինչպե՞ս եք դուք հասկանում այս արտահայտությունը: Հիմնավորեք ձեր տեսակետը:

3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է Լյուդովիկոս XIV-ը թագավորասպան Կրոմվելի մասին ասել. «Նա ամենաուժեղ մարդն էր Եվրոպայում»:

4. Ի՞նչ է սահմանադրական միապետությունը: Ձեր կարծիքով՝ ո՞ւմ տեսակետն է արտացոլվել կառավարման այս ձևի մեջ:

5. Ի՞նչ եք կարծում՝ լուսավորականների ո՞ր գաղափարներն են բռնել ժամանակի քննությունը, իսկ որոնք՝ ոչ: Ապացուցեք ձեր տեսակետը:

6. Համեմատեք Անգլիական հեղափոխության և Ֆրանսիական մեծ հեղափոխության պատճառները: Գտեք ընդհանուր գծերը և առանձնահատկությունները:

7. Փորձեք պարզել XIX դ. առաջին կեսին տնտեսության մեջ կատարված այն փոփոխությունները, որոնք վկայում են Անգլիայում արդյունաբերական հեղաշրջման ավարտի մասին:

8. Լրացրե՛ք «Հասարակության զարգացումը նոր պատմության առաջին շրջափուլում» աղյուսակը:

Դար	Տնտեսական կյանք	Քաղաքական կյանք	Սոցիալական կառուցվածք	Միջազգ. հարաբերություններ	Գաղափարախոսություն	Մշակույթի զարգացում
XVII						
XVIII						
XIX						

II
ԲԱԺԻՆ

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

§15. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ

«ԵՎՐՈՊԱ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿԸ

Նոր ժամանակների սկզբին Եվրոպայի և մյուս աշխարհամասերի միջև գոյություն ունեցող տարբերությունները XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին առավել ակնհայտ դարձան և խորացան: Աշխարհը երկատվեց անհավասար մասերի: Եվրոպական ազգերը կապիտալիստական հասարակական հարաբերությունների հաստատման շնորհիվ կարողացան զարգացման մակարդակով առաջ անցնել և հզորանալ երկրագնդի մյուս մայրցամաքներում ապրող ժողովուրդներից:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Անգլիայում տեղի ունեցան մի շարք կարևոր տնտեսական գործընթացներ: Արտադրությունն աստիճանաբար կենտրոնանում և խոշորանում էր, ստեղծվում էին մոնոպոլիաներ, մանր բանկերը միավորվում էին խոշոր բանկերի հետ, կապիտալն արտահանվում էր գաղութներ և թույլ զարգացած երկրներ:

XX դ. սկզբներին անգլիական դրամի՝ ֆունտ ստերլինգի դերն աշխարհում բավական մեծացավ, սկսվեց տնտեսական նոր վերելք: Անգլիայի դիրքերը համաշխարհային առևտրում զգալիորեն կայունացան: Կապիտալ ներդրումների չափերով Անգլիան աշխարհում շարունակում էր զբաղեցնել առաջին տեղը:

Խոշոր առևտրային ընկերության գրասենյակ

Անգլիայի տնտեսության մեջ բացառիկ մեծ դեր ունեին գաղութները:

Մեծ Բրիտանիային էր պատկանում երկրագնդի ցամաքի գրեթե 1/5-ը: Անգլիան իր շահերին էր ծառայեցնում տասնյակ ազգերի տնտեսությունը, նյութական հարստություններն ու պաշարները, մարդկային ուժն ու կարողությունները:

Ֆրանսիայի տնտեսական զարգացումը զգալիորեն դանդաղեց ֆրանս-պրուսական պատերազմում (1870-1871 թթ.) կրած պարտության հետևանքով:

Սակայն արդեն դարավերջին Ֆրանսիայի համար սկսվեցին տնտեսական զարգացման նոր ժամանակներ: Ֆրանսիան կարողացավ կարճ ժամանակում վերականգնել թուլացած տնտեսությունը, հզորանալ և մասնակցել աշխարհի տարածքային բաժանմանը:

Ֆրանսիական իմպերիալիզմն իր էությամբ վաշխառուական էր: Ֆրանսիան բարձր տոկոսներով ֆինանսական ներդրումներ էր կատարում տարբեր երկրներում, նրանց կառավարություններին տրամադրում միլիոնների հասնող փոխառություններ: Կապիտալի արտահանմամբ Ֆրանսիան 1914 թ. աշխարհում երկրորդ տեղում էր՝ Անգլիայից հետո: Արդյունաբերական զարգացման մակարդակով Ֆրանսիան չորրորդ տեղում էր՝ ԱՄՆ-ից, Գերմանիայից և Անգլիայից հետո:

Գերմանիան XIX դ. երկրորդ կեսից տնտեսական զարգացման տեմպերով սկսեց առաջ անցնել իր հարևաններից: Երկրի քաղաքական միավորումը, Ֆրանսիայից գանձված հսկայական ռազմատուգանքը և բռնազավթած Էլզասի ու Լոթարինգիայի երկաթահանքերի օգտագործումը նպաստեցին նրա տնտեսական արագ զարգացմանը:

XIX դ. 90-ական թթ. Գերմանիայում ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: Մինչև 1914 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալով Գերմանիան զիջում էր միայն ԱՄՆ-ին: Արտադրությունը կենտրոնացավ և խոշորացավ: Տարածվեցին սինդիկատները և կարտելները, որոնցից հայտնի էին Հռենոս-վեստֆալյան քարածխի սինդիկատը, Կրուպի, Տիսենի և այլ մոնոպոլիաներ:

Գերմանիայում արագորեն զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները գյուղատնտեսության մեջ, տարածվում էր վարձու աշխատանքը: Լայնածավալ յունկերական կալվածքներում պարարտանյութերի, գյուղատնտեսական մեքենաների և ցանքաշրջանառության օգտագործման շնորհիվ բարձրանում էր հողի բերքատվությունը և ավելանում գյուղմթերքների արտադրությունը:

Իտալիայի տնտեսությունը, որն զգալիորեն հետ էր մնում Եվրոպայի առաջավոր երկրների տնտեսությունից, ազգային պետության

ստեղծումից հետո սկսեց արագորեն զարգանալ: Ընդ որում, Իտալիայի հյուսիսային շրջաններում արդյունաբերությունն ավելի արագ զարգացավ, քան հարավում: Հարավը երկար ժամանակ առավելապես գյուղատնտեսական շրջան էր:

Բեռլինը XIX դ. վերջին

XIX դ. վերջին առաջացան խոշոր բանկեր, ձևավորվեց միասնական ներքին շուկան, ինչին նպաստեց երկաթուղիների կառուցումը: XX դ. սկզբին Իտալիայում արտադրությունը խոշորացավ և կենտրոնացավ արդյունաբերության նոր ճյուղերում (մեքենաշինություն, ավտոմոբիլային, էլեկտրական): Առաջացան մոնոպոլիաներ, որոնցից էին «Էդիսոնը», «Ֆիատը» և այլն:

Որոշակի առանձնահատկություններով հանդերձ՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբին եվրոպական բոլոր երկրներում կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացումը հանգեցրեց եվրոպական երկրների տնտեսական գերազանցությանը աշխարհի մյուս երկրների համեմատ:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵՀԱՎԱՍԱՐԱՁԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

XIX դ. վերջին տասնամյակներում արդյունաբերության բուռն զարգացումն ուղեկցվում էր նոր, տեխնիկապես ավելի կատարյալ մեքենաների և տրանսպորտային միջոցների ստեղծմամբ՝ նպաստելով արդյունաբերական արտադրության ծավալների ընդլայնմանը:

Արդյունաբերական բուռն աճի պայմաններում արտադրության ծավալների մեծացման և կենտրոնացման հետևանքով ուժեղանում էր նաև մրցակցությունը: Որևէ բնագավառում իրենց դիրքերն ամրապնդելու համար արդյունաբերական ձեռնարկությունների տերերը ստիպված միավորվում էին և ստեղծում մոնոպոլիաներ՝ կարտելներ, տրեստներ և սինդիկատներ, որոնց նպատակն իրենց բնագավառում ղեկավար դիրք գրավելն էր:

Երկաթուղու շինարարություն

Արտադրության կենտրոնացումն իր հետ բերում էր նաև կապիտալի կենտրոնացում: 1909 թ. բեռլինյան 9 բանկ վերահսկում էր երկրի ֆինանսական կապիտալի 83 %-ը: Նույն ժամանակ Անգլիայում 12 բանկ տնօրինում էր երկրի բանկային կապիտալի 70 %-ը:

Արդյունաբերական և ֆինանսական մոնոպոլիաների միջև պայքարն ընթանում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկաների համար: Այլ երկրներում կապիտալ ներդրումների ոլորտում Անգլիան և Ֆրանսիան դարասկզբին աշխարհում առաջին տեղում էին: Անգլիական բուրժուազիան գերադասում էր ֆինանսական միջոցները ներդնել գաղութացված երկրներում, քանի որ այնտեղից կարելի էր մեծ շահույթ ստանալ: Ֆրանսիան իր կապիտալն արտահանում էր բարձր տոկոսներով՝ պարտատոմսերի ձևով:

Մոնոպոլիստական ընկերությունների ձևավորումից հետո պայքարը նոր գաղութներ ձեռք բերելու համար էլ ավելի սաստկացավ: Գաղութների տիրելը համարվում էր մոնոպոլիաների հաջողության լիակատար երաշխիքը մրցակիցների հետ պայքարում:

XX դ. սկզբին ավելի նկատելի է դառնում տարբեր երկրների անհամաչափ զարգացումը: Ավելի ուշ ինդուստրացման ուղին բռնած ԱՄՆ-ը և Գերմանիան տնտեսական ցուցանիշներով սկսեցին հասնել առաջատարներ Անգլիային և Ֆրանսիային: ԱՄՆ-ը առաջին տեղը գրավեց պողպատաձուլման ոլորտում, իսկ Գերմանիան գերազանցեց Անգլիային երկաթի և չուգունի արտադրությամբ:

Տնտեսական բուռն վերելքն էլ ավելի բարձրացրեց արտադրության և կապիտալի համակենտրոնացման մակարդակը: Գոյություն ունեցող մոնոպոլիստական միություններն ավելի էին ամրապնդվում և հզորանում: ԱՄՆ-ում XIX դ. վերջին 5 տարվա ընթացքում տեղի ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների 105 միաձուլում: Իսկ XX դ. սկզբին ԱՄՆ-ում արդեն կային 400 տարբեր արդյունաբերական, տրանսպորտային և այլ տրեստներ:

Տեքստիլ գործարան, XIX դ. վերջ

Կապիտալիզմն սկսեց զարգանալ նաև ավանդական հասարակություն ունեցող այն երկրներում, որտեղ կապիտալից ստացվող շահույթն առանձնապես բարձր էր: Ասիական երկրներից տնտեսապես սկսեց առաջ մղվել Ճապոնիան,

Բանկ ԱՄՆ-ում

որտեղ արագորեն զարգանում էր արդյունաբերությունը: Արագացավ անգլիական դոմինիոնների, հատկապես՝ Կանադայի արդյունաբերական զարգացումը, իսկ կախյալ և կիսագաղութային երկրներում արագորեն զարգանում էին թեթև ու սննդի արդյունաբերությունները:

Մոնոպոլիաների միջև շարունակվում էր կատաղի պայքարը հումքի աղբյուրների և իրացման շուկաների համար: Տեղի էր ունենում աշխարհի տնտեսական բաժանում մոնոպոլիստական միությունների միջև:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է Գերմանիայում ավարտվել արդյունաբերական հեղաշրջումը:
2. Ի՞նչ մոնոպոլիաներ առաջացան Իտալիայում XX դարի սկզբին:
3. Ինչպե՞ս են բնորոշում գիտնականները անգլիական, ֆրանսիական, գերմանական իմպերիալիզմը:
4. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ կային եվրոպական երկրների տնտեսության մեջ: Ի՞նչ եք կարծում՝ կարելի՞ է դա համարել օրինաչափություն: Հիմնավորեք ձեր տեսակետը:
5. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին աշխարհի անհամաչափ զարգացման պատճառները: Փորձեք գտնել ձեր տեսակետը հաստատող փաստեր:
6. Լրացրեք «Եվրոպայի տնտեսական զարգացումը XIX դ. վերջին և XX դ. սկզբին» աղյուսակը:

Երկրները	Արդյունաբերությունը	Տնտեսության զարգացման կամ հետ մնալու պատճառները
Անգլիա		
Ֆրանսիա		
Գերմանիա		
Իտալիա		

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հատված անգլիական գրող Ջոզեֆ Ռեդյարդ Կիպլինգի (1865–1936 թթ.) «Տեղացի» բանաստեղծությունից:

Բաժակներն առեք, լցրեք լի ու լի,
Շուտ խմեք ինձ հետ գինին փրփրալի...
Հանուն քարտեզի, հանուն այն ճամփի,
Որ բերեց երկիրն այս ոսկե հանքի,–
Բաժակները վեր, կենացը մեր տան,
Մեր վերջին հզոր միապետության:
Հանուն շահույթի, փողի իմ ու քո,
Հանուն մեր բանկի միապետական,
Մեր առևտրական նավատորմի կենացն եմ խմում,
Ասփված թագուհուն երկար կյանք թող տա:
Հեռախոսալար քաշենք
Օրկնեյից մինչև Գորմա և ասպղեր,
Ողջ հողագնդի շուրջը փաթաթենք (օղակով, որ մենք աշխարհը տի–ռենք),
Ողջ հողագնդի շուրջը փաթաթենք (կապերով, որ մենք աշխարհը կլանենք):

1. Ի՞նչ գիտեք Կիպլինգի մասին: Ձեր կարծիքով՝ ի՞նչ գաղափարներ էր քարոզում Կիպլինգը վերը բերված բանաստեղծական տողերում: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Կիպլինգը Բրիտանական կայսրությունը փառաբանելիս: Դուք համամի՞տ եք բանաստեղծական տողերում արտա–հայտված մտքերին: Ի՞նչ եք կարծում՝ կարելի՞ է դրանք համարել որպես «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքի դրսևորում: Հիմ–նավորեք ձեր տեսակետը:

§16. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Պոպովի ստեղծած առաջին ռադիոընդունիչը

XIX դ. երկրորդ կեսը և XX դ. սկիզբը գիտության մեջ կարևորագույն հայտնագործությունների ժամանակաշրջան էր: Ընդլայնվեցին պատկերացումները մարդու և բնության մասին:

Նշանակալի էին հայտնագործությունները հատկապես ֆիզիկայի բնագավառում: XIX դ. վերջին Հենրիխ Հերցը հայտնագործեց էլեկտրամագնիսական ալիքները (ռադիոալիքներ), որոնց հիման վրա 1895 թ. ռուս գյուտարար Ալեքսանդր Պոպովը ստեղծեց առաջին ռադիոընդունիչը: Վ. Ռենտգենը հայտնագործեց անտեսանելի ճառագայթներ, որոնք թափանցելով անցնում էին մարմինների միջով: Այդ էլեկտրամագնիսական ճառագայթներն այժմ անվանում են «ռենտգենյան ճառագայթներ»:

Գերմանացի ֆիզիկոս Ալբերտ Այնշտայնը ստեղծեց հարաբերականության տեսությունը, որով արմատապես փոխվեցին տարածության և ժամանակի վերաբերյալ եղած գիտական պատկերացումները:



Ալբերտ Այնշտայն (1879-1955 թթ.)

Կենսաբանության, բժշկագիտության, հոգեբանության, ոլորտներում անգնահատելի ներդրում ունեցավ ռուս ֆիզիոլոգ Իվան Պավլովը, իսկ քիմիայի բնագավառում համաշխարհային փառքի արժանացավ հայտնի գիտնական, մանկավարժ Դմիտրի Մենդելեևը, որն ստեղծեց քիմիական տարրերի պարբերական աղյուսակը:

1895 թ. Փարիզում Լուի և Օգյուստ Լյումիեր

եղբայրները ցուցադրեցին իրենց նոր հայտնագործությունը՝ շարժանկարներ ցուցադրող սարքը՝ կինեմատոգրաֆը:

1885 թ. ստեղծվեց բենզինով աշխատող շարժիչ ունեցող առաջին ավտոմեքենան, որի գյուտարարն էր գերմանացի Կարլ Բենցը: Այս եռանիվ ավտոմեքենան ընթանում էր ժամում 15 կմ արագությամբ:

Ուիլբեր և Օրվիլ Ռայթ եղբայրներն ստեղծեցին առաջին ինքնաթիռը, որը 1903 թ. իր առաջին կարճատև թռիչքը կատարեց:

Բենզինով աշխատող առաջին ավտոմեքենան

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտական և տեխնիկական հայտնագործությունների լայն կիրառությունը նպաստում էր երկրների տնտեսական զարգացման տեմպերի արագացմանը: Արդյունաբերության բնագավառում ավելի կատարելագործված մեքենաների և տեխնոլոգիաների կիրառումը նպաստում էր արտադրության կազմակերպման նոր ձևերի ներդրմանը, որոնց շնորհիվ բարձրանում էր աշխատանքի արտադրողականությունը: ԱՄՆ-ում առաջինը Ֆորդի ավտոմոբիլային ձեռնարկությունում արտադրությունը կառուցվեց մեքենայացման և ավտոմատացման գործընթացների հիման վրա: 1913 թ. սկսեց կիրառվել անընդմեջ և ավտոմատացված հոսքագիծը (կոնվեյերը), որը 3–4 անգամ բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը:

XX դ. սկզբին էժան պողպատի ձուլման շնորհիվ աշխարհում չորս անգամ ավելացան երկաթուղագծերը: Կառուցվեցին էլեկտրակայաններ, որտեղից էլեկտրական հոսանքը լարերով հաղորդվում էր մեծ հեռավորությամբ: Էլեկտրաէներգիան մուտք գործեց արդյունաբերության մեջ և մարդկանց կենցաղ:

Գիտության և տեխնիկայի նորու-

«Ֆորդ» ընկերության առաջին գրասենյակը

Հենրի Ֆորդի առաջին ավտոմեքենան

թյունները մեծ փոփոխություններ առաջացրին տնտեսության ճյուղերի կառուցվածքում: Եթե մինչև XIX դ. կեսը տնտեսության գերակշռող ճյուղը թեթև արդյունաբերությունն էր, ապա դարի երկրորդ կեսին առաջավոր կապիտալիստական երկրներում սկսեց առաջատար դառնալ ծանր արդյունաբերությունը, այսինքն՝ մեքենաների, աշխատանքի գործիքների, հաստոցների, սարքավորումների արտադրությունը:

Ծանր արդյունաբերության զարգացումը պահանջում էր մեծ կապիտալ ներդրումներ: Միցակցության պայմաններում շատ արդյունաբերողներ սնանկանում էին: Սանր արդյունաբերողներն սկսեցին կազմակերպել բաժնետիրական ընկերություններ:

Իրենց միջոցները միավորում էին նաև բանկերը:

Հաշվի առնելով տնտեսության մեջ կատարված փոփոխությունները և գաղութային կայսրությունների առաջացումը՝ XIX դ. վերջը և XX դ. սկիզբն ընդունված է անվանել արդյունաբերական քաղաքակրթության զարգացման առանձին՝ իմպերիալիզմի ժամանակաշրջան:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

XIX դ. վերջերին տեղի են ունենում հասարակական կարևոր տեղաշարժեր: Ստեղծվում է գերհարուստ կապիտալիստների խավը, որի ներկայացուցիչները և՛ արդյունաբերողներ էին, և՛ բանկիրներ, և՛ այլ գործառնություններ կատարողներ: Դրանցից էին ամերիկացիներ Ռոկֆելլերը, Մորգանը, Ֆորդը և ուրիշներ:

Ջոն Ռոքֆելլեր (1839-1937 թթ.)

Վարձու բանվորության միջավայրում նույնպես տեղի էին ունենում էական փոփոխություններ: Արտադրության մեքենայացման համար անհրաժեշտ էր որակյալ բանվորների թվաքանակի աճ: Մեծացավ արտադրությունն սպասարկող և դրա կատարելագործմանը նպաստող գրասենյակային աշխատողների թիվը:

Դեպի քաղաք գյուղացիների հոսքի պատճառով կտրուկ աճեց միլիոնանոց բնակչություն ունեցող քաղաքների թիվը: Դա հետևանք էր արդյունա-

բերության զարգացման, և այդ երևույթը համընդհանուր էր: Այսպես՝ 1901 թ. քաղաքներում էր ապրում Անգլիայի բնակչության 78 %-ը, Շվեյցարիայում՝ 21,5 %-ը, իսկ Ռուսաստանում քաղաքաբնակ էր ընդամենը 15 %-ը: Զանգվածային բնույթ էր կրում մի երկրից մյուսը մարդկանց տեղաշարժը (միգրացիա)՝ աշխատանք և ապրուստի միջոցներ գտնելու նպատակով: Նման զանգվածային տեղաշարժը հնարավոր դարձավ ծովային և երկաթուղային տրանսպորտի զարգացման շնորհիվ: Վերաբնակիչների հիմնական խմբերը Արևելյան և Հարավային Եվրոպայից մեկնում էին ԱՄՆ, Կանադա և Լատինական Ամերիկայի երկրներ: 1900–1915 թթ. միայն ԱՄՆ-ը ընդունեց 14,5 մլն վերաբնակիչ:

Փարիզը XX դարի սկզբին

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ կարևոր հայտնագործություններ կատարվեցին գիտության և տեխնիկայի բնագավառներում:
2. Ինչպես կիրառվեցին այդ հայտնագործությունները արդյունաբերության մեջ և կենցաղում:
3. Բացատրեք «թեթև» և «ծանր» արդյունաբերություն հասկացությունները:
4. Ինչպես է ընդունված անվանել XIX դ. վերջը և XX դ. սկիզբը կապիտալիզմի զարգացման մեջ:
5. Ինչի՞ հետևանք էր քաղաքների բնակչության թվի աճը:
6. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին գիտության և տեխնիկայի նվաճումների՝ արտադրության մեջ արագ ներդրման պատճառները: Հիմնավորեք ձեր տեսակետը:
7. Լրացրեք «Գիտության և տեխնիկայի նվաճումները» աղյուսակը:

Գիտության բնագավառը	Տարեթիվը	Հեղինակը	Հայտնագործության բովանդակությունը և նշանակությունը

Դրվագ Հենրի Ֆորդի կյանքից

Մի անգամ միլիարդատեր Հենրի Ֆորդը գործերով ժամանում է Անգլիա: Օդանավակայանի տեղեկատվական ծառայությունում նա հետաքրքրվում է, թե որտեղ է քաղաքի ամենաէժան հյուրանոցը: Աշխատակիցը ճանաչում է նրան՝ բազում միլիոնների երջանիկ տիրոջը, որը կանգնած է իր առաջ հնամաշ մի բաճկոնով և հարցնում է էժանագին հյուրանոցի մասին: Աշխատակիցն անվստահ հարցնում է.

– Եթե չեմ սխալվում, Դուք պարոն Հենրի Ֆորդն եք:

– Այո,– պատասխանում է Ֆորդը:

Աշխատակիցը զարմանում է.

– Ես հետևում եմ նորություններին և գիտեմ, որ Ձեր որդին, որևէ քաղաք այցելելիս, միշտ իջևանում է լավագույն հյուրանոցներում և միշտ հրաշալի է հագնված: Իսկ Դուք հարցնում եք ամենաէժան հյուրանոցի տեղը և հագել եք մի վերարկու, որը, կարծես թե, Ձեզանից տարիքով մեծ է: Մի՞թե Դուք գումար եք տնտեսում:

Ֆորդը նայում է աշխատակցի դեմքին, մի պահ ժպտում է և հանգիստ պատասխանում.

– Իմ ինչի՞ն է հարկավոր իջևանել թանկարժեք հյուրանոցում: Որտեղ էլ ես ցանկանամ գիշերել, ես Հենրի Ֆորդն եմ: Էժանագին հյուրանոցում էլ, միևնույն է, ես Հենրի Ֆորդն եմ, ոչ մի տարբերություն չկա:

Ո՞վ էր Հենրի Ֆորդը: Ի՞նչ գիտեք նրա մասին: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս էր նրան պատկերացնում օդանավակայանի աշխատակիցը: Ի՞նչ տպավորություն թողեց Ֆորդի և աշխատակցի երկխոսությունը ձեզ վրա: Ո՞ւմ մտածելակերպը ձեզ դուր եկավ: Արդյո՞ք Ֆորդը ժլատ էր: Եթե դուք լինեիք նրա փոխարեն, ինչպե՞ս կվարվեիք: Հիմնավորեք ձեր տեսակետը: Փորձեք բնութագրել Ֆորդին:

§17. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐ (ԼԻԲԵՐԱԼՆԵՐ)

XIX դ. Արևմտյան Եվրոպայում հասարակության զարգացման վերաբերյալ ձևավորվեցին երեք հիմնական ուսմունքներ՝ պահպանողականություն (կոնսերվատիզմ), ազատականություն (լիբերալիզմ) ու սոցիալիզմ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր պատկերացումները հասարակության զարգացման և անհատի իրավունքների վերաբերյալ:

Ազատականության (լատ. liberum–ազատ բառից) ակունքներում կանգնած են եղել այնպիսի նշանավոր անհատներ, ինչպիսիք են լուսավորականներ Ջ. Լոկը, Շ. Մոնտեսքյոն, Թ. Ջեֆերսոնը: Ազատականության հիմնական սկզբունքներն են ապրելու, ազատության, սեփականության, օրենքի առաջ բոլորի հավասարության, խոսքի, ժողովների, ազատության, պետական գործերին մասնակցության իրավունքները: Ազատականները կարծում էին, որ ազատ է այն մարդը, որն իր որոշումների համար պատասխանատվություն է կրում: Զարգացման ճանապարհը լիբերալները տեսնում էին միմիայն բարեփոխումների, ոչ երբեք հեղափոխությունների մեջ:

Այնուամենայնիվ, XIX դ. առավել գերիշխող գաղափարախոսությունը պահպանողականությունն էր (լատ. conservatio–պահպանել, հսկել): Այս ուսմունքը ծագել է XVIII դ. և ձգտում էր հիմնավորել հին կարգերի և ավանդապաշտության (կրոն, միապետական կարգ, ազգային մշակույթ, ավանդական ընտանիք) պահպանման կարևորությունը: Պահպանողականների կարծիքով՝ մարդու ազատությունն արտահայտվում է ավանդությունների պահպանման միջոցով:

Հետագայում, վախենալով թուլացնել իրենց հեղինակությունն ու կորցնել իրենց կողմնակիցներին, կոնսերվատիզմի գաղափարախոսներն ստիպված էին ընդունել, որ հասարակությունը պետք է ավելի ազատականացնել, որի համար անհրաժեշտ է ընդլայնել բնակչության ընտրական իրավունքը, արգելել պետության միջամտությունը տնտեսական գործերին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Քաղաքական կուսակցությունն ընդհանուր նպատակներով ու շահերով միավորված մարդկանց որոշակի խումբ է: Կուսակցությունները կարևոր դեր ունեն պետության ու քաղաքացիական հասարակության միջև կապ հաստատելու և քաղաքական բնագավառում բնակչության տարբեր խավերի շահերը ներկայացնելու գործում: Առաջին կուսակցությունները ձևավորվել են Արևմուտքում XIX դ. սկզբին:

Բենջամեն Դիզրայելի (1804–1881 թթ.)

XIX դ. ազատականությունը մի շարք կուսակցությունների համար դարձավ գաղափարախոսություն, ինչպես օրինակ՝ անգլիական վիգերի համար, որոնք իրենց համարում էին լիբերալ կուսակցություն, նրանց պաշտպանում էին հողատերերի մի մասը և առևտրաարդյունաբերողների մեծ մասը: Անգլիական թորիները, որոնց պաշտպանում էին հողատեր ազնվականությունն ու անգլիկան եկեղեցու գործիչները, հետագայում դարձան պահպանողական կուսակցության հիմքը: Նրանց առաջնորդն էր Բենջամեն Դիզրայելին:

Համայնքների պալատում այս երկու կուսակցություններից յուրաքանչյուրը դառնում էր կամ մեծամասնություն, կամ էլ ընդդիմություն: Սկզբունքային տարբերություններ այս կուսակցությունների միջև չկային: Հասարակության և տնտեսության զարգացումները պահանջում էին բարեփոխումներ, և երկու կուսակցություններն էլ յուրովի փորձում էին արձագանքել ժամանակի պահանջներին:

Երկկուսակցական համակարգ գործում էր նաև ԱՄՆ-ում: Հանրապետական կուսակցությանն աջակցում էին ձեռներեցները, ֆերմերները, բանվորները: Դեմոկրատական կուսակցությունը հենվում էր Հարավի խոշոր հողատերերի վրա:

Ռուսաստանում 1904 թ. լիբերալ շարժման մասնակիցներն ստեղծեցին «Ազատության միությունը», որի հիման վրա հետագայում կազմավորվեց Սահմանադրական դեմոկրատական (կադետական) կուսակցությունը: Լիբերալ շարժումն առաջվա պես կրում էր չափավոր բնույթ և ձգտում էր Ռուսաստանը հեռու պահել հեղափոխությունից:

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին ընտրական իրավունքի ընդլայնման համար քաղաքացիների պայքարն ավելի ծավալվեց և ընդգրկեց Եվրոպայի և Ամերիկայի արդյունաբերական զարգացած երկրները: Անգլիայում, որտեղ 1832 թ. ընտրական բարեփոխումը չէր լուծել բոլոր հիմնախնդիրները, 1867 թ. օգոստոսին կատարվեց երկրորդ պառլամենտական բարեփոխումը: Քաղաքներում ձայնի իրավունք տրվեց բոլոր այն տղամարդկանց, ովքեր ունեին սեփական տներ կամ վարձակալել էին առանձին բնակարաններ: Փաստորեն նվազեց գույքային սահմանափակումը, բացի մանր բուրժուազիայից՝ քվեարկելու իրավունք ստացավ նաև բանվոր դասակարգի վերնախավը: Ընտրողների թիվը հասավ ավելի քան 2 մլն-ի: Կարևոր ձեռքբերում էր նաև 1872 թ. պառլամենտական ընտրություններում գաղտնի քվեարկության կարգ մտցնելը: 1884-1885 թթ. Անգլիայում կատարվեց երրորդ պառլամենտական բարեփոխումը, որով գրեթե վերացվեց գույքային սահմանափակումը (ցենզը), և ընտրողների թիվը կրկնապատկվեց: Արդեն XIX դ. վերջին Անգլիայում գրեթե բոլոր տղամարդիկ ունեին ձայնի իրավունք: Ընդհանուր ընտրական իրավունքի ընդլայնման գործում մեծ դեր խաղացին Գերմանիայում (1871 թ.), Ֆրանսիայում (1875 թ.), Իսպանիայում (1886 թ.) ընդունված սահմանադրությունները և XX դ. սկզբին Ավստրո-Հունգարիայում, Շվեդիայում, Ռուսաստանում, Պորտուգալիայում և մյուս երկրներում կատարված ընտրական բարեփոխումները: Նշված բարեփոխումների արդյունքում ձայնի իրավունք ձեռք բերեց այդ երկրների բնակչության 30-40 %-ը: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայում XX դ. սկզբին ընտրական իրավունք չունեին միայն կանայք, զինվորականները և գաղութների բնակչությունը: ԱՄՆ-ի Սահմանադրության 14-րդ լրացման համաձայն, որը ուժի մեջ մտավ 1868 թ., ձայնի իրավունք ստացան 21 տարին լրացած բոլոր տղամարդիկ: Համընդհանուր ընտրական իրավունքի համար պայքարին ակտիվ մասնակցություն ունեցան նաև կանայք:

ԱՄՆ-ի Դեմոկրատական կուսակցության խորհրդանիշը

XIX դ. վերջին և XX դ. սկզբին մեծանում է կանանց դերը և ներգրավվածությունը աշխատանքային և հասարակական գործունեու-

Բրիտանացի կանանց պայքարը իրավունքների հավասարության համար

թյան մեջ, բայց նրանք շարունակում էին մնալ իրավազուրկ և չունեին ձայնի իրավունք: Իրենց այդ վիճակի գիտակցումը նրանց տասնամյակներ շարունակ պայքարի էր մղում ընտրական իրավունք ձեռք բերելու համար: Այդ պայքարում աչքի էին ընկնում հիմնականում «միջին խավի» կանայք, որոնք կազմակերպում էին ցույցեր, հանրահավաքներ, հարձակվում էին իրենց ընտրական իրավունքին դեմ պաշտոնատար անձանց տների վրա, բռնություններ գործադրում նրանց նկատմամբ և այլն: Չնայած կանանց համառ ու հետևողական պայքարին՝ նրանք ընտրական իրավունք ձեռք բերեցին ավելի ուշ՝ Առաջին աշխարհամարտից հետո: Մինչ այդ՝ ընդհանուր ընտրական իրավունքը, որից օգտվում էին նաև կանայք, գոյություն ուներ միայն Նորվեգիայում, Ավստրալիայում և Նոր Զեղանդիայում: Անգլիայում կանայք, որտեղ նրանց պայքարն ավելի սուր բնույթ էր կրում, կարողացան ընտրական իրավունք ձեռք բերել 1917 թ. դեկտեմբերին: 1918 թ. Անգլիայի պատմության մեջ առաջին անգամ նրանք մասնակցեցին պառլամենտական ընտրություններին: ԱՄՆ-ում կանայք ընտրական իրավունք ստացան 1920 թ., որից հետո այդ գործընթացն աստիճանաբար սկսեց տարածվել աշխարհի տարբեր երկրներում:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՄՆԵՐԸ

Պահպանողականության և ազատականության կողքին XIX դ. Արևմտյան Եվրոպայում սկսեցին մեծ հեղինակություն ձեռք բերել սոցիալիստական գաղափարները՝ մասնավոր սեփականության վերացման և հասարակական հայացքների պաշտպանության մասին: XIX դ. սկզբին տարածվեցին Ռ. Օուենի, Սեն-Սիմոնի, Շարլ Ֆուրիեի ուսմունքները: Այս մտածողները ձգտում էին ստեղծել նոր հասարակություն և պետություն, ուր չէին լինի մասնավոր սեփականություն, աղքատություն և հասարակական թշնամանք, ուր անհատը պաշտպանված և հարգված կլիներ: Նրանց սոցիալիստական գաղափարները ուտոպիական էին, սակայն մեծ տարածում գտան արհեստավորների և բանվորների շարքերում:

Նոր հասարակության ստեղծման գաղափարը հետագայում զարգացավ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններում: Զարգացնելով սոցիալիստական գաղափարները՝ Մարքսն ու Էնգելսը միասին նոր ուսմունք առաջ քաշեցին, որը հայտնի է մարքսիզմ անունով:

Մարքսի տեսության համաձայն՝ ժամանակի ընթացքում ժողովրդական զանգվածների վրա ճնշումները կուժեղանան, իսկ բուրժուազիայի հարստությունը կավելանա, և դա կհանգեցնի դասակարգային պայքարի, որը պետք է ղեկավարի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Զարգացած երկրներում կհաղթի սոցիալիստական հեղափոխությունը, որի արդյունքում կհաստատվի պրոլետարիատի (բանվորության) դիկտատուրա, կվերանա մասնավոր սեփականությունը:

Սոցիալական հեղափոխության, դասակարգային պայքարի, բանվոր դասակարգի պատմական դերի՝ որպես «բուրժուազիայի գերեզմանափորի» մասին ուսմունքը մարքսիզմի առանցքն էր:

XIX դ. արդյունաբերական երկրներում վերջնականապես ձևավորված բանվոր դասակարգը ներկայանում էր երկու ձևով՝ որակավորում ունեցող և որակավորում չունեցող բանվորներ: Որակավորում չունեցող բանվորների վարձատրությունը կրկնակի ցածր էր որակավորում ունեցողներից: Գործարաններում և ֆաբրիկաներում ծանր էր նրանց աշխատանքը, իսկ վարձատրությունը՝ չնչին: Արտադրության մեջ տղամարդկանց հետ անհավասար պայմաններում աշխատում էին կանայք և երեխաներ: Միայն 1893 թ. Անգլիայում օրենք ընդունվեց մինչև 11 տարեկան երեխաներին աշխատանքի չվերցնելու մասին (մինչ այդ ընդունում էին 8 տարեկանից):

XX դ. սկզբին ԱՄՆ-ում կար տասը միլիոնից ավելի բանվոր, որոնց կեսից ավելին ներգաղթածներ էին և սևամորթներ: Իրենց իրավունք-

Կլոդ Անրի Սեն-Սիմոն (1760–1825 թթ.)

Շարլ Ֆուրիե (1772–1837 թթ.)



Կարլ Մարքս (1818–1883 թթ.)

Ֆրիդրիխ Էնգելս (1820–1895 թթ.)

ների պաշտպանության համար նրանք հաճախ գործադուլներ էին անում՝ պահանջելով նաև 8-ժամյա աշխատանքային օր: 1886 թ. մայիսին Չիկագո քաղաքի բանվորների գործադուլը սուր ընթացք ունեցավ: Հավաքույթներից մեկի ժամանակ ռումբ պայթեց: Դատարանը գործադուլի ղեկավար մասնակիցներից չորսին դատապարտեց կախաղանի: Այս բանվորների պաշտպանությամբ հանդես եկան ԱՄՆ-ի և մյուս երկրների բանվորները: Մայիսի 1-ը հետագայում դարձավ բանվորների միջազգային համերաշխության օր:

1890-ական թթ. 8-ժամյա աշխատանքային օրվա համար պայքարում էին նաև ֆրանսիացի բանվորները: Նրանց հաջողվեց նույնիսկ պառլամենտում իրենց ներկայացուցիչներն ունենալ: Ֆրանսիայում 1910 թ. օրենք ընդունվեց 65 տարին լրացած բանվորներին և գյուղացիներին կենսաթոշակ հատկացնելու մասին, ինչը Գերմանիայում և Անգլիայում գործում էր 70-ը լրացած քաղաքացիների համար: 1911 թ. Անգլիայում ընդունված օրենքով մտցվեց ապահովագրություն՝ հիվանդության, հաշմանդամության և գործազրկության դեպքում:

XIX դ. 70-80-ական թթ. Ռուսաստանի արդյունաբերական շրջաններում բանվորները հաճախակի էին գործադուլներ կազմակերպում իրենց իրավունքների պաշտպանության համար: Նրանք ստեղծում էին նաև կազմակերպություններ, որոնք գլխավորում էին հեղափոխականները: Ինչպես, օրինակ, 1883 թ. ժնևում (Շվեյցարիա) ռուս վտարանդիներն ստեղծեցին «Աշխատանքի ազատագրություն» խումբը, որը գլխավորում էր Գ. Պլեխանովը: Իրենց իրավունքների համար պայքարը, ինչպես արդեն գիտենք, հանգեցրեց 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության: Առանձին դեպքերում բանվորները պահանջում էին հանրապետության ստեղծում, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, որոնք քաղաքական պահանջներ էին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին ազատականների և պահպանողականների հիմնական գաղափարները: Այդ գաղափարներից որո՞նք են ձեզ համար ավելի ընդունելի: Հիմնավորեք ձեր տեսակետը:
2. Ի՞նչ է կուսակցությունը և ի՞նչ կարևոր դեր է կատարում:
3. Ինչո՞վ էր պայմանավորված բանվորական շարժումների ակտիվացումը:

4. Ընտրական իրավունքների ընդլայնման ինչպիսի՞ փոփոխություններ կատարվեցին արդյունաբերական երկրներում:
5. Որո՞նք են մարքսիստական ուսմունքի հիմնական դրույթները:
6. Ձեր կարծիքով ինչի՞ համար էին պայքարում բանվորները և ի՞նչ հաջողությունների հասան:
7. Լրացրեք «Հասարակական-քաղաքական ուսմունքները XIX դարում» աղյուսակը:

Հասարակական-քաղաքական ուսմունքները	Գաղափարները
Լիբերալիզմ	
Կոնսերվատիզմ	
Սոցիալիզմ	

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Անգլիացի կանանց պայքարը ձայնի իրավունքի համար

XIX դ. վերջում նույնիսկ պատկերացնել չէր կարելի, որ կինը կարող է ձայնի իրավունք ունենալ: Անգլիան դարձավ առաջին երկիրը, որ կանայք պայքար սկսեցին ընտրական իրավունքի համար: Նրանք ցույցեր էին կազմակերպում, հաճախ իրենց չափազանց ագրեսիվ էին պահում և նույնիսկ լոնդոնյան հասարակական շենքերում ռումբեր էին դնում: Կանայք սկսեցին կարճ կտրել մազերը, ինչն այն ժամանակ անվայելուչ վարքի գագաթնակետն էր համարվում, ոմանք սկսեցին տաբատներ հագնել, որն էլ իր հերթին առաջացրեց համընդհանուր դժգոհություն: Ամուսնացած շատ կանայք սկսեցին աշխատել, նույնիսկ այն դեպքում, երբ իրենց ամուսիններն ի վիճակի էին կերակրել ընտանիքը: Դրանով նրանք փորձում էին համոզել, որ չեն ցանկանում ողջ կյանքն անցկացնել տանը:

Նրանց վրա զայրանում էին, ծիծաղում, ձերբակալում, սակայն շարժումը կասեցնել չհաջողվեց: XX դ. սկզբին նրանց հաջողվեց ձայնի իրավունք ստանալ: Նույնպիսի փոփոխություններ կատարվեցին նաև մյուս երկրներում:

Ի՞նչ եք կարծում՝ ե՞րբ է առաջ քաշվել համընդհանուր ընտրական իրավունքի գաղափարը և ինչո՞ւ: Ձեր կարծիքով՝ ի՞նչ գործոններ են նպաստել XIX դ. վերջում կանանց ձայնի իրավունքի համար պայքարի սրվելուն: Ինչո՞ւ առաջինն Անգլիայում կանայք սկսեցին պայքարել ձայնի իրավունքի համար: Արտահայտե՞ք է ձեր կարծիքը ձայնի իրավունքի համար անգլիացի կանանց պայքարի ձևերի վերաբերյալ:

§18–19. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՆ-ՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԱՄՆ-Ը XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Պլանտացիա

Ամերիկայի Միացյալ Նահանգներն անկախություն նվաճելուց հետո բուռն զարգացում ապրեց:

Երկրի հարավային նահանգներում ձևավորվել էին խոշոր պլանտացիաներ, որտեղ լայնորեն կիրառվում էր նեգր ստրուկների աշխատանքը:

XIX դ. կեսին ստրկությունը լրջորեն խոչընդոտում էր երկրի հետագա տնտեսական զարգացմանը: Ստրկության վերացման խնդիրը դարձավ հասարակական պահանջ և երկրի քաղաքական պառակտման պատճառ:

ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Աբրահամ Լինկոլն (1809–1865 թթ.)

1860 թ. ընտրություններում ԱՄՆ նախագահ ընտրվեց ստրկության համոզված հակառակորդ Աբրահամ Լինկոլնը (1861–1865):

Հարավային նահանգները խռովություն բարձրացրին և հայտարարեցին, որ դուրս են գալիս ԱՄՆ-ի կազմից: Դրանք ձևավորեցին առանձին պետություն՝ համադաշնություն (կոնֆեդերացիա), որը բանակ ստեղծելով՝ պատերազմ հայտարարեց ԱՄՆ-ին: Հարավային և հյուսիսային նահանգների միջև սկսված քաղաքացիական պատերազմն ընթացավ 1861–1865 թթ.: Ռազմական գործողությունները ծավալվեցին ԱՄՆ-ի ողջ տարածքում:

ԱՄՆ-Ը XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Դրվագ ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմից

Նախագահ Ա. Լինկոլնի կառավարությունը մի քանի կարևոր քաղաքական որոշում ընդունեց, որոնք բեկում մտցրին պատերազմի ընթացքի մեջ: 1862 թ. ընդունվեց օրենք, որով յուրաքանչյուր չափահաս քաղաքացի նոր յուրացվող տարածքներում պետությունից անվճար սեփական հողաբաժին ստանալու իրավունք էր ստանում: 1863 թ. հունվարի 1-ից ստրկությունն ԱՄՆ-ում հայտարարվեց վերացված, բոլոր ստրուկներն ստացան ազատություն:

Տասնյակ հազարավոր կամավորներ համալրեցին ԱՄՆ-ի բանակի շարքերը: Պատերազմում բեկում սկսվեց հօգուտ ԱՄՆ-ի: 1865 թ. ապրիլին քաղաքացիական պատերազմն ավարտվեց հյուսիսի հաղթանակով: Կոնֆեդերացիան ցրվեց, ԱՄՆ-ի միասնությունը վերականգնվեց:

Պատերազմի ավարտին նվիրված տոնակատարությունների ժամանակ նախագահ Ա. Լինկոլնը սպանվեց: Նա ամերիկացիների հիշողության մեջ մնաց որպես ազատության և ժողովրդավարության նվիրյալ:

ՀԱՐԱՎԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ում կատարվեցին արմատական վերափոխումներ:

ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ կատարվեցին 13-րդ և 14-րդ փոփոխությունները, որոնցով ԱՄՆ-ում արգելվում էին ստրկությունը և հարկադիր աշխատանքի բոլոր ձևերը: Նախկին նեգր ստրուկները ճանաչվեցին ԱՄՆ-ի քաղաքացիներ և իրավունքներով հավասարվեցին սպիտակամորթ բնակչությանը: Նրանք կարող էին ընտրել և ընտրվել պետական պաշտոններում:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Նապոլեոն III-ի անձնատուր լինելը

XIX դ. 60-ական թթ. սկսած՝ Նապոլեոն III-ի կառավարությունը ճգնաժամի մեջ էր: Իր սասանվող իշխանությունը պահպանելու և հեղինակությունը փրկելու համար կայսրը և արքունիքը ձգտում էին Պրուսիայի դեմ մի հաղթական պատերազմ վարել: Իր հերթին պատերազմի էր ձգտում նաև Պրուսիան, որի նպատակը գերմանական հողերը միավորելն էր, ինչին վաղուց արդեն խոչընդոտում էր Ֆրանսիան:

1870 թ. հուլիսին սկսված ֆրանս-պրուսական պատերազմում (1870-1871 թթ.) Ֆրանսիան ծանր պարտություն կրեց:

1870 թ. սեպտեմբերի 2-ին Սեդանի մոտ Նապոլեոն III-ն անձնատուր եղավ, որն էլ վճռեց II կայսրության (1852-1870 թթ.) ճակատագիրը:

Ժողովրդի պահանջով Ազգային ժողովը Նապոլեոն III-ին հայտարարեց գահընկեց և կազմեց ժամանակավոր կառավարություն:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Կառավարության փոփոխությունը Ֆրանսիայում չկասեցրեց պատերազմը: 1870 թ. սեպտեմբերի 19-ին պրուսական զորքերը պաշարեցին Փարիզը: Փարիզի պաշտպանության համար քաղաքացիներից կազմավորվեցին Ազգային գվարդիայի ջոկատներ: Պաշարված Փարիզում սով սկսվեց: 1871 թ. փետրվարին ժամանակավոր կառավարությունը զինադադար կնքեց և հաշտության բանակցություններ սկսեց Պրուսիայի հետ:



Իրադարձությունները Փարիզում, 1870 թ.

Ժամանակավոր կառավարության նկատմամբ ժողովրդի անվստահությունն էլ ավելի խորացավ:

ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ

1871 թ. մարտի 18-ին Փարիզում ժամանակավոր կառավարության դեմ ապստամբություն սկսվեց: Կառավարությունը փախավ Վերսալ, իշխանությունը Փարիզում անցավ Ազգային գվարդիայի ձեռքը: Փարիզում հաստատված նոր իշխանությունն անվանվեց Կոմունա՝ դրանով իսկ արտահայտելով բնակչության բոլոր խավերի շահերը: Փարիզի Կոմունան որոշել էր երկրում հաստատել սոցիալիստական կարգ՝ վերացնել շահագործումը, դասային արտոնությունները, հաստատել սոցիալական արդարություն: Եկեղեցին հայտարարվեց պետությունից անջատված, մտցվեց անվճար տարրական կրթություն:



Փարիզի Կոմունայի նիստը

Փարիզի Կոմունան գոյություն ունեցավ ընդամենը 72 օր: Ժամանակավոր կառավարության զորքերը ներխուժեցին Փարիզ և պարտության մատնեցին Կոմունայի ուժերին: Ողջ մնացած կոմունարները գնդակահարվեցին: Արդարացի հասարակարգ ստեղծելու փորձը ձախողվեց:

1871 թ. ամռանը նորընտիր Ազգային ժողովը Ֆրանսիան հռչակեց հանրապետություն: Սա Ֆրանսիայի պատմության մեջ III հանրապետությունն էր, որը գոյատևեց մինչև 1940 թ.:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1861 թ. ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, Ռուսաստանում սկսեցին զարգանալ կապիտալիստական հարաբերությունները, որի հետևանքով ձևավորվեցին բուրժուազիան և մեծաթիվ բանվոր դասակարգը: Տնտեսապես հզորացած բուրժուազիան ձգտում էր մասնակցել երկրի քաղաքական կյանքին և պետության կառավարմանը: Հասարակության բոլոր շերտերում աճում էր դժգոհությունը տիրող կարգի նկատմամբ: Ցարը և նրա կողմնակիցները չէին ցանկանում բարեփոխումներ կատարել և կանխել հասունացող հեղափոխությունը:

1905 թ. հունվարի 9-ին՝ կիրակի օրը, հազարավոր բանվորներ կանանց ու երեխաների հետ փորձեցին իրենց ծանր վիճակի մասին խնդրագիր ներկայացնել ցարին: Ձմեռային պալատի ճանապարհին ցույցը գնդակոծվեց: «Արյունոտ կիրակի» դեպքերով սկսվեց 1905–1907 թթ. ռուսական հեղափոխությունը, որի ալիքը տարածվեց ամբողջ Ռուսական կայսրությունում:

Արյունոտ կիրակի

1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում տեղի ունեցան հեղափոխության ամենակարևոր իրադարձությունները: Հոկտեմբերին սկսվեց համառուսաստանյան քաղաքական գործադուլը, որին մասնակցում էր երկու միլիոն մարդ: Հոկտեմբերի 17-ին հրապարակվեց ցարական մանիֆեստը, որով Նիկոլայ II-ը խոստանում էր հրավիրել Պետական դումա (օրենսդիր մարմին) և շնորհում էր ժողովրդավարական ազատություններ:

1906 թ. ընտրվեց առաջին Պետական դուման: Բուրժուազիան և մտավորականության մեծ մասը բավարարված լինելով ձեռք բերածով՝ հեռացան հեղափոխությունից: Գործադուլները և ելույթները աստիճանաբար նվազեցին, և հեղափոխությունն ի վերջո պարտություն կրեց:

1905–1907 թթ. հեղափոխության հետևանքով Ռուսական կայսրությունը վերածվեց սահմանադրական միապետության:

Որոշ չափով բարելավվեց բանվորների և գյուղացիների դրությունը, ավելացավ նրանց աշխատավարձը, կրճատվեց աշխատանքային օրը: Վարչապետ Պյոտր Ստոլիպինը Ռուսաստանում անցկացրեց ագրարային բարեփոխումներ:

Առաջին Պետական դուման Ռուսաստանում

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր ԱՄՆ-ում սկսված քաղաքացիական պատերազմի հիմնական պատճառը:
2. Ի՞նչ ելք ունեցավ ԱՄՆ քաղաքացիական պատերազմը: Որո՞նք են այդ պատերազմի արդյունքները:
3. Ի՞նչ ճանապարհով էր ֆրանսիական կառավարությունը փորձում դուրս գալ ճգնաժամից: Ի՞նչ եք կարծում՝ Ֆրանսիան ունե՞ր ճգնաժամը հաղթահարելու այլընտրանք: Հիմնավորեք ձեր տեսակետը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ ֆրանս-պրուսական պատերազմը:
5. Ինչպիսի՞ պետություն էր Փարիզի Կոմունան:
6. Որո՞նք էին ռուսական առաջին հեղափոխության պատճառները:
7. Ինչպե՞ս ավարտվեց 1905-1907 թթ. ռուսական հեղափոխությունը: Ի՞նչ արդյունք ունեցավ:
8. Ի՞նչ եք կարծում՝ Փարիզի Կոմունան ըմբոստությա՞ն, թե՞ հեղափոխության արդյունք էր: Հիմնավորեք ձեր տեսակետը:
9. Լրացրե՛ք «Հասարակական-քաղաքական շարժումները Եվրոպայում և ԱՄՆ-ում XIX դ. վերջին և XX դ. սկզբին» աղյուսակը:

Երկրներ	Իրադարձություններ	Գործիչներ	Արդյունքներ
ԱՄՆ			
Ֆրանսիա			
Ռուսաստան			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Կոմունայի պաշտպան Ժան Ալլեմանի հիշողություններից

Ինձ հայտնեցին, որ վերսալցիներն առաջ են շարժվում Ուլմ փողոցով: Ես նետվեցի այնտեղ չորս թե հինգ վետերանների հետ, որոնք պատրաստ էին մարտնչելու մինչև վերջ: Այս ծեր ակտիվիստների մեջ էր մի գրաշար՝ քաղաքացի Ֆորը, որն արդեն տեսել էր պրոլետարիատի բավականաչափ պարտությունները և այլևս չէր ուզում այն տեսնել: Նա... որոշեց, որ իր ժամը հնչել է:

Վերսալցիները դրել էին երկու հրանոթ և դիմահար կրակում էին մեր բարիկադների վրա: Մենք աշխատում էինք նշանառության տակ առնել հրետանու սպասակազմին: Կրակելով՝ Ֆորը ինձ ասաց, որ ինքը հեռու չի գնա...

– Եթե դու փրկվես մահից, երիտասարդ բարեկամ, չմոռանաս ասել ընկերներիդ, որոնք կխոսեն քեզ հետ Ֆորի մասին, որ նա մեռավ կռվելով՝ որպես հին հեղափոխական:

Նա խոսում էր ժպտալով, այդ բարի հին բանվորը:

Էլի մի քանի հրացանային կրակոցներ, իսկ հետո ասես երկաթի մրրիկ տեղաց բարիկադի վրա: Կիսակորացած՝ ես աշխատում էի փնտրել իմ խեղճ բարեկամին..., բայց հերոս-պրոլետարը զոհվել էր:

– Վրեժ լուծենք ծերունու համար,– գոռում էին ողջ մնացածները: Եվ մարտը վերսկսվեց նոր ուժով:

Աբրահամ Լինկոլն

Աբրահամ Լինկոլնը (1809-1865) ծնվել է Կենտրոկիում, աղքատ ֆերմերի ընտանիքում: Նրա հայրը նույնիսկ կարդալ-գրել չգիտեր: Էյբը (Աբրահամի կրտսեր ձևն է) մեծացավ այն վայրերում, որոնք համարվում էին «վայրի Արևմուտք»: Ամենուրեք խուլ անտառներ էին, որտեղ արջեր էին բազմանում: Դպրոցում Էյբը բախտ չունեցավ սովորել նույնիսկ մեկ տարի, չնայած մանկությունից համակված էր ուսումնասիրության անհաղթահարելի կրքով: Ռանդելով տախտակը՝ նա ճարպամոմի լույսի տակ համբերատարությամբ նրա վրա ածխի կտորներով գրում էր տառեր և թվեր: Էյբը օգնում էր հորը արմատահան անել կոճղերը, վարել, ցանել, իսկ հաճախ էլ վարձու բատրակություն էր անում հարևան ֆերմայում: Նա ճանաչված էր որպես շատ ուժեղ մարդ. ամբողջ օկրուգում չկար մի մարդ, որ կարողանար կացինը փայտի մեջ այնքան խոր խրել, ինչպես Էյբը: Ֆիզիկական ուժը, մարդկանց նկատմամբ զգայուն վերաբերմունքը, հումորի խոր զգացումը հարևանների շրջանում նրան ժողովրդականություն էին բերել:

Երիտասարդ հասակում Լինկոլնը շատ մասնագիտություններ փոխեց. աշխատեց խանութի գործակատար, լաստառաքող՝ Միսիսիպիի վրա: Օկրուգում հարգանք վաստակելով՝ Լինկոլն ստացավ հողաչափի պաշտոն: Արդարամտության և անաչառության համար մարդիկ նրան անվանեցին «ազնիվ Էյբ»: Լինկոլնը շուտով պարապելու համար ունեցավ ավելի շատ ժամանակ և կարողացավ պատրաստվել ու փաստաբան դառնալու համար քննություն հանձնել: Դրանից հետո նա ընտրվեց կոնգրեսի անդամ:

1. Երբ է ստեղծվել Փարիզի Կոմունան: Ովքե՞ր էին վերսալցիները: Ձեր կարծիքով՝ ի՞նչն էր մղել ծերունի գրաշարին զենք վերցնել և պաշտպանել Կոմունան: Ինչ եք կարծում՝ ո՞րն էր Ֆորի հպարտության զգացողության գրավականը: Ի՞նչ վերաբերմունք առաջացավ նրա նկատմամբ: Փորձեք բնութագրել հերոս պրոլետարին:

2. Ի՞նչ նոր գիտելիքներ ստացաք Ա. Լինկոլնի մասին: Լինկոլնի ո՞ր հատկանիշները ձեզ դուր եկան: Կուզե՞ք նմանվել նրան: Փորձե՞ք բնութագրել Լինկոլնին:

§20–21. ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԿԻԶԲԸ

Վիլհելմ I
(1797–1888 թթ.)

XIX դ. երկրորդ կեսին եվրոպական երկրներում բուռն զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները, ձևավորվում էր ազգային բուրժուազիան: Գերմանիայում այս գործընթացները դանդաղում էին երկրի քաղաքական մասնատվածության պատճառով:

Գերմանիան մասնատված էր ավելի քան երկու տասնյակ մեծ ու փոքր պետությունների, որոնց միջև պահպանվում էին մաքսային սահմանները, չափի, կշռի և դրամական տարբեր միավորները: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և ապրանքային արտադրության աճը Գերմանիայի միավորումը դարձնում էին հրամայական անհրաժեշտություն:

Օտտո ֆոն Բիսմարկ
(1815–1898 թթ.)

Պրուսիան ավելի վճռական դեր ստանձնեց Գերմանիայի միավորման հարցում, երբ 1861 թ. Պրուսիայում գահ բարձրացավ Վիլհելմ I-ը (1861–1888 թթ.): Պրուսիայի կանցլեր՝ վարչապետ նշանակվեց խոշոր քաղաքական գործիչ և հմուտ դիվանագետ Օտտո ֆոն Բիսմարկը (1862–1898 թթ.): Հանդես գալով պրուսական պառլամենտում՝ Բիսմարկը հայտարարեց. «Դարաշրջանի մեծ հարցերը վճռվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով ու արյամբ»:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՎՍՏՐԻԱՅԻ ԴԵՄ

Գերմանական տարածքների միավորման ճանապարհին 1866 թ. Պրուսիան բախվեց Ավստրիայի հետ: Սադովա գյուղի մոտ ավստրիական բանակը ծանր պարտություն կրեց: Ավստրիան ստիպված էր հաշտություն խնդրել:

Հաշտության պայմանագիրն ստորագրվեց 1866 թ. օգոստոսի 23-ին, Պրահայում, ըստ որի՝ Ավստրիան դուրս էր գալու Գերմանական միությունից: Դրա փոխարեն ստեղծվեց 22 պետություններից բաղկացած Հյուսիս-գերմանական միությունը՝ Պրուսիայի գլխավորությամբ: Այդ նորաստեղծ միությունն անվանեցին «հսկայի միություն գաճաճների հետ»: Միության գլուխ կանգնած էր պրուսական թագավորը:

Սադովայի ճակատամարտը

ՖՐԱՆՍ-ՊՐՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սկսած 1866 թ. Ֆրանսիայի և Պրուսիայի հարաբերություններն սկսեցին արագորեն վատանալ: Նապոլեոն III-ը Բիսմարկից պահանջում էր Ֆրանսիային հանձնել Լյուքսեմբուրգը և գերմանական այլ տարածքներ՝ ի վարձատրություն ավստրո-պրուսական պատերազմում իր պահպանած չեզոքության: 1870 թ. ամռանը Ֆրանսիան պատերազմ հայտարարեց Պրուսիային:

Պատերազմը Ֆրանսիայի համար անհաջող ընթացք ունեցավ:

Պրուսական զորքերը Սեդանի մոտ շրջապատեցին Նապոլեոն III-ի բանակն ու ստիպեցին անձնատուր լինել, իսկ սեպտեմբերի 19-ին պաշարեցին Փարիզը: Ֆրանսիայի ժամանակավոր կառավարությունն ստիպված էր կնքել զինադադար և Պրուսիայի հետ հաշտության բանակցություններ սկսել:

1871 թ. մայիսի 10-ին Մայնի Ֆրանկֆուրտում կնքվեց հաշտության պայմանագիրը, որով ավարտվեց ֆրանս-պրուսական պատերազմը: Գերմանիային անցան Էլզասը և Լոթարինգիան: Ֆրանսիան, որպես պարտվող կողմ, պետք է վճարեր 5 միլիարդ ոսկե ֆրանկ ռազմատուգանք:

Դրվագ ֆրանս-պրուսական պատերազմից

10°
20°
50°
50°
ՇՎԵԴԻԱ
ԴԱՆԻԱ
ԿՈՊԵՆՀԱԳԵՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ԲԱԼԹԻԿ ԾՈՎ
Գդանսկ
ՇԵՍՎԻԳ
ՀՈԼՇԹԻՆ
Լյուբեկ
Համբուրգ
ՄԵՔԼԵՆԲՈՒՐԳ
Բրեմեն
ՀԱՆՆՈՎԵՐ
ԲԵՌԼԻՆ
Պոզնան
ՌՈՒՍԱԿԱՆ
Վարշավա
ԿԱՑՍՐՈՒԹՅՈՒՆ
ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ
Դյուսելդորֆ
ԹՅՈՒՐԻՆԳԻԱ
ՍԱՔՍՈՆԻԱ
Դրեզդեն
Ֆրանկֆուրտ
Մադրիդ
Պրահա
Նյուրնբերգ
ԼՈԹԱՐԻՆԳԻԱ
Շտուտգարդ
Էլզաս
ԲԱԴԵՆ
ԲԱՎԱՐԻԱ
Դանայ
Բրատիսլավա
Մյունխեն
ՀՈՒՆԳԱՐԻԱ
ԱՎՍՏՐՈ - ԲՈՒԴԱ
Պեշտ
ՇՎԵՑՑԱՐԻԱ
Պետությունների սահմանները 1864 թ. դրությամբ
Պրուսիան 1864 թ. դրությամբ
Պրուսական նվաճումները 1864-1866 թթ.
Հյուսիս-գերմանական միության մեջ մտած այլ պետություններ
Հյուսիս-գերմանական միության սահմանները Պրուսիայի գլխավորությամբ
Պրուսական զորքերի հարձակման ուղղությունները Դանիայի (1864 թ.), Ավստրիայի (1866 թ.) և Ֆրանսիայի (1870-1871 թթ.) հետ պատերազմներում
1871 թ. ձևավորված Գերմանական կայսրության սահմանները

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեռևս 1871 թ. հունվարի 18-ին՝ զինադադարի պայմանագիր կնքելուց շատ առաջ, Վերսալի հայելապատ դահլիճում, հանդիսավոր պայմաններում, Պրուսիայի թագավոր Վիլհելմ I-ը հռչակվեց Գերմանիայի կայսր: Գերմանիայի միավորումն ավարտվեց: Եվրոպայի կենտրոնում ստեղծվեց ընդարձակ և հզոր Գերմանական կայսրությունը: Նորաստեղծ կայսրությունը 22 ինքնավար պետությունների համադաշնություն էր: Ընդունվեց Սահմանադրություն:

Նապոլեոն III-ը և Բիսմարկը, Սեդան, 1870 թ.

Գերմանական կայսրության հռչակումը Վերսալում

Միավորումից հետո տնտեսական զարգացմամբ Գերմանիան սկսեց առաջ անցնել հարևան երկրներից: Առաջին աշխարհամարտի նախօրեին Գերմանիան արդյունաբերական արտադրանքի ծավալով զիջում էր միայն ԱՄՆ-ին: Կայսր Վիլհելմ II-ը (1888-1918 թթ.) հայտարարում է. «Աշխարհում այսուհետև ոչ մի խոշոր հարց չի կարող վճռվել առանց Գերմանիայի և գերմանական կայսեր համաձայնության»:

ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

XIX դ. 50-60-ական թթ. Իտալիայի միավորման համար բարենպաստ իրավիճակ ստեղծվեց: Երկրի միավորման գործընթացը գլխավորեց իտալական պետություններից առավել զարգացածը՝ Սարդինական թագավորությունը:

1859 թ. սկսվեց Սարդինական թագավորության և Ֆրանսիայի պատերազմն ընդդեմ Ավստրիայի: Դաշնակից բանակները վճռական հաղթանակ տարան ավստրիացիների դեմ: Իտալիայի հյուսիսում

Սիցիլիայի ազատագրումը Գարիբալդիի գլխավորած ապստամբների կողմից

ռազմական գործողություններին իր կամավորներով մասնակցեց փառաբանված ժողովրդական հերոս Ջուզեպպե Գարիբալդին:

1860 թ. Սիցիլիայում բռնկվեց ապստամբություն: Ջ. Գարիբալդիի կոչով նրա դրոշի տակ հավաքվեց 1000 կամավոր: Նրանք կրում էին կարմիր վերնաշապիկներ, որի համար ժողովուրդը նրանց անվանեց «կարմիր շապկավորների հազարյակ», որոնք, միանալով ապստամբների հետ, կղզում տապալեցին Բուրբոնների իշխանությունը: Ապա անցան Հարավային Իտալիա և գրավեցին Բուրբոնների մայրաքաղաք Նեապոլը: Այստեղ անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում Նեապոլիտանական թագավորության բնակչությունը թագավոր ճանաչեց Վիկտոր-Էմանուիլ II-ին: Հարավային Իտալիան, այսպիսով, միացվեց Սարդինական թագավորությանը:

ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ

Վիկտոր Էմանուիլ II (1820–1878 թթ.)

1861 թ. հռչակվեց Իտալիայի թագավորությունը, սակայն երկրի միավորումը դեռ չէր անավարտվել: Ավստրիական լծի տակ էր Վենետիկը, իսկ Հռոմում և Պապական մարզում ֆրանսիական զորքերի օգնությամբ պահպանվում էր պապի իշխանությունը:

1870 թ., երբ ֆրանս-պրուսական պատերազմում պարտություն կրած Նապոլեոն III-ը գահընկեց արվեց, Վիկտոր Էմանուիլ II-ի զորքերը գրավեցին Հռոմը: Պապի աշխարհիկ իշխանությունը տապալվեց, Պապական մարզը վերացվեց: 1871 թ. Հռոմը հռչակվեց Իտալիայի մայրաքաղաք: Իտալիայի միավորումն ավարտվեց:

Միավորումից շուրջ կես դար անց Իտալիան զգալի նվաճումների հասավ տնտեսական ու քաղաքական բնագավառներում և ամրապնդեց իր առաջատար տեղը եվրոպական երկրների շարքում:

ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ



ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Իտալիայի թագավորության հռչակումը

XIX դ. սկզբին, Օսմանյան կայսրության թուլացմանը զուգընթաց, ուժեղացավ նրա տիրապետության տակ գտնվող բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը, որի արդյունքում 1830 թ. Հունաստանը հռչակվեց անկախ թագավորություն:

Դեռ 1812 թ. սուլթանն ստիպված էր ինքնավարություն շնորհել Սերբիային, իսկ 1830 թ. այն ճանաչել Օսմանյան կայսրությունից կախյալ իշխանություն՝ սեփական կառավարությամբ: 1838 թ. Սերբիայում ընդունվեց Սահմանադրություն, երկրում կատարվեցին բուրժուական բարեփոխումներ, արագացավ տնտեսական զարգացումը: Սերբիան իր վերջնական անկախությունը նվաճեց միայն 1878թ.:

1858 թ. Օսմանյան կայսրության կախյալ իշխանություններ Մոլդավիան և Վալախիան միավորվեցին: Ստեղծված ինքնավար իշխանությունն անվանվեց Ռումինիա: Եվրոպական տերությունները 1861 թ. Ռումինիան ճանաչեցին ինքնավար թագավորություն օսմանյան Թուրքիայի կազմում:

Օսմանյան տիրապետությունն առավել երկար պահպանվեց Բուլղարիայում: Սուլթանական կառավարությունը դաժանորեն ճնշում էր բուլղարների ազատագրական ապստամբությունները: Իր ազատագրության հույսը բուլղար ժողովուրդը կապում էր Ռուսաստանի հետ:

Բալկանյան ժողովուրդների պայքարը օսմանյան զորքերի դեմ

Բալկանյան ժողովուրդները լիակատար անկախություն ձեռք բերեցին միայն XIX դ. վերջին, երբ Թուրքիան պարտություն կրեց Ռուսաստանից:

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1875-1885 ԹԹ.

Հարցեր և առաջադրանքներ

1. Վիլհելմ I-ը ո՞ւմ նշանակեց Պրուսիայի կանցլեր:
2. Ե՞րբ և որտե՞ղ հաշտության պայմանագիր կնքվեց Պրուսիայի և Ավստրիայի միջև:
3. Ի՞նչ էր նախատեսվում Մայնի Ֆրանկֆուրտում կնքված ֆրանս-գերմանական պայմանագրով:
4. Ե՞րբ և որտե՞ղ է Վիլհելմ I-ը հռչակվել Գերմանիայի կայսր:
5. Ովքե՞ր էին գլխավորում Իտալիայի միավորման համար պայքարը: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
6. Ե՞րբ է հռչակվել Իտալիայի թագավորությունը:
7. Բալկանյան թերակղզու ո՞ր երկրներին հաջողվեց վերականգնել իրենց անկախությունը:
8. Ի՞նչ եք կարծում՝ որքանո՞վ են Բիսմարկի հանրահայտ խոսքերը արդիական նաև այսօր: Հիմնավորեք ձեր տեսակետը:
9. Լրացրե՛ք «Ազգային նոր պետությունների առաջացումը Եվրոպայում» աղյուսակը:

Պետությունը	Միավորման արդյունքները
Գերմանիա	
Իտալիա	

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Վիլհելմ II

Ըստ ժամանակակիցների՝ Վիլհելմ II-ը սիրում էր ամպագորգոռ արտահայտություններ անել և հրապուրիչ կեցվածք ընդունել՝ ուշադրություն գրավելու համար: Պալատականները նրա մասին ասում էին, որ նա պատրաստ է «լինել թագավոր՝ գահի համար, փեսա՝ հարսանիքին, և հանգուցյալ՝ թաղման համար»: Բացի այդ, նա պաշտում էր խորտրդներ տալն ու բոլորին դասդիարակելը: Նա ինքն իրեն նշանակեց ֆելդմարշալ, ռազմական կաբինետի անդամներին անվանում էր «ծեր ավանակներ», սպառնում էր ցրել Ռայխստագն ու նույնիսկ իր ատրամնացավն անվանում «մեծագույն»: 17 տարվա մեջ 577 հրապարակային ելույթ ունեցավ, որոշ դեպքերում օրական 12 հանդերձանք փոխեց: Նա մի վտանգավոր կարգախոս ուներ. «Ինչպես ուզում եմ, այնպես էլ հրամայում եմ»: «Մեծ անակնկալների տիրակալ»,- այդպես էին խոսում նրա մասին ժամանակակիցները:

«Երկաթ կանցլերի» մտքերն ու ասույթները

Պրուսացի պաշտոնյան նման է նվագախմբում մի երաժշտի, ով, անկախ այն բանից, թե որ երաժշտական գործիքի առջև է նստած, փայլուն կատարում է իր հատվածը, իսկ ես ուզում եմ կամ այնպիսի երաժշտություն կատարել, որը ինքս լավն եմ համարում, կամ ընդհանրապես չկատարել:

Հաղթողները պարտվողներին թողնում են միայն աչքերը, որպեսզի նրանք կարողանան լաց լինել:

Որքան խոսքը պարզ է, այնքան այն ուժեղ է: Չի լինում այնքան խճճված գործ, որի միջուկը կեղևահան անել չլինի մի քանի բառով:

Երբեք այնքան շատ չեն ստում, որքան պատերազմի ընթացքում, որսորդությունից հետո և ընտրություններից առաջ:

Դարաշրջանի մեծ հարցերը վճռվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով ու արյամբ:

Յուրաքանչյուրը, ով գոնե մեկ անգամ նայել է մարտի դաշտում ընկնող զինվորի ապակիացող աչքերին, պատերազմ սկսելուց առաջ լավ կմտածի:

Միայն հիմարներն են սեփական սխալների վրա սովորում: Իմաստունները սովորում են ուրիշների սխալներից:

Հեղափոխությունները պատրաստում են հանճարները, իրականացնում՝ մոլեռանդները, իսկ դրա պտուղներից օգտվում են սրիկաները:

Գլխավորը պատմություն ստեղծելն է և ոչ թե գրելը:

Եթե ցանկանում ես աշխարհին հիմարացնել, ասա նրան ճշմարտությունը:

Սովորիր այնպես, ասես հավերժ ապրելու ես, ապրիր այնպես, ասես մեռնելու ես վաղը:

Ինձ բնությունից էր վիճակված դիվանագետ դառնալը. ես ապրիլի 1-ին եմ ծնվել:

1. Ի՞նչ նոր տեղեկություններ ստացաք Վիլհելմ II կայսեր մասին: Փորձե՛ք բնութագրել նրան: Ձեր կարծիքով ի՞նչը կարելի է գնահատել նրա մեջ: Ի՞նչ եք կարծում՝ որքանով է հարիր Վիլհելմ II-ի պահվածքը պետության ղեկավարի նկարագրին: Հիմնավորեք ձեր տեսակետը:

2. Փորձեք բնութագրել Օտտո Բիսմարկին՝ ըստ նրա մտքերի և ասույթների:

§ 22. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԱԶՄԱԶԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԲԱԶՄԱԶԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ազգային պետությունները Եվրոպայում հանդես են եկել XVI–XVII դդ.՝ կապիտալիստական հասարակարգի առաջացմանը և ձևավորմանը զուգընթաց: Այդ պետություններն ունեին ազգային-պետական սահմաններ, մեկ տիրապետող կրոն, մեկ բնիկ ազգություն և այլն: Ստեղծելով իրենց պետությունները, եվրոպական ազգերի մի մասը ժամանակի ընթացքում հզորացան և XIX դ. վերջին գերիշխող դիրք գրավեցին աշխարհում:

Ազգային պետությունների կողքին պահպանվում էին նաև բազմազգ պետություններ, որոնք ձևավորվել էին դարերի ընթացքում: Դրանք այն պետություններն են, որոնք նվաճելով հարևան, շրջակա ու ավելի հեռավոր երկրները, իրենց տիրապետությունն են հաստատում այնտեղ ապրող ժողովուրդների ու ազգերի վրա և վերածվում բազմազգ կայսրությունների: Բռնությամբ հպատակեցված այդ ժողովուրդները և ազգերը զարգացման տարբեր մակարդակներում էին, խոսում էին տարբեր լեզուներով, դավանում տարբեր կրոններ, ապրում տարբեր արժեքներով ու ավանդույթներով: Նրանք ենթարկվում էին տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական դաժան ճնշումների ու հալածանքների: Նրանց սպառնում էր իրենց հայրենիքում ազգային ինքնությունը կորցնելու վտանգը: Այդ էր պատճառը, որ բազմազգ կայսրություններում ավելի հաճախակի էին դառնում ազգային-ազատագրական շարժումները և բախումները: XIX դ. բազմազգ կայսրություններում տեղի ունեցող ազգային-ազատագրական շարժումները հիմնականում համընկնում են հեղափոխական շարժումների հետ և վերածվում ազգային հեղափոխությունների, որոնց նպատակն ազգային պետությունների կազմավորումն էր: Այսպես ընթացան հեղափոխությունները Ավստրիական կայսրությունում 1848–1849 թթ., որոնք սակայն ճնշվեցին: Ազգային հիմնախնդիրները մնացին չլուծված և XIX դ. երկրորդ կեսին ավելի սրվեցին: Ազգային հիմնախնդիրները սկսեցին քննարկվել մեծ տերությունների պառլամենտներում և միջազգային համաժողովներում: Ծանր վիճակում հայտնված բազմազգ կայսրություններում առաջացան ծայրահեղ ազգայնական գաղափարախոսություններ, որոնք օգտագործվեցին հպատակ ժողովուրդների հետ հաշվեհարդար տեսնելու

համար (օրինակ՝ օսմանիզմը, պանթուրքիզմը, պանիսլամիզմը՝ Թուրքիայում): Նոր ժամանակների բազմազգ կայսրությունները (Ավստրոհունգարական, Օսմանյան, Ռուսական և այլն) գոյատևեցին մինչև Առաջին աշխարհամարտի վերջը:

Ֆրանց Յոզեֆ (1830–1916 թթ.)

ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԵՐԿՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ավստրիան բազմազգ պետություն էր: XIX դ. 30–40-ական թթ. նրա սահմանները տարածվում էին Ռուսաստանից մինչև Բալկաններ՝ ներառելով տարբեր ազգերից բաղկացած 50 մլն բնակչություն: Նրա կազմի մեջ էին մտնում Ավստրիան, Հունգարիան, Չեխիան, Սլովակիան, Սլովենիան, Խորվաթիան, ինչպես նաև տարածքներ ժամանակակից Ռումինիայից, Լեհաստանից, Իտալիայից և Ուկրաինայից:

Այդ երկրամասերում աստիճանաբար ուժեղանում էին պետական ինքնուրույնության, ազգային անկախության ձգտումները:

Ավստրիայի կայսր Ֆրանց Յոզեֆը (1848–1916) ստիպված էր զիջումների գնալ կայսրության ամբողջականությունը պահպանելու համար: 1867 թ. ստորագրվեց ավստրո-հունգարական համաձայնագիրը, որով Հաբսբուրգների կայսրությունը վերածվեց երկմիասնական միապետության՝ բաղկացած ներքին հարցերում իրարից անկախ երկու պետություններից՝ Ավստրիայից և Հունգարիայից:

Հունգարիայում վերահաստատվեց դեռևս 1848 թ. ընդունված Սահմանադրությունը, իսկ Ավստրիայում ստեղծվեց նորը: Ընդհանուր էին դրոշը, բանակն ու ֆինանսական համակարգը: Ավստրիայի և Հունգարիայի միջև չկար մաքսային սահման, սակայն յուրաքանչյուրն ուներ իր խորհրդարանն ու կառավարությունը: Հունգարիայի կազմում ինքնավարություն ստացավ Խորվաթիան:

Ֆրանց Յոզեֆի թաղադրումը

Ավստրո-հունգարական կայսրության ստեղծումը նպաստեց տնտեսական զարգացման արագ աճին,

որը նկատելի էր արդեն 80-ական թթ. վերջին, իսկ 20-րդ դարի սկզբին կայսրությունում արդեն արագ տեմպերով զարգանում էր մոնոպոլիստական կապիտալիզմը: Արդյունաբերության հիմնական ճյուղերը՝ մեքենաշինությունը, քիմիականը, պատկանում էին «Կրուպպ», «Սիմենս» և գերմանական այլ ընկերությունների:

Հին ազնվականության և նոր բուրժուազիայի հետ դաշինքը դարձել էր կայսրությունում իշխող ուժ:

Երկմիասնական տերության ստեղծումը ոչ միայն չվերացրեց կայսրության ներսում ծագած անջատողական ձգտումները, այլև ավելացրեց նորերը: Որքան Ֆ. Յոզեֆը մեծացնում էր առանձին երկրամասերի ինքնավարությունը, այնքան ավելի ակտիվանում էին տերությունից դուրս գալու ձգտումները: Կայսերական արքունիքը կարծում էր, որ միայն հաղթական պատերազմները կարող են կասեցնել տերության տրոհումն ու կործանումը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ. Ռուսական պետության արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը մնում էր նոր տարածքների նվաճումն ու իր ազդեցության տարածումը մի քանի ուղղություններով՝ Բալկաններ և Մև ծովի ավազան, Կովկաս և նրանից դեպի հարավ, Միջին Ասիա և Հեռավոր Արևելք: Իր քաղաքականությունն իրագործելու համար նա ժամանակ առ ժամանակ պատերազմում էր իր բոլոր հարևանների դեմ:

Հաղթելով Իրանին և Թուրքիային՝ Ռուսաստանը Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերով իր կայսրությանը միացրեց Արևելյան Հայաստանը և որոշ տարածքներ Արևմտյան Հայաստանից: Ռուսաստանին մեծ դժվարությամբ հաջողվեց նվաճել Հյուսիսային Կովկասը:

Թուրքմենչայի պայմանագրի կնքումը

XIX դ. 50-60-ական թթ. ռուսները, կանխելով անգլիացիների առաջխաղացումը, նվաճեցին Միջին Ասիայի ընդարձակ տափաստանները:

Հսկայական նվաճումների շնորհիվ Ռուսական կայսրության կազմում հայտնվեցին զարգացման տարբեր

մակարդակներում գտնվող ժողովուրդներ:

XIX դ. երկրորդ կեսին, նաև հետագա տասնամյակներում, Ռուսաստանի ծավալապաշտական քաղաքականությունը շարունակվում էր: 1877–1878 թթ. Օսմանյան կայսրության դեմ մղած պատերազմի արդյունքում Ռուսաստանն ստացավ Հարավային Բեսարաբիան, Բաթումը, Կարսի մարզը: Առաջացավ նորանկախ պետություն Բուլղարիան, հաստատվեցին Չեռնոգորիայի, Սերբիայի, Ռումինիայի անկախությունները:

Դրվագ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից

Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր արդյունքներից մեկը 1891–1893 թթ. ֆրանս-ռուսական դաշինքի կնքումն էր, որն ուղղված էր Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ: Պատրաստվելով պատերազմի՝ Ռուսաստանը շարունակում էր ընդլայնել իր ազդեցության ոլորտները: Այդպիսի տարածաշրջան էր Հեռավոր Արևելքը, որտեղ մեծ ազգերը ձգտում էին միմյանց միջև բաժանել թույլ Չինաստանը: Հզորացած Ճապոնիան ձգտում էր արգելակել Ռուսաստանի ազդեցության տարածումը: 1904–1905 թթ. երկու պետությունների միջև տեղի ունեցած պատերազմն ավարտվեց Ռուսաստանի ծանր պարտությամբ: Ճապոնիային անցան Կորեան և Սախալին թերակղզու հարավային մասը:

Դրվագ 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմից

Եվրոպայում անգլո-գերմանական հակասությունների սրումը նպաստեց Անտանտի ձևավորմանը, որը կարևոր դեր խաղաց Առաջին աշխարհամարտի նախապատրաստման գործում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձեք բացատրել «ազգային պետություն» և «բազմազգ պետություն» հասկացությունները: Նշեք ձեզ հայտնի մի քանի բազմազգ պետություն:
2. Ե՞րբ է ստեղծվել Ավստրո-հունգարական երկմիասնական պետությունը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ավստրո-հունգարական երկմիասնական պետության ստեղծումը:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Հաբսբուրգների կայսրությունը վերածվեց երկմիասնական պետության:
4. Տարածքային ի՞նչ ձեռքբերումներ ունեցավ Ռուսաստանը XIX դ. երկրորդ կեսին:
5. Ի՞նչ կորուստներ ունեցավ Ռուսաստանը Հեռավոր Արևելքում:
6. Լրացրեք «Ավստրո-հունգարական և ռուսական բազմազգ կայսրությունները» աղյուսակը:

Կայսրությունները	Նմանությունները	Տարբերությունները
Ռուսաստան		
Ավստրո Հունգարիա		

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հատված Ֆրանս-ռուսական՝ 1892 թ. օգոստոսի 5-ի ռազմական համաձայնագրից

Խաղաղությունը պահպանելու համար միատեսակ ձգտումներով տոգորված՝ Ֆրանսիան և Ռուսաստանը համաձայնեցին հետևյալ հարցերում.

1. Եթե Ֆրանսիան հարձակման ենթարկվի Գերմանիայի կամ Գերմանիայից աջակցություն ստացող Իտալիայի կողմից, Ռուսաստանը կօգտագործի իր տրամադրության տակ գտնվող բոլոր զորքերը Գերմանիայի վրա հարձակվելու համար:

Եթե Ռուսաստանը ենթարկվի Գերմանիայի կամ Գերմանիայից աջակցություն ստացող Ավստրիայի հարձակմանը, Ֆրանսիան գործի կդնի իր տրամադրության տակ գտնվող բոլոր զորքերը Գերմանիայի վրա հարձակվելու համար:

2. Եռյակ միության կամ նրա մեջ մտնող որևէ տերության զորքերի համախմբման դեպքում Ֆրանսիան և Ռուսաստանը, այդ մասին տեղեկություն ստանալով, չսպասելով նախնական որևէ համաձայնության, անհապաղ և միաժամանակ համախմբում են իրենց բոլոր ուժերը և շարժում որքան կարելի է իրենց սահմաններին մոտիկ:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում ֆրանս-ռուսական ռազմական համաձայնագիրը: Ի՞նչ եք կարծում՝ եթե չլիներ Եռյակ դաշինքը արդյո՞ք կկնքվեր ֆրանս-ռուսական համաձայնագիրը: Հիմնավորեք ձեր տեսակետը:

§23–24. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Թանզիմաթի հայտարարումը

Ռազմաավատատիրական Օսմանյան կայսրությունը XIX դ. հայտնվել էր քաղաքական և տնտեսական խոր ճգնաժամի մեջ, և փորձեր էին կատարվում կայսրությունում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Սուլթան Աբդուլ Մեջիդի 1856 թ. «Հաթթը հումայունը» հրովարտակով (ֆերման), հիմք էր դրվում թանզիմաթի բարեփոխումների երկրորդ փուլին: Սուլթանական հրովարտակը հռչակում էր Օսմանյան կայսրության բոլոր հպատակների՝ թե՛ մուսուլմանների և թե՛ քրիստոնյաների կյանքի, պատվի և գույքի անձեռնմխելիություն, հարկերի գանձման ու բաշխման, զինակոչի կարգավորում և այլն: Սակայն սուլթանական նորամուծությունները հանդիպեցին Օսմանյան կայսրության հետադիմական ուժերի, ինչպես նաև զինվորականության մի մասի խիստ դիմադրությանը և ձախողվեցին:

Բարեփոխումների հաջորդ փուլը սահմանադրական շարժումն էր Օսմանյան կայսրությունում, որը սկսվեց 1870-ականներին և ավարտվեց 1876 թ. դեկտեմբերի 23-ին՝ Օսմանյան կայսրության առաջին Սահմանադրության ընդունմամբ: Սահմանադրության հեղինակը Միդհատ փաշան էր: Այդ գործում նրան մեծապես օգնել էր հայ հասարակական և քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը: Բավականին լարված մթնոլորտում նոր իշխանության եկած Աբդուլ Համիդ II-ը (1876–1909 թթ.) հարկադրված ընդունեց Սահմանադրությունը: Բայց դա ժամանակավոր բնույթ էր կրում: Նախ՝ սուլթանի հրամանով խեղդամահ արվեց Միդհատ փաշան, ապա նա 1878 թ. փետրվարին՝ անորոշ ժամանակով ցրեց մեջլիսը՝ ինչը նշանակում էր Սահմանադրության կասեցում:

Միդհատ փաշա (1822–1883 թթ.)

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ. 1908 Թ. ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ:

Փարիզի համաժողովում հռչակագրի ընդունումը

Հակահամիդյան պայքարի հաջորդ փուլը Երիտթուրքական շարժումն էր, որն սկիզբ է առել XIX դարի վերջերին: Երիտթուրքերը միավորվեցին «Միություն և առաջադիմություն» («Իթթիհադ վե թերաքի») գաղտնի կազմակերպության մեջ, որի առաջին համագումարը տեղի ունեցավ 1902 թ. Փարիզում: 1907 թ. դեկտեմբերի 27-ին Փարիզում գումարվեց սուլթանից դժգոհ ուժերի համաժողով, որին, բացի երիտթուրքերից, մասնակցում էին նաև մի քանի ոչ թուրքական կազմակերպություններ՝ արաբական «Հայֆեթ» ազգայնական, մակեդոնական հեղափոխական կազմակերպությունները, Հայ հեղափոխական դաշնակցությունը, հրեական «Լավարա» կոմիտեն և այլն: Համաժողովում ընդունված հռչակագրի գլխավոր պահանջներն էին՝ Սահմանադրության վերականգնում, մեջլիսի գումարում, խոսքի, մամուլի ազատություն և ազգային մշակույթի զարգացում: Որոշվեց նաև, որ հարվածային ուժը բանակն է, որը և պետք է իրականացներ ապստամբությունը:

Երիտթուրքական զինվորական հեղաշրջումը սկսվեց 1908 թ. հուլիսի 3-ին, Մակեդոնիայում: Հուլիսի 23-ին ապստամբական կոմիտեն, սպառնալով շարժվել մայրաքաղաք Ստամբուլի վրա, սուլթանից պահանջեց վերականգնել Սահմանադրությունը: Սարսափահար սուլթան Աբդուլ Համիդը կատարեց նրանց պահանջը և հուլիսի 24-ին հայտարարեց Սահմանադրության վերականգնման մասին: Այսպես հաղթանակեց երիտթուրքական հեղաշրջումը: Կայսրության ժողովուրդները՝ արաբները, հայերը, հույները, ասորիները, բալկանյան ժողովուրդները, խանդավառությամբ ընդունեցին կատարված հեղաշրջումը: Նրանք հավատացած էին, որ նոր էջ է բացվում կայսրության

Աբդուլ Համիդ II (1842-1918 թթ.)

պատմության մեջ, մանավանդ որ օգտագործվում էին 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունից վերցված «ազատություն, հավասարություն և եղբայրություն» կարգախոսը: Սակայն Աբդուլ Համիդը դժվար էր հաշտվում իրեն պարտադրված պահանջների հետ և հարմար առիթի էր սպասում երիտթուրքերից ազատվելու համար: 1909 թ. ապրիլի 27-ին, պետական հեղաշրջման անահաջող փորձից հետո, Աբդուլ Համիդը գահընկեց արվեց, և օսմանների գահին բազմեց Մեհմեդ V Ռեշադը: Իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը:

Իշխանության զավթումը բացահայտեց երիտթուրքերի իսկական դեմքն ու էությունը: Նրանք հրաժարվեցին իրենց հռչակած կարգախոսներից և սուլթանական կառավարման զինանոցից վերցրին բռնությունների, հալածանքների, ջարդերի և կոտորածների քաղաքականությունը, որն այնուհետև վերածվեց ցեղասպանության քաղաքականության: Նրանց հիմնական նպատակներից մեկը ներքին քաղաքականության բնագավառում դարձավ թուրքիզմի քաղաքականությունը՝ Օսմանյան կայսրությունը էթնիկապես զուտ թուրքական պետության վերածելու ձգտումը: Իսկ դա հնարավոր էր կամ ոչ թուրք ժողովուրդների կամավոր ձուլման, կամ նրանց ֆիզիկական ոչնչացման միջոցով: Արտաքին քաղաքականության բնագավառում երիտթուրքերը որդեգրեցին պանթուրքիզմի քաղաքականությունը, որի նպատակն աշխարհի բոլոր թուրքալեզու ժողովուրդների համախմբումն էր Թուրքիայի հովանավորության ներքո, թուրքական վիթխարի, մեկ միասնական պետության ստեղծումը, որը Փոքր Ասիայից ձգվելու էր մինչև Ալթայ և Հեռավոր Արևելք:

1905-1911 ԹԹ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Իրանն արևելյան տիպի ամբողջատիրական բռնապետություն էր, որի գլուխ կանգնած էր միահեծան շահը: XIX դ. վերջին քառորդում և XX դ. սկզբներին բավականին ուժեղացել էր Անգլիայի և Ռուսաստանի ազդեցությունն Իրանում: Երբեմնի հզոր այդ երկիրը հայտնվել էր կիսագաղութային վիճակում: 1905 թ. ամենուր աճում էր դժգոհությունը, որը վերածվեց հակակառավարական շարժումների: 1903-1904 թթ. Իրանում սով սկսվեց, և երկրում ծայր առան սովյալների երթերը: 1906 թ. շարժումները նոր թափով սկսվեցին, և օգոստոսի 5-ին Մոզաֆար էդ-Դին շահի հրամանով հռչակվեց Իրանի առաջին Սահմանադրությունը, ստեղծվեց խորհրդարան՝ մեջլիսը, որը ձեռնամուխ եղավ Սահմանադրության մշակմանը: 1906 թ. դեկտեմբերի 30-ին շահը հաստատեց Սահմանադրությունը, և Իրանը վերածվեց սահ-

1905-11 թթ. հեղափոխության մասնակիցներ (կենտրոնում Սաթար և Բաղիր խաները)

մանադրական միապետության: Սակայն հեղափոխությունը շարունակվում էր, որի ղեկավարներն էին Սաթար, Բաղիր և հայազգի Եփրեմ խաները: 1909 թ. գարնան սկզբներին հեղափոխականները Գիլանից շարժվեցին և հուլիսին մտան Թեհրան: Ալի շահը, որը փոխարինել էր մահացած հորը, գահընկեց արվեց, իշխանությունն անցավ լիբերալ կալվածատերերի ձեռքը, որոնք զինաթափեցին հեղափոխականներին: Հեղափոխության առաջնորդներ Սաթար խանը և Բաղիր խանը սպանվեցին:

Իրանում 1905–1911 թթ. ծավալված իրանական հեղափոխության ճնշմանը մասնակցեցին Մեծ Բրիտանիան և ցարական Ռուսաստանը:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՆՈՐԱՑՈՒՄԸ և ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

Ճապոնիայի նորացումը և նրա «բացումը», ինչպես նաև նրա հետագա արդիականացումն ու հզորացումը կապված են «Մեյձիի հեղափոխության» հետ, որը տեղի ունեցավ 1868 թ.: Ճապոներեն «Մեյձի» բառը թարգմանվում է որպես «լուսավորյալ», ինչը կապված է այն իրողության հետ, որ 1868 թ. կայսր դարձած 15-ամյա Մուցուհիտոն հռչակվեց որպես Մեյձի կայսր, այսինքն «լուսավորյալ» կայսր: Մեյձիի բարեփոխումները վերջ տվեցին Ճապոնիայի մոտ 200-ամյա մեկուսացմանը, եվրոպացիների առաջ «փակ» լինելու կարգավիճակին, և նա բացվեց արևմտյան քաղաքակրթությունների առջև:

Եփրեմ խան (1868–1912 թթ.)

Բարեփոխումներն ընդգրկեցին բոլոր բնագավառները: Վարչական բարեփոխման արդյունքում վերջ տրվեց իշխանների՝ սյոգունների կառավարմանը, իշխանությունը վերադարձվեց միկադոյին՝ կայսրին: Երկրում մտցվեց ընդհանուր զինապարտություն, սամուրայները զրկվեցին փակ կաստայի արտոնություններից, և նվազեց նրանց դերը երկրում: Իրականացվեցին նաև դատական

բարեփոխումներ, վերացվեցին դասերը: Շատ կարևոր էին ագրարային բարեփոխումները: Հողը դարձավ մասնավոր սեփականություն, որը կարելի էր գնել և վաճառել: 1889թ. Ճապոնիայում, միկադոյիդեկրետով մտցվեց Սահմանադրություն, և Ճապոնիան դարձավ սահմանադրական միապետություն՝ երկպալատանի խորհրդարանով:

Մեյձի կայսր (1852–1912 թթ.)

Մեծ հնարավորություններ ստեղծվեցին մասնավոր ձեռներեցության, գործարանների կառուցման և երկաթուղային ուղիների շինարարության համար, զարգացավ ֆինանսական համակարգը, և որպես, ազգային արժույթ մտցվեց իենը: Ճապոնիան աստիճանաբար վերածվում էր արդյունաբերական զարգացած երկրի:

Արդիականացվեց նաև ճապոնացիների ապրելաձևը: Պահպանելով իրենց ավանդական շատ սովորույթներ, ճապոնացիներն սկսեցին հագնել եվրոպական զգեստներ, մտցվեց եվրոպական տոմար, հարդարանքը նույնպես դարձավ եվրոպական և այլն:

Բարեփոխումների հրապարակումը Մեյձի կայսեր կողմից

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Չինաստանը, ինչպես Ճապոնիան, «փակ էր» եվրոպացիների առջև, և հարկադրված բացվեց եվրոպական երկրների ճնշման ներքո: Նա թույլ զարգացած ավանդական երկիր էր, որը ձգտում էր արդիականացման բարեփոխումների միջոցով: Արևմտյան զարգացած երկրները կարիք ունեին շուկաների և արդյունաբերական հումքի: Բնականաբար նրանք չէին կարող անտեսել մի այնպիսի վիթխարի երկիր, ինչպիսին Չինաստանն էր: Եվ XIX դ. կեսերից սկսվեց Անգլիայի, Ֆրանսիայի, ապա նաև Գերմանիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի ներթափանցումը Չինաստան, որոնց դարավերջին միացավ նաև

ՃԱՊՈՆԻԱՆ XIX Դ. ՎԵՐՋԻՆ – XX Դ. ՍԿԶԲԻՆ

ճապոնիան: Չինաստանը բաժանվեց ազդեցության գոտիների: Չինաստանում սկսվեցին բարեփոխումները, որոնք ընթանում էին շատ դանդաղ: Հիմք դրվեց անհատական ձեռներեցությանը, և ստեղծվեցին արդյունաբերական տարբեր ճյուղեր, կառուցվեցին երկաթուղիներ, բարեփոխումներ կատարվեցին բանակում, դատական և կրթական համակարգերում և այլն: Ազգային գործիչներից շատերը հանդես էին գալիս Չինաստանը պառլամենտական միապետություն դարձնելու, իսկ ոմանք էլ՝ ընդհանրապես միապետությունը վերացնելու պահանջներով: Ի վերջո հաղթեց վերջին ուղղությունը: 1911–1912 թթ. չինական հեղափոխությունը տապալեց վերջին կայսր Պու Ին և Չինաստանը հռչակեց հանրապետություն: Դրանում մեծ էր չինական հայտնի քաղաքական գործիչ Սուն Յաթսենի դերակատարումը:

Չինաստանի Հանրապետության հռչակումը Սուն Յաթսենի կողմից

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ է հրապարակել «Հաթթը հումայուն» հրովարտակը, և ի՞նչ էր նրանով նախատեսվում: Փորձեք գնահատել այն:
2. Ինչպե՞ս էր կոչվում երիտթուրքական գաղտնի կազմակերպությունը:
3. Ե՞րբ է սկսվել երիտթուրքական զինվորական հեղաշրջումը և որտե՞ղ: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը երիտթուրքական հեղաշրջման նկատմամբ: Հիմնավորեք ձեր տեսակետը:
4. Բնութագրեք թուրքիզմի և պանթուրքիզմի քաղաքականությունը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ տարածում ունեն պանթուրքիզմի գաղափարները ներկայիս Թուրքիայում:
5. Ե՞րբ է տեղի ունեցել իրանական հեղափոխությունը, և ովքե՞ր էին նրա ղեկավարները:
6. Ե՞րբ է հռչակվել Իրանի առաջին Սահմանադրությունը:
7. Երբ է տեղի ունեցել «Մեյձիի հեղափոխությունը»:
8. Ի՞նչ բարեփոխումներ է կատարել Մեյձի կայսրը: Փորձեք գնահատել դրանք:
9. Ե՞րբ է տեղի ունեցել Չինական հեղափոխությունը և ի՞նչ հետևանքներ ունեցավ:

10. Լրացրեք «Արևելյան հասարակությունների արդիականացման փորձերը» աղյուսակը:

Երկրները	Բարեփոխումները	Հետևանքները
Թուրքիա		
Իրան		
Ճապոնիա		
Չինաստան		

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Երիտթուրքերի գաղտնի խորհրդակցություններից մեկում դոկտոր Նազըմի ելույթից:

... Ես ձեր ընկերը, զինակիցը և եղբայրն եմ դարձել, որ վերածնենք թրքությունը: Ուզում եմ, որ այս հողի վրա ապրի և լիակատար տեր ու տնօրեն լինի թուրքը և միայն թուրքը: Թող անհետանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչ ազգության և կրոնի էլ որ նրանք պատկանելիս լինեն: Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից: Կրոնն ինձ համար իմաստ ու նշանակություն չունի: Իմ կրոնը Թուրանն է:

«Ռուսկոյե սլովո» թերթի թղթակիցը Չինաստանում բռնկված հեղափոխության մասին

«Կենտրոնական Չինաստանը բռնկված է գեղջկական հեղափոխությամբ: Քաղաքներում բոլոր կողմերից եկել խռնվել են շինականներ, ուրագներով զինված երկրագործները պաշարներ են բերում հեղափոխականներին, միանում են ջոկատներին, ձիեր և սայլեր տալիս տեղափոխության համար: Փոքր քաղաքի զինանոցները դատարկվել են, զենքը բնակչությանն է բաժանվել: Հեղափոխականների կողմից գրավված քաղաքներում կազմակերպվում էին հայրենասիրական երթեր՝ «Չինաստանի ազատագրումը» մակագրությամբ դրոշներով»:

1. Ձեր կարծիքով՝ գաղափարախոսական ի՞նչ դրույթներ են իրենց արտացոլումը գտել դոկտոր Նազըմի ելույթում: Ի՞նչ եք կարծում՝ Նազըմի ելույթում երիտթուրքերի գաղափարախոսության ո՞ր դրույթներն են արտացոլված:

2. Ի՞նչ եզրակացության կարելի է հանգել հեղափոխության սոցիալական կազմի մասին: Ձեր կարծիքով՝ որո՞նք էին հեղափոխությանը գյուղացիության ակտիվ մասնակցության պատճառները: Ինչո՞վ էր տարբերվում չինական հեղափոխությունը 1848–1849 թթ. հեղափոխություններից:

§25. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ԱՇԽԱՐՀԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ

Ինչպես արդեն նշվել է, համաշխարհային գաղութային համակարգի առաջացման հիմքերը դրվել են դեռևս XVII դ. և ավարտվել XIX դ. վերջին – XXդ. սկզբին:

Գաղութացման համաշխարհային գործընթացի ծավալումն ուղիղ համեմատական էր եվրոպական երկրների արդյունաբերական զարգացմանը: Որքան դրանք զարգանում էին, այնքան ավելի էին սրվում արդյունաբերական ապրանքների վաճառահանման շուկաների, կապիտալի արտահանման, հումքի ձեռքբերման և էժան բանվորական ուժի հարցերը: Եվրոպական երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Բելգիան և այլն, այդ հարցերը լուծեցին նորանոր գաղութներ ձեռք բերելով: Գաղութացվող երկրները և ժողովուրդները աշխարհագրականորեն տեղակայված էին Ասիայում, Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում: Սկզբնական շրջանում գաղութացվեցին ասիական, ապա լատինաամերիկյան մայրցամաքների տարբեր երկրներ, իսկ հետո հերթը հասավ Աֆրիկային, որի գաղութացումն ավարտվեց XX դ. սկզբներին, այս անգամ արդեն Գերմանիայի մասնակցությամբ, որի գաղութները դարձան Հարավ-Արևմտյան Աֆրիկան, Տոգոն, Կամերունը:

Գաղութային համակարգի մեջ մտնում էին նաև այսպես կոչված կիսագաղութները, որոնց դասական օրինակը Չինաստանն էր. ապա նաև ենթահովանավորյալ երկրները՝ պրոտեկտորատները: Անգլիական պրոտեկտորատներ էին Քուվեյթը, Եգիպտոսը, Սվազիլենդը, Հյուսիսային Ռոդեզիան և այլն, ֆրանսիական՝ Թունիսը, Մարոկկոն:

Հանդիպում գաղութային բնակչության հետ

Այսպիսով ավարտվեց գաղութային համակարգի կազմավորման համաշխարհային

180
150
120
90
60
0
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ԱԼՅԱՍԿԱ (ԱՄՆ)
ԿԱՆԱԴԱ
Ձուտ
Բրիտ. դոմինիոն 1867թ.
ԱՄՆ
Օտտավա
Չիկագո
Նյու-Յորք
Սան-Ֆրանցիսկո
Վաշինգտոն
ՄԵՔՍԻԿԱ
Հավանա
ԿՈՒԲԱ
Մեխիկո
Գրենլանդիա (Դան.)
ԻՍԼԱՆԴԻԱ (Դան.)
Ս. Պետեր
Մոսկվա
Լոնդոն
Փարիզ
Բեռլին
Վիեննա
Ազորյան կղզ. (Պորտ.)
Լիսաբոն
Մադրիդ
Հռոմ
Ալժիր
Ֆեզ
Տրիպոլի
Կանարյան կղզ. (Իսպ.)
Մարոկկո (Ֆր.)
Կահիրե
Լիբիա (Թուրք.)
Դակար (Ֆր.)
ԱՖՐԻԿԱ
Մոնրովիա
Լագոս
Նիգերիա (Բրիտ.)
Խարտում
Եթոպ.
Կոնգո (Բելգ.)
Բրազավիլ
Լուանդա
ԱՆԳՈԼԱ (Պորտ.)
Մոզամբիկ (Պորտ.)
Պրետորիա
Հարավ. Աֆրիկա (Գերմ.)
Հարավ. Աֆրիկա (Բրիտ.)
Քեյփթաուն
Կարակաս
Գվիանա
Բոգոտա
Կիտո
Լիմա
Բրազիլիա
Ռիո Դե Ժանեյրո
Սանտյագո
Մոնտեվիդեո
Բուենոս Այրես
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՔ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՔ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
Մեծ Բրիտանիա
Ռուսական կայսրություն
Ֆրանսիա
Նիդեռլանդներ
Իսպանիա
Պորտուգալիա
1871թ.
1914թ.
Ազդեցության գոտիները 1914թ.
Մեծ Բրիտանիա
Ռուսաստան
Ֆրանսիա
Գերմանիա
ԱՄՆ

Մայրաքաղաքները
Գաղութային տիրույթների կենտրոնները
Այլ բնակավայրեր
Պետությունների սահմանները 1914թ.
60
90
120
150
180
150
30
0
30
ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ
ՍԱՄՈՍԻ ՕՎԿԻԱՆՈՍ
ՀՆԴԿԱԿԱՆ
ՕՎԿԻԱՆՈՍ
ՍԱՄՈՍԻ
ՍԱՄՈՍԻ
ՍԱՄՈՍԻ

գործընթացը: Գաղութները դարձան վերոնշյալ երկրների ոչ միայն արդյունաբերական զարգացման խթանիչներ, այլև նրանց բարեկեցության, բարգավաճման և գերշահույթների կայուն աղբյուր՝ ի հաշիվ գաղութացված երկրների հարստահարման ու աղքատացման:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁԵՐԸ

XX դարի սկզբներին սուր բնույթ ստացան պատերազմի և խաղաղության հարցերը, որոնք ալեկոծել էին մասնավորապես ողջ Եվրոպան: Այդ հարցը քննարկվում էր Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների խորհրդարաններում, մամուլը ողողված էր այդ խնդիրների արծարծմամբ, գումարվում էին տարաբնույթ ժողովներ և հավաքներ: Սկիզբ առավ պացիֆիստական՝ խաղաղապահպան շարժումը, որի կարկառուն ներկայացուցիչներից էր ֆրանսիական սոցիալիստ և խորհրդարանի անդամ Ժան Ժորեսը, որն սպանվեց հակապացիֆիստի ձեռքով:

Խաղաղապահպան դիրքերից և ընդդեմ պատերազմների էին հանդես գալիս եվրոպական ռադիկալ, լիբերալ և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Այդ շարժման կենտրոններից էր II Ինտերնացիոնալը: Հակապատերազմական շարժումը նոր թափ ստացավ, երբ նրանց միացան կանայք, որոնք միաժամանակ պայքարում էին իրենց իրավունքների ընդլայնման համար:

Պատերազմի և խաղաղության հարցերը մտահոգում էին ոչ միայն հասարակական-քաղաքական կազմակերպություններին, այլև առանձին սթափ և հեռատես պետական գործիչների և պաշտոնյաների, որոնք հիանալի էին պատկերացնում այն բոլոր ծանր հետևանքները, որ կարող էր ունենալ նոր եվրոպական պատերազմի սանձազերծումը: Այս շարժումն անհրաժեշտ հող նախապատրաստեց պատերազմի և խաղաղության հարցերը իրավական դաշտ տեղափոխելու համար:

II ինտերնացիոնալի կոնգրեսը Ամստերդամում, 1904 թ.

Դրա արտահայտությունը Հոլանդիայի մայրաքաղաք Հաագայում 1889 թ. և

1907 թ. գումարված միջազգային համաժողովներն էին, որոնք իրավական տեսանկյունից քննարկեցին խաղաղության պահպանման, պատերազմների սանձազերծման և դրանց հետևանքների հարցերը: Երկու համաժողովներում ընդունված որոշումները իրավական շրջանակի մեջ դրեցին հետևյալ հիմնախնդիրները՝ մարդասիրական վերաբերմունք պատերազմի վիրավորների և գերիների նկատմամբ, թունավոր զենքի օգտագործման արգելում, ուժի կիրառման շրջանակների կոնկրետացում, ընդգծելով նրա անթույլատրելիության հանգամանքները, պատերազմում ներգրավված երկրի խաղաղ բնակչության իրավունքների հարգում՝ նրանց անվտանգության ապահովման տեսանկյունից, պատերազմի ժամանակ պաշտոնապես չեզոքություն հայտարարած երկրների իրավունքների հարգում, սահմանելով նաև նրանց պարտականությունները և այլն:

Հաագայի առաջին միջազգային կոնգրեսը, 1889 թ.

Հաստատվեցին պատերազմի մեջ ներգրավված երկրների պարտականությունները՝ հարգել դեռևս 1863թ. ստեղծված «Միջազգային կարմիր խաչի» ընկերության իրավունքները, մանավանդ նրա այն մասով, որը վերաբերում էր վիրավորներին, հիվանդներին և գերիներին օգնություն և օժանդակություն ցուցաբերելու հարցերում:

Իհարկե, չպետք է ենթադրել, որ պատերազմող կողմերը խստորեն հետևել և հետևողականորեն կիրառել են այդ դրույթները, որոնց մի մասը մինչև օրս չի կորցրել իր կարևորությունը:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին մեծ տերությունների ցանկի մեջ մտնում էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և ԱՄՆ-ը: Քաղաքական, տնտեսական և ռազմական հակասությունները ձևավորվեցին հիմնականում նրանց միջև, սակայն իրենց ոլորտի մեջ աստիճանաբար ներգրավե-

Ֆրանս-բրիտանական համաձայնության կնքման նշումը

ցին նաև Ճապոնիան, Թուրքիան, Իտալիան և այլ երկրներ: Նրանց բաժանող խնդիրների մեջ հարկ է նշել նաև գաղութների հարցը: Պայքարի տրամաբանությունն ի վերջո հանգեցրեց Եվրոպայում երկու հակադիր ռազմաքաղաքական դաշինքների՝ Եռյակ դաշինքի և Անտանտի ձևավորմանը:

Եռյակ դաշինքը ձևավորվեց 1879–1882 թթ., որի մեջ մտնում էին Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան: Նրա առաջատար և ոգեշնչող ուժը Գերմանիան էր:

Երկրորդ դաշինքն Անտանտն էր, որի ձևավորումը բավականին երկար տևեց: Նրա հիմքը դրվեց 1891–1893 թթ. ֆրանս-ռուսական պայմանագրերի ստորագրումով, ապա 1904 թ. ֆրանս-բրիտանական համաձայնությամբ, որին 1907 թ. միացավ ցարական Ռուսաստանը: Դրանով ավարտվեց Անտանտի կազմավորումը: Հետագայում այդ դաշինքներից յուրաքանչյուրին միացան եվրոպական, ասիական և ամերիկյան այլ երկրներ: Հարկ է նշել, որ ոչ միայն դաշինքներից յուրաքանչյուրը, այլև դաշինքների մեջ մտնող յուրաքանչյուր երկիր ուներ իր նախընտրելի ուղղությունները և հետամուտ էր իր սեփական քաղաքական, տնտեսական և տարածքային շահերին:

Դաշինքների ձևավորման գործընթացի ավարտումը մեծ դեր խաղաց Առաջին համաշխարհային պատերազմի սկսման գործում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ավարտվել աշխարհի գաղութային բաժանումը:
2. Ինչպե՞ս էր կոչվում հակապատերազմյան շարժման կենտրոններից մեկը:
3. Ե՞րբ են Հաագայում տեղի ունեցել միջազգային կոնգրեսներ, և ի՞նչ հարցեր են քննարկվել այնտեղ:
4. Ե՞րբ է ձևավորվել Եռյակ դաշինքը, և ո՞ր պետություններն էին մտնում այդ դաշինքի մեջ: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակներ էր հետապնդում այն:
5. Ինչպե՞ս էր կոչվում Եռյակ դաշինքին հակադիր դաշինքը և ե՞րբ է ավարտվել նրա կազմավորումը: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էին

տարբերվում դրանք:

6. Ինչ եք կարծում, եթե չստեղծվեին ռազմաքաղաքական այդ դաշինքները՝ հնարավոր էր կանխել Առաջին աշխարհամարտը: Ձեր տեսակետը հիմնավորեք փաստերով:
7. Լրացրեք «Ռազմաքաղաքական դաշինքների առաջացումը» աղյուսակը:

Դաշինքները	Անդամ երկրները	Ձևավորման ժամանակը	Նպատակները
Եռյակ դաշինք			
Անտանտ			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Բիսմարկի երկյուղը
(հատված Օ. Բիսմարկի նամակից)

Դրա մասին (Ռուսաստանի վրա հարձակվելու մասին) կարելի էր վիճել այն դեպքում, եթե այդպիսի պատերազմը իսկապես հասցներ Ռուսաստանի ջախջախմանը: Բայց այդպիսի արդյունքը նույնիսկ ամենափայլուն հաղթանակից հետո էլ հավանականությունից դուրս է: Պատերազմի նույնիսկ ամենանպաստավոր ելքը երբեք չի հասցնի Ռուսաստանի հիմնական ուժերի քայքայմանը, որը խարսխված է միլիոնավոր բուն ռուսների վրա... Այս վերջինները, նույնիսկ եթե նրանց անդամահատեն միջազգային դրակտատներով, նորից արագ կմիանան միմյանց, ինչպես կտրտված անդիկի մասնիկներ: Դա ռուս ազգի անխորտակելի պետությունն է:

Ինչո՞ւմ էր նա տեսնում Ռուսաստանի ուժը: Ինչ եք կարծում՝ պետական–քաղաքական գործչի ո՞ր հատկանիշների մասին են վկայում Բիսմարկի խոսքերը: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր Բիսմարկի նման ուժեղ և փորձված գործչի՝ Ռուսաստանի դեմ պատերազմի հարցում ունեցած երկյուղի հիմնական պատճառը:

§26. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ 1914–1918 ԹԹ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՄԿԻԶԲԸ

Երկու միմյանց հակադիր խմբավորումների ստեղծումը պատերազմը տեսական ոլորտից տեղափոխեց գործնական հարթություն:

Մեծ Բրիտանիան ձգտում էր պահպանել իր տիրապետող համաշխարհային դիրքերը, գաղութային տիրապետությունը, կանխել Գերմանիայի հետագա ուժեղացումը, հասնել նրա ռազմական պարտությանը և վերացմանը:

Ֆրանսիան ձգտում էր հասնել փոխվրեժի (ռևանշի) 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմում կրած ծանր պարտության համար, հետ վերադարձնել այդ պատերազմում կորցրած տարածքները՝ Էլզասը և Լոթարինգիան, կործանել կայզերական Գերմանիան և տիրանալ գերմանական գաղութներին:

Ռուսաստանի նպատակը՝ Բոսֆորի և Դարդանելի նեղուցներին, Կոստանդնուպոլսին և Արևմտյան Հայաստանին տիրանալն էր, Միջերկրական ծով ազատ ելք ունենալը: Այդ ծրագրերի իրագործման պարագայում Օսմանյան կայսրությունը պետք է տրոհվեր:

Եռյակ դաշինքը կամ գերմանական խմբավորումը նույնպես հետապնդում էր զավթողական նպատակներ, ինչպես Անտանտը: Գերմանիան ծրագրել էր պարտության մատնել իր ամենագլխավոր հակառակորդին՝ Մեծ Բրիտանիային, տիրանալ նրա գաղութներին և իր հեգեմոնիան հաստատել Եվրոպայում:

Ավստրիական թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը

Ավստրո-Հունգարիան ձգտում էր իր ազդեցությունը տարածել Բալկանների վրա և Գերմանիայի հետ մասնակցել Ռուսաստանի տրոհմանը:

Ինչ վերաբերում էր Օսմանյան կայսրությանը, որը միացել էր գերմանական խմբավորմանը, ապա նրա նպատակն էր կայսրությանը միացնել Կովկասը, Ղրիմը, Իրանական Ատրպատականը, Միջին Ասիան, և Ուրալից արևելք ընկած թուրքալեզու ժողովուրդների տարածքները: Ըստ էության դա այն է, ինչ պատմագիտության մեջ հաստատվել է

որպես պանթուրքական ցնորամիտ երազանք:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց 1914 թ. օգոստոսի 1-ին: Պատերազմի անմիջական առիթ ծառայեց 1914 թ. հունիսի 28-ին ավստրիական թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի և նրա կնոջ սպանությունը սերբ հայրենասեր Գավրիլ Պրինցիպի կողմից:

Ավստրո-Հունգարիայում պատերազմի հայտարարումը

Իտալիան Անգլիայից ստանալով գայթակղիչ ֆինանսական և տարածքային խոստումներ, լքեց գերմանական խմբավորումը և 1915 թ. մայիսի 23-ին անցավ Անտանտի կողմը:

Գերմանական խմբավորմանը միացան Թուրքիան և Բուլղարիան, որի արդյունքում Եռյակ դաշինքը վերածվեց Քառյակ դաշինքի:

1917 թ. ապրիլի 6-ին գերմանական խմբավորման դեմ Անտանտի կողմից պատերազմի մեջ մտավ ԱՄՆ-ը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐԸ

Առաջին համաշխարհային պատերազմում գլխավոր ռազմաճակատները երկուսն էին: Մեկը Արևմտյան ռազմաճակատն էր Եվրոպայում: Այստեղ միմյանց դեմ հանդիման կանգնած էին ֆրանսիական և գերմանական զորքերը: Սակայն ֆրանսիական զորքերի կողքին մարտնչում էին նաև բելգիական, հոլանդական, բրիտանական և դաշնակցային այլ զորքեր: Մյուս գլխավոր ռազմաճակատը Արևելյան ռազմաճակատն էր: Այստեղ միմյանց դեմ կանգնած էին մի կողմից՝ ռուսական, իսկ մյուս կողմից՝ գերմանական և ավստրիական զորքերը:

Գերմանական դաշինքի կողմից 1914 թ. հոկտեմբերին Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելուց հետո ձևավորվեց Կովկասյան ճակատը: Այստեղ պատերազմական գործողությունները ծավալվում էին Արևմտյան Հայաստանի տարածքում: Երիտթուրքական դահիճները, Թալեաթի, Էնվերի և Ջեմալի գլխավորությամբ, օգտվելով պատերազմի հետևանքով ստեղծված բարենպաստ պայմաններից, 1915 թվականից ձեռնամուխ եղան կայսրության շրջանակներում Հայոց ցեղասպանության իրագործմանը, որին զոհ դարձավ մոտ 1.5 մլն

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ
1914 - 1918թթ.
(ԵՎՐՈՊԱՅԻՆ ՌԱԶՄԱՌԱՄԱԲԵՐ) ՄԱՍՇՏԱԲ 1: 20 000 000
1 Հաճախշարժային պատերազմի կարևորագույն գործողությունները
1914թ. Սահմանային ճակատամարտ
Լվովյան-Պրեսական 1914թ.
Մարնի 1914թ.
Լաբյաժա-Իվանգորոդան 1914թ.
Գալիցիայի ճակատամարտ 1914թ.
Մազուրական 1914-1915թթ.
Դարդանելի 1915թ.
Լոզոնի 1915թ.
Նյուվշապելի 1915թ.
ճակատամարտ Առաջի գետի մոտ 1916թ.
Հուլյանդական ճակատամարտ 1916թ.
Վերդենի 1916թ.
Նյուռբերգ-Հունգարական ճակատի վերջալույս 1916թ.
ճակատամարտը Կանթենի մոտ 1917թ.
Սոմմեի 1918թ.
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՇԱՆՆԵՐ
Անտանտի երկրները և նրանց հարած պետությունները
Գերմանիան և նրա դաշնակիցները 1915թ.
Չեզոքություն պահպանած պետությունները
1 VIII 1914 Առաջին երկրների պատերազմի մեջ մտնելու տարեթվերը
Ամրոցներ
Գերմանիայի և նրա դաշնակիցների բանակների գլխավոր հարվածների ուղղությունները
Անտանտի բանակների գլխավոր հարվածների ուղղությունները
Ծովային կարևորագույն ճակատամարտերի տերերը և տարեթվերը
Կենտրոնական տերությունների և Անտանտի ակամարները
Ստորգրյա պատերազմի հիմնական շրջանները
Արևմտաեվրոպական ռազմաճակատ
Գերմանական զորքերի առաջխաղացման սահմանագիծը դեպի Փարիզ հարձակման ժամանակ
Ռազմաճակատի գիծը 1915-1916թթ.
Ռազմաճակատի գիծը 1918թ. նոյեմբերի 11-ի զինադադարից առաջ
Բալկանյան ռազմաճակատ
Ռազմաճակատի գիծը 1915թ. մայիսին
Ռազմաճակատի գիծը 1918թ. նոյեմբերին
Արևելյան ռազմաճակատ
Ռուսական զորքերի առաջխաղացման սահմանագիծը Արևելյան Պրուսիայում և Գալիցիայում 1914թ. սեպտեմբերին
Ռազմաճակատի գիծը 1914թ. վերջին
Ռազմաճակատի գիծը 1915թ. հունվարին
Այլ ռազմաճակատներից հանված գերմանա-ավստրիական զորքերի նետումը դեպի ռուսական ռազմաճակատ
Ռազմաճակատի գիծը 1917թ. հունվարին
Բալկանյան ռազմաճակատ
Սերբիայի ռազմաճակատի գիծը 1915թ. նոյեմբերին
Սալոնիկի ռազմաճակատի գիծը 1916թ. վերջին
Սալոնիկի ռազմաճակատի գիծը 1918թ.
Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում (1917թ.)
Բրեստի հաշտության կնքումը
29.XI 1918 Գերմանիայի և նրա դաշնակիցների կապիտուլյացիայի տարեթվերը
Պետությունների սահմանները 1914թ.
Նոյեմբերյան ռազմաճակատ
Ռուսական և թուրքական զորքերի ատրատեղեանական ծանրությունը և նրանց գործողությունների ուղղությունը
Ռազմաճակատի գիծը 1915թ. ապրիլի սկզբին
Ռուսական զորքերի առաջխաղացման սահմանագիծը 1917թ. դեկտեմբերի սկզբին
Ռուսական զորքերի հարձակման ուղղությունները
Թուրքական զորքերի հարձակման ուղղությունները
Ռուսական և թուրքական զորքերի դիրքերը պատերազմի սկզբին
1914 Ռազմաճակատի գիծը 1914թ.
1915 Ռազմաճակատի գիծը 1915թ.
1916 Ռազմաճակատի գիծը 1916թ.
1917 Ռուսական և թուրքական բանակների սահմանագիծը հանձնայն նրանցնայի 1917թ. դեկտեմբերի 5-ի հանձնաժողովի
ՌՈՒՍԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
ՍԵՎ ԾՈՎ
ՍԱՎՈՒՄ
ՍՏՈԿՀՈԼՄ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՄՈՍԿՎԱ
ՎԱՐՇԱՎԱ
ՊՈՍՏԱՄ
ԲԵՐԼԻՆ
ՎԻԵՆՆԱ
ԲՈՍՆԻԱ
ԲԵԼԳՐԱԴ
ՍՈՖԻԱ
ՍՏԱՄԲՈՒԼ
ԹԻՖԼԻՍ
ԵՐԵՎԱՆ
ԹԱՎՐԻԶ
ՍԱՄԱՐԿԱՆԴ
ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՌԱԶՄԱՌԱՄԱԲԵՐ (1914-1917թթ.)

հայ: Ցեղասպանության ենթարկվեցին նաև Պոնտոսի հույները, ինչպես նաև ասորիները: 1916 թ. ձևավորվեցին արաբական և նրա մասը կազմող եգիպտական ճակատները: Կար նաև բալկանյան ճակատը:

Մառնի ճակատամարտը

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Գերմանական կողմը պատերազմի սկզբնական փուլում նախապատվությունը տվեց Արևմտյան ռազմաճակատին: Նա գրավեց Բելգիան, ներխուժեց Ֆրանսիա, իսկ սեպտեմբերին գերմանական զորքերը մոտեցան Փարիզին: Սակայն Մառնի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ֆրանսիական և անգլիական զորքերը կարողացան կանգնեցնել գերմանացիների առաջխաղացումը, և գերմանական զորքերը նահանջեցին: Ձախողվեց Փարիզը գրավելու գերմանական ծրագիրը:

Արևելյան կամ ռուսական ռազմաճակատում ռուսական զորքերը պարտություն կրեցին Քյոնիգսբերգի մոտ, սակայն կարողացան պարտության մատնել ավստրիական զորքերին Կարպատներում: Ռուսական զորքերը հաջողության հասան նաև Կովկասյան ճակատում, 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներին գլխովին ջախջախեցին թուրքական զորքերին Սարիղամիշի ճակատամարտում: Հետագայում ռուսական զորքերը գրավեցին Վանը, Էրզրումը, Բիթլիսը և Արևմտյան Հայաստանի այլ տարածքներ:

Ռուսական զորքերի դիրքերը Սարիղամիշի ճակատամարտում

Առաջին աշխարհամարտի տանկ

Առաջին համաշխարհային պատերազմում՝ Արևմտյան ճակատում, մարտերը ծավալվեցին նոր թափով: 1916 թ. տեղի ունեցավ Վերդենի ճակատամարտը, որտեղ երկու կողմերից զոհվեց մոտ մեկուկես միլիոն մարդ, և այդ պատճառով այն պատմության մեջ մտել է «Վերդենյան մսաղաց» անունով: Կողմերից ոչ մեկը չկարողացավ հասնել հաջողության: Ռուսական զորքերը 1916 թ. հունիսին նոր հաջողությունների հասան Գալիցիայում ավստրիացիների դեմ կռվելիս, որը հայտնի է «Բրուսիլովյան ճեղքում» անվանումով: Բայց պատերազմի հետագա ընթացքում ռուսական կողմն ունեցավ ծանր կորուստներ՝ Լեհաստանը, Մերձբալթիկայի մեծ մասը, Արևմտյան Բելառուսիան և այլն:

Պատերազմական գործողությունները վերսկսեցին ճապոնացիները՝ Չինաստանում գրավելով նորանոր տարածքներ: Իսկ Գերմանիան կորցրեց համարյա իր բոլոր գաղութները:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1916 թ. արդեն զգացվում էր գերմանական խմբավորման թուլանալը, նրա մարդկային և ռազմանյութական ռեսուրսների մեծ պակասը: 1918 թ. ամռանը տեղի ունեցավ Սոմնի երկրորդ ճակատամարտը, որն ավարտվեց գերմանացիների պարտությամբ: Պարտություններ էին կրում նաև Ավստրո-Հունգարիան և օսմանյան Թուրքիան: Պատերազմը թևակոխեց իր ավարտական փուլը, սկսվեց Քառյակ դաշինքի փլուզումը: 1918 թ. սեպտեմբերին Անտանտը հարձակողական գործողությունների անցավ բոլոր ռազմաճակատներում:

Կոմպենյան անտառում զինադադարի կնքումը (մարշալ Ֆոշի վագոնը), 1918 թ. նոյեմբերի 11

Սկսվեց Գերմանիայի դաշնակիցների զինադադարի կնքման և պատերազմից դուրս գալու գործընթացը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին զինադադար ստորագրեց Օսմանյան կայսրությունը: Բուլղարիան և Ավստրո-Հունգարիան նույնպես իրենց պարտված ճանաչեցին: Այդ գործընթացի վերջին ակորդը Գերմանիայի կնքած զինադադարն էր 1918 թ. նոյեմբերի 11-ին՝ Կոմպենյան անտառում:

Պատերազմի կարևոր հետևանքներից մեկը Օսմանյան, Ավստրո-հունգարական, Ռուսական կայսրությունների ու կայզերական Գերմանիայի կործանումը և աշխարհի քաղաքական քարտեզից նրանց անհետանալն էր՝ որպես միապետություններ: Նրանց փլատակների վրա Եվրոպայում հայտնվեցին մոտ մեկ տասնակ նոր պետություններ:

Անգլիան և Ֆրանսիան կարողացան իրականացնել իրենց ծրագրերի հիմնական կետերը՝ իրենց դիրքերի պահպանումը և ուժեղացումը, գլխավոր մրցակից կայզերական Գերմանիայի կործանումը, նրա գաղութների գրավումը և վերաբաժանումը:

ԱՄՆ-ը դարձավ միջազգային հարաբերությունների նոր և հզոր գործոն:

Առաջին համաշխարհային պատերազմում մասնակցեց 33 պետություն՝ մոտ 1,5 մլրդ ազգաբնակչությամբ: Պատերազմող երկրների զորքերում զինվորների թիվը հասնում էր 74 միլիոնի, զոհերի թիվը՝ 10 միլիոնի, իսկ վիրավորներինը՝ 20 միլիոնի: Հիվանդություններից, համաճարակներից և սովից մահացավ ևս 10 միլիոն: Պատերազմին մասնակից բոլոր երկրների ընդհանուր ռազմական ծախսերը կազմեցին 208 մլրդ դոլար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկսվել Առաջին համաշխարհային պատերազմը, և ո՞րն էր այդ պատերազմի անմիջական առիթը:
2. Ո՞ր պետություններն էին մտնում Քառյակ դաշինքի մեջ:
3. Որո՞նք էին Առաջին աշխարհամարտի գլխավոր ռազմաճակատները: Ուրիշ ի՞նչ ռազմաճակատներ ձևավորվեցին:
4. Ի՞նչ ճակատամարտեր են տեղի ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Բնութագրեք դրանք:
5. Ո՞րն էր Քառյակ միության թուլացման պատճառը:
6. Ե՞րբ և որտե՞ղ է զինադադար կնքվել Գերմանիայի հետ:
7. Ի՞նչ զգացմունքներ արթնացրին ձեր մեջ Առաջին աշխարհամարտի հետևանքները: Ի՞նչ եք կարծում՝ հնարավո՞ր է կանխել պատերազմները: Հիմնավորեք ձեր տեսակետը:

8. Լրացրեք «Պատերազմող երկրների նպատակները Առաջին աշխարհամարտում» աղյուսակը:

Երկրները	Հետապնդած նպատակները
Մեծ Բրիտանիա	
Ֆրանսիա	
Ռուսաստան	
Գերմանիա	
Օսմանյան կայսրություն	

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Գերմանիայի կապիտուլյացիան

Հոդված 1. Ռազմական գործողությունների դադարեցումը ցամաքում և օդում՝ զինադադարի ստորագրումից հետո 6 ժամվա ընթացքում:

Հոդված 2. Գրաված երկրների՝ Բելգիայի, Ֆրանսիայի, Լյուքսեմբուրգի, ինչպես նաև Էլզաս-Լոթարինգիայի անհապաղ էվակուացում, այնպես, որ դա իրականացվի 15 օրվա ընթացքում...

Հոդված 5. Գերմանական բանակի էվակուացումը Հռենոսի ձախ ափի վայրերից:

Հռենոսի ձախափնյա վայրերը ղեկավարելու են տեղական իշխանությունները, բայց դաշնակիցների և Ամերիկայի Միացյալ Նահանգների օկուպացիոն զորքերի վերահսկողությամբ...

Հոդված 12. ... Բոլոր գերմանական զորքերը, որոնք այժմ այն տերիտորիաներում են, որոնք մինչև պատերազմը գտնվում էին Ռուսաստանի կազմում, նույնպես պետք է վերադառնան Գերմանիայի սահմանները... հենց որ դաշնակիցները գտնեն, որ դրա համար հասել է ժամանակը, նկատի առնելով այդ տերիտորիաների ներքին դրությունը...

Հոդված 22. Դաշնակիցներին և Ամերիկայի Միացյալ Նահանգներին հանձնել այժմ գոյություն ունեցող բոլոր սուզանավերը (ներառյալ՝ ստորջրյա հածանավերն ու ականակիրները)՝ իրենց սպառազինությամբ ու հանդերձանքով՝ դաշնակիցների և Միացյալ Նահանգների նավահանգիստներում...

Հոդված 23. Վերջրյա գերմանական ռազմանավերը... անհապաղ կզինաթափվեն, այնուհետև կներկալվեն...

Հոդված 29. Գերմանիայի կողմից Սև ծովի բոլոր նավահանգիստների էվակուացումը և գերմանացիների կողմից Սև ծովում զավթած բոլոր ռուսական ռազմանավերի հանձնումը դաշնակիցներին և Ամերիկայի Միացյալ նահանգներին...:

Անակնկալ հեռագիր

XX դարի սկզբին սրվեցին ավստրո-իտալական հակասությունները Ադրիատիկ ծովի հյուսիսային և արևելյան ափերին հարող շրջաններում: Իտալական խոշորագույն արդյունաբերողները կապված էին անգլիական և ֆրանսիական կապիտալի հետ: Համաշխարհային պատերազմը սկսելուց շատ առաջ Իտալիայի կառավարությունը, հակառակ իր դաշնակցային պայմանագրին, վճռեց չեզոքություն պահպանել: Դա իտալական թագավորին չխանգարեց 1914 թ. օգոստոսի սկզբին Վիլհելմ II-ին ուղարկել մի հեռագիր, որն ավարտվում էր հետևյալ խոսքերով՝ «Հղում եմ քեզ իմ ամենաանկեղծ ցանկությունները, բարօրություն քեզ և բարօրություն Գերմանիային: Քո եղբայր և դաշնակից Վիկտոր-Էմանուիլ»: Սաստիկ բարկացած Վիլհելմ II-ը երկու գծով ընդգծեց «դաշնակից» բառը և դիմացը գրեց՝ «Լկտիություն է»: Հեռագրի վերջում նա նշեց՝ «Սրիկա»:

Օգոստոսի 3-ին Իտալիան պաշտոնապես հայտարարեց իր չեզոքության մասին:

1. Ինչի՞ մասին են վկայում զինադադարի համաձայնագրի վերը բերված կետերը: Ձեր կարծիքով՝ որո՞նք էին դաշնակից (Անտանտի) երկրներին հետաքրքրող հարցերը: Ըստ համաձայնագրի կետերի՝ փորձեք կռահել (կամ պարզել) ի՞նչ էր սպասվում Քառյակ դաշինքի երկրներին առաջիկա հաշտության բանակցություններում:

2. Ի՞նչ եզրակացություն կարելի է անել Իտալիայի թագավորի հեռագրից: Ինչո՞ւ էր այն զայրացրել Վիլհելմ II-ին: Հիմնավորեք ձեր տեսակետը:

§27. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մշակույթի և գիտության զարգացման հիմքը կրթությունն է, և եվրոպական պետությունները մեծ ուշադրություն են դարձրել այդ ոլորտի զարգացմանը: Գերմանիայում, նրա միավորումից և կայսրության վերածվելուց հետո, պարտադիր տարրական ուսուցումն ամրագրվել է երկրի Սահմանադրության մեջ: Իսկ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում նշված ժամանակաշրջանում անցում կատարվեց ընդհանուր պարտադիր և անվճար ուսուցման: Այնուհետև հիմնադրվեցին տեխնիկական ուսումնարաններ և բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դա լավ հիմք էր գրագիտության զարգացման և գրագետ մարդկանց թվի ավելացման համար, որոնց նկատմամբ պահանջը խիստ մեծացավ՝ պայմանավորված գիտության և տեխնիկայի առաջընթացով: Ստեղծվեցին հաստոցներ, դազգահներ և սարքավորումներ: Սկսվեց արտադրության ավտոմատացումը, և ներդրվեց հոսքագիծը: Կատարվում էին նաև գիտական հայտնագործություններ և գյուտեր, որոնց արդյունքները ներդրվում էին տնտեսության մեջ: Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իտալիայի, Ճապոնիայի գիտնականների հետազոտությունների և հայտնագործությունների արդյունքում հարստացան և խորացան մարդկանց պատկերացումներն իրենց շրջապատող աշխարհի վերաբերյալ: Դա փոխեց նրանց մտածելակերպը և հոգեբանությունը:



Չարլզ Դարվին (1809–1882 թթ.)

ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արագ թափով զարգացան բնական կամ հիմնարար գիտությունները և գիտության այնպիսի ճյուղեր, ինչպես ֆիզիկան, մաթեմատիկան, քիմիան և կենսաբանությունը, որոնք կապված էին Ա. Այնշտեյնի, Ն. Բորի, Չ. Դարվինի, Գ. Մենդելի, Լ.Պաստյորի և այլոց անունների հետ: Իտալացի Գ. Մարկոնին և ռուս Ա. Պոպովը

հայտնաբերեցին ռադիոն, ամերիկացի Ա. Բելլը՝ հեռախոսը, շվեդացի Ա. Նոբելը՝ դինամիտը, հայ Հ. Ադամյանը՝ գունավոր հեռուստատեսությունը: Կարևոր հայտնագործություններից էր ներքին այրման շարժիչների հայտնաբերումը, որի հեղինակը Գ. Դայմլերն էր, էլեկտրականության, էլեկտրամագնիսական ալիքների և էլեկտրալամպերի հայտնագործությունը, հեղինակներն էին Մ. Ֆարադեյը, Ջ. Մաքսվելը, Է. Էդիսոնը: Լուրջ հետազոտություններ կատարվեցին ռադիոակտիվության ոլորտում, որի համար մարդկությունը պարտական է նաև Վ. Ռենտգենին: Այդ բոլորի արդյունքում խիստ բարձրացավ գիտնականների և ճարտարագետների հեղինակությունը:

Բելլի հեռախոսը, ԱՄՆ 1890 թ.

Զգալի տեղաշարժեր եղան հումանիտար գիտությունների, մասնավորապես՝ պատմության, գրականագիտության, լեզվաբանության և փիլիսոփայության բնագավառում: Թեժ քննարկումներ էին տեղի ունենում փիլիսոփայական խնդիրների և ուղղությունների, համեմատական լեզվաբանության, հասարակությունների զարգացումների օրինաչափությունների շուրջ: Մեծ զարգացում ապրեց հնագիտությունը, հատնաբերվեցին սեպագիր արձանագրությունների վերծանման և իմաստագրերի (հիերոգլիֆներ) ընթերցման գաղտնիքները, որի արդյունքում առաջացան նոր գիտական ուղղություններ, ինչպես ասուրագիտությունը, ուրարտագիտությունը, խեթագիտությունը, եգիպտագիտությունը, ճշգրտվեցին հազարամյա հնություն ունեցող պատմական իրադարձությունները, նրանց տարեթվերը, պատմական ականավոր դեմքերի գործունեության հետ կապված հարցերը: Լուրջ ուսումնասիրություններ կատարվեցին հոգեբանության բնագավառում, որի արդյունում այն միստիկայից, «այնկողմնային» երևույթից վերածվեց ուսումնասիրության ենթակա գիտական ուղղության: Լայնորեն տարածվեց Զիգմունդ

Զիգմունդ Ֆրեյդ (1856–1939 թթ.)

Գի դը Մոպասան
(1850–1893 թթ.)



Մարկ Տվեն
(1835–1980 թթ.)

Ֆեոդոր Դոստոևսկի
(1821–1881 թթ.)

Ֆրեյդի հիմնած պսիխոանալիզը՝ հոգեվերլուծությունը, որի միջուկը լիբիդոյի ուսմունքն է, որով հրապուրվածների թիվն անգամ մեր օրերում քիչ չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՏՐՈՆԸ ԵՎ ԿԻՆՈՆ

Աննախընթաց վերելք ապրեց գրականությունը ոչ միայն Արևմտյան Եվրոպայում, այլև համայն աշխարհում, Ամերիկայի և Ասիայի տարբեր երկրներում: Այս փուլում գրականությունը սահուն անցում կատարեց արդյունաբերական հասարակությունը ժխտող ռոմանտիզմից ռեալիզմ, որի գլխավոր ուղղությունը դարձավ քննադատական ռեալիզմը: Այն գտնում էր, որ կյանքը պետք է պատկերել այնպես, ինչպես որ կա, ցույց տալով նրա և՛ դրական, և՛ ստվերոտ կողմերը, բացասական երևույթները, հիացած չէր ինդուստրիալ հասարակությամբ, բայց փորձում էր հասկանալ նրա էությունը, այն բոլոր լավն ու գնահատելին, որ այն իր հետ էր բերել: Քննադատական ռեալիզմի ականավոր ներկայացուցիչներ էին, Օնորե դը Բալզակը, Գ. Մոպասանը, Է. Զոլան Ֆրանսիայում, Չ. Դիկկենսը Անգլիայում, Մարկ Տվենը ԱՄՆ-ում, Ֆ. Դոստոևսկին, Լ. Տոլստոյը Ռուսաստանում: Այդ ազգանուններին պետք է ավելացնել Բ. Շոուն՝ Մեծ Բրիտանիայում, Ջ. Լոնդոնը՝ ԱՄՆ-ում, Թ. Մանը՝ Գերմանիայում, և բազմաթիվ այլ գրողներ աշխարհի տարբեր երկրներում, Հայաստանում՝ Շիրվանզադեն, Հ. Պարոնյանը և ուրիշներ:

Ծաղկում էր նաև թատրոնը, որը մշտապես փնտրտուքի մեջ էր խաղացանկի, խաղառճի և տաղանդավոր դերասանների հարցում: Դասական գործերից բացի բեմադրիչները համարձակորեն դիմում էին այնպիսի դրամատուրգների ստեղծագործություններին, որոնք համեմատաբար նոր անուններ էին թատերական աշխարհում, ինչպես Ա. Չեխովը, Հ. Իբսենը և այլք: Այդ ընթացքում Ռուսաստանում հիմնադրվեցին մի շարք

նոր թատրոններ, ինչպես Մոսկվայի գեղարվեստական թատրոնը, որի հիմնադիրներն էին Կ. Ստանիսլավսկին և Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն, իսկական հայտնություն եղավ հայազգի Եվգենի Վախթանգովը, որի հիմնադրած թատրոնը մինչև օրս պահպանում է իր առաջատար դիրքերը թատերական աշխարհում: Իրենց սքանչելի խաղով հանդիսատեսին հիացնում էին Էլեոնորա Դուզեն, Սառա Բեռնարը, Պետրոս Ադամյանը, Սիրանույշը և այլք:

Քննարկվող դարաշրջանում, 1895 թ. թատերական արվեստը հարստացավ մի նոր տեսակով, որն անվանեցին «կինո»: Նրա հիմնադիրներն էին ֆրանսիացի Լուի և Օգյուստ Լյումիեր եղբայրները: Սկզբնական շրջանում դա համր կինոն էր, որը հետագայում դարձավ ինչյունային:

Անտոն Չեխով (1860–1904 թթ.)

Պյոտր Չայկովսկի (1840–1893 թթ.)

Օգյուստ Ռոդեն (1840–1917 թթ.)

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Երաժշտության բնագավառում շարունակում էին տիրապետել օպերան և սիմֆոնիկ ժանրերը: Օպերայի բնագավառում իտալացի հանճարեղ կմպոզիտոր Ջուզեպպե Վերդիի կողքին ստեղծագործում էին՝ Ռ. Վագները (Գերմանիա), Ժ. Բիզեն (Ֆրանսիա), Պ. Չայկովսկին (Ռուսաստան), Ջ. Պուչինին (Իտալիա) և այլք: Օպերային արվեստի ասպարեզում հայտնվեց Տ. Չուխաջյանը՝ սքանչելի «Արշակ Երկրորդ» օպերայի հեղինակը:

Կերպարվեստի բնագավառում ասպարեզ իջան զանազան «իզմերը», բայց տիրապետող դարձավ իմպրեսիոնիզմը, որի կարկառուն ներկայացուցիչներն էին Մոնեն, Մանեն, Դեգան, Ռենուարը: Այդ ուղղությանը փոխարինելու եկան պոստիմպրեսիոնիստները՝ Կիրիկոն, Մեզանը, Մատիսը և շատ ուրիշներ: Այդ դարաշրջանի մեծանուն նկարիչների շարքում իր մնայուն տեղն ունի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին: XX դարասկզբին շոնդալից էր Մարտիրոս Սարյանի

Հովհաննես Այվազովսկի, Իններորդ ալիք

մուտքը համաշխարհային գեղանկարչության ասպարեզ:

Քանդակագործության բնագավառում հանրահայտ էր Օգյուստ Ռոդենը: Իր ինքնատիպ քանդակներով հայտնի դարձավ Հակոբ Գյուրջյանը:

Մեծ փոփոխություններ եղան ճարտարապետության բնագավառում: Ավանդական ձևերի պահպանմանը զուգընթաց ստեղծվեցին նորարարական ժանրեր, հատկապես ԱՄՆ-ում վեր խոյացած երկնաքերների նորագույն ոճը, որն այնուհետև տարածվեց աշխարհով մեկ: Ճարտարապետությունը հրաժեշտ տվեց միջնադարում տիրապետող շքեղություններին և դարձավ ավելի զուսպ, նախապատվությունը տրվեց կիրառական կողմին: Շինարարության ոլորտ մուտք գործեցին մետաղական կոնստրուկցիաները, ոչ միայն բնակելի շենքերի, այլև կամուրջների և ճանապարհների կառուցման մեջ: Բոլորովին նորություն էր մեծ և խիտ բնակեցված քաղաքներում ստորգետնյա ուղիների՝ մետրոների շինարարությունը:

Նոր շրջանում արվեստի և մշակույթի բնագավառներում եղան նաև այլ նորամուծություններ, որոնք իրենց հետագա բուռն զարգացումն ունեցան նորագույն շրջանում՝ արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տեղաշարժեր կատարվեցին կրթության ոլորտում XIX դ. վերջին և XX դ. սկզբին:
2. Ո՞վ է հոգեբանության ոլորտի նշանավոր ներկայացուցիչը, և ինչպե՞ս էր կոչվում նրա ուսմունքը:
3. Նշեք XIX դ. վերջի և XX դ. սկզբի գրականության բնագավառի ներկայացուցիչներին: Ո՞վ է ձեր սիրած գրողը, ի՞նչ գիտեք նրա մասին: Փորձեք բնութագրել նրան:
4. Ո՞ր ուղղությունները տիրապետող դարձան կերպարվեստում XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Նշեք այդ ուղղությունների ներկայացուցիչներին: Ո՞ր ուղղությունն է ձեզ ավելի դուր գալիս և ինչո՞ւ:

5. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան ճարտարապետության բնագավառում XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Ձեր կարծիքով՝ ի՞նչ տարբերություններ կան XX դ. սկզբների և մեր օրերի շինությունների միջև: Հիմնավորեք ձեր տեսակետը:
6. Լրացրեք «Արդյունաբերական առաջավոր երկրների մշակույթը XIX դ. II կեսին և XX դ. սկզբին» աղյուսակը:

Բնագավառը	Երկիրը	Գործիչը	Գյուտը կամ ստեղծագործությունը	Արդյունքը

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Դրվագ Կլոդ Մանեի կյանքից

Այլ կերպ դասավորվեց Կլոդ Մանեի (1840–1926 թթ.) ճակատագիրը: «Վիճակս գնալով ծանրանում է,– գրում էր նկարիչը 1875 թ. աշնանը: Արդեն երկու օր է, որ ես ոչ մի սանտիմ չունեմ, այլևս ոչ մսագործը, ոչ էլ հացավաճառը ապառիկ մթերք չեն տալիս: Թեև ես հավատում եմ ապագային, բայց ինքներդ էլ տեսնում եք, որ ներկայումս իմ կյանքը շատ ծանր է»: Աղքատությունը գերեզման իջեցրեց Կլոդի ջերմագին սիրած կնոջը՝ Կամիլիային, նկարչի վրա մնաց երկու որդիների հոգսը: Ընտրած ճանապարհի ճիշտ լինելու կասկածները ծվատում էին նրան, բայց Մոնեն աշխատում էր: Նա ձգտում էր գտնել կապը ստվերի և լույսի միջև: Ըստ նրա՝ ստվերը լույսից է ծնվում, ուստի այն փոխվում է լույսի հետ միասին և որոշակի լույս արտացոլում: Ձգտելով բնությունը պատկերել այնպես, ինչպես կա իրականում, Կլոդը մյուս իմպրեսիոնիստների նման աշխատում էր դրսում՝ բաց երկնքի տակ: Նա փորձում էր ցույց տալ շարժման, զարգացման մեջ գտնվող բնության մեծ բազմազանությունը:

Ո՞րն էր տաղանդավոր նկարիչ Կլոդ Մոնեի տխուր ճակատագրի պատճառը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հանուն բարեկեցիկ կյանքի նա տուրք չտվեց այն ժամանակ ընդունված սալոնային գեղանկարչությանը: Կ. Մոնեի ո՞ր ստեղծագործությունն է ձեզ դուր գալիս և ինչո՞ւ: Ինչպե՞ս կարելի է բնութագրել նրան:

II ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Եվրոպայում և Ամերիկայում XIX վերջին տասնամյակներին և XX դ. սկզբներին առժամանակ գրեթե դադարեցին պատերազմները և հեղափոխությունները: Շուրջ կեսդարյա ազատ, անկաշկանդ զարգացումը տվեց վիթխարի արդյունք: Կապիտալիստական (դրամատիրական) տնտեսությունը բոլոր երկրներում թևակոխեց զարգացման նոր փուլ: Ավարտվեց «ազատ մրցակցության կապիտալիզմի» ժամանակաշրջանը: Գիտության և տեխնիկայի բնագավառի հայտնագործություններն ու գյուտերը արտադրության մեջ ներդնելու անհրաժեշտությունը վերափոխեց նրա կազմակերպման բնույթը: Բոլոր երկրներում՝ արտադրության հիմնական ճյուղերում, ընթանում էր կենտրոնացում և խոշորացում: Արտադրությանը անհրաժեշտ էր խոշոր կապիտալ, իսկ այն բոլոր կապիտալիստները չէ, որ ունեին: Ահա թե ինչու տնտեսության հիմնական ճյուղերում առաջացան մոնոպոլիստական միություններ (սինդիկատներ, կոնցեռներ, կարտելներ, տրեստներ), որոնք հնարավորություն տվեցին մեծ, աննախադեպ չափերի հասցնել նյութական բարիքների արտադրությունը: Առավել քան երբևէ, մեծացավ խոշոր բանկերի դերը, որտեղ պահվող հսկայական դրամական միջոցները դրանց տերերի կողմից ներդրվում էին արտադրության մեջ: Մանր ու միջին բանկերի թիվը նվազեց: Այս գործընթացն ուղեկցվում էր ճգնաժամերով, որոնք ամեն անգամ խթանում էին արտադրությունը, նպաստում դրա վերակառուցմանը՝ նոր պայմանների համեմատ: Հարյուր հազարավոր կապիտալիստներ, չդիմանալով մրցակցությանը և արտադրության լարվածությանը սնանկանում էին, դառնում վարձու աշխատողներ:

2. Եվրոպական ազգերի տնտեսական զարգացումը հանգեցրեց մի նոր երևույթի՝ կապիտալի արտահանման: Խոշոր դրամատերերը կախյալ և գաղութային երկրներում կառուցում էին գործարաններ, երկաթուղիներ, ճանապարհներ, արդյունահանում հանքանյութեր, ինչը նրանց հեքիաթային հարստություն էր բերում: Մի քանի անգամ ընդլայնվեց համաշխարհային առևտուրը: Եկան այն ժամանակները, երբ աշխարհի ոչ մի զարգացած ազգ չէր կարող բարգավաճել առանց մյուս երկրների հետ տնտեսական կապերի: Բոլոր երկրները միմյանց հետ սկսեցին հաղորդակցվել երկաթուղային, շոգենավային և հեռա-

գրական կապերով: Մինչև XX դ. դարի սկզբները առաջացավ կապիտալիստական հարաբերությունների համաշխարհային համակարգ: Տնտեսական զարգացման մեծ թռիչքն անհնարին կլիներ առանց ազգային պետականության ամրապնդման: Եվրոպական ազգերը, ԱՄՆ-ը, Ճապոնիան այս բնագավառում ձեռք բերեցին մեծ նվաճումներ: Վրա հասավ ազգային համերաշխության մի ժամանակաշրջան, որի պայմաններում ձևավորվեցին և ամրապնդվեցին ժողովրդավարական կարգերը: Նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ բարձրացավ հասարակության միջին և ստորին խավերի կենսամակարդակը, առաջացավ սոցիալական օրենսդրություն, ամրապնդվեցին խոսքի, մամուլի, ժողովների ու այս կարգի մյուս ազատությունները:

3. Եվրոպական ազգերի, ԱՄՆ-ի և Ճապոնիայի տնտեսական թռիչքը և ազգային պետականությունների հզորացումն էլ ավելի հեշտացրին Ասիայի և հատկապես Աֆրիկայի ժողովուրդների գաղութացումը: Պարարտ հող ստեղծվեց իմպերիալիստական գաղափարների արմատավորման համար, որը վերածվեց ազգային բացահայտ գաղափարախոսության և քաղաքականության: Մեծ թափով շարունակվեց թույլ ազգերի տնտեսական ու քաղաքական հպատակեցումը: Մինչև XIX դ. վերջն ավարտվեց աշխարհի տարածքային բաժանումը Աֆրիկայում, Ասիայում, Խաղաղ օվկիանոսում և այլուր: Ավելի խորացավ Արևելքի թույլ, անկում ապրող պետությունների (Չինաստանի, Իրանի, Օսմանյան կայսրության) կախյալ վիճակը: Մյուս կողմից, այդ ժողովուրդները, ներքաշվելով կապիտալիստական հարաբերությունների մեջ, աստիճանաբար ստեղծում էին սեփական ազգային տնտեսություն, ձգտում ազատվել օտարների հսկողությունից: Ահա թե ինչու այդպիսի երկրներում հեղափոխությունները և ազատագրական շարժումները շարունակվեցին: Այդպիսիք էին 1905-1907 թթ. ռուսական, 1908-1909 թթ. օսմանյան, 1905-1911 թթ. իրանական, 1911-1912 թթ. չինական հեղափոխությունները և մյուս շարժումները: Կայսրությունների քայքայումը և ազգային պետությունների ստեղծումը այս դարաշրջանում դարձան անխուսափելի:

4. Այս շրջանում առանձնակի ուժով սրվեցին հակասությունները հզոր ազգերի միջև: Մինչև XX դ. սկիզբը Եվրոպայում առաջացան երկու ռազմաքաղաքական դաշինքներ (Եռյակ դաշինք և Անտանտ), որոնց միացած երկրները տենդագին զինվում էին և պատրաստվում պատերազմի: Այս գործընթացն ուղեկցվում էր պատերազմներով,

քաղաքական ձգնաժամերով և սպառնալիքներով: Աշխարհի բոլոր անկյուններում տիրում էին ազգայնականությունը և ազգային շահերի առաջնայնությունը մնացյալ ամեն ինչի նկատմամբ: Ծավալապաշտական այս քաղաքականությունը հանգեցրեց համաշխարհային պատերազմի: Առաջին աշխարհամարտը (1914–1918 թթ.) մեծ աղետներ բերեց աշխարհի ժողովուրդներին, հատկապես նրանց, ովքեր ձգտում էին ձեռք բերել անկախություն և ազգային պետականություն իրենց պատմական հողերում:

5. Այս շրջանում ծաղկում ապրեց նյութական և հոգևոր մշակույթը: Լուրջ նվաճումներ ձեռք բերվեցին գիտության և տեխնիկայի բնագավառում: Գիտությունները դարձան ավելի բազմաձյուղ ու բազմաբնույթ: Կատարվեցին մարդկության համար բախտորոշ բազմաթիվ հայտնագործություններ, որոնցից են՝ ռադիոալիքները, ռենտգենյան ճառագայթները, էլեկտրոնները, ռադիոակտիվությունը և այլն: Սրանցով հիմք դրվեց ատոմի կառուցվածքի ուսումնասիրմանը:

Վիթխարի նվաճումների հասավ տեխնիկան, որն արագորեն ներդրվում էր արտադրության բազմաթիվ ոլորտներում: Ամենակարևոր նվաճումները ձեռք բերվեցին մեքենաշինության բնագավառում, որը հանգեցրեց զանգվածային, անընդմեջ և ավտոմատացված արտադրության ստեղծմանը: Մարդու մեծագույն նվաճումների թվին էին դասվում էլեկտրաէներգիայի ստացումն ու կիրառումը արդյունաբերության, փոխադրամիջոցների մեջ և կենցաղում:

Ստեղծվեցին էլեկտրական վառարանները, որոնց շնորհիվ հետագայում էլ ավելի կատարելագործվեցին մետաղի արտադրությունը և մշակումը:

Հսկայական հաջողություններ ունեցան գրականությունը և արվեստը: Ստեղծվեցին գրականության, երաժշտության, թատրոնի, կերպարվեստի և ճարտարապետության հրաշալի կոթողներ: Գրականության և արվեստի մեջ առաջ եկած զանազան ուղղություններն ու դպրոցները (նատուրալիզմ, սիմվոլիզմ, ռեալիզմ, ռոմանտիզմ և այլն), իրենց ընդհանրություններով հանդերձ, խորապես ազգային երանգ ունեին և արտացոլում էին յուրաքանչյուր ազգի յուրահատուկ հոգեբանությունը և զարգացման առանձնահատկությունը: Համաշխարհային մշակույթի զարգացման գլխավոր դարբնոցը Եվրոպան և Ամերիկան էին, որոնց կամա թե ակամա հետևում էին մյուս աշխարհամասերի ժողովուրդները:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նշե՛ք արդյունաբերական հասարակության հիմնական գծերը: Փորձեք դրանք կոնկրետացնել եվրոպական առաջատար երկրներից մեկի օրինակով: Թվարկեք այն երկրները, որոնցում արդյունաբերական զարգացումը ընթացել է արագ և կայուն:

2. Ձեր կարծիքով՝ ի՞նչ ազդեցություն է ունեցել XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի տեխնիկական առաջընթացը մարդկանց կյանքի վրա: Բերեք փաստարկներ ձեր տեսակետի օգտին:

3. Բնակչության ի՞նչ նոր խավեր, ի՞նչ նոր հիմնախնդիրներ և նոր արժեքներ են առաջացել արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում: Դրանցից որո՞նք եք դուք ընդունում, և որո՞նք են արդիական:

4. Հասարակական-քաղաքական ի՞նչ ուսմունքներ են զարգանում XIX դ. և XX դ. սկզբներին: Ինչո՞վ էր պայմանավորված դրանց առաջացումը: Ձեր կարծիքով՝ այդ ուսմունքներից որո՞նք կարողացան գործնականորեն ապացուցել իրենց կենսունակությունը:

5. Ինչո՞վ են պայմանավորված XIX դ. և XX դ. սկզբների հեղափոխությունները: Ի՞նչ դեր են խաղացել դրանք սոցիալական հակասությունների լուծման գործում: Հակասությունների լուծման ո՞ր ուղին եք համարում նախընտրելի: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը փաստերով:

6. Լրացրե՛ք «Եվրոպան, ԱՄՆ-ը և Արևելքի երկրները» համաժամանակյա աղյուսակը:

Տարեթիվ	Իրադարձություններ		
	Եվրոպա	ԱՄՆ	Արևելքի երկրներ
1860-1880 թթ.			
1880-1900 թթ.			
1900-1910 թթ.			

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

(տերմինները բացատրված են այն իմաստով, ինչ դրանք ունեն դասագրքում)

Ազգային գվարդիա (իտալերեն՝ պահակ, պաշտպանում) – Զինված քաղաքացիական աշխարհազոր, որը գոյություն է ունեցել XVIII–XIX դդ. Ֆրանսիայում և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում: Ազգային գվարդիան ստեղծվեց Ֆրանսիական մեծ հեղափոխության սկզբում, Բաստիլի գրավումից հետո: 1871 թ. մարտին ստեղծված Փարիզի կոմունայի ժամանակ Ազգային գվարդիան դարձավ պրոլետարիատի դիկտատուրայի զինված ուժերի հիմքը:

Ազատ մրցակցության կապիտալիզմ – Կապիտալիզմի զարգացման առաջին փուլը (XIX դարի սկզիբ – XIX դարի 60–70-ական թթ.), երբ ձեռնարկատերերի միջև տեղի է ունենում ոչնչով չսահմանափակված մրցակցություն ապրանքների արտադրության և վաճառահանման այնպիսի բարենպաստ պայմանների համար, որով ապահովվում է առավելագույն շահույթ:

Ազգային կոնվենտ– Առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմին 1792–1795 թթ. Ֆրանսիայում:

Ազգային հեղափոխություն – Հեղափոխություն, որն ուղղված է ոչ միայն հին կարգերի, այլև օտար տիրապետության դեմ և հետապնդում է անկախ պետականության վերականգնման և միավորման նպատակ: Այդպիսին էին օրինակ՝ 1848–1849 թթ. հեղափոխությունները Իտալիայում, Ավստրո-Հունգարիայում:

Ակադեմիա – Գիտական, ուսումնական և այլ մշակութային հիմնարկների անվանումը: Ակադեմիա էին անվանում Աթենքում Ք.ա IV դ. Պլատոնի ստեղծած դպրոցը:

Ահաբեկչություն (տեռոր, լատ.՝ վախ, սարսափ) – Մարդկանց ահաբեկում (սպանություն, հետապնդում, բանտարկում, առևանգում) քաղաքական համոզմունքների և գաղափարների համար: Այն ավելի մեծ չափեր է ընդունում հեղափոխությունների ժամանակ:

Անգլիկան եկեղեցի – XVI դ. կաթոլիկ եկեղեցուց անջատված և Հռոմի պապից անկախ Անգլիայի պետական եկեղեցու անվանումը:

Աշխարհի անհամաչափ զարգացում – Կապիտալիստական հասարակարգին բնորոշ երևույթ, որն ի հայտ է գալիս արդյունաբերական երկրների տնտեսական և քաղաքական զարգացման որոշակի փուլում, երբ մի շարք երկրներ սկսում են արագ զարգանալ և առաջ անցնել նախկինում զարգացման տեմպերով իրենց գերազանցող առաջատար երկրներից: Այսպես, Անգլիան, որը XVIII դարի վերջին և XIX դարում արդյունաբերական տեսակետից ամենազարգացած երկիրն էր, արդեն նույն դարի վերջին իր տեղը զիջում է ԱՄՆ-ին և Գերմանիային, որոնց հետագա ծավալումն անհնար է դառնում առանց գաղութների, վաճառահանման շուկաների և ազդեցության ոլորտների վերաբաժանման:

Ազգային պետություն – Նոր ժամանակներում առաջացած պետություն, որը կոչված էր արտահայտելու տվյալ ազգի իդեալը, հավաքական կամքն ու վճռականությունը նրա առջև ծառացած պատմական հիմնախնդիրների լուծման գործում:

Անտանտ (ֆրանսերեն՝ համաձայնություն) – Օգտագործվում է որպես պետական, քաղաքական, այդ թվում և ռազմական խմբավորումների, դաշինքների և բլոկների

անվանում: Ամենահայտնին՝ 1893-1907 թթ. ձևավորված ֆրանս-ռուս-անգլիական եռյակ համաձայնությունն էր:

Ավանդական հասարակություն – Ավանդույթների վրա հիմնված հասարակություն, որտեղ ամեն ինչ ուղղված է սովորույթների և արժեքների պահպանմանը, և մարդիկ ապրում են չխախտելով իրենց նախնիների օրենքները:

Ավանդույթ (լատ.՝ տրադիցիա-փոխանցել) – Հոգևոր արժեքների փոխանցում սերնդեսերունդ:

Արդիականացում (մոդեռնիզացիա) – Արդյունաբերականացման հիման վրա հասարակական կյանքի բոլոր կողմերն (տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական) ընդգրկող փոփոխություններ, որոնց արդյունքում ավանդական հասարակությունը վերափոխվում է ինդուստրիալ հասարակության:

Արհեստակցական միություններ (արհմիություններ)- Բանվորներին ըստ մասնագիտության միավորող զանգվածային կազմակերպություններ, որոնք կոչված են պաշտպանելու նրանց և բոլոր աշխատավորների շահերն ու իրավունքները: Առաջին արհեստակցական միություններն ստեղծվել են վաղ արդյունաբերական հասարակություններում:

Արդյունաբերական (ինդուստրիալ) **հասարակություն** – Հասարակություն, որին բնորոշ են աշխատանքի բաժանումը, ապրանքների զանգվածային արտադրությունը, արտադրության մեքենայացումը և ավտոմատացումը, քաղաքների բուռն վերելքը, պետության կարգավորիչ դերի բարձրացումը:

Արդյունաբերական հեղաշրջում – Անցումը ձեռքի աշխատանքից մեքենայական աշխատանքի, որի ընթացքում առաջանում են արդյունաբերական բուրժուազիան և բանվորությունը:

Բաբիական շարժում – Ժողովրդական շարժում Իրանում XIX դարի 40-ական թթ., որն ուղղված էր ավատատիրական կարգերի, օտարերկրյա կապիտալի ներթափանցման դեմ և ուներ կրոնական բնույթ: Այս շարժման գաղափարական առաջնորդը Սեյիդ Ալի Մոհամեդն իրեն հայտարարեց Բաբ՝ (որտեղից էլ շարժման անվանումը) դուռ ծշմարտության, որի միջոցով որպես մարգարե մարդկանց հաղորդում է Իրանում արդարության, հավասարության, սրբազան թագավորություն ստեղծելու իր կամքի մասին:

Բանկ (լատ.՝ դրամափոխի աթոռ) – Կապիտալիստական ձեռնարկություն, որն իրականացնում էր դրամական կապիտալի առուծախ՝ ընդունում է ավանդներ և տրամադրում վարկեր: Բանկի միջոցով ազատ կապիտալը մտնում է շրջանառության մեջ, նպաստում տնտեսության զարգացմանը:

Բանող մեքենա – Այն մեքենան է (կամ նրա մասը), որն անմիջականորեն մշակում է հումքը՝ փոխարինելով մարդու ձեռքին:

Բանվոր դասակարգ (պրոլետարիատ, լատ. միայն սերունդ ունեցող) – Արդյունաբերական հասարակության հիմնական դասակարգերից մեկը, վարձու բանվորների ամբողջություն, որը պատմականորեն առաջացել է կապիտալիստական հասարակության ձևավորման ընթացքում: Զրկված լինելով արտադրության միջոցների սեփականությունից՝ բանվորներն ապրում էին վաճառելով իրենց աշխատուժը:

Բարիկադ – Գերաններից, ավազով լցված պարկերից, քարերից պատրաստված արգելափակոց, որը կիրառվում է փողոցային մարտերի ժամանակ:

Բարոկկո (իտալ.՝ պաճուճված, տարօրինակ) – XVI դ. վերջին – XVIII դ. առաջին

կեսին եվրոպական արվեստում տարածված ոճ, որին հատուկ են վիթխարի չափերը, ճոխությունը, շարժունությունը, հզոր ներգործությունը և այլն:

Բացարձակ միապետություն (լատ.՝ աբսոլյուտ-անկախ) – Պետություն, որտեղ միապետն ունի անսահմանափակ և բացարձակ անկախ իշխանություն:

Բիլլ – Օրինագիծ, որը պառլամենտի քննարկմանն է ներկայացվում Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և մի քանի այլ անգլիախոս երկրներում:

Բլոկադա (շրջափակում) – Տնտեսական կամ քաղաքական բնույթի բռնի միջոցառումների համակարգ, որն ուղղված է որևէ պետության (տարածքի) մեկուսացմանը, նրա հետ արտաքին կապերի խզմանը: Համարվում է նաև պատերազմի յուրահատուկ ձև:

Բողդիխան (մոնղ.՝ սրբազան տեր, թագավոր) – Կայսրերի անվանում Չինաստանում (մանջուրական ցին արքայատոհմի կայսրերը):

Բորսա (լատ. բիրժա – քսակ, դրամապանակ) – Հիմնարկություն (շուկա), որտեղ կատարվում են տնտեսական և ֆինանսական մեծ գործարքներ՝ արժեթղթերի, արտարժույթի, ապրանքների, աշխատուժի և այլնի առք ու վաճառք:

Բուրժուազիա (լատ. բուրգ՝ քաղաք-ամրոց, քաղաքացի) – Կապիտալիստների դասակարգը, որը տիրում էր արտադրության միջոցների և կիրառում վարձու աշխատանք:

Գաղութ – Որևէ պետության իշխանության տակ գտնվող երկիր, որը զրկված է ինքնուրույնությունից և ազատ զարգացման հնարավորությունից:

Գաղութացում – Որևէ տարածքի բռնազավթում և բնակեցում, որն ուղեկցվում է տեղական բնակչության թալանով և ոչնչացմամբ:

Գլխավոր շտաբներ – Դասային ներկայացուցչական բարձրագույն մարմին XIV–XVII դդ. Ֆրանսիայում:

Դասեր – Պետության կողմից ճանաչված մարդկանց խմբեր, որոնք ունեն իրենց իրավունքները, պարտականությունները, բարքերը, սովորույթները՝ ամրագրված ավանդույթներում կամ օրենքով, և փոխանցվում է ժառանգաբար:

Դեպարտամենտ – Վարչական միավոր Ֆրանսիայում: Մի շարք երկրներում նախարարությունների անվանումը:

Դիկտատուրա (լատ.՝ դիկտատոր՝ պատվիրել, կարգադրել) – Բռնության վրա հիմնված, մեծ իրավունքներ ունեցող իշխանություն: Այն կարող է իրականացնել մեկ անձ (օրինակ՝ Օ. Կրոմվելը), կուսակցություն (օրինակ՝ յակոբինյան, բոլշևիկյան դիկտատուրան) և այլն:

Դիրեկտորիա (ֆրանս. և լատ.՝ կառավարություն, ղեկավարություն) – Առաջին հանրապետության գործադիր իշխանության մարմին՝ կառավարություն Ֆրանսիայում 1795–1799 թթ., որը ղեկավարում էին Կոնվենտի կողմից ընտրված հինգ դիրեկտորները:

Ենիչերի (թուրք.՝ նոր զորք) – Օսմանյան հետևակ զորամաս: Դրանք ստեղծվում էին քրիստոնյաների երեխաներից, որոնց փոքր հասակում բռնությամբ խլում էին ծնողներից, դաստիարակում և դարձնում մոլի մահմեդականներ:

Եռյակ դաշինք – Ռազմաքաղաքական խմբավորում, որն ստեղծվել է 1879–1882 թթ. Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև կնքված պայմանագրերի արդյունքում և ուղղված էր Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեմ:

Երիտթուրքեր – 1889 թ. ստեղծված «Միություն և առաջադիմություն» թուրքական բուրժուազգայնական կուսակցության անդամների եվրոպական անվանումը: Նրանք պայքարում էին ավատատիրական կարգերի և բացարձակ միապետության դեմ: 1908 թ. նրանց հաջողվեց գրավել իշխանությունը, և Թուրքիան դարձավ սահմանադրական միապետություն:

Երկմիասնական (դուալիստական) **պետություն** – Այսպես էր անվանվում 1867թ. Ավստրիական կայսրության փոխարեն ստեղծված Ավստրո–Հունգարիան: Ավստրիան և Հունգարիան ունեին իրենց տարածքները, բարձրագույն օրենսդիր իշխանությունը: Պետության գլուխ կանգնած էր կայսրը՝ Հաբսբուրգների արքայատոհմից:

Թանզիմաթ (արաբ.՝ կարգավորում, բարեփոխում) – Բարեփոխումների դարաշրջան Օսմանյան կայսրությունում, որը ընդգրկում է XIX դ. 40–60–ական թթ.: Բարեփոխումները, որոնք նպատակ ունեին փրկել անկում ապրող օսմանյան պետությունը, գրեթե ձախողվեցին:

Թեթև արդյունաբերություն – Արդյունաբերության այն ճյուղերը, որոնք արտադրում են առաջին անհրաժեշտության սպառման ապրանքներ՝ հագուստ, սնունդ և այլն:

Թորի – Քաղաքական կուսակցություն Անգլիայում, որն առաջացավ XVII դ. վերջին: XIX դ. ստացավ պահպանողական անվանումը:

Թրեյդ–յունիոն (անգլ. թրեյդ՝ մասնագիտություն, յունիոն՝ միություն) – Արհմիությունների անվանումը Մեծ Բրիտանիայում:

Ժիրոնդիստներ – Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ Օրենսդիր ժողովում և Կոնվենտում ձևավորված խումբ (խմբակցություն), որի եռանդուն գործիչներից շատերը եղել են Ժիրոնդա դեպարտամենտից (նահանգ) ընտրված պատգամավորները:

Ժողովրդավարություն (հուն.՝ դեմոկրատիա,) – Քաղաքական համակարգի ձև, որտեղ ժողովուրդը հաստատված օրենքներով մասնակցում է իշխանության ստեղծմանը: Դրա համար սահմանվում են քաղաքացիների իրավահավասարությունը, ընդհանուր ընտրական իրավունքը, ինչպես նաև խոսքի, ժողովների և այլ ազատություններ, որոնք հաստատվում են սահմանադրությամբ:

Իմպրեսիոնիզմ (ֆր.՝ տպավորություն) – Ռեալիստական ուղղություն ֆրանսիական և եվրոպական արվեստում XIX դարի վերջին քառորդում XX դ. սկզբին: Իմպրեսիոնիստները ձգտում էին ցույց տալ իրական աշխարհը նրա ակնթարթային անկրկնելիության և մշտական շարժման մեջ: Նրանց ստեղծագործությունների հիմքում ընկած էր «Նկարիչը պետք է նկարի միայն այն, ինչ նա տեսնում է, և այնպես, ինչպես նա տեսնում է» սկզբունքը:

Իմպերիալիզմ (լատ.՝ իշխանություն բառից) – Կապիտալիզմի զարգացման նոր փուլ, որը ձևավորվեց XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Այդ փուլին հատուկ են մոնոպոլիաների առաջացումը, կապիտալի արտահանումը և այլն:

Ինդուստրիա (լատ.՝գործունեություն) – Արդյունաբերություն՝ գործարանների ֆաբրիկաների, հանքերի, էլեկտրակայանների և այլ արտադրական հիմնարկների ամբողջություն: Այն իր մեջ ներառում է արտադրության միջոցների և սպառման առարկաների արտադրությունը:

Ինքնակալություն – Նույն է՝ բացարձակ միապետություն:

Լիբերալիզմ (լատ.՝ ազատ) – Քաղաքական և գաղափարական հոսանք, որն

առաջացավ XIX դարի սկզբին: Այն դեմ էր հասարակության հեղափոխական վերափոխմանը, կողմ՝ աստիճանական բարեփոխումներին: Պահանջում էին սահմանադրական կարգի ստեղծում և ժողովրդավարություն: «Լիբերալ» անվանումով կուսակցություններ կան Անգլիայում, Գերմանիայում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում:

Լուսավորության դար (լուսավորականություն) – Այդպես են անվանում XVIII դարը, երբ Ֆրանսիայում և մյուս երկրներում առաջադեմ մտավորականները հանդես եկան հին կարգերի դեմ: Նրանք պահանջում էին մարդու բնական իրավունքների պաշտպանություն, հասարակարգի բանական վերակառուցում առանց կրոնական նախապաշարումների, սահմանադրական կարգի ստեղծում և այլն:

Խարտիա (հուն.՝ թուղթ) – Հրովարտակ, քաղաքական փաստաթուղթ: Խարտիա են անվանում նաև առանձին միջազգային փաստաթղթերը և համաձայնագրերը:

Խղճի ազատություն – Մարդու իրավունքը՝ դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մեկը:

Ծանր արդյունաբերություն – Արդյունաբերության այն ճյուղերը, որոնք արտադրում են արտադրության միջոցներ՝ մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ, մետաղ և այլն:

Կապիտալ (լատ.՝գլխավոր, գերմ և ֆրանս.՝ գլխավոր ունեցվածք, գլխագումար) – Հարստություն, ունեցվածք, որը նրա տիրոջը՝ կապիտալիստին (ձեռներեցին, գործարարին), շահույթ է բերում:

Կապիտալիզմ – Հասարակարգ, որը հիմնված է մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության վրա:

Կարտել (ֆրանս. և իտալ. թուղթ, փաստաթուղթ) – Ձեռնարկությունների միավորման ձև, որի մասնակիցները պահպանելով իրենց արտադրական և առևտրական ինքնուրույնությունը՝ համաձայնության են գալիս արտադրության ծավալների, վաճառահանման շուկաների, վաճառքի պայմանների, գների և այլնի վերաբերյալ:

Կարտոֆիլային հիվանդություն – Կարտոֆիլի պալարների սնկային հիվանդություն, որը 1845–1847 թթ. զանգվածային աղետ դարձավ Ֆրանսիայում և ծանր հարված հասցրեց հատկապես աղքատներին, որոնց համար կարտոֆիլը հիմնական սնունդ էր:

Կոալիցիա (լատ. միավորել) – Պետությունների քաղաքական և ռազմական դաշինք միջազգային հարաբերություններում այս կամ այն համատեղ գործողություններն իրականացնելու համար:

Կոդեքս (լատ. գիրք) – Օրենքների համակարգված ժողովածու:

Կոնսուլություն – Ֆրանսիայում կառավարման ձև 1799–1804 թթ.: Իշխանությունն ստանձնեցին 10 տարով ընտրված 3 կոնսուլները: Այդ ինստիտուտը կար նաև Հռոմեական կայսրությունում:

Կոնցեռն (անգլ. և լատ. խառնվել)– Տարբեր ճյուղերի ձեռնարկությունների միավորման ձև, որը բնութագրվում է այդ ձեռնարկությունների կառավարման ինքնուրույնությամբ, մատակարարման և կապիտալի կենտրոնացման բարձր ծավալով:

Կոնֆեդերացիա (լատ. պայմանագրով կապված, միացած) – Պետական միավորման ձև, որի կազմի մեջ մտնող պետություններն ավելի շատ իրավունքներ ունեն, քան միութենական ղեկավար մարմինը:

Կուսակցություն – Ընդհանուր քաղաքական նպատակներ և գաղափարներ

ունեցող համախոհ մարդկանց կազմակերպություն: Կուսակցությունը արտահայտում է հասարակության կամ նրա մի մասի շահերը: Իր նպատակները իրագործելու համար կուսակցությունը ձգտում է իշխանության:

Հանրապետություն –Պետական կառավարման ձև, որում ի տարբերություն միապետության, բարձրագույն իշխանությունը պատկանում է որոշակի ժամկետով ժողովրդի կողմից ընտրված մարմիններին:

Հեղափոխություն – (լատ.՝ ռևոլյուցիա՝ թռիչք, հեղաշրջում)– Այստեղ՝ հասարակարգի բռնի վերացում, արմատական, միանգամից վերափոխում, անցում մի հասարակարգից մյուսին:

Մանուֆակտուրա (լատ. ձեռքով պատրաստված) – Կապիտալիստական ձեռնարկություն, որտեղ գոյություն ուներ աշխատանքի բաժանում, և կիրառվում էր ձեռքի աշխատանքը:

Մեջլիս (արաբ.՝ ժողով) – Իրանում և մի քանի այլ երկրներում պառլամենտի անվանումը:

Մետրոպոլիա (հուն.՝ մայր և քաղաք) – Այսպես էին անվանվում այն պետությունները, որոնք ունեին գաղութներ:

Միկադո (ճապ. բառ.՝ վեհ, փառահեղ դարպաս) – Ճապոնիայի միապետի տիտղոսը:

Մոնոպոլիա (հուն.՝ մեկ և վաճառում եմ բառերից) – ա) թագավորի կողմից որևէ մեկին տրված մենաշնորհ առանձին ապրանքների առևտուր կատարելու համար, բ) իմպերիալիզմի դարաշրջանում առաջացած կապիտալիստների միավորում, որն իր մենաշնորհին է դարձնում որևէ արտադրաճյուղ:

Մոնոպոլիստական կապիտալիզմ (տես նաև իմպերիալիզմ) – Կապիտալիզմի զարգացման փուլ սկսած XIX դարի 70–80–կան թթ., երբ կապիտալիստների ազատ մրցակցությանը փոխարինում են նրանց փոխադարձ համաձայնության արդյունքում ստեղծված հզոր ֆինանսական և արդյունաբերական միավորումները և ընկերությունները:

Յակոբիններ – Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ Յակոբինյան ակումբի անդամները և նրանց հետևորդները, որոնք փաստացի, կազմելով քաղաքական կուսակցություն, պահանջում էին արմատական բարեփոխումներ և հեղափոխության խորացում: Նրանք յակոբիններ են կոչվել Փարիզի Ս. Հակոբ վանքի անունով, որտեղ գտնվում էր նրանց ակումբի կենտրոնը:

Յունկեր (գերմ. յունգ հեր–երիտասարդ մարդ) – Ազնվական հողատեր, կալվածատեր Պրուսիայում:

Նոր ազնվականություն – Հողատեր ազնվականության այն մասը, որը տնտեսությունը վարում է նոր կապիտալիստական ձևով՝ կիրառելով վարձու բանվորների աշխատանքը:

Շրջափակում (բլոկադա) – Բռնի, ռազմական միջոցառումների համակարգ, որի նպատակն է տվյալ տարածքը մեկուսացնել աշխարհից:

Չարտիզմ (խարտիա բառի անգլ. չարտեր անվանումից) – Հասարակական–քաղաքական զանգվածային շարժում Անգլիայում, որի հիմնական պահանջն էր ընդհանուր ընտրական իրավունքը և պետական կարգի ժողովրդավարացումը:

Պանթուրքիզմ – Թուրքական ազգայնական գաղափարախոսություն, որն Առաջին աշխարհամարտի նախօրյակին դարձավ տիրապետող գաղափարախոսություն

Օսմանյան կայսրությունում: Այն նախատեսում էր մեկ պետության մեջ միավորել թյուրքալեզու ժողովուրդներին և ոչնչացնել այդ գործին խանգարող ազգերին:

Պանհպանողականություն (կոնսերվատիզմ) – Գաղափարաքաղաքական հոսանք, որը հենվում է հասարակության ավանդական արժեքների և հին կարգերի պահպանման գաղափարի վրա:

Պետիցիա (լատ.՝ խնդրանք) – Կոլեկտիվ խնդրանք, հանրագիր կամ դիմում իշխանություններին:

Պլանտացիա (լատ.՝ նշ. տնկարան) – Խոշոր հողատիրական տնտեսություն ԱՄՆ-ի հարավային նահանգներում, որը հիմնված էր ստրկական աշխատանքի վրա և աշխատում էր շուկայի համար:

Պրոտեկտորատ – 1) Կառավարման ձև Անգլիայում 1653-1658 թթ., երբ հանրապետության գլուխ կանգնում է ցմահ լորդ-պրոտեկտորը: 2) Պետական կախվածության ձև, որի մեջ հայտնված պետությունը, ներքին հարցերում ունի որոշ ինքնուրույնություն, իսկ նրա արտաքին քաղաքականությունը որոշում է մայր (գաղութատերը) երկիրը:

Պուրիտաններ – Անգլիկան եկեղեցու բարեփոխման հետևողական կողմնակիցներ Անգլիայում XVI-XVII դդ., որոնց նպատակն էր եկեղեցին մաքրել շռայլություններից և ծոխ ծիսակատարություններից:

Ռիսորջիմենտո (իտալ.՝ վերածնություն) – Հասարակական-քաղաքական և մշակութային շարժում Իտալիայում (XVIII դ. վերջ – XIX դ. երկրորդ կես), որը նպատակ ուներ վերածնել միասնական պետությունը, ազատագրվել օտար լծից:

Սահմանադիր ժողով – Իշխանության ժամանակավոր մարմին, որը մշակում ու հաստատում է Սահմանադրությունը և ինքնալուծարվում:

Սահմանադրական (սահմանափակ) **միապետություն** – Պետություն, որտեղ թագավորի կամ միապետի իշխանությունը սահմանափակվում է ներկայացուցչական մարմնով և որպես կանոն ամրագրվում սահմանադրությամբ:

Սահմանադրություն (լատ. կոնստիտուցիո – հաստատել, սահմանել) – Պետության հիմնական օրենքը:

Սինդիկատ (հուն. համատեղ գործող) – Ձեռնարկությունների միավորման ձև, որն արտադրական ինքնուրույնության պահպանման պայմաններում իր վրա է վերցնում ողջ առևտրական գործունեության իրականացումը (գների սահմանում, հումքի գնում, արտադրանքի արտահանում և այլն):

Սիփահի (պարսկ. զինվոր, մարտիկ բառից) – 1. Հեծյալ զինվոր թուրքական ավատական հեծելազորում, որը իրավունք ուներ հանդերձավորման և սննդի համար իրեն հատկացված հողամասից հարկեր հավաքել: 2. Հնդիկ վարձկան զինվոր անգլիական բանակում:

Սոցիալ-դեմոկրատիա – Բանվորների շահերը պաշտպանող կուսակցությունների ընդհանուր անվանումը Եվրոպայում և այլ երկրներում:

Սոցիալիզմ (լատ. և ֆրանս.՝ հասարակական բառից) – Ուսմունք, որում որպես նպատակ առաջ են քաշվում սոցիալական արդարության, ազատության և հավասարության սկզբունքները:

Սրբազան դաշինք – Հեղափոխական ցնցումներից պաշտպանվելու նպատակով Վիեննայի կոնգրեսից հետո եվրոպական միապետների կողմից ստեղծված դաշինք (թագավորների դաշինքը ընդդեմ ժողովուրդների): Այդ դաշինքով նրանք

պարտավորվում էին օգնել միմյանց «հանուն կրոնի», պահպանել խաղաղությունը Եվրոպայում և ճնշել հեղափոխությունները, որտեղ էլ դրանք սկսվեն:

Վերականգնման (ռեստավրացիա) **ժամանակաշրջան** – Վիեննայի կոնգրեսին հաջորդած տարիները, որի ընթացքում պետք է վերականգնվեր և պահպանվեր ֆրանսիական մեծ հեղափոխության հետևանքով Եվրոպայում խախտված օրինական կարգ ու կանոնը, հաստատվեր հավասարակշռություն:

Վիգ – Քաղաքական կուսակցություն Անգլիայում, որն առաջացավ XVII դ. վերջին: XIX դ. երկրորդ կեսին ստացավ լիբերալ անվանումը:

Տեխնոլոգիա – Նյութի, հումքի մշակման մեթոդների ամբողջություն արտադրության գործընթացում:

Տնտեսական (գերարտադրության) **ճգնաժամ** – Տնտեսական աճի անկման և տնտեսության զարգացման ընթացքում խախտված համամասնության բռնի վերականգնում: Ճգնաժամը վրա է հասնում այն ժամանակ, երբ շուկա է մտնում ավելի շատ ապրանք, քան կարող է գնել բնակչությունը: Սկսում են գներն ընկնել, շատ ձեռնարկությունները սնանկանում են, արտադրությունը կրճատվում է, բանվորները ազատվում են աշխատանքից, մեծանում է գործազրկությունը:

Տրեստ (անգլ.՝ վստահություն, հավատ) – Ձեռնարկությունների միավորման ձև, որի դեպքում ձեռնարկությունները միավորվելով՝ ամբողջությամբ կորցնում են իրենց ինքնուրույնությունը և ենթարկում մեկ միասնական ղեկավարության (ղեկավար կենտրոնի):

Ցեղասպանություն (գենոցիդ–հուն. ցեղ և լատ. սպանել) – Պետականորեն մշակված ծրագիր և դրա իրագործման գործողություններ, որոնք կիրառվում են որևէ ազգի, ցեղային կամ կրոնական համայնքի նկատմամբ նրանց լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով (օրինակ՝ երիտթուրքերի կողմից 1915–1916 թթ. իրականացված հայոց Մեծ եղեռնը):

Փարիզի կոմունա– Համաշխարհային պատմության մեջ պետության նոր տիպ՝ բանվոր դասակարգի ընտրովի իշխանություն՝ հիմնված ժողովրդավարական սկզբունքների վրա, պրոլետարիատի դիկտատուրայի նախաձև:

Օմնիբուս– Քաղաքային երթևեկության համար օգտագործվող ձիաքարշ մեծ ծածկակառք:

Օսմանիզմ– Թուրք ազգայնականների շարժում XIX դ. 60–70–ական թթ.: Շարժման մասնակիցները՝ «նոր օսմանները», պայքարում էին Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին թուրքացնելու և մեկ օսմանյան ազգ ստեղծելու համար:

Ֆաբրիկա (լատ. արհեստանոց)– Արդյունաբերական ձեռնարկություն, որտեղ հիմնական գործողությունները իրագործում է մեքենաների համակարգը:

Ֆեդերացիա (լատ.՝ միություն, միավորում)– Դաշնություն: Այնպիսի դաշնային միություն, որի դեպքում ստեղծվում է մեկ միասնական պետություն, որի լիազորություններն ավելի մեծ են, քան միության մեջ մտնող անկախ պետությունների իրավունքները: Իրավունքների չափը որոշվում է դաշնային Սահմանադրությամբ:

Ֆերմեր–Գյուղատնտեսական ձեռնարկության տեր, ագարակատեր:

Ֆերման–Սուլթանական հրովարտակ, հրամանագիր:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1587–1629 թթ.	Շահ Աբասի գահակալումը:
1600 թ.	Անգլիական Արևելահնդկական ընկերության ստեղծումը:
1625–1649 թթ.	Չարլզ I–ի գահակալումը:
1640–1660 թթ.	Անգլիական բուրժուական հեղափոխությունը:
1640 թ.	Երկարատև պառլամենտի հրավիրումը Անգլիայում:
1644–1911 թթ.	Մանջուրական ցին արքայատոհմը Չինաստանում:
1642–1649 թթ.	Քաղաքացիական պատերազմ Անգլիայում:
1645 թ.	Նեյզբիի ճակատամարտը:
1649 թ. հունվարի 30	Չարլզ I–ի մահապատիժը:
1653 թ.	Օլիվեր Կրոմվելի կողմից Երկարատև պառլամենտի ցրումը:
1688– 1689 թթ.	«Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում: Վիլ–հելմ Օրանացու հաստատվելը անգլիական թագին:
1725 թ.	Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հիմ–նադրումը:
1740–1786 թթ.	Ֆրիդրիխ II–ի գահակալումը Պրուսիայում:
1757 թ.	Պլեսսիի ճակատամարտը: Եվրոպացիների՝ Չինաստան մուտք գործելու արգելումը կառավարության կողմից:
1762–1796 թթ.	Եկատերինա II–ի գահակալումը Ռուսաստանում:
1765 թ.	«Ջեննի» ճախարակի հնարումը:
1765–1790 թթ.	Յոզեֆ II–ի գահակալումը:
1771 թ.	Աշխարհում առաջին ֆաբրիկայի կառուցումը:
1773 թ.	«Բոստոնյան թեյախմությունը»:
1775 թ. մայիս	Գաղութների ներկայացուցիչների II համաժողովի (կոնգրես) գումարումը Ֆիլադելֆիայում:
1776 թ. հուլիսի 4	ԱՄՆ–ի «Անկախության հռչակագրի» ընդունումը:
1777 թ. հոկտեմբեր	Սարատոգայի ճակատամարտը:
1781 թ.	Անգլիացիների պարտությունը Յորքթաուն քա–ղաքի մոտ:
1783 թ.	Անգլիայի կողմից ԱՄՆ–ի անկախության ճանա–չումը:
1775–1783 թթ.	Գաղութների անկախության պատերազմը և ԱՄՆ–ի ձևավորումը:

1784 թ.	Առաջին շոգեմեքենայի ստեղծումը Ջեյմս Ուատտի կողմից:
1787 թ.	ԱՄՆ-ի Սահմանադրության ընդունումը:
1789-1807 թթ.	Սելիմ III-ի գահակալումը Օսմանյան կայսրությունում:
1789 թ. գարուն	Գլխավոր շտատների գումարումը Ֆրանսիայում:
1789 թ. հուլիսի 14	Բաստիլի գրավումը: Ֆրանսիական մեծ հեղափոխության սկիզբը:
1789 թ. օգոստոսի 26	«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունումը Ֆրանսիայում:
1791 թ.	Առաջին Սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում: Ֆրանսիայի վերածվելը սահմանադրական միապետության: ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին 10 ուղղումները, որոնք կոչվեցին «Բիլլ իրավունքների մասին»:
1792 թ. օգոստոսի 10	Ժողովրդական ապստամբությունը Փարիզում: Սահմանադրական միապետության տապալումը:
1792 թ. սեպտեմբերի 20	Պատմության մեջ առաջին ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ձևավորված Ազգային Կոնվենտի բացումը:
1792 թ. սեպտեմբերի 22	Ֆրանսիայի հռչակվելը հանրապետություն:
1793 թ. հունիս	Յակոբինյանների իշխանության գլուխ անցնելը: Յակոբինյան դիկտատուրայի (բռնապետության) հաստատումը:
1794 թ. հուլիս	Յակոբինյան դիկտատուրայի տապալումը:
1795 թ. օգոստոս	Նոր Սահմանադրության ընդունումը Կոնվենտի կողմից:
1796 թ.	Իրանում Աղա Մահմեդ խանի հռչակվելը շահ:
1795-1799 թթ.	Դիրեկտորիայի կառավարումը Ֆրանսիայում:
1799 թ.	Նապոլեոնի կողմից պետական հեղաշրջման իրականացումը Ֆրանսիայում:
1799-1804 թթ.	Կոնսուլության շրջանը Ֆրանսիայում:
1804 թ.	Նապոլեոնի հռչակվելը կայսր:
1805 թ.	Աուստերլիցի ճակատամարտը:
1807 թ.	Տիլիզիտի պայմանագրի կնքումը: «Քլերմոն» անվավոր շոգենավի կառուցումը:
1808-1839 թթ.	Մահմուդ II-ի գահակալումը Օսմանյան կայսրությունում:

1810–1811 թթ.	Իր հզորության գագաթնակետին Ֆրանսիական կայսրության հասնելը:
1812 թ. ամառ	Նապոլեոնի ներխուժումը Ռուսաստան:
1813 թ. հոկտեմբեր	Լայպցիգի ճակատամարտը:
1814 թ. մարտ	Դաշնակից զորքերի մուտքը Փարիզ և Նապոլեոն I-ի հրաժարվելը գահից:
1814 թ.	Առաջին շոգեքարշի կառուցումը Անգլիայում:
1814–1824 թթ.	Լյուդովիկոս XVIII-ի գահակալումը Ֆրանսիայում:
1814–1815 թթ.	Վիեննայի վեհաժողովը:
1815 թ. հունիսի 15	Վաթեռլոոյի ճակատամարտը և Նապոլեոնի վերջնական ջախջախումը:
1815 թ.	«Սրբազան դաշինքի» ստեղծումը:
1824–1830 թթ.	Կարլ X-ի գահակալումը Ֆրանսիայում:
1825 թ.	Վիրջինիայի համալսարանի հիմնադրումը: Առաջին տնտեսական ճգնաժամն Անգլիայում:
1826–1828 թթ.	Ռուս-պարսկական պատերազմը:
1828–1829 թթ.	Ռուս-թուրքական պատերազմը:
1830 թ.	Հունաստանի հռչակվելը անկախ թագավորություն:
1836 թ.	Չարտիստական շարժման սկիզբը Անգլիայում:
1837 թ.	Մորզեի այբուբենի ստեղծումը:
1838 թ.	Սերբիայի Սահմանադրության ընդունումը:
1839–1861 թթ.	Աբդուլ Մեջիդի գահակալումը Օսմանյան կայսրությունում:
1839 թ. և 1856 թ.	Սուլթան Աբդուլ Մեջիդի հրովարտակները Թանզիմաթի (բարեփոխումների) վերաբերյալ:
1840–1842 թթ. և 1856–1860 թթ.	«Ափիոնի պատերազմները» Չինաստանում:
1848 թ. հունվար	Իտալական հեղափոխության սկսվելը:
1845–1847 թթ.	Անբերրիությունը և «կարտոֆիլային հիվանդությունը» Ֆրանսիայում:
1848 թ. մարտ	Զանգվածային ցույցը Բեռլինում:
1848–1849 թթ.	Ժողովրդական և ազգային հեղափոխությունները Եվրոպայում:
1848 թ. մայիս	Առաջին համագերմանական պառլամենտի բացումը Մայնի Ֆրանկֆուրտում:
1848 թ. հուլիս	Ավստրիայի օրենսդիր մարմնի՝ Ռայխստագի բացումը:
1848 թ. աշուն	Երկրորդ հանրապետության Սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում:

1848 թ. աշուն	Իտալիայում նոր հեղափոխական վերելքի սկսվելը:
1849 թ. փետրվար	Պապական իշխանության տապալումը Հռոմում և հանրապետության հռչակումը:
1849 թ. ապրիլ	Հունգարիայի անկախության հռչակումը:
1849 թ. ամառ	Հռոմի և Վենետիկի հանրապետությունների վերացումը:
1848–1852 թթ.	Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում:
1848–1916 թթ.	Ֆրանց Յոզեֆ I-ի գահակալումը Ավստրիայում:
1851 թ.	Լուի Նապոլեոնի կողմից պետական հեղաշրջման իրականացումը:
1858 թ.	Մոլդովայի և Վալախիայի միավորումը:
1857–1859 թթ.	Հնդիկ ժողովրդի մեծ ապստամբությունն Անգլիայի դեմ:
1860 թ.	Ապստամբությունը Սիցիլիայում: Աբրահամ Լինկոլնի ընտրվելն ԱՄՆ-ի նախագահ:
1852–1870 թթ.	Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում:
1861 թ.	Իտալիայի թագավորության հռչակումը: Ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում: Ռումինիայի ճանաչվելն ինքնավար թագավորություն:
1861–1865 թթ.	Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում:
1863 թ. հունվարի 1	Ստրկության վերացված հայտարարվելը ԱՄՆ-ում:
1863 թ.	Միջազգային կարմիր խաչի ընկերության ստեղծումը:
1863 թ. մարտ	Արևմտահայություն «Ազգային Սահմանադրության» հաստատումը թուրքական կառավարության կողմից:
1866 թ. օգոստոսի 23	Ավստրո-պրուսական հաշտության պայմանագրի կնքումը:
1867 թ.	Ավստրո-հունգարական երկմիասնական պետության ստեղծումը:
1868 թ.	«Մեյձիի հեղափոխությունը» Ճապոնիայում:
1870–1871 թթ.	Ֆրանս-պրուսական պատերազմը:
1870 թ. սեպտեմբերի 2	Նապալեոն III-ի անձնատուր լինելը Սեդանում:
1870 թ. սեպտեմբեր	Փարիզի պաշարման սկիզբը պրուսական զորքերի կողմից:
1871 թ. հունվարի 18	Վիլհելմ I-ի հռչակվելը Գերմանիայի կայսր:

1871 թ. մարտի 18	Փարիզի կոմունայի ստեղծումը:
1871 թ. մայիս	Ֆրանս-պրուսական հաշտության պայմանագրի կնքումը Մայնի Ֆրանկֆուրտում:
1871-1940 թթ.	Երրորդ հանրապետությունը Ֆրանսիայում:
1871 թ.	Հռոմի հռչակվելը Իտալիայի մայրաքաղաք:
1876-1909 թթ.	Աբդուլ Համիդ II-ի գահակալում Օսմանյան կայսրությունում:
1876 թ. դեկտեմբերի 23	Առաջին Սահմանադրության ընդունումը Թուրքիայում:
1877-1878 թթ.	Ռուս-թուրքական պատերազմը:
1878 թ.	Սերբայի վերջնական անկախության նվաճումը:
1879-1882 թթ.	Եռյակ դաշինքի ձևավորումը:
1885 թ.	Բենզինով աշխատող շարժիչով առաջին ավտոմեքենայի ստեղծումը:
1889 թ.	Հաագայի առաջին միջազգային կոնգրեսի գումարումը: Երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծվելը: Ճապոնիայի Սահմանադրության ընդունումը:
1888-1918 թթ.	Վիլհելմ II կայսեր գահակալումը Գերմանիայում:
1886 թ. մայիս	Չիկագոյի բանվորների գործադուլը:
1895 թ.	Առաջին ռադիոընդունիչի ստեղծումը:
1891-1893 թթ.	Ռուս-ֆրանսիական ռազմաքաղաքական դաշինքի ձևավորումը:
1902 թ.	«Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջին համագումարը Փարիզում:
1904-1905 թթ.	Ռուս-ճապոնական պատերազմը:
1904 թ.	Անգլո-ֆրանսիական համաձայնագրի կնքումը:
1905 թ. հունվարի 9	«Արյունոտ կիրակին» Ռուսաստանում:
1905-1907 թթ.	Ռուսական առաջին հեղափոխությունը:
1905 թ. հոկտեմբերի 17	Նիկոլայ II-ի կողմից մանիֆեստի հրապարակումը:
1905-1911 թթ.	Հեղափոխությունը Իրանում:
1906 թ.	Առաջին Պետական դումայի գումարումը Ռուսաստանում:
1906 թ. օգոստոսի 5	Իրանի առաջին Սահմանադրության ընդունումը: Հաագայի երկրորդ համաժողովի գումարումը:
1907 թ.	Անտանտի (Եռյակ համաձայնություն) կազմավորման ավարտը:

1907 թ. դեկտեմբերի 27	Հակասուլթանական ուժերի համաժողովը Փարիզում:
1908 թ. հուլիսի 3 – հուլիսի 23	Երիտթուրքական զինվորական հեղաշրջումը:
1908 թ. հուլիսի 24	Սահմանադրության վերականգնումը Թուրքիայում:
1909 թ. ապրիլի 27	Աբդուլ Համիդ II-ի գահընկեց արվելը:
1911–1912 թթ.	Հեղափոխությունը Չինաստանում:
1914 թ. հունիսի 28	Ավստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը:
1914 թ. օգոստոսի 1	Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:
1914 թ. սեպտեմբեր	Մառնի ճակատամարտը:
1914 թ. հոկտեմբեր	Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելը:
1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար	Սարիղամիշի ճակատամարտը:
1915 թ. մայիս	Իտալիայի անցնելն Անտանտի կողմը:
1915–1916 թթ.	Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:
1916 թ.	Վերդենի ճակատամարտը:
1916 թ. հունիս	Ռուսական զորքերի հարձակումը Գալիցիայում: «Բրուսիլովյան ճեղքում»:
1917 թ. ապրիլի 6	ԱՄՆ-ի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելը:
1917 թ. դեկտեմբեր	Կանանց ընտրական իրավունքի ձեռքբերումը Անգլիայում:
1918 թ.	Անգլիայի պատմության մեջ առաջին անգամ կանանց մասնակցելը պառլամենտական ընտրություններին:
1918 թ. ամառ	Մառնի երկրորդ ճակատամարտը:
1918 թ. սեպտեմբեր	Անտանտի հարձակողական գործողությունների անցնելը բոլոր ռազմաճակատներում:
1918 թ. հոկտեմբերի 30	Օսմանյան կայսրության հետ զինադադարի կնքումը Մուդրոսում:
1918 թ. նոյեմբերի 11	Կոմպենյան անտառում Գերմանիայի հետ զինադադարի կնքումը:
1920 թ.	ԱՄՆ-ում կանանց ընտրական իրավունք ստանալը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ 3

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ 3

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ 5

ԲԱԺԻՆ I
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ (XVII ԴԱՐ–XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

§1. ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 7

ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ 7

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՋԻՆՈՒՄԸ 8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ 9

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 11

§2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 13

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ 13

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 14

ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ 15

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 17

§3. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ 18

ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 18

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՈՒՄ 19

ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ԱՐՔԱՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ 21

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 24

§4. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒՂԻՆ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 25

«ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 25

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 26

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ... 28

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 30

§ 5. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒՂԻՆ: ՀՅՈՒՍԻՍԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 31

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 35

§6. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 36

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ 36

ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 39

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ (1792–1799 ԹԹ.) ... 40

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 42

§7. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ 44

ՆԱՊՈԼԵՈՆԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 44

ՆԱՊՈԼԵՈՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ 45

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 47

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ 48

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 50

§8. ՀԵՏԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (1815–1850) 51

ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ 51

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ 54

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 57

§9. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1848–1849 ԹԹ. 58

1848–1849 ԹԹ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ 58

1848–1849 ԹԹ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 59

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 61

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 64

§10–11. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ) 67

«ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 66

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ

XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ 67
ԻՐԱՆԸ XVII–XIX ԴԱՐԵՐՈՒՄ 69
ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 70
ՉԻՆԱՍՏԱՆԸ 72
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 75

§12. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԿԵՍԵՐ) 77
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 77
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 78
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ 79
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 81

ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ 82
§13. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 82
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ 82
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 83
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 85
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 86

§14. ԱՐՎԵՍՏՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 88
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 88
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ 90
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 93

Ի ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 94
ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ 97

ԲԱԺԻՆ II
ԱՌԱՋԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

§15. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ ... 98
«ԵՎՐՈՊԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿԸ ... 98
ԱՇԽԱՐՀԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ... 100
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 103

§16. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ... 104
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ... 104
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ... 105
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ... 106
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 108

§17. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ... 109
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐ (ԼԻԲԵՐԱԼՆԵՐ) ... 109
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ... 110
ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ... 111
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՄՆԵՐԸ ... 112
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 115

§18–19. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՆ–ՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ... 116
ԱՄՆ–Ը XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ... 116
ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ... 116
ՀԱՐԱՎԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ... 118
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ... 119
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ... 119
ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ ... 120
ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ... 120
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 122

§20–21. ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 124
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ 124
ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՎՍՏՐԻԱՅԻ ԴԵՄ 124
ՖՐԱՆՍ–ՊՐՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 125
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 127
ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 127
ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ 128
ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 130
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 132

§ 22. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԱԶՄԱԶԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ... 134
ԲԱԶՄԱԶԳ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 134
ԱՎՍՏՐՈ–ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԵՐԿՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ 135
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 136
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 138

§23–24. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ 139
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ 139
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ. 1908 Թ. ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ: 140
1905–1911 ԹԹ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 141
ՃԱՊՈՆԻԱՅԻ ՆՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ 142
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 143
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 146

§25. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ԱՇԽԱՐՀԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ .. 147
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁԵՐԸ 150
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ 151
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 153

§26. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ 1914–1918 ԹԹ. 154
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՍԿԻԶԲԸ 154

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐԸ 155
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ 157
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....158
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....160

§27. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....162
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....162
ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....162
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՏՐՈՆԸ ԵՎ ԿԻՆՈՆ.....164
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 165
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....167

II ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ.....168
ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ..... 171
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ.....172
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....180

Նիկոլայ Հովհաննիսյան
Արմեն Ղուկասյան

Աշոտ Ղուկասյան
Արմինե Նարիմանյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Խմբագիրներ՝ **Նիկոլայ Հովհաննիսյան**
Աշոտ Ղուկասյան

Հրատարակչության խմբագիրներ՝ Հասմիկ Գուլական
Գալյա Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Հեղինե Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Ալվարդ Օհանջանյանի

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական 12 մամուլ:
Տպաքանակը՝ 9231:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am